1483
Ш. — 2

90

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

## ԵՒ ԱՌՈՒՆՁ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Հ.Ս.Ս.Հ. ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. П. БИБ-КА Арм. С. С. Р.
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ Ֆ.
ОБМЕННЫЙ ФОНД
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2004

2004

1483
141-112

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

# ԱԾԱՇՈՒՆՉ ՍԲ ԳՐՈՑ

Բացաքննեալ ըստ ածաբանական քննութեանց՝
երկասիրութք տն Ստեփաննոսի Վարդապետի
Ագոնց՝ Արքեպիսկոպոսի, և Ընդհանրական
Աբբայի Մխիթարեանց։

Տպագրեալ յարժանաւոր Արդեանց Բարեպաշտի
ուրումն։

9420-57

## ՀԱՏՈՐ Գ.



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1824. ՌՄՀԳ.

ИЗЪ КНИГЪ
Пр. Евреинова
1877 Г. Москва

225

# ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

# Ա̅ԾԱՇՈՒՆՉ Ս̅Բ ԳՐՈՑ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

### ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

---

### ԳԼ. Ա.

Պատրաստութիւն առաքելոց առ գալուստ Հոգւոյն սրբոյ. և ընտրութիւն Մատաթեայ յառաքելութիւն:

* *Նա իբրև մտին, ելին 'ի վերնատունն, ուր վանքն իւր էին ||. (գործ. ա. 13. մինչև ցվերջ գլխոյն:)*

*Իբրև գնաց Տ̅րն Ա̅ծ մեր 'ի ժառանգութիւն թագաւորութեան իւրոյ յերկինս, պետրոս փոխանորդ նորա, և առաքեալք պաշտօնեայք նորա դարձան յերուսաղէմ, ըստ պատուիրելոյ նոցա Ա̅յ, առ 'ի ընդարձակել զթագաւորութիւն նորա աստ 'ի յերկրի: 'Ի սկզբանն ամենեքեան 'ի միում տան բնակեցան առ 'ի դիւրութիւն խորհրդակցութեան ընդ միմեանս, և յապահովութիւն 'ի հրէական հալածանաց: Տունն ըստ հին աւանդութեան էր այն՝ ուր ընդ սիրեցեալ վարդապետին արարին զզատկական ընթրիս. տուն զոր ընտրեաց Ա̅ծ սահմանել անդ զա̅ծային խորհուրդ հաղորդութեան. ուր առաքեալք օրհնեցան 'ի նմանէ նախ քահանայք, և ապա եպիս-*

կոպասունք. ուր ինքն յարուցեալ երկիցս երեւեցաւ իւրոց սիրելեաց. ուր մատաթիաս ընտրեցաւ 'ի պաշտօն առաքելական. ուր 'ի վերջոյ էջ Հոգին 'նր այնչափ զգալի նշանօք ։

Անդ 'ի վերնայարկի տանն յետ համբարձման Յսի, բնակութի կալան պետրոս եւ յովհաննէս, յակոբոս կոչեցեալն մեծ՝ որդի զեբեդեայ եւ սողոմեայ՝ որպէս եւ յովհաննէս. անդրէաս եղբայր պետրոսի, փիլիպպոս, եւ թովմաս՝ անուանեալ երկուորեակ. ոչ իբր թէ երկու անուանս ունէր, այլ զի եբրայեցերէն Թովմաս, 'ի յոյնն Տիտիմոս, 'ի մեզ երկուորեակ լսի. բարթողոմէոս, եւ մատթէոս, յակոբոս փոքր՝ ազգական Յսի՝ որդի ալփէոսի եւ քեռ կամ ազգականի կուսին մարիամայ. եւ նա՝ մարիամ, որ 'ի մեռանել ալփէոսի, ըստ յերկրորդ ամուսնութի ընդ կղէովպայ. եւ սիմոն կանանացի՝ որ յեբրայեցւոյն 'ի յոյնն հնչէ նախանձայոյզ. եւ յուդաս՝ կոչեցեալ եւ թադէոս։ Այս է կարգն առաքելոց զոր աստ նշանակէ ղուկաս. ուր արժան է 'ի միտ առնուլ, զի այլուր այլով կարգաւ յիշատակին նոքա. եթէ ոչ վրիպիմ՝ առ 'ի ուսուցանել թէ 'ի կարգ անուանցն ոչ նշանակի նախապատուութի տեղւոյ կամ արդեանց. մի միայն պետրոս միշտ յառաջին տեղւոջ յիշատակի. զի գլուխ է այլոց, եւ փոխանորդ Քսի տն մերոյ ։ Սոքա ամենեքեան բնակէին 'ի միում տան. այլ աշակերտք, եւ ազգականք Յսի եւ կուսին մարիամու, եւ բարեպաշտ կանայք գային եւ միաբան ընդ առաքելոց յաղօթս կային. զոր 'ի սահմանեալ ժամանակս եւ 'ի ժամս ոչ երբէք զանց առնէին. * Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանամբք, եւ մարեմաւ մարբն Յսի, եւ եղբարբք նորա ||։

Ոչ ամենեքեան բնակէին հաստատապէս 'ի նմին տան, զի բազում էին. եւ միայն վն առաքելոցն ասի * ելին ուր վանքն իսկ էին ||. կամ ըստ այլ թարգմանութե * ուր մնային ||, այսինքն բնակէին։ Վասն այլոց ասի թէ անդ յերկար հանապազորդ յաղօթս կային. * հանապազորդեալ միաբան յաղօթս հան-

դերձ կանամբք և Մարեմաւ մօրն Յիսուսի, եա ‖ :

Մի ինչ զարմասցի բարեպաշտ ընթերցողն, զի նախ յիշատակին ընդհանրապէս այլ կանայք, ապա Մարիամ մայրն. այսպէս առնել՝ ոչ է յետադասել, այլ տարորոշել զարժանաւորագոյնն : Ի կարգել զթիւ անուանց՝ արժանաւորագոյնն ՚ի նոյն գիրս՝ ունի զառաջին տեղի. ՚ի յիշատակել զբազմութիւն ինչ ընդհանրապէս, յետոյ անուանել զոք որոշակի՝ ՚ի նոյն գիրս է առաւելութիւն պատուոյ արժանաւորագունին : *Ասացէք ցաշակերտս նորա և ցպետրոս ‖ : * Համդերձ կանամբք և Մարեմաւ մօրն Յիսուսի ‖, ահա արժանաւորագոյնն : Բաց յառանձնական աղօթից յաճախ եղանէին և ՚ի տաճարն, և անդ հրապարակաւ գովէին և օրհնէին զԱստուած : Բարիքն զոր խոստացաւ նոցա Յիսուս՝ մեծ էր. խոստացեալ էր նոցա զգալուստ հոգւոյն սրբոյ հանդերձ յորդառատ զեղմամբ պարգևաց իւրոց : Պիտոյ էր նոցա արիանալ առ ՚ի ոչ ևս երկնչիլ՝ ոչ ՚ի հալածանաց, ոչ ՚ի վշտաց, ոչ ՚ի դահճաց և ոչ ՚ի բռնաւորաց : Պիտոյ էր՝ զի հաստատեսցին ՚ի շնորհս, որով հաւատով լիցին ոչ կորուսանել զփառս յաւիտենականս : Պիտոյ էր՝ զի կատարելապէս բաւական լիցին առ առաքելական պաշտօնատարութիւն, պայծառ իմանալով զԱստուածային գիրս, դիւրապատրաստ ՚ի սքանչելագործութիւն, ծանօթ լեզուաց՝ զորս ոչ երբէք ուսեալ իցեն : Խոստումն էր հաւատոյ, անկեղծութիւն ստոյգ. բայց պարտ էր խնդրել զշնորհն, և պատրաստ գտանիլ առ ընդունելութիւն նորա : Բազում շնորհք պարգևին յոյժ առանց սպասելոյ խնդրուածոց՝ և առանց պահանջելոյ զպատրաստութիւն. յայլոց կամի զի խնդրեսցեն, և կամի գտանել սիրտ պատրաստ :

Վասն գալստեան բանին յաւիտենականի՝ առաւել քան զքառասուն դարս կամեցաւ զի խնդրեսցեն նահապետք և մարգարէք. վասն զգալի գալստեան հոգւոյն սրբոյ կամեցաւ զի խնդրեսցեն աւուրս տասն աշակերտք նորա և առաքեալք, և Մայրն իսկ նորա : Վասն առաջնոյն՝ կամեցաւ ընդ ամենայն աշխարհ պատրաստութիւն խաղաղութեան. վասն երկրոր-

դին կամեցաւ 'ի նորածնեալ եկեղեցւոջ պատրաստութիւն հոգևոր ջերմութեան և միաբանութեան ։ Նազովք էին որք սպասէին այսմ պարգևի, այլ ամենեքին այնպէս միասիրտ և միակամ էին, զի թուէին մի միայն անձն. այս յօդ այնչափ յանձնեալ 'ի Քրիստոսէ իւրոց հաւատացելոց՝ էր ընտրելագոյն պատրաստութիւն առ 'ի ընդունել զՀոգւոյն զայն, որ է Հոգի սիրոյ ։ Կային 'ի նոսա կենդանի ամենայն առաքինութիւք հանդերձ առաքինութեամբ յարատևութեան ։ 'Ի համբառնալ Յիսուսի յաղթանակաւ, էին վառեալ աստուածային սիրով սիրտք նոցա, և պահէին զայն միշտ՝ ևս քան զևս բորբոքելով զոգւոց իւրեանց. և մերթ 'ի տան, և մերթ 'ի տաճարին հրաբորբոք աղօթիւք արձակէին զոգւոց իւրեանց ելանել առ Աստուած. * հանապազորդեալ միաբան յաղօթս ||. և այս իսկ պատրաստութիւն էր պտուղ Հոգւոյն սրբոյ բնակելոյ 'ի սիրտս նոցա զօրէն մեծի թագաւորի, որ առ ժամանակ մի բնակէ 'ի քաղաքի ուրեք իբրև անծանօթ. և ուսուցանէ և մատակարարէ զպատրաստութիւնս յընդունելութեան յորժամ կամիցի յայտնի հանդիսացուցանել զեկաւորութիւն իւր ։

Յայսոսիկ պարապմունս առանձնական բարեպաշտութեան, պետրոս առաքելապետ ոչ մոռանայր զխորհուրդ և զփոյթ որ նմա անկ էր իբրև փոխանորդի Քրիստոսի Յիսուսի, և իբրև երևելի գլխոյ եկեղեցւոյն իւրոյ ։ 'Ի մեռանիլ մատնչին Յուդայի պակասեցաւ թիւ երկոտասան եպիսկոպոսաց, որք ձեռնադրեալք 'ի Յիսուսէ բաղկացուցանէին զառաքելական ժողովն ։ Յիսուս յարուցեալ ոչ կացոյց զոք 'ի տեղի նորա 'ի լրումն թուոյ նոցա. վասն զի կամէր զի երևելի տնտեսութիւն եկեղեցւոյն իւրոյ լիցի 'ի ձեռս փոխանորդին իւրոյ ։ Ոչ գտանեմք թէ յառաջ քան զհամբառնալ իւր յերկինս՝ պատուէր ինչ տուեալ իցէ պետրոսի վասն այսր փոխանակութեան. և յիրաւի է համարիլ թէ զայսմանէ ինչ ոչ խօսեցաւ նմա Յիսուս. որովհետև յառաջարկել առաքելոյն զայս փոխանակութիւն, ոչ յիշեաց ընաւ զպատուէր ինչ տուեալ նմա 'ի Յիսուսէ 'ի վերայ այսորիկ. այլ միայն զմարգարէու-

մի, և այն մթին ։ Այսպէս 'ի սկզբանն անտի կամեցաւ Յ̃ն վարժել զհաւատացեալս իւր՝ կախեալ կալոց զե-րեւելի գլխոյ, և ընդունելոյ ըստ սահմանելոյ փոխա-նորդին իւրոյ զճշմարիտ իմաստ ա̃ծային գրոյ. և մի որպէս զի այն սահմանադրութ̃ի իցէ անսխալ, պա-հանջեցին որոշ յայտնութ̃իս, և ոչ զի Յ̃ն իւրով բերանով խօսեսցի. այլ լիցին հաւաստի 'ի վերայ ճշմարտութ̃ին. քանզի առ 'ի չթողուլ փոխանորդին իւրոյ սխալել 'ի սահմանադրութ̃իս իւրաց հաւատոյ, խոստացաւ զիւր ա̃ծային ընթերակայութ̃ի ։ 'Ի հա-րիւր և ութ սաղմոսի գրեալ կայր մարգարէութ̃իս. * Զայցելութիւն նորա զայն այլ առցէ ||. պետրոս առաջնորդեալ յերկնային լուսոյ, զայս քան իմացա-կարգեալ 'ի նախագուշակել թէ յուդա պակասեսցի, և այլ ոք փոխանակեսցէ զտեղի նորա. իմացաւ եթէ այս կանխասացութ̃ի պարտի կատարիլ յառաջ քան զգալուստ հոգւոյն սբ̃յ. ուստի և փութացաւ գալ 'ի կատարումն ։ Կարէր ինքնին ընտրել զանձն ար-ժանաւոր, որ չէր պակաս 'ի թիւ այնչափ աշակեր-տաց դաստիարակելոց 'ի դպրոց Յ̃սի ։ Բայց 'ի կա-ռավարիչս գոլլի խոհեմութ̃ին, յորժամ ոչ միշտ վա-րին ամենայն լութ̃ք իշխանութ̃ե իւրեանց ։ Ըն-տրութիւն միոյ՝ լինի ատելի բազմաց, յորժամ 'ի շնորհս միոյ՝ որ է սիրելի, բազումք 'ի բաց թողու-նին ։ Առաջնորդն ոչ անկանի յատելութ̃ի, յորժամ արկանէ զխնդիրն յորոշումն խոհական խորհրդակ-ցութ̃ե ։ Հպատակք լաւ ևս ճանաչին 'ի հպատա-կաց, քան յառաջնորդէն. ուր բանն է զընտրութ̃է առաւել արժանաւորին, կարծիք նոցա առաւել ճշգրիտ է ։ Ծանօթութ̃ի արդեանց լինի ստացեալ՝ ունկն դնելով ուղիղ դատողութ̃ե բազմաց ։ Չէ պարտ ըստ կարգի խօսելով սպասել ա̃ծային յայտ-նութ̃ե ։ Ս̃բն պետրոս առ ընտրութ̃ի երկոտասանե-րորդ առաքելոյ, կամեցաւ ունել զհաւանութ̃ի բազ-մաթիւ ժողովոյն. և ոչ արկ ընդ կապով իմն զկար-ծիս այլոց, 'ի յայտ բերելով թէ առ ո̃վ բերիցի իւր յօժարութ̃ի ։ Առաջարկեաց զհարկաւորութիւն ըն-տրութ̃ե, և զհանգամանս որք խնդրին յընտրելն.

իւրաքանչիւրն ազատ էր տալ զքուէ իւր։ Ամենքին անդէն ժողովեալք էին իբր հարիւր և քսան. բաց 'ի կանանց, որոց չէր անկ ոչ քուէ, և ոչ տնտեսութիւն 'ի նիւթ կրօնի։

'Ի մէջ այնր բազմութեան յառն եկաց պետրոս, և ողջունեալ զամենեսին սիրալիր անուամբ եղբարց կոչելով, եցոյց թէ պարտ է կատարել կանխասացութեան հոգւոյն որ 'ի բերանոյ դաւթի վասն յուդայի, որ եղև առաջնորդ ըմբռնողացն զՅս, և սկիզբն ահագնակապուտ մատնութեան. յետ լինելոյ 'ի թիւս մեր առ' և ընդ մեզ ամբարձեալ յաստիճան և 'ի պաշտօն առաքելութեան, չնչին պտուղ մատնութեան նորա' եղև ստացումն ագարակի միոյ, որ 'ի նորա անուն կոչեցաւ, թէպէտ ինքն մեռեալ էր, զի գնեալ էր արծաթով նորա, որ էր վարձ անօրէնութեան նորա։ Ած արդէն պատուհասեաց զնա նշանաւոր պատժով. զի մինչ եղկելին առ յետին յուսահատութեան խեղդ արկեալ անձին կախեցաւ, փոր նորա ուռուցեալ հերձաւ ընդ մէջ, և հեղան յերկիր ամենայն ներքին աղիքն նորա։ Այս պատահար յայտնի է ընդ ամենայն երուսաղէմ. մինչև կոչել ագարակին այնմիկ բարբառովն երուսաղէմացւոց Ակեղդամայ, այսինքն ագարակ կամ դեօղ արեան։ Այս մասն մարգարէութեանն կատարեցաւ, գրեալ 'ի վաթսուն և ութ սաղմոսին. ուր 'ի կիր արկեալ' որպէս յաճախ է յամենայն գիրս զանկատար բայն փոխանակ ապառնւոյ, և զբազմաւորական թիւն փոխանակ միաւորականին' առ. * Եղիցին բնակութիւնք նոցա աւերակ. և 'ի յարկս նոցա մի ոք իցէ որ բնակիցէ ‖. իբր ասելի, * եղիցի բնակութիւն նորա աւերակ ‖, ևն. լքեալ կացցէ տեղի նորա, և առժամանակ մի դատարկ մնասցէ աթոռ նր ևն։ Այսպէս զի կատարեսցի և միւս մասն. * Զայցելութիւն նորա ( այսինքն զեպիսկոպոսութիւն ) զայն այլ առցէ ‖. և այսմ պարտ է այժմ զի կատարեսցի։

Աստանօր յայտ արար պետրոս զհանգամանս ընտրելի անձին. պարտ է նմա լինել հասուն հասակաւ, հին աշակերտ դպրոցին Յսի. այր որ կացեալ

իցէ յերկար ընդ առաքելումն՝ յետ որոյ էր Յս հա-
ձեցաւ կենաց կցորդ լինել ընդ նոսա, սկսեալ 'ի
մկրտութենէն յովհաննու, մինչև ցօրն վերանալոյ նո-
րա յերկինս. որպէս զի կարիցէ ոչ միայն քարոզել,
այլ նաև հաստատել և լինել վկայ ականատես ընդ-
այլոց՝ յարութեան Քսի: փոյթ մեծ էր առաքելոյն,
զի այս մասն հաւատոյ ամրացուսցի և հաւատար-
մասցուսցի, զի նովաւ դիւրին լինէր հաւատալ և
զայլ ամենայն մասունս: Որ հաւատայր զՅս յա-
րուցեալ, խոստովանէր զնա մեռեալ, ուստի և ճա-
նաչէր զնա ճշմարիտ մարդ. և մահն ոչ ևս էր խաչ
պաշտելոյ զմարդ խաչեցեալ. յորժամ յայտնի լի-
նէր յարուցեալ իւրով զօրութեամբ, յայտնի լինէր
և այս թէ ած է և մարդ: Որ հաւատայր զնա ճըշ-
մարիտ ած, հաւատայր ամենակարօղ. ուստի ոչ ինչ
դժուարութիւն կրէր հաւատալ և զխորհուրդ հաղոր-
դութեան, և զայլ մասունս, յորս ոչ գտանէ դժուա-
րութիւն որ ճանաչէ 'ի նոսա զածային ամենա-
կարողութիւն: Որ ճանաչէր զՅս ճշմարիտ ած, ճա-
նաչէր 'ի նմա անսահման իշխանութիւն, գերագոյն
իմաստութիւն, գերագոյն ճշմարտութիւն. ուստի ոչ
մնայր դժուարութիւն ընդունել իբրև անսխալ ճշմար-
տութիւն զամենայն վարդապետութիւնս նորա: Նա
այսօրինակ որպէս Յս յայտնի արար զիւրն յարուցի,
նոյնպէս և առաքեալք զնոյն հռչակեցին, և վկայե-
ցին իբրև հիմն, 'ի վերայ որոյ յետոյ հեշտեաւ բարձ-
րանայր բովանդակ շինուած հաւատոյս մերոյ: Այ-
պիսի խորհրդով ասաց պետրոս ցժողովականս իւր.
* Արդ՝ պարտ է յարանցս յայսցանէ եկելոցս ընդ
մեզ յամենայն ժամանակի՝ յորում եմուտ և ել առ
մեզ տր Յս, (ոճ եբրայական՝ որ նշանակէ զժամա-
նակն յորում Յս կենցաղակից եղև նոցա,) սկսեալ
'ի մկրտութենէն յովհաննու մինչև ցօրն յորում վե-
րացաւ 'ի մէնջ, վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել
միում 'ի սոցանէ ||:

Յետ այսր բանախօսութեան, հասարակաց հաւանու-
թեամբ՝ անուանեցին զերկուս. որք ըստ հանրական
դատման առաւել արժանաւորք համարեցան: Ին

էր յովսէփ որ որոշէր յայլոց նովին անուամբ կոչեցելոց հայրենի անուամբ, և կոչէր բարսաբայ, այսինքն որդի սաբայ. և այնչափ 'ի յարգի էր առ ամենեսին վասն առաքինութեանց իւրոց, զի հռովմայեցիք վերադիր անուամբ կոչէին զնա ՅՈՒՍՏՈՍ, այսինքն արդար. և 'ի հռովմայեցւոց անցանելով առ եբրայեցիս, այսպէս կոչէին զնա և նոքա. զոր և մեր թարգմանիչ պահեաց ըստ բնաւոր հնչման մերում ՅՈՒՍՏՈՍ անուանելով: Իսկ միւսն էր մատաթիա. որոյ գովութի մեծագոյն է քան զայլ ամենայն գովեստ՝ լինելն նախադաս յյ բաղդատութե և ընտրեալ յառաքելութի: Չէր դիւրին մարդկան որոշել թէ ո՛ր յերկուց անտի իցէ առաւել արժանաւոր: Կացին յաղօթս առ Ած, խնդրելով զի ինքն որ է սրտագէտ ամենայնի, յայտնեսցէ զմի ոք զոր ընտրեաց յերկոցունց 'ի նոցանէ, առնուլ զվիճակ և զառաքելութի յորմէ անկաւ յուդաս հերձեալ 'ի միաբանութէ՝ առ որ չէր արժանի, գնալ ուր արժանի էր, որ էր յարմար տեղի նորա երթալ արկանել 'ի խեղդ զպարանոց իւր:

Զկնի այսր ջերմ աղօթից, ձեռն արկին յընտրութի վիճակաւ, յուսացեալք թէ Ած ուղղեսցէ ըստ իւրոց հաճոյից զելս վիճակին: Սրբն դիոնեսիոս յերրորդ մասին եկեղեցական քահանայապետութե 'ի գլուխ հինգերորդ, յայն կարծիս է թէ վիճակ ասելով ասէ՝ իմնի հրաշական նշան, որով Ածային ամենակարողութիւն եցոյց իբրև մատամբ զանձն ընտրեալ: Այսմ կարծեաց զհետ երթան տուափանոս, բարոնիոս, կասպար սանկցիոս, և այլք: Սրբն անտոնինոս յառաջին մասին, համարի թէ ճառագայթ իմն էջ յերկնից. Կարդուսեանն՝ թէ աղաւնի նստաւ 'ի վր գլխոյ սրբոյն մատաթիայ՝ որ եղև նշան ընտրութե նորա: Գուցէ այս հեղինակք՝ ասէ կաղինոս, երկնչէին զի մի բերցի 'ի վկայութի օրինակ առաքելոց ընդդէմ հին սովորութեան եկեղեցւոյ, մի երբեք առնել վիճակաւ ընտրութիւն եկեղեցականաց. և 'ի վերայ այսորիկ ունիմք և կանոն նշանակեալ ('ի գլ. եկեղեցի.) յաղագս վիճակընկեցու-

թե։ Բերեն 'ի նպաստ իւրեանց զբնագիր յունաց, որ ասէ վասն միոյն Մատաթեայ. * քուէիւք ընտրեցաւ ընդ մետասան առաքեալսն ||։ Սակայն և այնպէս ասէ կալվինոս, թէ վիճակ ընկեցաւ թէ ո՛ յերկոցունց անտի առցի 'ի պաշտօն առաքելութե։ Զայս նշանակէ ասելն. * Եւ ետուն վիճակս նոցա ||. որպէս ընթեռնու յոյնն, և լատինն, և հայն. * Եւ արկին վիճակս ||, որպէս ընթեռնու ասորին. և ամենեքեան, * Ելանէր. անկաւ վիճակն 'ի վերայ Մատաթեայ ||։ Այս ձևք բանից զճշմարիտ վիճակս նշանակեն, ոչ նշանս հրաշականս. և չունիմք ինչ պատճառ բանական մեկնութիս տալ բնագրին, որ ասէ. * Ետուն վիճակս նոցա. և ելանէր վիճակն Մատաթեայ. և համարեցաւ ընդ մետասան առաքեալսն ||. աստ չիք ինչ յիշատակ բնաւ հրաշական նշանի։

Այլ արժան է գիտել, զի յառաջ քան զգալուստ հոգւոյն սրբոյ յաճախ էր 'ի ժողովրդեան այ՝ գործածութի վիճակաց՝ ուր հասարակաց իրողութիւնքն ծանր էին, և մարդկային խորհրդով դժուարալոյծ։ 'Ի Նոր գիրս այնչափ են օրինակք, զի չէ հարկ նշանակել աստանօր։ Մարդասէրն ած զիջեալ յանհրահանգութե ժողովրդեանն այնմիկ, և կամեցեալ բառնալ զվտանգ դիմելոյ նոցա առ պատգամախօսս դիւաց, տայր պատասխանի 'ի տապանակէն, և յաճախ յարուցանէր մարգարէս, նմանապէս և վիճակօք յայտնէր զխնդրեալ ճշմարտութիւն, ևս առաւել յորժամ 'ի ծանր հարկաւորութիս խնդրէին սիրելիք նր։ Յետ գալստեան հոգւոյն սրբոյ, առաւել պարզեցան միտք մարդկան, և ըստ կարգի խօսելով պարտ է խնդրել մարդկային հանճարով զայն, զոր յառաջագոյն խնդրէին վիճակաւ։ Նոքին իսկ առաքեալք, որք նախ 'ի կիր արկին վիճակս յընտրութի միոյ առաքելոյ, յետոյ ոչ արկին զայն 'ի կիր յընտրութի սարկաւագաց. և ո՛չ առաջին ընտրութիւն արժանացաւ իբրև օրինակ յեկեղեցւոջ։

## ԳԼ. Բ.

Գաղափար հոգւոյն սիրոյ։ Պարգեւ [illegible] փառաւորեալ առաքելոց։ Միաբանութիւն սիրոյն գեղեցիկ։

* Էր ՚ի կատարել աւուրցն պենտեկոստէից էին ամենեքեան միաբան ՚ի միասին ||, եւ. (գործոց. Բ. 1. ցհամար 37 ։)

Նոր եկեղեցին, թէ օրէն իցէ ասել որպէս մանուկ ՚ի խանձարուրս՝ էր ՚ի խաղաղութեան. հաւատացեալք զօրհանապազ ժողովէին յաղօթս եւ ՚ի բանս հոգեւորս ՚ի վերնատան անդ, ուր բնակէին առաքեալքն։ Հռովմայեցիք չառնէին ինչ փոյթ մի այնր յաճախ համախմբութեան, քանզի գիտէին զի ոչ էր այն գաղտնի ժողովակ ապստամբաց, կամ արանց զինելոց. այլ բարեպաշտ իմն միաբանութիւն կամաւոր աղքատաց անջատելոց յերկրէ աստի, եւ արհամարհողաց աշխարհի։ Դպիրք, փարիսեցիք, եւ քահանայք ՚ի խորին տխրութեան իւրեանց վասն յարութեան Քրիստոսի, հաւանեալ էին ընդ ձայնն որ սփռեալ էր թէ գնացեալ իցէ ՚ի թագաւորել յայլ աշխարհ. եդեալ ՚ի մտի թէ հեռի գոլով, ժողովուրդն ոչ եւս երթիցէ զհետ նորա. եւ ինքեանք ոչ մնային անօթահար եւ անարգեալ, եւ ոչ լինէին նորութիւնք ոչ ՚ի տաճարին, եւ ոչ ՚ի զոհս եւ ՚ի պատարագս։

Թէ առաքեալք եւ այլ աշակերտք հանապազօր հաւաքէին ՚ի միասին, չէր ինչ ծանր հրեական կառավարութեան, զի համարէին զայն յերկչոտութենէ եւ ՚ի փոքրոգութենէ ոմանց տառապեալ անձանց դրկելոց ՚ի գլխոյ իւրեանց, եւ վրիպելոց յակնկալութենէ իւրեանց. ոչ քարոզէին, ոչ եւս գործէին սքանչելիս ՚ի տես ժողովրդեան, եւ հաւաստի երեւէր թէ ոչ եւս բազմանայցէ ընկերութիւն նոցա։ Բա-

քեալք միայն և աշակերտք կրէին զայն բռնութիւն, զոր կրեն զինուորք ցանկացողք մտանել 'ի մարտ, այլ 'ի զօրապետէ իւրեանց պահին 'ի վանս իւրեանց, կամ փակեալ պատնշաւ: Կրէին զայն բռնութիւն՝ զոր կրէ քաջասիրտ ոք որ կայ 'ի պատրաստի, և լսէ զձայն փողոյ, այլ է կալեալ 'ի հզօրագոյն ձեռաց: Ոչ ևս էին երկչոտ և փոքրոգի, և թէպէտ տակաւին չէին զինեալ նովին արիական վեհանձնութեամբ, որով յետոյ ելին ընդդէմ թագաւորաց և բռնաւորաց, բայց քաջալերս իմն և խրախոյս ունէին 'ի սիրտս իւրեանց, համարձակ երևէին 'ի հրապարակ. այլ 'ի Յիսուսէ զօրագլխէ իւրեանց կալեալ էին չմտանել 'ի մարտ, մինչև յերկնից ոչ առաքեսցէ նոցա օգնութիւն անպարտելի:

Իսկ մետասաներորդ օր զկնի համբարձմանն, և յիսներորդ յետ յարութեանն Յիսուսի, յորժամ իբրև յերրորդ ժամու առաւօտուն այն ամենայն հաւատացեալք և բարեպաշտ կանայք ժողովեալ էին 'ի վերնատունն անդր, յանկարծակի լսելի եղև ընդ քաղաքն ողջոյն ձայն իմն իբրև հնչիւն սաստիկ հողմոյ՝ յորժամ մեծագոյն բռնութեամբ շնչիցէ. և այս ձայնարձակ շառաչիւն սկսաւ 'ի վեր յերկինս, այսինքն 'ի վերին մասին օդոյ, և եկն էջ 'ի վերայ տանն ուր էր այն բարեպաշտ ժողովն, և անդ եկաց իբրև 'ի կեդրոն իւր. այնպէս զի լսելի լինելով յամենայն հրապարակս, 'ի փողոցս, և 'ի տունս, ամենեքեան կարէին որոշել և գիտել թէ ուստի ելանէ, և ուր տակաւին շառաչէ այն հնչիւն անսովոր: Մեծ էր և ընդհանուր զարմացումն. վասն զի պարզ լսէին զհնչիւն սաստիկ մրրկի, և զօդն տեսանէին 'ի մեծի հանդարտութեան. և 'ի վերնատունն անդր ուստի լսելի լինէր հնչիւնն, ոչ դոյր բնաւ հողմ կամ շարժումն օդոյ. * Եւ եղև յանկարծակի հնչիւն յերկնից եկեալ իբրև սաստիկ հողմոյ, և ելից զամենայն տունն յորում նստէին ‖: Մինչ 'ի բոլոր տունն էր շառաչիւն իբրև մրրկի, ոչ ինչ շարժումն դոյր 'ի նմա, և ամենայն ինչ հանդարտ և անշարժ: Ընդ հնչմանն էջ ամպ մի բոցափայլ, բայց ոչ էր հուր. և բաժանեալ

'ի փոքրիկ բոցս 'ի ձև լեզուաց՝ իջին նստան 'ի վերայ իւրաքանչիւր նոցա որք էին անդ ժողովեալ։ Այսոքիկ էին զգալի նշանք, որով էջ Հոգին Սբ անտեսանելի յայն ժողով հաւատացելոց, որով լցան ամենեքեան. * Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով ||։ Այս լիութի ոչ եղև անցաւոր, այլ հաստատ և մնացական. զի մինչ բոցք երևեցան 'ի վերայ գլխոց նոցա, Հոգին Սբ * նստաւ իւրաքանչիւր 'ի վերայ նոցա ||։ Բառդ ՆՍՏԱՒ, նշանակէ հաստատութիւն և յարակայութի։

Յառաջ քան զգալուստն՝ Հոգին Սբ բնակէր 'ի հոգիս նոցա, իբրև հոգի սրբարար, պարգևօք սիրոյ և այլովք գերբնական հեղեալ առաքինութբ։ Զկնի այսր զգալի գալստեան բնակեցաւ համդերձ առատաղէղ շնորհօք այլոց պարգևաց։ Ելից այս ածային հոգի յիշատակօք զյիշողական նոցա, արագ յիշել զկանխասացութիս և զվարդապետութիս զոր լուեալ էին 'ի բերանոյ Յսի. ելից հանճարով և գիտութբ զմիտս նոցա կատարեալ իմանալ, և ըստ պիտոյից առ ձեռն պատրաստ ունել զածային գիրս. և ըստ այլևայլ պարագայից գիտել 'ի վար արկանել և ուսուցանել զվարդապետութիս կարևորս. ելից զկամս նոցա հաստատութբ, վեհանձնութբ, նախանձայուզութբ, և ամենայն առաքինութբ, լինել վերագոյն քան զամենայն փաղաքշանս և քան զամենայն երկիւղ աշխարհի. որով սիրտք և գործք նոցա խնդրիցեն միայն զփառս այ։ Ելից զսիրտս նոցա խաղաղութբ, զլեզուս նց 'ի համարձակախօսութի, զձեռս 'ի սքանչելագործութի։ Վասն այսչափ յորդառատ առաքեցաւ իւրոց սիրելեաց անդ ժողովելոց 'ի քաղցրագութ փրկչէն, որ ելեալ յերկինս ետ զՀոգին Սբ 'ի գործել կատարեալ զմեծ գործ մարդկային փրկութե, զոր ինքն սկսաւ 'ի վերայ երկրի։ Որչափ, ասէ Սբն օգոստինոս ('ի Ճառն ՃՁԵ. յաղագս ժամանակի) որչափ և որպէս անճառելի է գթութիւն փրկչին. * Զմարդն տարաւ յերկինս, և զած առաքեաց յերկիր։ Որչափ է արարչին փոյթ վասն նորոգութե արարածոց իւրոց։ Ահա դարձեալ նոր դէպ յերկ-

նից առաքելի ։ Նա դարձեալ մեծվայելչութին ինք-նեան յայտ ելանել իւրոց հիւանդաց խոնարհի ։ Նա դարձեալ ք̄ի մարդկայնոյն խառնելն ա̄ծայնոյն . աստ ահա փոխանն փրկչին . զի զբարերարութիւն զոր նա սկսաւ, առանձին զօրութ̄բ հոգւոյն ո̄ր կատարեսցէ ‖ ։

Ա՛ւ համարեսցի ընթերցողն անտեղեակ՝ թէ հոգին ո̄ր էջ յերկնից և եկն ՚ի վերնատունն տեղական շարժմամբ, որպէս որ անցանէ ՚ի տեղւոջէն ուր էր, ՚ի տեղի ուր յառաջն ոչ էր ։ Հոգին ո̄ր անչափ է . և է յամենայն տեղիս . ոչ կարէ շարժիլ տեղւոջէ ՚ի տեղի . բառքդ էջն էջ՝ փոխաբերական են, որ նշանակեն զբաշխումն և զյայտնութին պարգևաց իւրոց՝ արարեալ ըստ ոչ սովորական կարգի, և զգալի եղանակաւ . որով յայտնի և վկայի ներկայութին նորին ա̄ծային հոգւոյ՝ ուր էրն և յառաջագոյն ներկայ ։ Զայս նշանակէ ո̄րն օգոստինոս ՚ի նախայիշատակեալ Ճառն յասելն վ̄ս հոգւոյն ո̄րյ, * մերձ դաւ յայսմ աւուր հաւատացելոց իւրոց՝ ոչ այնչափ ՚ի ձեռն շնորհաց այցարարութե և գործողութե ‖, զոր առնէ և առանց արտաքին նշանի, * այլ ներկայութ̄բ նորին մեծվայելչութե ‖ . այսինքն վկայելով հնչմամբ իբրև հողմոյ . լուսով, Ճառագայթիւք ՚ի ձև լեզուաց երևելոց՝ լինել անդ իւրոյ ա̄ծային մեծվայելչութեն ։ Նմանապէս յասելն, թէ առաքեալք և աշակերտք լցան հոգւով ո̄րվ, պատՃառն դնի փոխանակ գործոյ իւրոյ . և է ասել . լցան պարգևօք հոգւոյն ո̄րյ, որ տուաւ նոցա . * ընու ոչ ինքեամբ տեսականաւ և գոյացաւ, այլ պարգևօք զոր արտադրէ ‖ . որպէս խօսի դիգիմոս յառաջին դիրս յաղագս հոգւոյն ո̄րյ ։

Նա այսպիսի մեծ պարգև տուեալ այնչափ հանդիսիւ, ամենեքին որք էին ՚ի ո̄ր վերնատանն անդ՝ զեղին զներքին եռանդն սրտից իւրեանց յերգս ՚ի գովութին և ՚ի փառաբանութին ա̄յ, ոչ ուսեալ և ոչ խորհեալ յառաջագոյն, այլ որ ինչ յանկարծակի գայր ՚ի հոգւոյն ո̄րյ ՚ի լեզուս նոցա . և թէպէտ ժողովեալքն անդ ամենեքին, կամ ըստ առաւել մասին գալիլեացիք էին, այլ օրհնէին զա̄ծ այլևայլ լեզուաւ



3420-57/1483

որպէս հոգին սբ. թելադրէր նոցա. * Նա եւ սկսան խօսել յայլեայլ լեզուս, որպէս եւ հոգին տայր բարբառել նոցա ‖ : Ու հրաշալի հնչմանն՝ քաղաքն ողջոյն շարժեցաւ. եւ բազմութիւն յոյժ ժողովրդեան յափշտակեալ ՚ի զարմացմանէ, եկին խռնեցան շուրջ զտամբն այնորիկ: Նա եւ զի էր տօն պէնտէկոստէի, լի էին յերուսաղէմ բազմութիւն օտարականաց յամենայն ցեղից՝ եկեալ անդ ՚ի կատարումն օրինաց, որք պատուիրէին ամենայն արուաց ելանել յերուսաղէմ եւ անդ տօնել զայն տօն: Արդ է ասել թէ էին յերուսաղէմ ամենայն լեզուք աշխարհի:

Ի ժամանակէ անտի սողոմոնի, եւ յաջորդաբար ընդ ժամանակս այլոց թագաւորաց նոցա՝ հաստատեալ էր տուրեւառիկ վաճառականութիւն ը̃ արաբացիս, ընդ հնդիկս ՚ի ձեռն նաւարկութե̃, որք ՚ի կարմիր ծովէ ընդ ծոցն արաբացւոց, եւ ընդ ծոց պարսից նաւէին յովկիանոս. եւ ընդ ափրիկեցիս, եւ ընդ եւրոպացիս՝ նաւարկելով ընդ ծովն միջերկրական: Նա եւ՝ ՚ի պատճառս գերութե̃ բազմութիւն հրէից մնացին բնակութե̃ յասորիս, եւ յերկիրն քաղդեացւոց եւ ՚ի պարս, եւ յայլ զանազան գաւառս ուր էին ցրուեալ: Նաեւ սակս պատերազմացն անտիոքոսի, եւ այլոց պատերազմաց առ թագաւորօքն իւրեանց՝ էին սփռեալ յայլ բազում կղզիս եւ ՚ի գաւառս: Նա եւ ՚ի ժամանակս խաղաղական կառավարութե̃ հռովմայեցւոց՝ բազմութիւն յոյժ հրէից ոմանք վասն կրօնի, այլք ՚ի սիրոյ հայրենեաց, կէսք վասն առանձին շահաւորութեան՝ նորոգ էին դարձեալ ՚ի հրէաստան ՚ի բնիկ հայրենի երկիր իւրեանց, բերելով ընդ ինքեանս եւ զլեզուս երկրին, ուր մնացեալ էին: Յաւելցի ՚ի սոսա եւ լատին եւ այլ լեզուք եւրոպացւոց տարեալք ՚ի հրէաստան ՚ի դատաւորաց եւ ՚ի զօրացն հռովմայեցւոց: Վասն որոյ խօսելով ոչ զռամկական եւ զեղծեալ լեզուաց, որք սեպհական են մասնաւոր քաղաքաց եւ գաւառաց, այլ զլեզուաց որք հասարակ են ողջոյն թագաւորութե̃ միոյ եւ նահանգի, դուցէ ոչ աճեցուցանէ, թէպէտ յաճախ է ՚ի մք գիրս ձեռն չափաւորութե̃. դուցէ ասեմ ոչ ա-

Ձեզուցանէ 'որն Ղուկաս՝ յասելն թէ էին յայնժամ յերուսաղէմ բնակեալ հրեայք, և եկք * արք երկիւղածք յամենայն ազգաց որ 'ի ներքոյ երկնից ‖ ։ Այս էր այնուհետև ժամանակ առաքելոց կալ մնալ փակեալ. և բազմութիւն իսկ խուռնմնթեաց գումարեալ անդր տուիալէր զնոսա ելանել արտաքս 'ի տանէ անտի, և պատմել զմեծայսն բանս 'ի լսել անհամար բազմութեան ։ Աստի սփռեալ առաքելոց աստ և անդ, խօսէին և քարոզէին. և ամենեքեան իմանային իւրաքանչիւր յիւր ծննդեան լեզու. և հարցեալ, առնուին պատասխանի յայն բարբառ, որով հարցանէին ։

Համօրէն ժողովուրդն կայր հիացեալ և ապշեալ ընդ այն յանկարծական սքանչելի փոփոխութիւն ։ Պարթևք, և մարք և իլամացիք՝ այսինքն պարսիկք, և որ բնակեալ են 'ի միջագետս, և 'ի հրէաստանի, և 'ի կապադովկիա, 'ի պոնտոս և յասիայ, և 'ի փռիւգիա, 'ի պամփիլիայ, յեգիպտոս, և 'ի կողմանս լիբէացւոց շուրջ զկիւրենայովք, և հռոմայեցիք, և բնիկ հրեայք, և արտաքինք որք ընկալան զօրէնս հրէից, և կոչէին եկք կամ եկամուտք, կրետացիք և արաբացիք, ոչ կարէին իմանալ թէ զիա՞րդ ամենայն լեզուք իւրեանց լսին 'ի բերանոյ նոցա զորս գիտէին լինել գալիլեացիս ։ Հրաշքն յայտնի էր. այլ 'ի բազմութեն ոչ երբէք պակասին արք յաչաղկոտք, յանդգունք, չարաբանք, թարգմանիչք ագէտք և խոտորք ։ Այլ ամենեքին որք եկին ժողովեցան անդ՝ էին արք երկիւղածք. և 'ի նոսա իսկ որք կրօնասիրութբ եկին յերուսաղէմ 'ի կատարել զտօն պենտեկոստէի ըստ պատուիրելոյ օրինաց, դատէին որք ոչ խղճէին յանդգնաբար դատել և զրպարտել զընկերն ։ Ամենեքեան ունէին խոստովան լինել թէ ած ցուցանէ զիւր զմանաւոր ընթերակայութիւն առաքելոց և աշակերտացն Յի. այլ փոխանակ այսմ, բազումք ասէին թէ արբեալք իցեն. որպէս թէ արբեցութբ ուսեալ իցեն զլեզուս օտարոտիս, և շատ իցէ գինի բազում ըմպել՝ առ 'ի խօսել յայլևայլ լեզուս ։

Առ այսպիսի նախատինս լռեցին այլ առաքեալքն.

ւրն պետրոս միայն փոխանակ ամենեցուն յարուցել բարձրացոյց զբարբառ իւր. և պատճառս առնել 'ի պատեհ ջատագովութե անձանց, եմուտ 'ի յորդեւանդն քարոզութեի։ Աղաչեաց զբոլոր զայն բազմութի ունկն դնել նմա, զի ունի բազում ինչ ասել կարևոր 'ի գիտել. ինքն և ընկերք իւր չեն այնչափ անժուժկալ, զի յառաւօտու երեք ժամու աւուրն արբեալք իցեն. այլ 'ի նոսա Ճշգրտեցաւ մարգարէութին յովելեայ մարգարէի, որ կանխաւ ասաց, թէ յաւուրս յետինս տացի յորդառատ զեղումն հոգւոյն իւրոյ 'ի վերայ ամենայն ազգի անձանց. և թէ ուստերք և դստերք այնր ժողովրդեան մարգարէասցին. և երիտասարդք նոցա տեսիլս տեսցեն. և ծերք նոցա լուսաւորեսցին մարգարէական երազովք։ Եւ 'ի վր ծառայից իւրոց, և 'ի վերայ աղախնայց իւրոց հեղուցու յաւուրս յայնոսիկ զպարգևս հոգւոյն իւրոյ, և մարգարէասցին։ Տացէ տեսանել նշանս յերկինս 'ի վեր, և նշանս յերկիր 'ի խոնարհ, և տացէ տեսանել արիւն, և հուր, և մրրիկ ծխոյ։ Արեգակն դարձցի 'ի խաւար, և լուսինն 'ի գոյն արեան՝ մինչև եկեալ իցէ օր տն մեծ և երևելի, և ամենայն որ կարդասցէ զանուն տն կեցցէ։

Զկնի յառաջ բերելոյ զայս մարգարէութի ամբողջ, որ բոլոր կարգեալ էր վասն տն մերոյ Յսի Քսի, անցանէ առաքեալն ցուցանել թէ Յս է զոր մատամբ ցուցանէ մարգարէն։ Չէ հարկաւոր մի առ մի նշանակել զքանչելիս զորս գործեաց նա, և որք եղեն 'ի մահուն նորա և 'ի յարութե, և այն զոր տեսանէին 'ի նմին առաւօտու. քանզի յայտնի են, և իւրաքանչիւր յունկնդրաց ինքնին կարէր հեշտեաւ 'ի միտ առնուլ թէ յայնմ մասին Ճշգրտեցաւ և ներգործութբ Ճշգրտի մարգարէութին. ուստի շատ էր միայն զմիտս դարձուցանել առ Յս։ Այս վերլուծին խնդրելով մտադիւր ունկնդրութեի, ծանոյց թէ Յս նազովրեցի է մարդն ցուցեալ յայ 'ի նմ զօրութբ և նշանօք զոր արար ած նովաւ 'ի միջի նոցա. որպէս ինքեանք իսկ գիտեն։ Այս Յս ոչ առ անկարութե իւր թէ չէր կարող կալ ընդդէմ թշնամեաց իւրոց,

և ոչ առ անգիտութե՟, որպէս թէ յանդէտս ըմբռնեալ յորոգայթ նոցա, այլ յաւիտենական վճռաւ ա՟յ մատնեցաւ նոցա, ստոյգ կանխագիտութբ՟ այնոցիկ զոր դուք առէք արարէք՝ մատնեալ զնա 'ի ձեռս անօրինաց, և բևեռեալ 'ի փայտի սպանէք։ Այլ ա՟ծ յարոյց զնա. և ոչ եթող մարմնոյ նորա գնալ յապականութի՟ որպէս այլ մարմինք թաղեալք յերկրի. քանզի ոչ էր հնար ըմբռնիլ նմ՟ 'ի մահուանէ ընդհակառակն սահմանելով ա՟յ ըստ կանխասացութե՟ մարգարէին դաւթի. *Յառաջագոյն տեսանէի զտ՟ր առաջի իմ յամենայն ժամ, զի ընդ աջմէ իմմէ է զի մի սասանեցայց. վասն այսորիկ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ. Եւ և մարմին իմ բնակեսցէ յուսով. զի ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես սրբոյ քում տեսանել զապականութի։ Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց, լցուցեր զիս ուրախութբ՟ երեսաց քոց 'ի քաղցրութե՟։ ‖ Իսկ յետ յառաջ բերելոյ զայս մարգարէութի, յաւել առաքեալն. արք եղբարք, լիցի ինձ համարձակութի ասել, թէ մարգարէն դաւիթ աստ ոչ խօսի վասն իւր, որպէս քաջայայտ է, զի նա մեռաւ և թաղեցաւ. և գերեզման նորա կայ 'ի մէջ ձերում մինչև ցայսօր. ուր մարթ է տեսանել զմարմին նորա լուծեալ 'ի հող։ Իսկ զի մարգարէ էր, և գիտէր եթէ երդմամբ երդուաւ նմա ա՟ծ թէ մեսիայն լինելոց է 'ի պտղոյ յորովայնէ նորա, և թագաւորելոց է, խօսի վասն յարութե՟ նորին մեսիայի, զոր կանխաւ գուշակեաց, և մարգարէութի նորա ճշգրտեցաւ 'ի Յս՟. որոյ ոգի ոչ թողաւ 'ի խաւարի ընդ երկրաւ, և ոչ մարմին նորա ետես զապականութի։ Զայս Յս՟ յարոյց ա՟ծ; որում ամենեքին մեք վկայեմք. Նա բարձրացեալ ա՟ծային կարողութբ՟, և ընկալեալ 'ի հօրէ զխոստացեալ զայս առաքումն, սփռեաց 'ի վերայ մեր զայս ս՟բ հոգի. զորոյ զներգործութիս դուք իսկ տեսանէք և լսէք։ Զի ոչ եթէ դաւիթ ել յերկինս, և սակայն ասէ* Ասաց տ՟ր ց՟տ՟ր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ, մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց‖։ Արդ գիտասցէ համատարած ամենայն տունն իսրայէ-

լի, զի այս տէր դաւթի նստեալ ընդ աջմէ տն * ասաց տր ցտր իմ‖, է Յս․ գիտասցէ ճշմարտիւ զի Ած արար տէր և թագաւոր զայս Յս, զոր դուք խաչեցէք ։ Զայս վայր խօսեցաւ սբն պետրոս, և թէ զինչ ներգործութիս արար, ունիմք տեսանել 'ի յաջորդ գլուխն․ առ այժմ աստ տացուք լուծումն զանազան տարակուսանաց, որոց իրաւամբք կարէ լինել փափաքող ուսումնասէր ընթերցողն ։

Եւ նախ՝ թէ օրն պէնտէկոստէի, զորմէ խօսի աստ սբ գիրն, էր պէնտէկոստէն քրիստոնէից, եթէ հրէից․ հրէականն կատարէր յինչ և իցէ աւուր եօթնեկին, յորում անկանէր յիսներորդ օր թուեալ յերկրորդ օրէ տօնի բաղարջակերաց ։ Քրիստոնէականն կատարի միշտ 'ի կիրակէի յաւուր յիսներորդի թուեալ 'ի կիրակէէ յարութե Քի ։ Իսկ օրն յորում էջ հոգին սբ 'ի վերնատունն՝ էր կիրակէ, ոչ ոք երկուանայ․ այլ զի բազումք յայն կարծիս են, թէ երկրորդ օր տօնի բաղարջակերաց յայնմ ամի անկեալ էր 'ի շաբաթ, ուստի և հրէական պէնտէկոստէին պարտ էր անկանիլ 'ի շաբաթու, սակս թէ սբն ղուկաս որ գրեաց զգործս առաքելոց քան և ութ ամօք զկնի համբարձմանն Քի յերկինս, իմանայ զպէնտէկոստէ քրիստոնէից ։ Զայս կարծիս են կուռնելիոս ալաբիտէ, և այլք ։ Բայց ես ասէ կաղինոս՝ համաձայն կարծեաց զոր կալայ յաւետարանի, ուր 'ի գլուխ առաջին ութերորդ գրոց ցուցի թէ տօն զատկին և տօն բաղարջակերաց անկաւ 'ի շաբաթ, ոչ բռնադատիմ գիտել 'ի խիստ մեկնութիս․ զի ըստ իմոց սկզբանց երկրորդ օր տօնի բաղարջակերաց եղև կիրակէ․ և 'ի կիրակէի տօնեցաւ նաև 'ի հրէից պէնտէկոստէն յայնմ ամի ։

Երկրորդ՝ եթէ հնչիւնն եղև առանց հողմոյ շնչելոյ, և լեզուքն եթէ ոչ էին հուր, զիա՞րդ մատենագիրք և սբ հարք կոչեն զայն հողմ, և զայս հուր ։ Պատասխանի․ այսպէս խօսին փոխաբերութբ վասն նմանութե՛ զոր ունէին ընդ հողմոյ, և ընդ հրոյ ։

Երրորդ՝ զայն ճառագայթս 'ի ձև լեզուաց տեսանէի՞ն ամենեքին ։ Պատասխանի․ տեսանէին նո-

քա ամենեքին յորոց վերայ իջին. զի կամեցեալ ա՟յ թէ այն նշան եղիցի զգալի, 'ի դէպ էր զի տեսցի 'ի նոցանէ. և տեսանելի լինելով իւրաքանչիւրոց 'ի վերայ գլխոց այլոց, առաւել հաստատէր փոփոխ յարգ և սէր եղբայրական առ միմեանս: Բայց ոչ նոյնպէս տեսան 'ի բազմութենէ, որք յետոյ խմբեցան անդ: Ս՟բ գիրն ասէ թէ ամենեքեան սքանչացեալ զարմանային ընդ այլևայլ լեզուս զոր խօսէին աշակերտք. և ոչ ասէ թէ զարմանային ընդ հրաշական երևոյթ լուսափայլ լեզուաց 'ի վերայ գլխոց նոցա. ապ՟ նշանակէ զմին՝ նոյնպէս նշանակէր արդեօք և զմիւս սքանչելիքս եթէ եղեալ էր. ուստի երևի թէ բազմութ՟ին ոչ ետես զայնոսիկ հրեղէն լեզուս, զի 'ի ժամանել նոցա, անհետ եղեալ էին:

Չորրորդ՝ ընկալա՞ն և բարեպաշտ կանայք զպարգև լեզուաց. երևի թէ ոչ. զի նոքա չէին կարգեալ 'ի քարոզութ՟ի: Սակայն կաղինոս պատասխանէ այս՝ վկայութ՟բ մարգարէութեն, զոր այսու պատճառաւ յիշեցոյց ՚ոք առաքեալն պետրոս. * Հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէասցեն ուստերք ձեր, եւն. Նաև 'ի վերայ ծառայից իմոց և 'ի վերայ աղախնայց իմոց յաւուրս յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, և մարգարէասցեն ‖. բառդ մարգարէանալ որպէս յայտ է յայլ տեղեաց գրոց, դնի աստ ըստ նշանակութ՟ե խօսել յայլևայլ լեզուս. մարգարէութ՟ին փակէ և զկանայս. ապա և կանայք ընկալան զայս պարգև, և չեղև 'ի նոսա վայրապար. թէպէտ ոչ քարոզեցին, բայց եղև նոցա վարիլ ընդ բազմաց յայլևայլ ազգաց. և յընտանի զրոյցս դէպ եղև նոցա վկայել այնչափ հրաշից զոր տեսին, և ուսուցանել օտարազգի կանանց: Գտանեմք 'ի ՚որն պօղոս շրջիլ կանանց ընդ առաքելոյն 'ի զանազան գաւառս: Ապա 'ի դէպ էր և նոցա պարգևն իմանալոյ և խօսելոյ զօտար լեզուս:

Հինգերորդ՝ առաքեալք ճշմարտապէս խօսէի՞ն 'ի զանազան լեզուս, թէ խօսելով նոցա 'ի մի միայն լեզու, նոյնն ձևանայր 'ի բազում լեզուս յականջս լսողաց: Պատասխանի. ունէին զերկոսին 'ի զանա-

զան պարագայս. յորժամ ոք յառաքելոց խօսէր առ օտարազգիս՝ խօսէր ճշմարտապէս 'ի բարբառ այնր ազգի. ապա թէ ոչ՝ ոչ լինէր ճշմարիտ թէ * Խօսէին յայլևայլ լեզուս, որպէս հոգին տայր բարբառել նոցա ‖ ։ Եւ յորժամ խօսէին առ բազմութիւն ազգաց 'ի մի ժողովելոց, 'ի մի լեզու ևեթ խօսէին. և իմանային ամենեքեան. ապա թէ ոչ՝ յորժամ պետրոս արար զվերջգրեալ քարոզն, բազումք չէին իմացեալ։

Վեցերորդ՝ արդեօք յայնժամ ամենայն առաքեալք և աշակերտք ստացա՞ն հաստատապէս զամենայն լեզուս աշխարհի։ Պատասխանի՝ ոչ. յայնժամ յիւրաքանչիւրսն զեղան լեզուք ինչ, այլ ոչ ամենայն. և մնացեալքն յայնժամ զեղանէին 'ի նա, յորժամ պէտս ունէին նոցա Ծ̃ ազգացն, ընդ որս վարէին։ Զայս քաղեմք 'ի բանէ աստի * Որպէս և հոգին տայր բարբառել նոցա ‖. խօսէին յայն լեզու, զոր հոգին 'որ թելադրէր նմ̃։

Եօթներորդ՝ 'ոչն պետրոս կամեցեալ ցուցանել թէ առաքեալք և աշակերտք չէին արբեալ, տայ պատճառ թէ չև ևս է օր հասարակ. * Ոչ որպէս դուքդ կարծէք թէ սոքա արբեալք իցեն. զի դեռ երեք ժամք են աւուրս ‖ ։ Որչափ ինչ զօրութիւն ունէր այս պատճառ։ Պատասխանի՝ կարի սակաւ, եթէ բանն էր վասն զեղխ և զինեմոլ մարդկան. այլ խօսելով զայնպիսեաց, որոց բարութիւն և պարկեշտութիւն յայտնի էր, ունէր զօրութիւն ինչ կարծողական, որ զօրէ ցուցայր ոչ ընդառաջ ելանէ հակառակ փորձ ինչ։ Եւ այժմ իսկ ասեմք, թէ ընդ արս սովորեալս յարբեցութիւն՝ ընդ առաւօտն պարտ է վճարել զգործ. զի հազիւ երբեք դէպ լինի, թէ մարդիկ թէպէտև անժուժկալք յառաջ քան զժամ ճաշուն իցեն արբեալ։ Մարթ է յաւելուլ. չունելով հակառակ կողման զօրութիւն ինչ ուղիղ տրամաբանութեան, ամենայն փոքր զօրութիւն ներհակ պատճառի շատ էր տապալել զայն։ Կարի զօրագոյն էր ձեռնարկութիւն ասել՝ դեռ երեք ժամք են աւուր, այսինքն դեռ առաւօտ է, ապա չեմք արբեալ. քան

թէ ասել՝ խօսին յայլեայլ լեզուս, ապա արբեալ են. այս ոչ եղբարկացուցանէ ոչ բանիւ և ոչ փորձով. Նա՝ ունիմք յայտնի փորձ թէ արբեցութիւն ոչ է վարդապետ լեզուաց օտարաց. իսկ այն եղբարկացուցանէ յայտնի ծանօթութք թէ միայն զեղխք զինեմոլք արբենան այնպէս վաղ ընդ առաւօտն։ Սակայն պետրոս ամբացոյց զբան իւր ցուցանելով 'ի ձեռն մարգարէութե, զոր ընդունէին և ունկնդիրք, թէ այլ է պատճառն խօսելոյ նոցա յամենայն օտարոտի բարբառ. այսինքն պարգև հոգւոյն սբյ։

Ութերորդ՝ * Ծերք ձեր երազովք երազեսցին ‖. Երևի թէ աստ ընդ պարգևի մարգարէութե դասին և երազք. ապա ասիցէ ոք՝ օրէն է անսալ երազոց։ Եւ նաբուգոդոնոսոր, և փարաւոն, որք տեսին երազս մարգարէականս՝ դասելի են 'ի մարգարէս։ Պատասխանի. երկու պայմանք պահանջին յերազս՝ զի կարասցեն կոչիլ մարգարէուի. մի՝ զի ճշմարտապէս նշանակիցեն զապագայ կամ գէթ զգաղտնի ինչ. երկրորդ՝ զի ունիցին զհաւաստի ծանօթուի նշանակութեն 'ի յայտնութէն այ։ Առ պակասութե առաջնոյ պայմանի ըստ կանոնի խօսելով չէ մարթ օրինօք անսալ երազոց. զի երազք բնական ինչ են, ուստի և չունին յարմարութի և բաւականութի 'ի նշանակել զգաղտնիս կամ զապագայս, ևս առաւել 'ի նշանակել ճշմարտութք։ Առ պակասութե երկրորդին՝ չեղեն մարգարէ, ոչ փարաւոն և ոչ նաբուգոդոնոսոր և ոչ այլք նոցին նմանք. վասն զի նոքա ոչ իմացան զնշանակութի երազոց իւրեանց. եղեն արդարև մարգարէ յովսէփ և դանիէլ, որք ածային յայտնութք յայն խաւար մթութե եղեն ճշգրտաբան մեկնիչք։

Իններորդ՝ * Զնա նկատեալ (ըստ լատ) սահմանեալ խորհրդով և կանխագիտութեամբն այ, մատնեալ 'ի ձեռս անօրինաց բևեռեալ 'ի փայտի սպանիք ‖։ Եթէ չէր մարթ մեռանիլ Քսի, բայց եթէ ամենածանր մեղօք իւրոց սպանողաց, որպէս սահմանեցաւ կանխագիտութբն այ։ Եւ եթէ կամէր ած զմահն զայն, որպէս մեղան սպանօղքն. որք սպան-

մամբն այնուիկ զա̃ծային կամս նորա կատարելն ։ Պատասխանի. ո՛ր առաքեալն իբրև խորին ա̃ծաբան զանազանեաց յա̃ծ սահման կամ վճիռ, և կանխագիտութի̃. * Նկատեալ, (այսինքն սահմանեալ) խորհրդով և կանխագիտութեամբն ա̃յ ‖. Իբր ասել. ա̃ծ 'ի յաւիտենից նախատես էր թէ հրէայք հանդերձեալ են հալածել զՔ̃ս, մինչև տալ բևեռել և սպանանել զնա 'ի խաչի, եթէ ինքն ա̃ծ թոյլ տացէ 'ի գործ արկանել զչար նախանձ իւրեանց ։ Եւ զի ա̃ծ ոչ է պարտական խափանել զմեղս, և հաճելով մեծապէս ընդ այն մահ իբր ընդ գերազանց գործ խոնարհութե̃, սիրոյ, արդարութե̃ և ամենայն գերագոյն առաքինութեց, սահմանեաց զայս չարչարանս և զմահ կամօք հաճութե̃, և միանգամայն զգործաղութի̃ իւրոց թշնամեաց կամօք թոյլտուութե̃. որպէս թէ ասէր. ոչ կամիմ խափանել զայն մեղսն, որով մահուամբ որդւոյ իմոյ ծագեսցին ազգի մարդկան այնչափ բարիք, և ինձ այնչափ փառք ։ Ըստ այսմ սպարապետ մի հրամայէ զօրաց իւրոց յարձակիլ անցանել ընդ տեղի մի 'ի մէջ սրոյ և հրոյ թըշնամեաց. հաճի է̃ յարձակումն, թէպէտ անհաճոյ է նմա դիմադրութիւն թշնամեաց ։ Նոյնպէս դատաւորն ուղղութե̃ վճռէ զմահ մեղապարտին. բայց մեղանչէ դահճին եթէ առ ատելութե̃ կատարէ զայն վճիռ. * գործողութիւն անհաճոյ եղև. չարչարանքն հաճոյ եղեն ‖, ասեն ա̃ծաբանք. * Քանզի ոչ անտի եւ կամքն սպանանելոյ, ուստի մեռանելոյ. և ոչ 'ի միոյ ոգւոյ եղև դժնդակութի̃ ապիրատութեն՝ և համբերութի̃ փրկչին ‖. ասէ ս̃րբն Լեոն 'ի ճառն չարչարանաց ա̃ն ։ Զ̃ն տուաւ յա̃յ, և ինքն կամակար ինքնակամ ընծայեաց զանձն վասն հնազանդելոյ ա̃յ՝ 'ի ձեռս թշնամեաց իւրոց. ս̃րբն Պետրոս բացատրեաց զայս կամակարութի̃, որպէս զի մի կարծեսցեն հրէայք թէ յաղթեալ իցեն Ք̃սի հնարիւք և կարողութե̃ իւրեանց ։ Ապա մինչդեռ փրկիչն տանէր տանջանաց վասն ո՛ր և գերագոյն վախճանի, սատանայ ջանահնար լինէր 'ի խափանել զքարոզութի̃ նր̃ ։ Յուդա գործակից եղև նմա վ̃ս ստանալոյ արծաթ. հրէայք

միաբանեցան ընդդէմ նորա առ նախանձու. քահանայք վասն շահախնդրութեան. պիղատոս առ մարդկային երկիւղի. ոչ ոք վասն կատարելոյ զկամս ա̅յ. ամենեքեան դիտէին մեղանչել ընդդէմ ա̅յ, որ թոյլ տայր նոցա, ա̅յ թոյլ տայ այլոց մեղաց, զայն զարհուրելի սեղանակապտուի : Մ̀ձիւ այնր մահու կապակցեալ էր ընդ կանխագիտութեան, և ոչ ընդ հրամանի նոցին ամպարշտութեան :

Տասներորդ՝ * Որ ա̅ծ յարոյց 'ի մեռելոց||: Ի՞նչ յարեաւ խորով զօրութ̅. վասն է՞ր ապա աստ՝որն պետրոս թէ ա̅ծ յարոյց զնա : Պատասխանի. Որ առաքեալն մեծաւ իմաստութ̅ այսպէս խօսեցաւ առ 'ի չարկանել առաջի բազում խնդիրս միանգամայն : Ը՛ստ էր նմա առ ժամն հաւանեցուցանել թէ Ք̅ս յարուցեալ է. զոր թէ միանգամ հաւատասցեն, այնուհետեւ դիւրին էր խելամուտ առնել նց̅, թէ Ք̅ս գոլով ճշմարիտ ա̅ծ, չունէր պէտս արտաքին զօրութեան 'ի յառնել. զի ինքն ըստ որում ա̅ծ, հաղորդեալ էր ինքեան ըստ որում մարդ զայս ներքին կարողութի̅ 'ի յարութի̅ իւր :

## ԳԼ. Գ.

Պտուղ առաջնոյ քարոզութեան սրբոյն պետրոսի 'ի դարձման մեծի բազմութեան յանձնդրաց եւրոց : Մկրտութիւն նոցա եւ եռանդն :

*Եւ լուեալ զայս զղջացան 'ի սիրտս իւրեանց ||.
(գործ. բ. 37. ց43.)

Քարոզումն պետրոսի առաքելոյն զեղջ մեծ զարթոյց յունկնդիրս նորա : Հաւանեալ նոցա ընդ կարողութիւն, ընդ փառս, և ընդ մեծութիւն Քրիստոսի մերոյ, երկեան յոյժ ընդ սոսկալի սեղանակապտութիւն յորում ոմանք միաբանեալ էին 'ի սպանութիւն Յիսուսի, այլք հաւանեալ ընդ այն. և իւրաքանչիւր մեղապարտ ճանաչելով զանձն, 'ի ներքուստ 'ի զեղջ հարեալ, ըղձանայր առնել հատուցումն ինչ փոխանակ մեծի չարեացն զոր գործեաց: Բայց մահն վճարեալ էր. փրկիչն համբարձեալ էր յերկինս, ոչ եւս երեւէր յերկրի. ոչ գոյր տեղի խոնարհութեան դնել առ ոտս նորա. և ոչ գիտէին հնարս ինչ գտանել առ ազատելոյ 'ի մեղաց անտի. վասն որոյ յուսացան թէ նովին միջնորդաւ որով 'ի զեղջ եկին, նոյնպէս լուսաւորեսցէ զնոսա : Եղբայրական վստահութեամբ խնդրեցին օգնութիւն 'ի սրբոյն պետրոսէ և յայլոց առաքելոց` առաջնորդել և խորհուրդ տալ նոցա :

Յայնժամ սրբն պետրոս դարձաւ 'ի սրտապնդել զզղջացեալս, քաջալերելով զնոսա 'ի յոյս բարի. ապաշխարեցէք զմեղս ձեր. և մկրտեսցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ յանուն Յիսուսի Քրիստոսի. և ընկալջիք զթողութիւն մեղաց. և հոգին սուրբ զպարգեւան իւր հեղուցու և 'ի ձեզ. խոստմունք փրկութեան արարեալ բազում անգամ` և առ ձեզ եղեն. և ոչ առ ձեզ միայն, այլեւ առ որդիս ձեր. և ոչ առ նոսա միայն որք աստ են, այլեւ

առ նոսա որք հեռի են ժամանակաւ և տեղեաւ զորս կոչեաց տէր ա՟ծ մեր. յաւել և այլ վկայութիւն ճշմարտութեան, և բանս բազում յիւրմէ. և նոր բորբոք 'ի ջերմութիւն սրտից նոցա. յորդորելով որոշել խորշել 'ի գործոց և 'ի խորհրդոց ազգի այնորիկ խոտորելոյ, զի գտցեն զփրկութիւն: Նոքա որք յօժարութեամբ ընկալան զբանս նորին, և բարիոք պատրաստեալ գտան, մկրտեցան. և յաւուր յայնմիկ յաւելան 'ի նոր եկեղեցին անձինք իբրև երեք հազարք: Այս դարձ ոչ եղև խառնաշփոթ. և ոչ եռանդն ինչ անցաւոր. այլ կացին մնացին հաւատարիմ 'ի վարդապետութեան առաքելոց. և 'ի ձեռաց նոցա առնուին զնոր հաղորդութիւն. և ընդ նոսա հանապազորդէին յաղօթս:

*Եւ լուեալ զայս զղջացան 'ի սիրտս իւրեանց‖: Սրտի 'ի նոր գիրս յաճախ իմանի կամքն: Մեղաւորք երբեմն 'ի լսել քարոզս, փղձկին, արտասուեն. և այս է զեղջ աչաց. բախեն զկուրծս, և այս է զեղջ ձեռաց. այլ կան մնան 'ի մեղս. և այնու ցուցանեն թէ չունին զեղջ 'ի սիրտս: Յայնժամ կոչի ոք ճշմարտապէս զղջացեալ, յորժամ մեղքն այն որ երբեմն բերկրեցուցանէր, դառնայ 'ի տանջանս և 'ի ցաւագին խոց կամաց: Այսպիսի եղև զեղջ և ապաշաւ այնոցիկ ունկնդրաց պետրոսի. *զղջացան 'ի սիրտս իւրեանց‖:

*Եւ ասեն ցպետրոս և ցայլ առաքեալսն՝ զի՞նչ գործեսցուք արք եղբարք‖: Պարտ էր ամենայն կրօնաւորաց, եւս առաւել քարոզչաց այնպէս բարեկարգել զկենցաղ և զբանս իւրեանց ընդ աշխարհականս, զի առցեն բարձր համարումն զնոցանէ, առ 'ի յուսալ առնուլ բարի խորհուրդ և առաջնորդութի 'ի նոցանէ. և ունել յորդական համարձակութի մերձենալոյ առ նոսա վստահութեամբ՝ գտանել 'ի նոցանէ մարդասէր ընդունելութիւն: Այսպէս եղև բանախօսութիւն նորին պետրոսի. այսպիսի կենցաղ նորա և այլոց առաքելոց, որով ժողովուրդն համարձակեցաւ մերձենալ առ նոսա իբրև առ եղբարս, արք եղբարք: Զայս անուն եղբօր աստ զառաջինն գտանեմք տուեալ

'ի բազմութե՟ առաքելոյն Պօղոսի . որ 'ի բերանս նոցա էր նշան ընտանութե՟, և յառաքելումն նշան սիրոյ ։ Բազմութի՟ն այն երկիւղ մեծ առեալ էր վասն ահարկու մեղաց գործելոց 'ի խաչելութե՟ Յսի ։ Տեսանէր թէ հարկաւոր է արտաքոյ կարգի վճարումն 'ի ջնջումն այնր մեղաց ։ Ողջացեալքն յօժար էին առ ամենայն ինչ . այն յօժարութի առ ամենայն ինչ որ խնդրի առ անդրէն ստացումն շնորհի՝ է առաւել հաւաստի նշան ճշմարիտ զղջութե՟ ։ Բայց զի մի մոլորեսցին, խնդրեսցին առաջնորդութի . և խնդրեսցին յայնմանէ, որ զօլով լուսաւորեալ, ունէր զամենայն յարմարութի 'ի լուսաւորել զնոսա ։ Նաև եռանդնոտ դարձն ունի զիւր վտանգ . և ստանայ առ վաստակաբեկ առնելոյ զհոգին, փորձէ զնա՝ թելադրելով ջերմութիւնս ոչ կարգաւորեալս, և հնարի ածել զնա 'ի չափազանց ապաշխարութիւն, կամ յորաշմունս անխոհեմս ։ Զի պարտ կանոնաւոր եռանդան ձեռնարկել յիմիք առանց խորհրդոյ . * Ո՛ինչ գործեսցուք արք եղբարք ||։

Հաւատամ, թէ ամացին զարմացեալ, յորժամ 'ի պատասխանին պետրոսի տեսին զանչափ գթութի և զանսահման ողորմութիւնն այն . զի առանց ծանր ծանր պահանջմանց, շատանայ սակաւուք առ 'ի ընդունիլ անդրէն յիւր բարեկամութի . * Ապաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ ||։ Ապաշխարութի և մկրտութի խնդրեաց, ոչ առաջարկեաց ոչ ձաղկանս, ոչ խարազն, ոչ ծոմապահս և ոչ այլ ինչ սոյին սակի խստութիւնս . վասն զի այսոքիւկ չէին նոյ հարկաւոր առ ընդունելոյ զթողութի մեղաց . սակայն խնդրեաց ինչ մի առաւել, քան թէ լոկ ներքին ներգործութիւն ապաշաւանաց . * ապաշխարեցէք . կամ ըստ այլ թարգմանութե՟ ապաշխարութի արարէք ||. իբր ասել . ապաշխարեցէք, բայց գործնական ապաշխարութե՟, որ ըստ իմիք երեւեսցի և արտաքոյ ։ Ա՟ծ ըստ հասարակ նախախնամութե՟ ոչ թողու զներգործական մեղս ծանր կամ թեթև՝ առանց կամ յատուկ և տեսական, և կամ զօրութենական և հաւասարակշիռ ապաշաւանաց այսմ՝

որ գործեաց ։ Մեղք յորդունս հասելոց ոչ քաւին և ոչ մկրտութեամբ, եթէ գոնէ անկատարապէս ոչ լիցի ընթացակից գերընական բարի շարժումն ինչ հոգւոյ անկատար զղջման ։ Եւ 'ի պաշտել զմկրտութիւն 'ի չափ հասելոց, խնդրի արտաքին նշան ինչ զղջման 'ի նմա որ ընդունի զայն. ոչ որպէս հարկաւոր ինչ առ խորհուրդն, այլ որպէս նշան բարի տրամադրութեան հոգւոյն. զի մի խափանեսցի պտուղն՝ խափանելով տուչութեան շնորհաց, և քաւութեան մեղաց ։ 'Ի խորհուրդ ապաշխարութեան ներգործութիւք ապաշխարողին են իբր մասն խորհրդոյն, զի են մերձաւոր նիւթ նորա. և պարտին լինել յայտնի նաև արտաքուստ. ապա թէ ոչ՝ եթէ լինէին լոկ ներքին, ոչ լինէին բաղկացուցիչ միոյ բոլորի, որ է որպէս պարտի լինել նշան զգալի՝ անզգալի շնորհաց ։ 'Ի խորհուրդ մկրտութեան ներգործութիւք ապաշխարողին ոչ խնդրին որպէս մասն նորա. այլ որպէս նշան ինչ բարի տրամադրութեան հոգւոյն առ ընդունելութիւն նորա. * Ապաշաւեցէք և մկրտեսցի իւրաքանչիւրոք 'ի ձէնջ ‖ ։

* Յանուն տն Յսի Քսի ‖ ։ Ոմանք զօրութեան այսր բանի համարեցան թէ առաքեալք 'ի մկրտել իւրեանց զայս ձև 'ի կիր արկանելով առէին. * Ես մկրտեմ զքեզ յանուն Յսի Քսի ‖. յորմէ ապա այլք համարեցան թէ 'ոչ մկրտութիւն այսու ձևով պաշտեալ վաւեր էր նաև զկնի ժամանակի առաքելոց ։ Այլք համարեցան վաւեր միայն յայնժամ՝ ոչ ըստ առաջին սահմանադրութեան, այլ աստուածային տնօրինմամբ ։ Պաշտպանք այսց կարծեաց բերեն բանս ինչ 'ի նախնի հարց ոմանց, յորս թուի թէ և նոքա համարէին թէ առաքեալք, և այլք 'ի ժամանակս նոցա մկրտէին միայն յանուն Յսի Քսի, առանց բացայայտ յիշելոյ զանձինս 'այլ երրորդութեան ։ Այլ ամենևին հաւաստի է թէ մկրտութիւն արարեալ այսու ձևով, * Ես մկրտեմ զքեզ յանուն Յսի Քսի ‖, անվաւեր է ։ Այսպէս սահմանեցաւ 'ի ժողովսն. այս է ձևն յայնժամ ուսուցեալ և հրամայեալ 'ի Քսէ. * Մկրտեցէք զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն 'սրբոյ ‖ ։

Յայս վարդապետութի̃ միաբանեն սուրբ հարք համաշունչ հաւանութ̃. և եթէ մի կամ երկու յայլ միտս լեալ իցեն, պարտ է և նոցա զհետ երթալ բոլորին. և ոչ բոլորն վասն նոցա արգելեալ կացցէ ։ Չիք և ոչ մի ինչ հիմն հաստատելոյ, թէ առաքեալք ամենայն տնօրինմամբ մկրտեալ իցեն սոյն ձևով. *Ես մկրտեմ զքեզ յանուն Յ̃ի Ք̃ի ‖. նա՝ է հակառակն՝ ունիմք հիմունս հաստատունս թէ 'ի կիր առնուին զձևն որ միշտ 'ի կիր արկաւ *Յանուն Հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ ‖ ։

Հրամայեցաւ 'ի Ք̃է առաքելոց մկրտել այսու ձևով. *Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ‖. ապա նոքա սոյն՝ և ոչ այլ ձևով լինէին զջուրն սրբարար ։ Յինն և տասներորդ գլուխ գործոց առաքելոց՝ սուրբն պօղոս եհարց զամենս աշակերտս՝ եթէ ընկալա՞ն հոգի սուրբ. ետուն նոքա պատասխանի, և ոչ գիտեն թէ լուեալ իցեն երբեք թէ գուցէ հոգի սուրբ. *Այլ ոչ թէ հոգի սուրբ գուցէ՝ լուեալ է մեր ‖ ։ Ապա առաքեալն զարմացեալ յոյժ ընդ այն պատասխանի. և ասէ ։ *Իսկ յի՞նչ մկրտեցայք ‖ ։ Եթէ յայնմ մկրտութեան առաքեալք 'ի կիր արկեալ էին զձևն. *Մկրտեմ զքեզ յանուն Յ̃ի Ք̃ի ‖, ո՛չ առաքեալն չունէր պատճառս զարմանալոյ իբր ընդ նոր ինչ թէ մկրտեցան առանց յիշելոյ զանուն հոգւոյն սրբոյ. այլ մանաւանդ հարցանէր թէ ո՞վ մկրտեաց զնոսա, առանց նախ ուսուցանելոյ ։ Սուրբն պօղոս ոչ կարէր իմանալ՝ թէ ո՞րպէս մկրտեցան և ոչ լուան զանուն հոգւոյն սրբոյ. զի գիտէր թէ առանց յիշելոյ զայս անուն, ոչ տային զմկրտութիւն Ք̃ի Յ̃ի ։ Բայց նոքա ընկալեալ էին միայն զմկրտութիւն յովհաննու մկրտչին ։ 'Ի յիններորդ կանոնի առաքելոց մերժի մկրտութիւն տուեալ ձևով *'Ի մահն Ք̃ի. զի ոչ ասաց Ք̃ս 'ի մահն իմ մկրտեցէք, այլ մկրտեցէք զնոսա յանուն Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ ‖ ։ Ապա ոչ այլազգ մկրտեցին առաքեալք ։

'Ի վարդապետութեան աստի զիւրին է իմանալ

թէ զինչ գիտէր սուրբն Պետրոս յառաջն. *Մկրտեսցի իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանուն Յսի Քսի ||: Ոչ նշանակեաց, թէ այն է ձև որով պարտ էր նոցա մկրտիլ. ապա թէ ոչ՝ մարթ էր ասել, թէ 'ի յաւելուլ նորա. *'Ի թողութիւն մեղաց ||, զայն ես 'ի կիր առնուլն առաքեալք 'ի մկրտելն. այլ միայն նշանակեաց թէ այնպիսի զգջացեալք մկրտեսցին մկրտութեամբ զոր սահմանեաց Քս. որ տուեալ լինի յանուն Քսի. և ունի զօրութիւն թողուլ զմեղս յարգեանց Քսի: Նաև զի այսպիսի մկրտութիւն լինի բանիւս, *Ես մկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ||, վասն որոյ 'ի մկրտիլ նոցա յանուն Յսի Քսի, պարտ էր զի մկրտեսցին սովին ձևով. *Ես մկրտեմ զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ||: Զնոյն պարտ է ասել և վասն այլոց նման բանից սուրբ գրոց. որպէս վասն եփեսացւոց. զորոց ունիմք 'ի գործս (գլ. ժթ.) *Նա իբրև լուան, մկրտեցան յանուն Տն Յսի ||: Այն պօղոս, որ ըստ որում տեսաք՝ զարմացեալ էր, թէ ո՞րպէս մարթ էր նոցա մկրտիլ, առանց լսելոյ 'ի ձեռն զանուն Հոգւոյն Սրբոյ, անշուշտ 'ի մկրտութեան յայնմիկ ոչ զանց արար զանունն զայն. և սակայն ասի թէ *Մկրտեցան յանուն Տն Յսի ||. վասն զի յայտնի է թէ որ մկրտի մկրտութեամբ զոր սահմանեաց Քս, մկրտի բացայայտ յիշմամբ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ:

*Նաև ընկալջիք զաւետիս (ըստ այլ Թարգմանութեան) զպարգև Հոգւոյն Սրբոյ ||: Բազում են պարգևք զոր 'ի մկրտութեան Հոգին Սուրբ հեղու 'ի հոգին. սրբարար շնորհ, և ընդ նմա որդեգրութիւն Աստուծոյ. և իրաւունք 'ի ժառանգութիւն յաւիտենական արքայութեան. և հեղեալ ունակութիւնք առաքինութեանց, բովանդակ են պարգևք որք 'ի ձեռն մկրտութեան հաղորդին մեզ յաստուածային առատաձեռնութենէ: Բայց թուի թէ սուրբն Պետրոս աստ առաւել իմն լիութիւն պարգևաց իմանայ. թէ բաց յաստուածաբանական շնորհաց և 'ի գերբնական ունակութեանց տուան այնպիսի նորոգ մկրտելոց և ևս շնորհք որք կոչին ձրի տուեալք. որպէս՝ իմանալ զլեզուս օտարատիս՝ ոչ երբէք ուսեալ. Թարգմանութիւն աստուածային

գրոց. յաջողութիւն 'ի քարոզել և յուսուցանել ըզքրիստոնէութիւն. բժշկութիւն հիւանդաց, ազատութիւն 'ի դիւաց, և այլ սոցին նմանք: Այն պետրոս կամեցաւ յայնժամ վաղվաղակի զկնի մկրտութեան տալ և զխորհուրդ դրոշմին, բազում նպաստելով թէ մարդիկ ներքոյ անկեալք ծանր ծանր փորձութեանց 'ի ժամանակս հալածմանց՝ վաղվաղակի զօրասցին այնուիկ մեծագոյն առատութեամբ օգնութեանց, որք 'ի ձեռն դրոշմին հեղանին 'ի հոգին 'ի սրբարար հոգւոյն այ. և զի յայնժամ հոգին սուրբ սովոր էր տալ նշանս զգալիս իւրոյ ներկայութեան, այնպէս էր աստ ընդունել ըզհոգին սուրբ, որպէս աստ՝ ընդունել զխորհուրդ դրոշմին: Եւ իբր թէ այս խորհուրդ յայնժամ առաւել զօրաւոր էր քան թէ այժմ: Խորհուրդք ոչ են տունկք, որք յանցանել ժամանակաց տկարասցին: Նոյն այսօր որպէս յայնժամ՝ սրբէ զհոգիս բարիք պատրաստեալս, և տայ նոցա օգնութիւս զօրաւորս 'ի քրիստոնէական պատերազմունս: Բայց զշնորհս ձրի տուեալս, որք ուղղակի կարգեալ են յօգուտ այլոց, և ոչ 'ի բարին ընդունողին, քաղցր նախախնամութիւն այ յարմարէ առ հարկաւորութիւն և առ պարագայս ժամանակին:

'Ի սկզբան նորածնեալ եկեղեցւոյն՝ կամելով զի հաւատն ընդ աշխարհ ամենայն ծաւալեսցի, 'ի դէպ էր զի բաց յերկոտասան առաքելոց, նաև այլք բազումք 'ի նոր հաւատացելոց կարիցեն քարոզել և ուսուցանել. և առ այն հարկաւոր էր ծանօթութիւն օտար լեզուաց, և ողջամիտ իմացումն ածային գրոց. 'ի դէպ էր զի քարոզիչք հաւատոյ լինիցին 'ի յարգի առ անհաւատս. և առ այն օգնէր զօրութիւն սքանչելագործութեան, լոյս մարգարէութեան, և կարողութիւն հանելոյ զդեւս. այս պարգեւք տուեալ լինէին ոչ ամենեցուն, այլ իւրաքանչիւրոց ոմանց՝ յորժամ ընդունէին զխորհուրդ դրոշմին: 'Ի տարածիլ եկեղեցւոյն, 'ի բազմանալ գրոց և վարդապետաց, դիւրին եղև ջանիւք ստանալ զլեզուս. 'ի զօրանալ սուրբ հաւատոյ ամենատեսակ զինուք հոգևորականօք, դադարեցաւ հարկաւորութիւն. ուստի ոչ ևս եղև հան-

բնական ած հաւատացելոց տալ զայսպիսի պարգևս ընդ խորհրդոյ գրոցն ։

*Եւ յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրև երեք հազարք ‖ ։ Արժ է ընթերցողին հանել աստի երկու տարակոյս ։ Մին՝ որովհետև այս պատմութի է բան այ, և ած ճշգրիտ գիտէ թէ քանիք որոշակի դարձան յայնմ աւուր, որպէս ոչ նշանակի աստ որոշ թիւ դարձելոյն. այլ որպէս թէ չէր լիով ծանուցեալ, յաւելու զէճէդ. որ երևի նշան անդիտութե ։ Երկրորդ՝ զիա՞րդ ՚ի մի կէս աւուր ՚ի պետրոսէ, նաև յերկոտասան առաքելոց՝ մարթացան այնչափ բազմութի հաւատացելոց մկրտիլ ։

Առ առաջնոյն՝ գիտել պարտ է, զի յածաշունչ գիրս՝ են որք գրեցան ածային յայտնութբ, ազդելով, կամ թելադրելով յայ, առանց գործակցութե մարդկային հանճարոյ և ճարտարութե. և են որք գրեցան մարդկային աշխատութբ և ջանիւ, բայց ընթերակայութբ այ. այնպէս զի գրողն մի սխալեսցի, և մի սուտ ինչ գրեսցէ ։ Մին՝ է բան այ ՚ի նմանէ թելադրեալ. միւսն բան այ ՚ի նմանէ առեալ և յայտնեալ թէ իւր է ։ Որպէս հրովարտակ ինչ համարի թագաւորին՝ եթէ իցէ ՚ի նմանէ թելադրեալ, և եթէ ՚ի ճարտարութե նոտարին գրեալ՝ յորժամ թագաւորն յայտնէ զայն լինել իւր, դնելով ՚ի նմա զանուն իւր և զկնիք ։ ՚Ի մասին զոր ած յայտնեաց, այնչափ միայն յայտնեաց, որչափ հաճեցաւ տալ մեզ գիտել ։ Ուստի եթէ ո՛չ ղուկաս գրեաց զգործս առաքելոց ածային յայտնութբ, ոչ կամեցաւ ած յայտնել նմա զորոշ թիւ այնոցիկ նորոգ դարձելոց. զի չէր ինչ հարկաւոր գիտել զայն ։ Իսկ եթէ՝ որպէս և առաւել հաւանելի է, գրեաց մարդկային հանճարով իբրև տեղեկացեալ յառաքելոց, և իբրև ականատես վկայ՝ գրեաց ըստ հաւաստի ծանօթութեն. *իբրև երեք հազարք ‖. և ոչ զորոշ թիւ նոցա, որ գուցէ և նմա անծանօթ էր ։ Բայց ոչ վասն այնորիկ դադարէ ՚ի լինելոյ բան այ. զի ած յայտնեաց եկեղեցւոյ եթէ իւր է այն ։

Առ երկրորդ տարակուսոյն պատասխանեն ոմանք,

թէ երեք են եղանակք մկրտելոյ. այսինքն ընկղմամբ 'ի ջուր, հեղմամբ ջրոյ, և լոկ սրսկմամբ. առաքեալք սրսկմամբ՝ ասեն, մկրտեցին զբազմութիւն 'ի միասին. ուստի չեն ինչ զարմանք թէ մկրտեալ իցեն զբազմութի՛ հաւատացելոց 'ի սուղ ժամանակի: Ընդ այս պատասխանի բազումք չեն հաւան. ընդունիմք ասեն, թէ առաքեալք մկրտեալ իցեն սրսկմամբ ջրոյ. գիտեմք զի մարթ է մկրտել զբազումս 'ի միասին այսու ձևով. * Ես մկրտեմ զձեզ յանուն Հօր ‖. Եւն. բայց խորհիմք թէ 'ի գործն այն բազումք դժուարաւ կարեն լինել առաւել քան զերիս կամ զչորս առ մի նուագ: Միով սրսկմամբ ջրոյ արկեալ 'ի վերայ բազմաց, մարթ է թէ կաթիլ մի անկցի 'ի վերայ հերաց ուրուք. այլում կարէ հասանել միայն 'ի հանդերձն. ուստի պաշտօնեայն ոչ կարէ առ ամենեսին միանգամայն ուղղել զձեն * Ես մկրտեմ զձեզ ‖. յորժամ ինքն ոչ գիտէ որոշակի, թէ ո՛վ և ո՛վ ըստ բաւականին իցէ լուացեալ 'ի նմանէ ջրո՛ն այնուիկ: Եւ ոչ կարէ անորոշ ուղղել զձեն առ այնոսիկ ևեթ, առ որս ըստ բաւականին հասանէ ջուրն. զի մինչ ասէ * Ես մկրտեմ զձեզ ‖. ինքն որոշէ զայնոսիկ, զորս ինքն լուանայ սրբարար աւազանաւն: Օրօրինակ եթէ քահանայ ոք ունելով առաջի իւր հարիւր նշխարս, դիտէր քահանայագործել զայնոսիկ ևեթ, զորս ունէր հաղորդել յայնժամ քանի մի անձանց ևեթ, ոչ քահանայագործէր և ոչ զմի. վասն զի ընդ Ճշմարտութե՛ բառիս այս, որ պարտի անկանիլ 'ի վերայ որոշ նիւթոյ, ոչ յարմարի անորոշութի իւր. նոյնպէս ոչ ոք լինէր մկրտեալ 'ի յառաջ եդեալ դիպուածդ. զի առ Ճշմարտութեն * զձեզ մկրտեմ ‖. որ որոշէ զէնթակայս՝ որոց պաշտօնեայն տայ զմկրտութի, ոչ համաձայնի անորոշութեն, որով սրսկէ զջուրն առանց գիտելոյ թէ 'ի վերայ որո՛. այլ միայն յանորոշս որում հասանիցէ: Օ այս ենթադրեալ, թէ և սրսկմամբ իցեն մկրտեալ երեք կամ չորք առ մի նուագ, թուի թէ ժամանակ միոյ կէս աւուր կարի սուղ լինէր առ այնչափ բազմութիւն:

Գրուցէ լաւ ես հաւանեցի ընթերցողին, յուշ ածելով եթէ՝որ պատմին ոչ ասէ թէ այն ամենայն բազմութիւն միայն յառաքելոց մկրտեցան. նա՝ և ոչ իսկ թէ ամենեքեան ՚ի նմին աւուր մկրտեցան։ Այլ * Յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբրև երեք հազարք. ‖ ընկալան զվարդապետութիւն առաքելոց, և յաւելան յաւուր յայնմիկ ՚ի հաւատս Յսի Քսի ոգիք իբրև երեք հազարք. և մարթ է ասել թէ ընկալան և զմկրտութիւն բազմաւոք. և ոմանք յայնմ աւուր, այլք ՚ի յաջորդ աւուրս իրօք մկրտեցան ոչ միայն յառաքելոց, այլև յայլոց աշակերտաց։

* Այլ էին հանապազորդեալք վարդապետութե՜ առաքելոցն, և հաղորդութե՜ և բեկանելոյ հացին, և աղօթից ‖։ Հաց կոչի՝որ հաղորդութիւն. զի նախ քան զհրաշալի զոյափոխութիւն հաց էր, յետ զոյափոխութե՜ տեսակաւ ին պահին պատահմանք հացի. զի որպէս ասասցուք ստորև, ՚ի սկզբան անդ զհացն սրբագործեալ բեկանէին ՚ի մասունս, և բաշխէին հաւատացելոց։ Երեք են միջնորդք առաւել հարկաւորք ՚ի պահել զեռանդն և զշնորհս. բանն այ յաճախ լուեալ, հաղորդութիւն յաճախ ընկալեալ, աղօթք յաճախ կրկնեալ. առաջինն լուսաւորէ, երկրորդն ջերմացուցանէ, երրորդն ընդունի զխնդրելին։ Այլ որպէս զի մեք ես ՚ի վար արկցուք զայսոսիկ միջնորդս, դնի մեր առաջի օրինակ այնց ջերմեռանդն դարձելոց։ Այլ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոց ԽԲ։

## ԳԼ. Գ.

Սուտանքն նորոգ դարձելոց, և նոր դարձելոցն։

* Եւ լինէր ամենայն անձին՝ ահ և երկիւղ, եւն.
(Գործ. Բ. 43. ցվերջ գլխոյն։)

Նորութիւնք եթէ մեծ են և յանկարծահասք, միշտ զարմացուցանեն զհոգիս, և ներգործեն սաս-կումն, և եւս առաւել՝ յորժամ երևի 'ի նոսա նշան ինչ արտաքոյ կարգի կարողութեան այ։ Յաւուր յո-րում էջ Հոգին Սբ. 'ի վերայ առաքելոց, ամբոխն ծաղր առնէր զնոսա իբրև արբեալս։ Բայց ապա իբրև սկսան ճանաչել յայտնապէս թէ արք գլխովին անուսք՝ իմանային և խօսէին համարձակ զլեզուս օ-տարոտիս, և բազումս ոչ երբէք ուսեալս. իբրև տե-սին զի խօսէին զօրաւոր պերճաբանութբ, յառաջ բերելով և մեկնելով զածային գիրս, զոր ընա-չէր նոցա ուսեալ. իբրև տեսին զի առաջին ատենա-բանութբս աշակերտեցին զհազարաւորս, և ձգեցին զնոսա 'ի կողմն խաչեցելոյն, սկսան կարծիք ամբո-խին փոփոխիլ. և նոքա որք յառաջ էին արհա-մարհեալք, ապա եղեն ահարկուք։ Երկնչէին հա-ւատացեալք զայն երկիւղ յարգական, որ առ այծ և առ պաշտօնեայս նորա ծնանի՝ եթէ կրօնն քաջ ընդմտանիցէ 'ի սիրտս։ Երկնչէին անհաւատք հա-րեալ 'ի խղճէ մտաց՝ զայն երկիւղ, զոր ճշմարտու-թիւն հաւատոյ ծնանի 'ի սիրտս այնոցիկ, որք ոչ կա-մին ընդունել զնա, յորժամ բացայայտ նշանօք յայտնի նոցա։ Եւ եւս առաւել աճէր երկիւղն 'ի նորութէ հանապազորդ սքանչելեաց՝ զոր գործէին առաքեալք ընդ ամենայն երուսաղէմ. և թէպէտ այն սքանչելիք լինէին 'ի բժշկել զհիւանդս, 'ի հա-նել զդևս, յուսուցանել զտգէտս, էին օգտակար

և փրկական բազմաց, և վնաս ինչ ոչ բերէին ու-մեք. բայց զարհուրելի էին ամենեցուն վասն հրաշալի ա՟ծային կարողութեն՝ որով ճանաչէին գործել առաքելոց։

Չէր նուազ զարմանալի և եղանակ կենաց նոր հաւատացելոց, որ իբր հրաշագան իմն երևէր. միաբանութի սրտից և կամաց՝ որով թուէին առաւել քան զհարազատ եղբարս. փոփոխ մասնակցութիւն ընչից իւրեանց, որով ամենեքին թուէին միապէս տեարք. ժողովել յաճախ և կալ յերկար ընդ միմեանս, որպէս թէ չհանդուրժէին ապրել զատուցեալ 'ի միմեանց. էին օրինակ, որ ոչ երբէք երևեցաւ յիսրայէլի։ Մեծատունք վաճառէին զկայուն և զշարժական ինչս իւրեանց, և յօգնութի հասանէին կարօտութեան աղքատաց՝ ում զիարդ պիտոյ ինչ լինէր։ Հանապազօր երթային 'ի տաճարն, և կային անդ ընդ երկար յաղօթս և 'ի լսել ա՟ծային բանից միաբան հաճութ՟բ։ Յամենայն օր առնուին զս՟բ հաղորդութին, զոր առաքեալք տային նոցա. և նոքա տանէին 'ի տունս հաւատացելոց, և բաշխէին ամենեցուն։

Եւ այսպիսի կեանս վարելով, չերևէր յերեսս ուրուք նշան ինչ տրտմութե՟։ Ամենեքեան ուրախ էին, բերկրալից սեղանք նոցա, և վայելէին յայն ճշմարիտ ցնծութի՝ որ ծնանի յանկեղծ միամտութէ սրտի, 'ի վարելոյ պարզմտութ՟բ ընդ միմեանս, 'ի խաղաղութէ բարի խղճի մտաց. ցնծութիւն որ ոչ երբէք լծորդի ընդ ցոփութե։ Այսպիսի պարզմտութ՟բ վարելով, և յաճախ խօսելով զԱ՟յ միշտ զուարթ քաղցրութ՟բ, սիրելի էին յոյժ. և ժողովուրդն առհասարակ յօժարութ՟բ կենակցէր ը՟ նոսա, և սիրէր զնոսա։

Այսպիսի օրինակք, այսպիսի մարդասիրութիւն՝ օգնէր մեծապէս 'ի դարձումն այլոց. և Տ՟ր մխիթարէր զգովելի նախանձ նոցա, աճեցուցանելով հանապազօր զմիաբանութիւն նոցա նոր դարձելովք. որք ցանկանալով յաւիտենական փրկութեան, յաւելուին 'ի նոսա։

* Օստացուածս և զինչս վաճառէին, | և այլն ։ Գուցէ հարցանիցէ ընթերցողն ․ ընդէ՞ր այն ջերմ հաւատացեալք վաճառէին զստացուածս իւրեանց ․ ո՞չ լաւ ևս էր պահել զնոսա, և զպտուղ նոցա տանել հասարակաց, որ լինէր հաստատուն եկամուտ 'ի նպաստ կարօտութեան աղքատաց ․ ուր օտարացուցանելով զկալուածս, դրամք հանեալ անտի սպառէին փութով, և ամենեքեան աղքատանային ․ ոչ մնայր 'ի նոսա մեծատուն որ կարիցէ օգնել հասարակաց կարօտութեան ։ Պատասխանի ։ Սխիլանտիոս հերետիկոս այդպէս կամէր թէ արարեալ էին ․ այլ Ք՟ս տ՟րն մեր այլազգ խորհուրդ ետ ․ վասն որոյ և ս՟րբն Հերոնիմոս ՟ը այնմ խօսի ընդդէմ վիգիլանտիոսի ․ և ս՟րբն Օգոստինոս, ս՟րբն Ամբրոսիոս, ս՟րբն Գրիգոր, Կասսիանոս աբբայն, կարդինալ Պելլարմինոս, և համօրէն հարք և ա՟ծաբանք միաբան հաւանութեամբ ուսուցանեն թէ մեծագոյն կատարելութիւն է մերկանալ վասն սիրոյն ա՟յ յամենայն ստացուածոց, քանթէ պահել զտէրութիւն առ երկարագոյն օգնելոյ աղքատաց ։ Խրատն աւետարանական վաճառել և տալ աղքատաց, չունի իւր առարկայ զշահ առողին, այլ զմեծագոյն անջատումն յերկրաւոր ընչից այնորիկ որ մերկացուցանէ զանձն, և զմեծագոյն վստահութիւն զոր նա դնէ յա՟ծային քաղցր հայրական նախախնամութեան ։ Յայսմ մեծագոյն անջատման, և յայս մեծագոյն վստահութի հաստատեալ է մեծագոյն աղքատութեան կամաւորապէս յանձն առեալ ։ Կարգաւորեալ սէրն նախ խնդրէ զիւր կատարելութիւն ․ և ապա զայլոց օգնութի ։ Յօգնութիւն հասանիլ աղքատաց՝ է ներգործութիւն ինչ առաքինութեան հաճոյ ա՟յ ․ բայց մեծագոյն յոյժ առաքինութի է օգնել աղքատաց, միանգամայն և աղքատանալ առ լաւ ևս ծառայելոյ ա՟յ, և առ առաւել նմանելոյ Յ՟սի Ք՟սի մերոյ, որ առ նա՝ որ կամէր լինել բարի, ասաց, արա՛ ողորմութիւն ․ իսկ առ որ կամէր լինել կատարեալ, ասաց, երթ վաճառեա զամենայն զոր ունիս, և տուր աղքատաց ։ Ահա պատճառն՝ որ վասն առաջին հաւատա-

ցեալք * զստացուածս և զինչս իւրեանց վաճառէին ||։

* Այլ առ ամենայն բեկանէին զհացն ||։ Ի սկզբան նոր եկեղեցւոյն հաւատացեալք ոչ առնուին զխորհրդական կերակուր սբյ հաղորդութե միայն յեկեղեցիս. և ոչ եկեղեցիք կային շինեալ արտաքոյ տանց այլ իմն մեծաշէն հոյակապ ձևով, որպէս այժմ։ Մասնաւոր անձինք նուիրէին առաքելոց և եկեղեցական առաջնորդաց զդահլիճ, կամ զմեծագոյն սենեակ մի 'ի տունս իւրեանց. և անդ ուղղէին սեղան, և կատարէին զՍբ խորհուրդն. զի չէր հնար քրիստոնէից շինել հրապարակական եկեղեցի յահէ անհաւատից, և ոչ իսկ քրիստոնեայք ամենեքին կարէին դիւրաւ հաւաքիլ յառաջեալ դահլիճս կամ 'ի սենեակս նուիրեալս 'ի պէտս եկեղեցւոյ, զոր 'ի ծածուկ բանային վասն աղօթից։ Նաև քահանայք առ համեմատութբ բազմութե քրիստոնէից կարի սակաւ էին, ուստի առ դժուարութե ժամանակին և պարագայից, 'ի մատակարարութե խորհրդոց բանադատէին այլ և այլ ծէսս 'ի կիր արկանել քան զայնս որք յետոյ հաստատեցան՝ յորժամ հանգեաւ սբ եկեղեցին 'ի վրդովմանց։ Բազմին պատարագք՝ զոր առաքեալք մատուցին 'ի վերնատան ուր ընկալան զհոգին սբ, կատարէին միայն նուիրմամբ և քահանայագործութբ. զկնի որոյ ասէին զՀայր մերն. և վաղվաղակի ճաշակէին, և կատարէին զպատարագն։ Այլ զի յայնժամ զբաղեալ էին յոյժ 'ի քարոզել, 'ի մկրտել, և 'ի պաշտել զայլ խորհուրդս, ուստի առ հարկի և պատարագք նոցա համառօտ էին յոյժ։ Յետ այնորիկ առ սակաւ սակաւ 'ի հաստատիլ և 'ի խաղաղիլ եկեղեցեաց առ 'ի նոցանէ հիմնելոց, յաւելան 'ի պատարագն աղօթք և ընթերցուածք. որպէս մարթ է տեսանել 'ի պատարագամատոյցս նոցա։ Զկնի ժամանակաց բազում սբ եպիսկոպոսունք սահմանեցին 'ի վիճակս իւրեանց մասնաւոր ծէսս մինչև ցՍբն գրիգոր հռովմայ հայրապետ. որ թոյլ տուեալ ամբրոսեան ծիսի ուր մուծեալ էր 'ի պատիւ սբյ արքեպիսկոպոսին ամբրո

սխոսի, զբոլոր եկեղեցիս լատինացւոց առ 'ի մի ձեւս, որով մինչեւ ցայսօր վարին ։

Առանց սեղանոյ, եւ առանց սրբազան սպասուց ունիմք իբրեւ աւանդութիւն թէ ոչ իսկ առաքեալք կատարեցին երբեք զնոր պատարագն, բայց միայն զի սեղանն երբեմն էր փայտեայ, որ այժմ պարտի լինել 'ի քարէ. զզգեստք եղեն նոյն զոր այժմ 'ի կիր առնումք ըստ գոյացութե եւ ըստ իրին, 'ի ձեւն միայն եւ 'ի վայելչութիւն այլայլեալ ։ Հին յիշատակարանք յիշեն զայնոսիկ. եւ ոչ ընաւ գտանի թէ նորոգ իցեն մուծեալ 'ի ժամանակս դրողացն այնոցիկ ։ Իւրաքանչիւրն գրէ իբրեւ 'ի վաղնջուց 'ի կիր արկեալ եւ պատշաճաւոր. յորմէ իրաւամբք իմանի թէ յառաքելական աւանդութենէ իցէ եկեալ ։

Արդ՝ մատիցուք անդրէն 'ի բնագիրն ։ 'Ի ժամանակս առաքելոց հացն զոր 'ի կիր առնուին 'ի նիւթ հաղորդութեան, էր հասարակ՝ որպէս սովորութիւն 'ի կիր առնուին 'ի հասարակ սեղանս մեծաքանակ. այլ գծեալ 'ի նմա գիծս խորամուխս քառակուսիս ընդ երկայն եւ ընդ լայն, որով ձեւանային քառակուսի մասունք. զոր վասն ձեւոյն հռովմայեցիք կոչէին [illegible], այսինքն քառորդք. եւ 'որ գիրք կոչեն [illegible], վասն քանակութեան. զի էր իբրեւ հասարակ պատառ մի հացի ։ Իսկ 'ի բաշխել հաւատացելոց զայն բաղարջ սրբագործեալ, ոչ հատանէին երկաթով, այլ ձեռօք բեկանէին ըստ խորագոյն գծիցն, որք դիւրացուցանէին զբեկանելն 'ի մանր մասունս ։ Այսուիկ ծանօթութիւն, որ հաւաստի է առ մեկնիչս, իմանի թէ զինչ իցէ * բեկանել զհաց ||. զորմէ խօսի աստ 'որ գիրն ։ Իսկ սովորութիւն սրբագործելոյ առ լատինս 'ի բաղարջ անօր եւ 'ի մանր բոլորաձեւ մասունսն՝ զոր սովորաբար կոչեմք [illegible], որք եւ առանց հարկաւորութեան բեկանելոյ բաշխին հաւատացելոց, ընծայի սրբոյն աղեքսանդրի առաջնոյ՝ հայրապետին հռովմայ. որ յաջորդեաց զաթոռն յետ սրբոյն եւարիստոսի, յամի փրկչին 119. եւ մեռաւ նահատակութեամբ 'ի 130. ուստի եւ կարի հին է. եւ յետոյ դիւրացուցաւ 'ի գործել եւ 'ի

հատանել 'ի մասունս 'ի ձեռն երկաթի գործեաց . որով արագ և հեշտեաւ պատրաստի այս հաց այնչափ անօսր և մանր ։ Ապա ամենայն եկեղեցիք լատինացւոց կալան զայս սովորութիւն իբրև առաւել դիւրին և անաշխատ քան զբեկանել ձեռօք ։

* Առ սմին բեկանէին զհացն ‖ ։ Մարթ է հեշտեաւ 'ի միտ առնուլ, թէ առաքեալք առնէին զսուրբ պատարագն ոչ ամենեքեան 'ի վերնատունն 'ի նոյն ժողովատեղին, այլ յայլ մասնաւոր տունս 'ի դիւրուն հաւատացելոց . յընթեռնուլ թէ սոքա * էին 'ի միասին‖, չէ պարտ իմանալ թէ նոքա ամենեքեան 'ի մի փողոց՝ եւս առաւել թէ 'ի միում տան բնակէին, որ անկարելի էր . զի հազարաւորք էին հաւատացեալք . երբեմն երբեմն ժողովէին, բայց ոչ ամենեքին, և ոչ 'ի միում տեղւոջ . զի ոչ տանէր՝ ոչ զինուորական, և ոչ քաղաքական կառավարութիւն՝ այնչափ բազմութեան յաճախ ժողովիլ 'ի միասին ։ Այլ ժողովէին յայլ և այլ տունս . և ոմն յառաքելոց աստ, և այլ ոմն այլուր մեկնէր զսուրբ գիրս, և պատարագէր և բաշխէր զսուրբ հաղորդութիւնն ։

Նաև 'ի մատակարարութեն նոյ հաղորդութեան վասն անյաջողութեան ժամանակաց՝ յայլ և այլ գաւառս այլ և այլ էին սովորութիւնք . ուրեք ուրեք զսուրբ հաղորդութիւն ոչ դնէին 'ի բերան հաւատացելոյն, այլ տային 'ի ձեռս նորա ։ Սուրբն Կիւրեղ Երուսաղէմացի՝ որ ծաղկեցաւ 'ի չորրորդ դարու եկեղեցւոյն «Քրիստոսի, 'ի կոչ . ընծայ». ստորագրէ զեղանակն զոր վարէին մինչև ցիւր ժամանակս . 'ի մերձենալ ուրուք առնուլ զսուրբ հաղորդութիւն, զձախ ձեռն դնէր 'ի ներքոյ աջոյն . զոր ունելով փոքր մի գոգաւոր, առնոյր անդ զսուրբ հաղորդութիւն . զոր ապա ինքն տանէր 'ի բերան իւր, կամ յարգութեամբ պահէր հաղորդիլ յայլ օր 'ի տան իւրում ։ Կանայք դնէին 'ի վերայ ձեռաց փոքրիկ պատառ մի սպիտակ, և 'ի վերայ այնորիկ առնուին զսուրբ խորհուրդն . զորմէ վկայէ սուրբն մաքսիմոս առ կարդինալ բարոնիոսի յամին 57 . Քրիստոսի Տեառն մերոյ ։ Վասն հաղորդելոյ և կանանց ձեռամբ իւրեանց և 'ի տան իւրեանց, ունիմք յայտ-

նի յիշատակ 'ի տերտուղիանոսէ ('ի գլ. Ե. գիրք Ա.) գրեալ 'ի նմանէ առ կին իւր ։ Նաև 'ի սմին կիպրիանոսէ 'ի գիրս յաղագս անկելոց. և 'ի գիրս յաղագս տեսարանաց. 'ի սմին բարոզէ 'ի Թուղթն առ կեսարիա ։ Այս սովորութիւն յաւելան բազում անպատուութիւնք և անարգութիւնք՝ զկնի բազմնալոյ յոյժ քրիստոնէից, զի ոչ էր յամենեսին բարեպաշտութիւնն և եռանդն առաջնոյն ։ Ուստի յանցանել ժամանակաց բազմանալով եկեղեցեաց, և ազատ գոլով և 'ի խաղաղութե պաշտօնէից նոցա քահանայից, սկսան առաջնորդք և սինհոդոսք վաղ կամ անագան սահմանել՝ զի 'ի վիճակի իւրեանց որ առնու զհաղորդութի, նոյն հետայն ճաշակեսցէ զնը խորհուրդն. մի ևս լիցի պահել զայն և տանել արտաքոյ եկեղեցւոյն ։ Սինհոդոսն տոլետոյ 'ի 400. ամի, արար զայս սահմանադրութիւն ընդ պատժով նզովից յանցանողին ։ 'Ի սկիզբն վեցերորդ դարու արար սմին նման սահմանադրութի ժողովն սարագոսայի (քաղաքին սպանիոյ) ։ 'Ի վախճան տասներորդ դարու 'ի ժամանակս սմին փուղբերտոսի եպիսկոպոսի շարդրէ քաղաքի գաղղիոյ այս սովորութիւն յայնմ վիճակի ամփոփեալ էր միայն առ նոր ձեռնադրեալ քահանայս. որոց յետ ձեռնադրութե տայր եպիսկոպոսն նշխար մի մեծ սրբագործեալ. զոր նոքա ամփոփեալ 'ի մաքուր տփի, և տարեալ 'ի տուն՝ հանապազօր ճաշակէին անտի զփոքրիկ մասն ինչ ընդ աւուրս քառասուն. յորս հրաժարէին 'ի պատարագելոյ և պարապէին 'ի պատրաստութիւն առաջնոյ պատարագի ։

Այս ևս սովորութիւն բարձաւ 'ի խնդրոյ նորին փուղբերտոսի 'ի պատճառս քահանայի միոյ, որ 'ի ճանապարհի կորոյս զտուփն հանդերձ 'ը նշխարաւն. 'ի վերայ այսր դիպուածոյ գրեաց նա ինքն 'ը եպիսկոպոսն առ փինարդոս, զի այնուհետև մի ևս դիպեսցի այնպիսի վտանգ ։ Նաև այսպէս ուրեք վաղագոյն՝ և ուրեք անագան ամենայն եկեղեցիք դարձան 'ի ծէսն, որ առաքելական աւանդութեամբ միշտ 'ի գործ արկաւ յեկեղեցւոջ ըստ ներելոյ պարագայից.

զի միայն քահանայք 'ի պատարագել իւրեանց հաղորդեսցին ինքնին ճաշակելով զՏր խորհուրդն յինքեանց սրբագործեալ. որ յոչինչ եկեղեցի երբէք զանց արարաւ. և թէ աշխարհականք 'ի քահանայից առցեն զՏր խորհուրդն, և մի տարցին 'ի տունս իւրեանց։ Զայս քաղեմք 'ի սր ժողովոյն տրիտենտինոյ որ 'ի նիստն երեքտասան ('ի գլ. 8.) հաստատէ թէ * խորհրդական ճաշակումն միշտ յեկեղեցւոջն Այ սովորութիւն եղև զի աշխարհականք 'ի քահանայից առցեն զհաղորդութի. իսկ քահանայք պատարագիչք անձամբ հաղորդեսցին. այս սովորութի իբրև յաւանդութենէ առաքելոց իջեալ, իրաւամբք և արժանապէս պահելի է ||։

Աստ արժան է 'ի միտ առնուլ զԳ գերիմաստ վարդապետին Փրանչիսկոսի սուարիզի, թէ երկու այլ և այլ իրք են՝ բաշխել իշխանութբ զԱծային խորհուրդն. և շօշափել զայն և տանիլ դնել 'ի բերան իւր։ Ի սահմանել անդ զառաջինն՝ ինքն Քս միայն իշխանաբար բաշխեաց իւրոց առաքելոց. և իւրաքանչիւր առաքեալ էառ զայն 'ի ձեռս և եդ 'ի բերան իւր. որպէս ասացեալ էր Քս առէք կերէք. կամ յայտնագոյն վասն բաժակին առէք զայդ և բաժանեցէք 'ի ձեզ։ Այլ բան որպէս մեկնեն առ հասարակ մեկնիչք, ասացաւ յետ սրբագործելոյ զբաժակն Ածային արեան. թէպէտ ղուկաս յառաջագոյն պատմէ։ Իշխանութիւնն բաշխելոյ զՏր հաղորդութիւնն միշտ միայն քահանայից եղև. թոյլտուութի շօշափելոյ, տանելոյ և դնելոյ 'ի բերան ձեռամբ իւրով՝ ըստ ժամանակաց նախնի դարուց տուաւ ոչ միայն սարկաւագաց, որք առ այն էին կարգեալ, այլ և աշխարհականաց։ Այս ծանօթութիք տան մեզ լոյս իմանալ թէ ոյք էին ընդ այն ժամանակս, որք բեկանէին հաւատացելոց զհացն սր հաղորդութե. և էին առաքեալք 'ի Հռմէ ձեռնադրեալ քահանայք. և թէ հաւատացեալքն հանապազօր ճաշակէին զայս փրկարար խորհուրդ. * Առ տնին բեկանէին զհացն ||։

# ԳԼ. Ն.

Պետրոս և յովհաննէս բժշկեն զոմն հաշմ 'ի ծնէ ։ Քարոզութիւն պետրոսի 'ի տաճարին ։

* Պետրոս և յովհաննէս ելանէին 'ի տաճար անդր յիններորդ ժամու աղօթիցն ‖, ևն. (գործ. գ. ցվերջ գլխոյն ։)

Աճէր զօրհանապազ թիւ հաւատացելոց յաճախ սքանչելեօք՝ զոր առնէր Տէր 'ի ձեռն առաքելոց ։ Սրբն ղուկաս զբաղումն նշանակէ ընդհանրապէս, այլ 'ի մասնաւորի առ համառօտելոյ զպատմութիւն իւր, սակաւս պատմէ զառաւել նշանաւորս. յորոց մի է բժշկութիւն ուրումն տառապելոյ աղքատի, որ 'ի ծնէ կաղ էր ամենևին ։ Երթային պետրոս և յովհաննէս 'ի տաճար անդր յիններորդ ժամու, որ էր ժամ սահմանեալ պատարագի որ կոչէր երեկոյին. ուստի և բազումք երթային յայնժամ 'ի տաճարն ընդ զոհից իւրեանց առնել և աղօթս ։ Առաջ գիտելին 'որ առաքեալքն ելթէ զենումն զառանց և արջառոց յետ մահուն Քի՝ ոչ ևս էին նուէր հաճոյական այ. այլ ոչ կամէին միանգամայն բառնալ զամենայն ծէսս մովսիսականս, առ 'ի չգայթակղեցուցանել զհրէայս, և չդժուարացուցանել զդարձ նոցա ։ Առ ոչինչ զօրէին այնուհետև մովսիսական զոհք. բայց տաճարն տակաւին 'որ էր, և տուն այ, և տեղի հասարակաց աղօթից. ուստի ոչ երթային անդր առ 'ի գործակից լինել քահանայից 'ի զոհս, այլ առ 'ի միաբան ընդ այլոց կալ յաղօթս ։ Եւ զի 'ի ժամուն յայնմիկ բազմութի երթային 'ի տաճարն, ուստի և էր ժամ դիպող 'ի վար արկանել զառաքելական նախանձ իւրեանց քարոզելով և ուսուցանելով ։

'Ի կարգս դրանց տաճարին, մին որ վասն մասնա-

ւոր վայելչութե շինուածոյն՝ առատական անուամբ կոչէր Բեթհեզդայէ. այն ինչ ընդ այն դուռն մտանէին երկու առաքեալք, վերջինչեալ կաղն խնդրէր 'ի նոցանէ ողորմութի : Նա որպէս ասացաք՝ կաղ էր յորովայնէ մօր իւրոյ. այնպ զի չէր կարող ընաւ շարժիլ և ոչ իսկ օգնականութբ ցպոյ : Համապազօր բարձեալ տանէին և դնէին զնա անդ խնդրել ողորմութի յայնցանէ որք մտանէին 'ի տաճարն : Քառասնամեայ էր այրն, և զարմանք են զի առնելով Յսի այնչափ հրաշս 'ի քաղաքի անդ և 'ի տաճարին, սա ոչ երբէք խնդրեաց 'ի նմանէ բժշկութի. գուցէ ասէ կաղինոս, ոչ գիտելով նորա զդիւրութի ինքնին քայլելոյ, նեղութի համարէր զայն յայս. և չունելով ինչ ցաւ յայնմանէ, չէր նմա ծանր այն ախտակրութի. որոյ վասն այլք ծառայէին նմա, և կերակրէին զնա առանց իւրոյ աշխատութեց : Իսկ եւ՛ գուցէ առ կենդանութբ Յսի, չև էր սկսեալ նա մուրացիկ նստիլ առ դրան տաճարին. այլ կամ իւրքն 'ի տան իւրում կերակրէին զնա, և կամ յայլ տեղի նստեալ մուրանայր : Բայց թէ այսպէս, և թէ այնպէս, ամենայն նախախնամութին կարգեալ էր, զի պահեսցի նա 'ի փառաւորել զՅս Քս յառաքեալս իւր. ոչ խնդրեաց նա յառաքելոց բժշկութի, այլ միայն ողորմութի : Ունէր տեսանել՝ թէ և նոքա աղքատ էին, բայց չէին այնպէս գձձազգեստ, զի համարիցի զնոսա անկարող օգնել նմա. մանաւանդ զի փորձով գիտէր թէ մուրողք դիւրաւ ևս առնուն ողորմութի յաղքատաց քան 'ի մեծատանց : Հայեցաւ 'ի նա պետրոս յովհաննու հանդերձ, և համարեցաւ ժամանակ և տեղի դիպող 'ի գործ արկանելոյ զիշխանութին զոր հաղորդեաց նց Յս. * Հայեաց 'ի մեզ || ասաց ցկաղն. կամեցաւ զի նա հայեսցի յերեսս նոցա, և քաջ ճանաչիցէ զնոսա, զի կարեւոր էր առ փառաւորութի այ. զի մի շփոթեսցէ զնոսա ընդ այլ բազմութե ժողովրդեանն որք մտանէին յայնժամ, և ոչ կարիցէ յետոյ հաւաստեաւ վկայել թէ ընդ ո՞յր ձեռն գործեցաւ այն նշանաւոր սքանչելիք :

Չէր ընաւ անցեալ ընդ միտս նորա տեսանել

սքանչելիս. յառեալ հայէր յառաքելումն ակնունելով առնուլ ողորմութիւն ինչ 'ի նոցանէ. այլ պետրոս ասաց ցնա, արծաթ և ոսկի ոչ ունիմ. բայց զոր ունիմն զայս տաց քեզ յօժարութ̃ն. իբր ասել, ունիմ իշխանութիւն բժշկելոյ զքեզ. և ահա բժշկեմ. *Յանուն Յնի Քնի նազովրեցւոյ արի և գնա‖։ Ասաց Յնի Քնի նազովրեցւոյ. քանզի գիտէր զի ամբարտաւան երուսաղէմացիք արհամարհէին զՅն իբր քաղաքացի արհամարհ քաղաքին նազարեթի. տեսցէ արդ աշխարհ թէ զինչ կարող է առնել արհամարհեալ նազովրեցին, որպէս զնոյն և հպարտ երուսաղէմացին՝ եթէ կարող իցէ. զայս ասացեալ, կալաւ զաջոյ ձեռանէ նորա և յարոյց զնա. և անդէն և անդ հաստատեցան բարձք նորա և սրունք, այնպ̃ զի ոչ թէ միայն կանգնեցաւ, այլ ընդոստուցեալ յոտն եկաց. և թէպէտ յամենայն ժամանակս կենաց իւրոց չէր երբէք արարեալ քայլ մի ոտին, սակայն շրջէր համարձակ։ Ընծայեալ ընդ անակնկալ բարին, զորոյ զփորձ չէր երբէք առեալ, եմուտ ընդ երկուց առաքելոց 'ի տաճարն. գնայր և խայտալով վազվազէր գովէր և օրհնէր զԱ̃ծ։ Ամենայն բազմութի ժողովրդեան ետես զնա. և գիտէին ամենեքեան եթէ նա էր որ նստէր վասն ողորմութ̃ե առ գեղեցիկ դրան տաճարին՝ լցան ամենեքին զարմանալեօք, և իբրև ապշեալ մնացին 'ի վերայ նշանին որ եղև։ Իսկ այրն բժշկեալ տեսեալ զի ուշք ամենեցուն 'ի նա հայէին, եցոյց նոցա զբարերարս իւր, պինդ կալեալ զձեռանէ պետրոսի և յովհաննու։ Ամենեքեան որք էին 'ի տաճարին թողեալ զամենայն, ընթացան և խռնեցան զերկոքումբք առաքելովք 'ի սրահին որ կոչէր սողոմոնի։

Յայնժամ դարձաւ պետրոս առ բազմութի̃ ժողովրդեանն, խօսել սկսաւ և ասէ. զի՞ այդչափ զարմացեալ էք 'ի վերայ այսորիկ. կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութ̃բ կամ քաջութ̃բ արարեալ իցէ զգնալդ դմա։ Արք իսրայէլացիք էք, և ոչ հեթանոսք, պարտ է ձեզ գիտել զամենակարողութին ա̃յ. և թէ յայսչափ ոչ հասանէ մարդկային

կարողութ՟ե։ Ա՟ծ աբրահամու, ա՟ծ իսահակայ և ա՟ծ յակոբայ, ա՟ծ հարցն մերոց՝ սովին նշանաւ զոր արար ՚ի ձեռն մեր՝ կամեցաւ փառաւորել զորդի իւր զյ՟ս, զոր դուք մատնեցիք յատեան պիղատոսի. և ոչ թողիք արձակել զնա, յորժամ նա ինքն դատաւորն անմեղ հրատարակէր զնա, և կամէր արձակել ՚ի կապանաց ձերոց։ Դուք ուրացայք զլինել նորա ս՟բ և արդար. և խնդրեցիք զայր մի մահապարտ շնորհել ձեզ։ Զառաջնորդ կենացն սպանիք, զոր ա՟ծ յարոյց. և մեք եմք ականատես և հաւատարիմ վկայք նորա փառաւոր յարութ՟ե։ Հաւատովք անուան նորա, այս է՝ կոչմամբ անուան նորա, հաստատեցաւ առաջի աչաց ձերոց սա զոր տեսանէքդ և գիտէք։ Հաւատք որ ՚ի նմանէ հեղանի, ետուն դմա զկատարեալ առողջութ՟իս զայս յանդիման ձեր ամենեցուն։ Եւ արդ եղբարք՝ գիտեմ զի անգիտութ՟բ արարիք, որպէս և իշխանքն ձեր. այլ ա՟ծ թոյլ ետ զի կատարեսցին կանխասացութ՟ք, զոր յառաջագոյն խօսեցաւ ՚ի բերանոյ մարգարէից իւրոց՝ չարչարել Ք՟սի իւրոյ։ Բայց ոչ եղև առանց ծանր մեղաց անգիտութ՟ի ձեր. ուստի հարկաւոր է ձեզ ապաշխարել և դառնալ ՚ի ջնջել զմեղս ձեր։ Արդ ապաշխարեցէք և դարձարուք առ Ա՟ծ. որպէս զի յորժամ եկեսցեն ժամանակք հանգստեան և նորոգութ՟ե յերեսաց տ՟ն, և ա՟ծ առաքեսցէ զնա որ յառաջագոյն քարոզեցաւ ձեզ՝ զյ՟ս Ք՟ս, զնա որ նստի յերկինս և ոչ իջանիցէ անտի հանդիսիւ և տեսանելի ամենեցուն, մինչև ոչ եկեսցեն աւուրք հաստատելոյ ամենայնի զորոց խօսեցաւ ա՟ծ ՚ի բերանոյ մարգարէից, մի լիցի ձեզ յայնժամ ջնջիլ յընտրեալ ժողովրդենէ իւրմէ։ Սպառնալիք, զոր յառաջագոյն արար մովսէս յատենի. * Մարգարէ յարուսցէ ձեզ տ՟ր ա՟ծ ձեր յեղբարց ձերոց իբրև զիս, նմա լուիջիք ը՟ս ամենայնի, որ զինչ և խօսեսցի առ ձեզ։ Եւ եղիցի ամենայն անձն որ ոչ լուիցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի ՚ի ժողովրդենէն ||. (բ՟. օրինաց. ժ՟ը. 15։) Ամենայն մարգարէք սկսեալ ՚ի սամուէլէ և այսր՝ խօսեցան և պատմեցին զաւուրս զայսոսիկ։ Դուք էք ու-

սեալ 'ի մարգարէից. առ ձեզ եղև ուխտն, զոր ուխտեաց ա՟ծ ընդ հարս ձեր. և մասնաւորապէս աբրահամու՝ յասելն. *'Ի զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի ‖: Ա՟ծ յարուցեալ զորդի իւր՝ նախ քան այլոց ձեզ հաղորդէ զօրհնութիւնս զայս, զի դարձջիք 'ի չարեաց ձերոց։ Թէ զինչ արդիւնք եղեն 'ի քարոզութե՟ աստի, 'ի յաջորդ գլուխդ նշանակեսցուք. աստ արժան է պարզել զփոքր դժուարութիւ՟ ինչ, որք ընդառաջ լինին յայսմ վարդապետութե՟ :

*Կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ իբրու թէ անձին զօրութբ՟ ինչ կամ քաջութբ՟ արարեալ իցէ ըզգնալդ դմա ‖: Ոչ կամեցաւ պետրոս՝ թէ կարծեսցէ ոք ունել ինքեան և յովհաննու զգաղտնիս ինչ բաւական 'ի գործել զայն հրաշական բժշկութի՟. ժխտեաց ունել իւրեանց զօրութիւն բնական՝ յարմար 'ի գործել զայն գործ: Այլ ոչ իսկ կամեցաւ թէ համարիցի ոք ունել իւրեանց իշխանութիւն կամ կարողութիւն բարոյական, որ առ լոկ հրաման տացէ հնազանդիլ ախտից. *Իբրու թէ անձին զօրութբ՟ ինչ կամ քաջութբ՟ արարեալ իցէ զգնալդ դմա ‖: Թուիցի արդեօք այս հակառակ այնմ, զոր պատմէ մատթէոս 'ի տասներորդ գլուխ աւետարանին իւրոյ յասելն. *Ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զհիւանդութիւնս ‖: Բայց գիտել պարտ է. զի այլ է իշխանութիւն ներքին բացարձակ և անկախ, և այլ է իշխանութիւն արտաքին պայմանաւոր, հաղորդեալ աստ և այժմ հանդերձ կախմամբ: Իշխանութի սքանչելագործութե՟ հաղորդեալ 'ի փրկչէն առաքելոց՝ ոչ էր ներքին զօրութի՟ ինչ որով ըստ հաճոյից իւրեանց՝ լոկ ըստ հասարակ զուգընթացութեն ա՟յ կարիցեն առանց 'ի գործ արկանելոյ զբնական պատճառս, գործել գործ հակառակ ընթացից բնութե՟. և ոչ ունակութիւն ինչ էր, և ոչ սկիզբն՝ որոյ զօրութբ՟ հարկ լիցի ա՟յ գործել արտաքոյ կարգի զուգընթացութբ՟՝ հրաշս ըստ ամենայն հաճոյից իւրեանց. այլ էր պայման ինչ զոր յանձն առ փրկիչն օգնել նոցա, և խոստումն թէ արասցէ ինքն 'ի շնորհս նոցա և նոցին միջ-

որդւութ̃ իւր ոչ ընդուն, և յառաջ ածիցէ գործս առանց այլ ինչ զուգընթացութե, նա՝ ընդդէմ պահանջման բնական պատճառաց. յորժամ վասն պատշաճ և արդար պատճառի նորին առաքեալք կամիցին գործել ինչ սքանչելեօք։

Նախագիտն է իշխանութի տիրական առաջնոյ պատճառի, և է ամենակարողութի. որ չիք արարածոյ ա̃յ, զի միայն ա̃ծ է ամենակարօղ. Նոքա որք տեսին զսքանչելիս կաղին ողջացելոյ, խորհէին թէ պետրոս և յովհաննէս ունիցին ներքին զօրութի, կամ գէթ հաղորդեալ իցէ նոցա այնպիսի իմն ա̃րութի. և զայսմանէ խօսեցաւ պետրոս և ուրացաւ ունել զայսպիսի տէրութի. * Կամ ընդ մեզ զի՞ էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութ̃, կամ քաջութ̃ արարեալ իցէ զգնալդ դմա ‖։ Այլս իշխանութին է գործիքական, և զայս իշխանութի ետ փրկիչն առաքելոց. բայց նոքա էին գործիք ոչ լոկ նիւթականք, այլ հոգեորէն և բանաւորք. ուստի թէպէտ չէին սկզբնական գործօղք, այլ միջնորդք որով լինէին սքանչելիք. սակայն ե̃ն պաշտաճաւոր կամաց նոցա շնորհէր ա̃ծ զայս սքանչելագործութիս. զայս գործիքական զօրութի ոչ ուրացաւ պետրոս։ Նաեւ նորա էր այսպիսի. * Թէպէտ արարաք զգնալդ դմա ‖. այլ իբրև գործիք. * Ոչ զօրութ̃ անձին կամ քաջութ̃ ‖։ Եթէ կամիք գիտել թէ ով 'ի ձեռն մեր արար զգնալդ դմա, նա է ա̃ծ որ կամեցաւ փառաւորել զորդի իւր զյ̃ս. * Ա̃ծ աբրահամու եւ̃ փառաւորեաց զորդի իւր զյ̃ս ‖։

* Հաւատովք անուան նորա զսա զոր տեսանէքդ և գիտէք, հաստատեաց անունն նորա. և հաւատքն որք նովաւ՝ ետուն դմա զառողջութիս զայս յանդիման ձեր ամենեցուն ‖։ Նա առաքեալն զսքանչելի բժշկութիւնն տայ անուան յ̃սի. ոչ զօրութե նիւթական բառին, այլ իմանայ զգոյացութին անուանին նշանակեալ, այսինքն զՏ̃ր մեր յ̃ս ք̃ս. որ 'ի կարդալ զանունն նորա, առժամայն զօրութ̃ ամենակարողութե իւրոյ հաստատեաց զկաղն։ Իսկ հաւատք ասելով, խօսի ե̃ն որում յաճախ է 'ի ն̃ք գիրս՝ զմէ-

բացեալն փոխանակ թմբրացելոյ վարելով. և աստ
արժան է գիտել, զի սքանչելիք գործին յա՟յ երբեմն
'ի ձեռն պաշտօնէին կամ գործողին. երբեմն 'ի
ձեռն այնմ առ որոյ նպաստ լինին. և երբեմն 'ի
յայտնութ՟ի ճշմարտութ՟ե, առ որոյ հաստատութ՟ի
լինին: Յառաջնում դիպուածի հաւատն է տրամա-
դրութիւն հարկաւոր 'ի պաշտօնեայն, յոյր ձեռն
առնէ ա՟ծ զսքանչելիս. նա՝ խնդրի 'ի նմա և վստա-
հութ՟ի, որ յաւելու 'ի վերայ հաւատոյ զհաստատուն
իմն հաւանութ՟ի թէ արասցէ ա՟ծ: Հաւատն վստա-
հացուցանէ զմեզ թէ կարող է ա՟ծ առնել, այլ ոչ
վստահացուցանէ թէ կամիցի առնել. կարողութ՟ի ն՟ր
յայտնեալ է, այլ կամքն ոչ է յայտնեալ. վստահու-
թիւն հաւանեցուցանէ միանալ ը՟ն կարողութ՟ե ն՟յ և կա-
մացն ն՟ր: Յորժամ ա՟ծ 'ի ձեռն ուրուք սիրելոյ իւ-
րոյ կամի սքանչելագործել, հեղու 'ի նմա զայս վստա-
հութ՟ի. և յառաքեալսն հեղաւ ունակութ՟ի՝ յոր-
ժամ ետ նոցա փրկիչն իշխանութ՟ի սքանչելագործու-
թ՟ե հանել զդևս և բժշկել զամենայն ցաւս և զա-
մենայն հիւանդութիւնս: Որպէս * հաւատովք
անուան ն՟ր, ‖ Յոհ, և վստահութ՟ի որ 'ի նմանէ հեղ-
եալ. հաւատովքն որ նովաւ՝ պետրոս և յովհան-
նէս բժշկեցին զկաղն:

Յորժամ սքանչելիքն գործին 'ի ձեռն այնմ, առ
որոյ օգուտ լինին, խնդրի 'ի նմա յոյս աներկևան.
և զայն ևս ա՟ծ հեղու 'ի նմա: Ի կաղն բժշկեալ ոչ
գոյր՝ ո՛չ հաւատ, և ոչ յոյս բժշկութեան, զոր ոչ
զմտաւ ածէր. այլ միայն ակն ունէր ողորմութ՟ի ինչ
առնուլ: Սքանչելիքն գործեցան յօգուտ նորա,
բայց ոչ 'ի ձեռն նորա. ընկալաւ զբարերարութին 'ի
ձեռն հաւատոց պետրոսի և յովհաննու: Իսկ յոր-
ժամ սքանչելիքն գործին 'ի վկայութ՟ի ճշմարտութ՟ե
ինչ, ոչ խնդրի ո՛չ հաւատ, և ո՛չ վստահութ՟ի, ո՛չ
յայնմ որ գործէ, և ո՛չ յայնմ որ ընդունի. բայց
միշտ կարգեալ է առ հաւատս. ըստ որում է յա՟յ
ուղղեալ 'ի յայտնութ՟ի կամ 'ի հաստատութ՟ի ճըշ-
մարտութ՟ե: Ոսկերք եղիսէի, և դի մեռելոյն որ մեր-
ձեցաւ 'ի նոսա, չէին ընդունակ ո՛չ հաւատոյ, և ո՛չ

յուսոյ. և որ ընկեց զդխակն զայն 'ի գերեզման անդր, ոչ խորհէր զգործն որ եղև. այլ ա՟ծ յարոյց զմեռեալն 'ի վկայութիւն եթէ սիրելի էր նմա այն մարգարէ: Բժշկութիւն կաղին գործեալ 'ի ձեռս առաքելոց՝ յերկուց ծագեցաւ. 'ի հաւատոյ ըստ որում այն եղև շարժիչ բացարձակ հրամանին. *Յանուն Յ՟սի Ք՟սի արի և գնա՛||. և ա՟ծ կամեցաւ յայտնել թէ սիրելի են նմա այն երկու պաշտօնեայքն իւր, և ճշմարիտ են բանք նոցա զոր քարոզեն:

*Եւ արդ՝ եղբարք, գիտեմ զի անգիտութ՟ արարիք, որպէս և իշխանքն ձեր ի՟ե. Արդ ապաշաւեցէք||: Աստ երեք դժուարութիւնք ընդ առաջ ելանեն. նախ՝ զիա՞րդ հրէայք 'ի խաչել զՅ՟ս մեղան անգիտութ՟բ. երկրորդ՝ ենթադրեալ թէ ռամիկն կուրացեալ էր անգիտութ՟բ, զիա՞րդ զկուրութիւն զայն մարթ իցէ տալ և իշխանաց նոցա. երրորդ՝ ենթադրեալ 'ի նոսա և 'ի սոսա զանգիտութիւն, որո՞վ մարթ է առնել ծանր և ամենամեծ զմեղս նոցա: Պատասխանի առ առաջինն. բազմութիւն 'ի ռամիկ ժողովրդոյ խռնելոց 'ի լուր քարոզութեան յովհաննու մկրտչին, յորս զօրհանապազ տայր ծանօթութիւն զՅ՟սէ Ք՟սէ, և մասամբ ցուցանէր զնա բարձող մեղաց, տեսին զերկինս բացեալ, և իջանել խորհրդաւոր աղաւնոյն 'ի վերայ նորա, և լսելի եղև խորհրդաւոր ձայն յերկնից, որ յայտնէր զնա գոլ որդի ա՟յ. և թէ այնպէս էր՝ յայտնի և հրապարակաւ հաստատեցաւ 'ի հնազանդիլ ամենայն ակնարկուեց նորա դիւաց. որք են արարածք յամառք և ապստամբք, և ելանէին 'ի մարմնոց. ձկունք ապուշք քան զամենայն կենդանիս՝ ի՟ը ակնարկութեան նորա լնուէին զուռկանս. հողմք և ծովք 'ի մի բան նորա հանդարտէին. ջուրն 'ի կամիլ ն՟ր փոխեցաւ 'ի գինի. և հաց և ձուկն բազմացան 'ի բաշխել ն՟ր. ամենայն տեսակք հիւանդութեանց և ախտից 'ի հպիլ նորա և 'ի հրամայել՝ նոյնժամայն փարատէին:

Այսպիսի նշանք յայտնիք և հրապարակեալք և հանապազորդք ծանուցեալ էին բոլոր ամբոխին. ապա չերևի թէ անգիտութիւն կարիցէ անբասիր առ-

նել զնոսա 'ի մեղաց։ Նոյս առաւել՝ (անցանելով այժմ առ երկրորդ դժուարութիւն) զքահանայապետս նոցա, և զդպիրս, և զփարիսեցիս, որք էին արք գրագէտք յածեալք յա̃ծայինս գիրս, և յայտնի տեսանէին զնշանս ա̃ծառաք մեսիային կանխաւ գուշակեալս 'ի մարգարէից իւրեանց. և սակայն երեւի թէ և նոյն պօղոս առաքեալ հաստատէ զայս հաստրակաց անգիտութի՝ յաւել նորա յերկրորդ գլուխ առաջին կորնթացւոց. * Խօսիմք զա̃յ իմաստութիւն ծածուկ խորհրդով ... զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏ̃րն փառաց 'ի խաչ հանէին ‖։

Եթէ դիցուք անգիտութի 'ի նոսա, եղանէ երրորդ դժուարութի, թէ զիա՞րդ գործ նոցա համարիցի 'ի մեղս։ Վասն զի առ 'ի լինել մեղք և անարգութի ա̃յ, պարտ է երկուց սկզբանց հարկաւ զուգընթանալ. այսինքն մտադրութե̄, և հաւանութե̄ կամաց. առաջինն առանց երկրորդին չև ևս է մեղք։ Մտադիր լեալ չարութեն՝ կամքն մնայ ի̃ր ընդունելոյ կամ մերժելոյ զայն. եթէ մերժէ և խորշի, գովելի է, և առնէ զոր պարտն էր առնել. իսկ եթէ ընդունի, գայ 'ի վերայ հաւանութի կամաց, և լինի պարտաւոր մեղաց. նոյնպէս հաւանութին առանց մտադրութե̄ անպարտ է 'ի մեղաց։ Ըստ այսմ, կամքն անկարգաբար գործէ, ըստ որում շարժի ըղձեմ թելադրութե̄ բանի. յորժամ չիք ներգործական մտադրութի, ըւլն կայ թելադրութիւն, ոչ ցուցանէ զինքն կամաց. ուստի յայնժամ կամքն ոչ հակառակի թելադրութե̄։ Անգիտութիւն բառնայ զմտադրութիւն. ապա բառնայ և զմեղս։ Ապա եթէ հրէայք սպանին զՏ̃ն անգիտութբ, թուի թէ ոչ անկան 'ի ծանր յանցաւորութի։

Առ լուծումն այսր դժուարութե̄ ասելի է, համօրէն հրէայք նաև տխմարագոյնքն 'ի նոցանէ գիտէին զՏ̃ն այր 'որ և արդար. հաւաստի է՝ զի ոչ ոք 'ի նոցանէ ճանաչէր զնա պարտաւոր մեղաց իմիք։ Պատաւորն լուեալ զամբաստանութիւն զնմանէ, թէպէտ ոչ ոք խօսեցաւ 'ի պաշտպանութի նորա, նա՝ և ոչ

Իսկ ինքն Յ՟ս եբաց զբերան իւր 'ի տալ զյայտնի զրպարտութիւնս, հրապարակաւ և յայտնի կրկին և կրկին վճռեաց 'ի նպաստ Յ՟ի, և հրատարակեաց զնա անմեղ։ Իսկ թէ հրէայք գիտէին զայս ամենայն, քաղի 'ի բանից աւետարանչաց, զոր ոչ ուրանայ ո՟րն պետրոս. և այսքիկ բաւական էին 'ի մահուն Յ՟ի անկանիլ նոցա 'ի ծանր յանցաւորութիւն եղեռնաւոր մարդասպանութե՟։

Երկրորդ՝ ամենեքեան պայծառ ճանաչէին զնա մարգարէ մեծ քան զամենայն մարգարէս՝ որք երևեցան 'ի ժողովրդեան յայնմիկ. և տեսանէին գործել նորա սքանչելիս և տալ նշանս, զոր յառաջ քան զնա ոչ ոք 'ի մարգարէից գործեաց երբէք։ Նաև յայտնի ճանաչէին այր հրաշալի՝ սիրելի ա՟յ և առաքեալ յա՟յ։ Այս ևս յայտնապէս քաղի յաւետարանչաց. զոր ոչ ուրանայ ո՟րն պետրոս։ Նաև այս ծանօթութիւն ևս առաւել ծանրացուցանէր զյանցաւորութիւն նոցա. վասն զի նոյին սպանութի՟ւ ուղղակի մեղանչէին ընդդէմ ա՟յ, որ առաքեաց զնա. վասն որոյ մեղան քրէական մեղս ը՟դդէմ մեծվայելչութե՟ ա՟յ։

Երրորդ՝ առաւելագոյն մասն ն՟ց ճանաչէին զՅ՟ս իւիք իրօք բարձրագոյն քան զլոկ մարդ. և թէպէտ ոչ գիտէին զնա լինել ճշմարիտ ա՟ծ, սակայն 'ի վարդապետութիւնս և 'ի սքանչելագործութիւնս տեսանէին 'ի նմա ա՟ծային ինչ, և որդիութիւն ա՟յ. ուստի և առաւել ծանրանայր ամպարիշտ և սեղանակապուտ սճիր նոցա. այլ այս ծանօթութիւն մթին էր յոյժ նոցա, ոչ ժամանէր ճանաչել զՅ՟ս գոլ ճշմարիտ ա՟ծ. և այս անգիտութիւն է՝ որ իւիք իւիք մեղմէր զեղեռնաւոր սճիր ն՟ց, զոր ո՟րն պետրոս յիշատակեաց առ 'ի փոքր մի թեթևացուցանել զծանրութիւն մեղաց նոցա։ *Եւ արդ եղբարք գիտեմ, զի անգիտութե՟ արարիք||։ Բայց այս անգիտութիւն հանդերձ այնչափ ծանօթութի՟ք զոր յիշատակեցաք, ոչ այնպէս նուազեցուցանէր զյանցաւորութիւն նոցա, որպէս թէ ոչ իցէ մեծ և ծանր. ուստի առ 'ի ջնջել զայն՝ հարկաւոր էր ապաշաւ. վասն այնորիկ ասաց ո՟րն պետրոս. *Արդ ապաշաւեցէք||։

Չորրորդ՝ եթէ յիշխանս նոցա և 'ի գրագէտս եղև անգիտութի, ոչ եղև անյաղթելի որ անբասիր առնէ 'ի մեղաց, այլ եղև կամաւոր, թանձր և ախորժեալ. որպէս խօսին ա՟ծաբանք. ուստի և մեծապէս մեղանչական: Տեսանէին զճշգրտիլ մարգարէութեց. տեսանէին զյայտնի աքանչելիս. ունէին դիւրութիւն և պարտս դիմել առ Ք՞ս, կամ առ աշակերտս նորա առ 'ի լուր և տեղեկանալ՝ և լուսաւորիլ 'ի նոցանէ, տեսանելով բազում ինչ, և կարելով և ևս բազմագոյն տեսանել եթէ կամեցեալ էր նոցա. ոչ կամեցան տեսանել, և ամենայն ճգամբ հեռացուցանելով զխորհուրդս իւրեանց յայնց յայտնի ճշմարտութեց որով յաղթահարեալ լինէին թէ Ք՞ս է ճշմարիտ ա՟ծ, և խոստացեալ մեսիայն, զամենայն հանճար 'ի վեր արկանէին խնդրել պատճառս առերևոյթս 'ի հաւանեցուցանել զինքեանս և զայլս թէ Ք՞ս է այր արժանի մահու: Նա՝ խնդրելով ամենայն ջանիւք զխաբէութի, ոչ կարէին խաբիլ. վասն զի առ 'ի հանել զնոսա 'ի խաբէութէ, պարզ խօսէր 'ի սիրտս նոցա նոյնին իսկ խիղճ մտաց: Այսպիսի անգիտութի ոչ էր 'ի չքմեղու՟ն այլ դատապարտելի անօրէնութիւն, ամպարշտութի և չարութի: Զայսմանէ անգիտութէ խօսեցաւ ս՟ն պօղոս 'ի նախյիշատակեալ թուղթն առ կորնթացիս. սակայն եթէ ոչ կամիցիմք ասել՝ թէ առաւել բնական է մեկնութին՝ զոր տան մեկնիչք 'ի նմին տեղւոջ՝ թէ իշխանք նոցա անգիտացան զփառս պատրաստեալս յերկինս հաւատացելոց. զոր եթէ գիտէին, ոչ արդեօք հանէին 'ի խաչ զնա, որ տ՟ր է տալոց զայն: * Խօսիմք զա՟յ իմաստու՟ին ծածուկ խորհրդով, զոր յառաջքան զյաւիտեանս սահմանեաց ա՟ծ 'ի փառս մեր, զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զտ՟րն փառաց 'ի խաչ հանէին ||: (ա՟. կորն. բ՟. ը:) Զոր (այսինքն զփառս) ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ: Զի եթէ ճանաչէին զայն փառսն, ոչ արդեօք զտ՟րն փառաց 'ի խաչ հանէին: Ս՟ն պետրոս ասա ոչ ասէ թէ իշխանք հրէից անգիտութբ 'ի

խաչ հանէին զՔ՟ն։ Գիտեմ ասէ զի անգիտութեամբ արարէք, որպէս և իշխանքն ձեր. ըստ մեկնութեան բեդայ, ապուլինացւոյն, կայետանոսի, սալմերոնի և այլոց, իբր ասել. Դուք ժողովուրդ թանձրամիտ կոյր զկուրայն զհետ գնացիք հրապուրանաց և օրինակի իշխանաց ձերոց. և անգիտութեամբ արարէք զայն զոր նոքա առնէին. և ոչ ածիք զմտաւ թէ նոքա առ չարութեան գործէին։ Աստի զկնի սակաւուց ունիմք տեսանել 'ի յաջորդ գլուխդ խօսիլ պետրոսի առ իշխանսն, ուր 'ի դէմս ածէ նոցա զանօրէն խաչահանութի, այլ ոչ յիշէ զանգիտութի։

Այլ զայսմանէ մարթ է տեսանել լիագոյն 'ի մեկն. պօղոսի (ա. կորն. բ. 8։)

* Որպէս զի, (կամ ըստ լատ. զի) յորժամ եկեսցեն ժամանակք հանգստեան յերեսաց Տ՟ն, և առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ զՅ՟ս Ք՟ս զոր պարտ է յերկնից ընդունել, մինչև 'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ. (կամ ըստ լատ.) մինչև 'ի ժամանակս հատուցանելոյ ամենեցուն ‖։ Այս ամենայն մեկնիչք միաբան են. և յայտնի է բնաբանն, եթէ առաքեալն ժամանակ հանգստեան ասելով, և հաստատելոյ կամ հատուցանելոյ ասելով, իմանայ զվերջին դատաստանն, զոր կոչէ ժամանակ հանգստեան. զի այնպէս եղիցի։ Քանզի հոգիք ս՟բց ոչ ևս տեսանիցեն զդիակունս իւրեանց նեխեալ և փտեալ 'ի գերեզմանս. ոչ ևս զնշխարս իւրեանց և զպատկերս ոտնակոխ եղեալ 'ի հերետիկոսաց. ոչ ևս զհաւատ իւրեանց անարգեալ յանհաւատից. ոչ ևս վշտացուցանել զՏ՟ն իւրեանց։ Ոչ իբր թէ այժմ վշտանայցեն ինչ ընդ այն. այլ զի ոչ վշտանալն է 'ի պայմանէ վիճակի իւրեանց, որ չէ ընդունակ վշտաց. սակայն այսպիսի առարկայք ըստ ինքեան վշտացուցիչք են, և 'ի վերջին դատաստանի վերջ լիցի այսմ ամենայնի. որոյ վասն կոչի ժամանակ հանգստեան։ Այս էր յորդորակ իմն, որով Տ՟ր առաքեալն հրաւիրէր զժողովուրդն 'ի դարձ և յապաշխարութի. իբր ասելով. մի զարհուրիք 'ի խստութէ ապաշխարութեան և 'ի դառնութէ հալածանաց՝ զոր ունիցիք կրել վասն

հաւատոյն Քրի . վերջացեալ նեղութիւնքն , և գայցեն ժամանակք յորում ընդ ամենայն յաւիտեանս ունիցին հանգիստ ։ Կոչէ զայն ժամանակ հաստատելոյ կամ հատուցման՝ այնու զի հրեայք քաղաքութեամբ եղիայի դարձցին և հաստատեսցին 'ի ճշմարիտ հաւատս՝ զոր կորուսին . և երևեսցի գեղեցիկ միաբանութիւն երկուց կտակարանաց , կանգնելով միոյ խաչին մերոյ 'ի վերայ տապանակի նոցա ։

Յայնժամ բարեաց և չարաց հատուցին վարձք , ամենեցուն ըստ իւրաքանչիւր գործոց . ամենայն հոգւոց դարձուսցին մարմինք նոցա , և ամենայն մարմնոց դարձուսցին հոգիք նոցա . և այսպէս եղիցին ժամանակք հաստատելոյ ամենեցուն ։ Այսու արար լռելեայն սպառնալիս առ յամառեալսն , որք հալածելով զՔն և զեկեղեցի նորա , ընկալցին յաւուր միում զհատուցումն խստասրտութեան իւրեանց ։ Ոչ արար զսպառնալիս յայտնի . այլ թողեալ զպարբերութիւն բանին անկատար , կնքեաց բանիւ մովսիսի . * Եւ եղիցի ամենայն անձն որ ոչ լուիցէ մարգարէին այնմիկ , սատակեսցի 'ի ժողովրդենէ ‖ ։

Հարցանեն ոմանք , թէ Քն որն յետ հրաշափառ համբարձման իւրոյ յերկինս , էջ կամ իջանիցէ՞ երբեք յերկիր , յառաջ քան զվերջին գալուստ իւր 'ի կատարածի աշխարհի ։ Քանզի ուրեք ընթեռնումք թէ երևեցաւ մյն պօղոսի , և այլոց բազմաց իւրոց սիրելեաց 'ի մխիթարել զնս . բայց և աստ ասէ մյն պետրոս .* Զոր ( զՔն ) պարտ է յերկնից ընդունել մինչև 'ի ժամանակս ամենեցուն հաստատելոյ ‖ ։ Ուստի երևի թէ յառաջ քան զայն ժամանակ ոչ երբեք էջ , կամ իջանիցէ յերկնից ։ Զլուծումն այսր խնդրոյ տացուք յորժամ դէպ լիցի մեզ խօսիլ վն դարձի որյն պօղոսի . առ այժմ ասեմք թէ որն պետրոս ասաց ոչ աւելի ինչ ասէ , բայց եթէ երկինք են սեպհական և հաստատուն աթոռ ամենասուրբ մարդկութեան Քի . յորմէ ոչ ևս ելցէ հանդիսիւ և փառօք , եթէ ոչ 'ի պատճառս վերջին դատաստանի ։ Այլ վասն իջանելոյ նորա առանձին երևմամբ՝ ոչ սահմանէ ինչ այսու , զի ոչ իսկ էր յառաջադիր նպատակ նորա ։

Արդ՝ տեսցուք զհետեւանս քարոզութեան զոր բա-ցատրեցաք ։

## ԳԼ. Զ.

Դուրջ յօգնութիւն բաշխմանն ։ Ընտրութիւնն երկրաց եւթն առաքելոց որք դրեցան, և պատուիրեցան նոցա լուսութիւն. պատասխանի նոցա և աղօթութիւն ։ Լսելի եղեն աղօթք նոցա յաղթեալ ըմբռնել Ստեփանոսի հոգւոյն սրբոյ ։

* Մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, ||ետ. (գործ. դ. 1. մինչև ց32 ։)

Մինչ ո̃րն պետրոս ՚ի միում կողման մեծի տա-ճարին յորդորէր զբազմութիւնն յընդունելութիւն ճշմարտութեան վկայելոյ յայտնի սքանչելեօք, զոր առաջի աչաց ունէին, նոյնպէս ո̃րն յովհաննէս յայ-լում կողման տաճարին հաւասար եռանդեամբ քա-րոզէր ։ Զայս ձայնակցութիւն երկուցն ՚ի քարոզել՝ քաղեմք ՚ի բնութէ անտի իրացն. զի գոլով ՚ի տա-ճարի անդ անհամար բազմութե, և առաքելոցն ոչ խօսելով յամփոփ կամ յայլ բարձրաւանդակ վայ-րէ, ձայն միոյ միայնոյ ոչ կարէր լինել լսելի ամենե-ցուն առանց սքանչելեաց, և չունիմք հիմն դնել աստ սքանչելիս ։ Եւս առաւել գոյ իմանալ ՚ի բացայայտ բանից սրբոյ մատենագրին՝ յասելն. *Մինչդեռ խօ-սէին նոքա ընդ ժողովրդեանն ||. աստ երկոքին խօ-սէին ։ Պտուղն մեծ եղև յունկնդիրս. զի մինչ ա-ռաքեալքն խօսէին յականջս, կաղն բժշկեալ խօսէր անձայն յաչս նոցա, և ա̃ծ խօսէր ՚ի սիրտս ։

Ոչ ամենեքեան հաւատացին. և ա̃ծ թոյլ ետ ո-մանց կալ մնալ ՚ի կարկամ յամառութե իւրեանց, զի տեսցի թէ հանդերձ ամենայն նպաստիւք կայ մնայ կամքն յազատութե իւրում ։ Այլ հաւատացին բազումք, և յաւելան յաւուր յայնմիկ ՚ի նոր եկե-

դեպին հինգ հազար հաւատացելովք։ Իսկ վարձք անձանց քարոզչաց եղև այն, որ միշտ փափաքելի էր առաքելոց, նախատինք, կշտամբանք, և չարչարանք։ 'Ի սփռիլ նոյն հետայն ը̄ քաղաքն համբաւոյ սքանչելի բժշկուէ կաղին, ժողովեցան քահանայք և իշխանք տաճարին, և սադուկեցիք։ Առաջինք ոչ կարէին տանել զի հռչակեցի հաւատ Ք̃սի Յ̃սի. զի էին արք ագահք և շահախնդիրք, և տեսանէին զի 'ի դադարիլ հին զոհից և պատարագաց, դադարէր և շահստացուի նոցա։ Յիշխանս 'ի վերայ շահախնդրութե յաւելուր և կեղծեալ իմն քաղաքական պատճառ. յոյր սակս պարտապան համարէին զանձինս արգելուլ զամենայն նորաձևութի։ Սադուկեցւոց հերետիկոսաց, որք լի էին ամենայն մոլութբք, անհանդուրժելի էր քարոզութիւն յարութե Ք̃սի տ̃ն մերոյ վասն մարմնապաշտութե իւրեանց և այլոց ապարասան ախտից և մոլութեց. ուսուցանելով թէ հոգիք մարդկան չեն հոգեղէն. ուստի ընդ մարմնոց չքանան։ Ժամ աւուրն էր ընդ երեկս. և չէր յարմար չարասիրացն այնոցիկ մտանել հրապարակաւ 'ի վէճ 'ի մէջ այնչափ բազմութե, գիտելով զի կատարած վիճին լինէր յամօթ և 'ի նախատինս ինքեանց. և ոչ գոյր ժամանակ ձգել զնոսա առանձինն և մտանել 'ի քննութի դատողական։ Փոխանակ բանից 'ի գործ արկին կապանս. երկու առաքեալքն կալեցան և արկան 'ի բանտ յայնմ գիշերի։

Իսկ 'ի վաղիւ անդր ժողովեցաւ ժողով մեծ. ուր եկին խմբեցան իշխանք և երիցունք աշխարհականք և դպիրք, որք էին ա̃ծաբանք նոցա. և աննա քահանայապետ և կայիափա, և յովհաննէս, և աղեքսանդրոս, և որք միանգամ էին յազգէ քահանայից։ 'Ի բացատրուէ ցուցաք թէ աննա և կայիափա՝ յորժամ յովհաննէս մկրտիչ սկսաւ քարոզել, 'ի միասին վարէին զիշխանութիւնն քահանայապետական. ապա երկոցունց հաւանութբ սահմանեցին փոփոխ վարել զայն պաշտօն ընդ տարի մի։ Տարին իշխանութե նչ սկսանէր 'ի ժամանակին զոր 'ի մէջ իւրեանց էին սահմանեալ, և 'ի բանից գրոյն քաղի՝ թէ էր

կամ յաւուր տօնի զատկին, և կամ 'ի պէնտէկոս-
տէին. գուցէ այս եղև պատճառն՝ որոյ վ՟ս 'ի նախ-
ընթաց աւուր տօնի զատկին տ՟րն մեր Յ՟ս նախ առ
Աննա ածաւ, և 'ի նմանէ առաքեցաւ յատեան
կայիափայի. որովհետև 'ի յաջորդ աւուր Աննա
սկսանէր վարել զպաշտօն քահանայապետութեան,
կարէին ըմբռնօղք Յ՟սի համարիլ թէ դատն այն,
զոր ոչ կարծէին այնպէս արագ վճարիլ, պատշաճեա-
ցի դատաւորին, որ 'ի յաջորդ աւուր հանդերձեալ
էր մտանել 'ի պաշտօն իւր. և Աննա առաքեաց զնա
առ Կայիափա. զի յայնմ աւուր նա վարէր զիշխա-
նութիւն:

Այսպէս յառաջագոյն քան զտօն զատկին՝ Կայիա-
փա * էր քահանայապետ տարւոյն այնորիկ||. և
զինի պէնտէկոստէի 'ի նմին քաղաքական ամի, այլ
ոչ եկեղեցական ամի, Աննա էր քահանայապետ: Եւ
այսպէս գեղեցիկ միաբանի յովհաննէս՝ որ զանուն
քահանայապետի տայ կայիափայի, ընդ ղուկասու՝
որ լռեցեալ տարւոյն կայիափայի, զանուն քահա-
նայապետի տայ Աննայի, և ոչ ևս կայիափայի: *Եւ
զԱննա քահանայապետ, և զկայիափա, և զյովհան-
նէս, և զաղէքսանդրոս, և որք միանգամ էին յազ-
գէ քահանայութ՟ե||: Որք էին այս Յովհաննէս և
Աղէքսանդրոս, ոչ գիտեմք: Յովսեպոս երբայեցի
յիշատակէ զյովհաննէս ոմն իբրև որդի կայիափայի,
և զաղէքսանդրոս՝ իբրև զոմն որ նստեալ է յաթոռ
քահանայապետութ՟ե. բայց այնու ոչ ցուցանի թէ
նոքա իցեն յովհաննէս և աղէքսանդրոս՝ զորոց խօ-
սի աստ տ՟րն ղուկաս. նա զի և ժամանակք նոցա ոչ
յարմարին: Ոմանք 'ի շնորհս յովսեպոսի սնդէն թէ
գործողութիւնք որք պատմին աստ նախընթացաբար
'ի սկզբն ղուկասու, կարի անագան եղեն: Այլ ասէ
կաղմետ՝ 'ի ս՟բ գիրս ոչ գտանեմք բնաւ նշան ինչ
այդմ. ապա չէ արժան 'ի շնորհս յովսեպոսի անհա-
ւատի՝ զկարգ կանոնական սրբազան պատմագրի
այլայլել:

Յայս հանրական անօրէն ժողով ածան երկու
առաքեալք 'ի քննութ՟ի: Զեղև հակառակութիւն

'ի վերայ հրաշիցն, զի կարի յայտնի էր. այլ միայն հարցաւ նոցա թէ որո՞վ զօրութբ, և որո՞վ բանիւ, և որո՞վ անուամբ գործեցին զայն սքանչելիս. * Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք զայս դուք ||: Այս դերանունս դուք եղեալ 'ի վերջ հարցմանն, զօրութիւն բազում ունի. և է իբր ասել. դուք որ չէք բժիշկք, դուք որ չէք գրագէտք, դուք որ չէք իշխան, և ոչ մարդիկք զօրաւորք: Եւ էր անծանօթ ժողովոյն թէ այն սքանչելիք գործեցան յանուն և զօրութ Յի Տն մերոյ: * Յանուն Յի Քի Նազովրեցւոյ արի և գնա ||. այսպէս ասաց սրբն պետրոս հրապարակաւ: Եւ կամէր ժողովն զի առաքեալք կրկնեսցեն զայն անուն. ակն ունէին թէ շփոթեալ նոցա 'ի տեսութէ մեծ և ահաւոր ժողովոյն թանդուզեսցեն ինչ, կամ զայլ իմն պատասխանի հնարեսցեն: Այլ ստիպեցան լսել զայն զոր ոչ կամէին:

Անց այն ժամանակ, յորում պետրոս յահէ աղախնոյ միոյ օտարանայր 'ի վարդապետէն իւրմէ: Համարձակեալ նովին աննուաճելի արիութեամբ՝ զոր ընոյր 'ի սիրտ նր հոգին սբ, դարձաւ և եհարց և ինքն ցիշխանս և ցերիցունս ժողովրդեանն իսրայէլի, եթէ արժա՞ն իցէ ասէ դատել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի, որով սա (ցուցանելով զկաղն ողջացեալ, զի և նա անդ էր) բժշկեցաւ: Յայտնի լիցի ամենեցուն ձեզ, և ոչ միայն ձեզ, այլ և ամենայն ժողովրդեան իսրայէլի. զի յանուն Յի Քի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցիք, և զոր ած յարոյց 'ի մեռելոց, նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ: Նովաւ՝ որ 'ի ձէնջ շինողացդ անարգեցաւ իբրև վէմ անպիտան 'ի շինուած, այլ զնա եդ ած 'ի փառաւորագոյն տեղւոջ զետեղեալ որպէս վէմ անկեան, որ միացուցանէ զշինուած երկուց կողմանացն: Չիք այլ ոք բաց 'ի Յսէ, յորում եղեալ իցէ փրկութի մեր, և ոչ անուն այլ գոյ 'ի ներքոյ երկնից, որով արժան իցէ կեալ մեզ: Կատաղէին ընդ այնչափ հաստատութիւն և համարձակութիւն պետրոսի և յովհաննու համօրէն

ժողովականք չարաժողովոյն այնորիկ ։ Գիտէին զի ազգէտք և առանց դպրութե են ։ Գիտէին զի ընդ Յի էին . և զարմանային թէ զիա՞րդ յայնմ դպրոցի ստացեալ իցեն այնչափ արիութիւն և պերճախօսութիւն ։ Կաղն բժշկեալ 'ի նոցանէ՝ որ կայր անդ յատեին ուղիղ և զօրաւոր, խնոյր զբերանս նոցա . ոչ իշխէին և ոչ կարէին տալ պատասխանի ։ Հանին արտաքս յատենէ անտի զերեսին զնոսա, և անդ խորհեցան և խօսեցան գտանել ինչ հնարս ։ Հանդերձ ամենայն չարամտութբ իւրեանց կամէին պահել ցոյց իմն առերևոյթ արդարութե ։

Այրն յորոյ վերայ եղև այս նշանս բժշկութեան, էր ամաց աւելի քան զքառասուն, և կարի ծանօթ ամենայն իսկ բնակչաց երուսաղէմի, ոչ կարէին ասել թէ խաբէութիւն ինչ եղեալ իցէ . ամենայն ժողովուրդն ուրախ լինէր վասն եղելոց իրացն, և փառաւոր առնէր զած ։ Վտանգ մեծ էր թէ աղմուկ և խռովութիւն յարիցէ, եթէ ընդդէմ պաշտօնէից այսպիսի չքնաղ սքանչելագործութեան 'ի պատժականս ձեռն արկանիցեն ։ Հետևանքն յայտնի էին յոյժ, այլ զի չէր մարթ ուրանալ զգործն, մի միայն դարման մնաց, այսինքն ջանալ 'ի մոռացումն արկանել զեղեալն . պատուիրելով սաստիկ սպառնալեօք առաքելոց և նոցին հետևողաց՝ մի ևս ընաւ յիշել զայն անուն, մի ումեք 'ի մարդկանէ, և մի ուսուցանել յանուն Յի ։ Հաճոյ թուեցաւ այս խորհուրդ . և կոչեալ զերեսին զնոսա 'ի ներքս, պատուիրեցին նոցա, ամենևին մի խօսիլ և մի ուսուցանել յանուն Յի Քի ։

Առ այն պատուէր ոչինչ շփոթեցան սբ առաքեալքն, այլ ևս առաւել արիացեալ, ասեն ցնս . դուք ինքնին ընտրեցէք, եթէ արժա՞ն իցէ առաջի այ ձեզ հնազանդիլ առաւել քան այ . այլ մեք ոչ կարեմք չխօսել զայն զոր տեսաք, և զվարդապետութին զոր լուաք ։ Ապա սպառնացան նոցա յոյժ, և արձակեցին զնոսա ։ Իսկ նոքա արձակեալքն եկին առ ընկերս իւրեանց, և պատմեցին որչափ ինչ ասացին քահանայապետքն և երիցունքն ։ Այնչափ խստասրտութիւն՝

անբերելի թուեցաւ ամենեցուն, ամենեքին միաբան յաղօթս դիմեցին։ Կարդացին առ ա՟ծ ամենակարող, որ արար զերկինս և զերկիր, և զծով և զամենայն որ ՚ի նոսա։ Յիշեցին թէ ատելութի մեծամեծացն ընդդէմ Յ՟սի ոչ նոր ինչ է առաջի նոցա, զի արդէն յայտնեալ է հոգին ծառայի իւրում դաւթի, և նովաւ հրատարակեալ աշխարհի։ * Օ մէ՞ խռովեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցա՛ն ՚ի նանիս. յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ՚ի միասին վասն տ՟ն և վասն օծելոյ նորա ||։ Արդարև ժողովեցան յերուսաղէմ ՚ի վերայ ս՟բյ որդւոյ քո Յ՟սի զոր օծերն, հերովդէս և պոնտոս պիղատոս՝ հեթանոսօք և ժողովրդօք իսրայէլի. և միաբանեալ արարին որչափ ա՟ծային իմաստութիւն և կամք քո սահմանեցին թոյլ տալ։ Այլ տէր, հայեա՛ց այժմ ՚ի սպառնալիս նոցա, և տո՛ւր արիութիւն ծառայից քոց, զի ամենայն համարձակութեամբ քարոզեսցեն զբանս քո։ Լեր տ՟ր առընթեր, ձգելով զձեռն քո ՚ի հրաշական բժշկութիւն և ՚ի նշանս և յարուեստս լինել անուամբ ս՟բյ որդւոյ քո Յ՟սի։ Իբրև կատարեցաւ միաբան մաղթանք նոցա, ետ ա՟ծ նշան թէ լսելի եղեն աղօթք նոցա մեղմ գետնաշարժութեամբ իմն տեղւոյն, ուր էին ժողովեալ։ Եւ էջ վերստին ՚ի նոսա հոգին ս՟բ լրութեամբ պարգևաց իւրոյ. և այնուհետև միշտ խօսէին զբանն ա՟յ ամենայն համարձակութեամբ։

Երկու ինչ աստէն կարեն մթին երևիլ ընթերցողին. նախ՝ թէ զիա՞րդ բազմութիւն առաքելոց և աշակերտաց և այլոց հաւատացելոց ժողովեալ ՚ի միասին առանց յառաջագոյն ուսանելոյ՝ ամենեքեան միաբան ՚ի ձայն բարձր զնոյն աղօթս արարին ոչ միայն ըստ իմաստից, այլև ըստ նիւթական բառից։ Պատասխանի. ամենեքեան այնպէս միաբանեցան. քանզի ա՟ծ այնպէս ազդեաց նոցա զնոյն բառսն։ Այս համաձայնութի էր հրաշական և ՚ի վեր քան զկարգ բնութեան։ Կամք եղեն տ՟ն ուսուցանել մեզ, թէ հաճոյական է նմա աղօթք բազմութեան մեծաձայն և միաբան արարեալ։ ՚Ի սկիզբն եկեղեց-

ւոյն չև էին տակաւին սահմանեալ սաղմոսերգութիւնք և այլ երգք և մաղթանք զորս այժմ երգեն յեկեղեցիս . այլ 'ի սկզբանէ անտի կամք եղեն այ հաւաստել մեզ՝ թէ այսպիսի միաբանական մաղթանք հաճոյ են նմա . զոր մինչ իսկ ազդեաց հրաշիւք յառաքելումն , և յայն առաջին հաւատացելոյս :

Երկրորդ՝ որպէս ասէին առաքեալք , թէ հերովդէս և պոնտացի պիղատոս և այլք՝ որք միաբանեցան 'ի մահն Յսի Քսի տն մերոյ , արարին զայն զոր սահմանեալ էր ած զի եղիցի . * ժողովեցան առնել որչափ ձեռն քո և կամք յառաջագոյն սահմանեցին լինել .|| որ գոլով գործ այսչափ մեղանչական և սեղանակապուտ , զիա՞րդ կարէ առնել յայ սահմանեալ : Զայս դժուարութիւն արդէն լուծաք ընդարձակ յերկրորդ գլուխ այսր գրոց . այլ ասասցուք համառօտիւ և աստ : Չարչարանք Քսի տն մերոյ սահմանեցաւ լոկ թոյլտուողական վճռով : Ած ոչ մղեաց զչար կամս խաչահանուաց՝ զի խաչեսցեն զորդին այ, այլ 'ի կիր արկ զչար կամս նոցա . թոյլ ետ զի 'ի գործ ելցէ և կատարեսցի , զոր ոչ երբէք կարէին 'ի գործ դնել , եթէ ած ոչ էր սահմանեալ զթոյլտուութիւն . և արար զի չարութիւն կամաց նոցա ծառայեսցէ 'ի փառս իւր . * որք ( ձեռք խաչահանուաց ) 'ի գործել զչարութիւն իւրեանց ծառայեցին փրկչին || , որպէս խօսի սն լեոն : Դարձեալ նա ինքն սբ հայրապետն ( 'ի ճառն ժԲ չարչարանաց ) ասէ . * Միթէ անօրէնութիւն հալածչացն Քսի 'ի խորհրդոյն այ ծագումն կալաւ : Իւ զայն ոճիր որ մեծ է քան զամենայն յանցանս՝ ձեռն ածային նախասահմանութեանն զինեաց : Չէ ամենևին իմանալ զայս զծայրագոյն արդարութէ՝ զի կարի այլազգ է , և կարի հակառակ այն որ 'ի չարութեան հրէից նախատեսեալ եղև , և որ 'ի չարչարանս Քսի սահմանեցաւ : Ոչ անտի յառաջ եկն կամք սպանանելոյ , ուստի մեռանելոյ . և ոչ 'ի միոյ ոգւոյ ել դժնդակութիւն եղեռնութէն , և համբերութի փրկչին : Զի ոչ տրն զամպարիշտ ձեռս կատաղելոյն յինքն մխեաց , այլ թոյլ ետ . և ոչ նախագէտ գոլով այնմ

որ առնելի էր, մղեաց զի լինիցի, թէպէտ վասն այնորիկ էառ մարմին զի լինիցի ||: Եւ դարձեալ ասէ. * Ոչ թէ որ Յն Քն զկատարելութիւն կատարելոյն կրել կամեցաւ, այլ ոչ միոյ յանցանացն այնոցիկ պատճառ եղեւ. և ոչ մղեաց՝ զի կամիցին զայնոսիկ, այլ թոյլ ետ զի կարիցեն ||:

## ԳԼ. Ե.

Եռանդն նորածագին քրիստոնէութեան, առաւելապէս 'ի փոխադարձ սէր միմեանց, և 'ի հրաժարումն յընչից: Յոհաննէս սբն բանաւոր գովաբանէ:

* Եւ բազմութեն հաւատացելոց ||, և այլն. (գործ. դ. 32. ցվերջ գլխոյն:)

Բազմութիւն յոյժ դառնային 'ի հաւատս Քնի Յնի, և յայն նորափթիթ հաւատացեալս սքանչելի էր վառեալ սէրն: Թէպէտ յայլ և այլ արենէ էին, և յայլ և այլ ազգաց՝ միմեանց թշնամեաց, բայց յընդունել նոցա զսբ մկրտութիւն, թուէր թէ դառնային լինէին եղբարք, նա՝ առաւել քան զեղբարս. այնպիսի էր միաբանութիւն նոցա, զի թուէր թէ յամենեսին մի սիրտ էր և մի հոգի: Այս փոխադարձ սէր՝ կնիք էր, որով կամէր Յն որոշիլ իւրոց աշակերտաց. * Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս ||. (յովհ. ժգ. 35.) և այսու փոփոխ սիրով էին ծանուցեալք և զարմանալիք: Նոցայն բարեսիրութին ոչ էր սէր լոկ հայեցողական և անգործ, որպէս այժմ տեսանի յոմանս. որոց պարտ գոլով 'ի պաշտամանէ իւրեանց լինել տիրապէս ողորմած, կարծեն լինել այնպիսի, եթէ ոչ մնուցանիցեն յայտնի ատելութիւնս, և ոչ մխիցեն զսուր 'ի սիրտ մերձաւորաց իւրեանց: Միայն զի քարինք իւրեանց ոչ հարկանիցեն զճա-

կատ, կարծեն թէ կարեն ծգել զքար պահելով զանէր, եթէ հարկանիցեն 'ի թիկանց: Ոչինչ խորհին վասն տառապանաց այլոց. ոչինչ խնամ ցուցանեն առ հիւանդս իւրեանց. ոչինչ դարման մատուցանեն հեծութեանց և ողբոց. ոչինչ նպաստեն կարօտելոց: Դաժան առ ստորինս. խիստ առ հաւասարս. տմարդի առ վերնագոյնս. մարդասէր միայն առ սակաւս ոմանս, յորոց երկնչին, կամ յորոց ակն ունին իմիք, և կամ առ որս բերի բնական յօժարութիւն նոցա. յետոյ պահանջեն զի գովեստք հիւսեսցին 'ի վերայ բարեսրտութեան իւրեանց: Այսպիսի սիրտ՝ բաժանիչ է, և ոչ միացուցիչ. ոչինչ ազդէ յաչս տեսանել զկարօտութիւն մերձաւորաց. ոչ շարժէ զոտս յօգնութիւն հասանել նոցա. ոչ բանայ զձեռս 'ի լնուլ զկարօտութիւնս նոցա:

Այն առաջին հաւատացելոց սիրտք հասարակաց էին, որպէս և ինչք նոցա. ոչ ոք 'ի նոցանէ ասէր զինչից իւրոց թէ իւր իցէ, այլ համարէր զայն իբր հասարակաց և այլոց ամենեցուն: Ոչ գոյր ոք 'ի նոսա կարօտ. զի որք միանգամ տեարք էին գիւղից և ագարակաց, ոմանք վաճառէին զնոսա. այլք պահելով զպտուղս վաճառէին, և զգինս նոցա բերեալ դնէին առ ոտս առաքելոց. և նոքա բաշխէին իւրաքանչիւր որպէս ումեք պիտոյ ինչ լինէր: Այս հրաժեշտ յերկրաւոր ընչից, և այս առատաձեռնութիւն 'ի դարման հասարակաց, 'ի բերանս առաքելոց էր ապացոյց մեծ՝ որով ազդուութեամբ՝ * զօրութեամբ բազմաւ || տային վկայութիւն յարութեան մերոյ Յսի Քսի: Որ միանգամ տեսանէր զայնչափ բազմութիւն ինքնակամ մերկանալ 'ի հարստութենէ իւրեանց, որ այնչափ մեծ համարեալ է աստ յաշխարհի, քաջ ճանաչէր գործել նոցա աներկեան յուսով գտանել լաւագոյնս անդ, ուր յարուցեալ Տէրն սպասէր իւրոց սիրելեաց յերկինս: Այս առատաձեռնութիւն 'ի նպաստաւորութիւն այլոց՝ ստանայր 'ի վերայ առաքելոց և 'ի վերայ այլոց հաւատացելոց սէր մեծ առաջի ամենեցուն: * Եւ շնորհք էին 'ի վերայ ամենեցուն նոցա ||:

'Ի մէջ բազմաց այնոցիկ որք յայնժամ վաճառեցին զինչս իւրեանց, եղև և սբ՟ն բառնաբաս. որ ոչ է յերկոտասան առաքելոց, այլ ունէր առաքելութիւն և սպասաւորութիւն առաքելական, որ և անուամբ առաքելոյ պատուի 'ի քրիստոնէից : Զնա յանուանէ յիշատակէ 'որն ղուկաս. զի անձն այնպիսի արժանի էր յիշատակի : Էր նա ազգաւ եբրայեցի 'ի ցեղէն ղևտացւոց. այլ 'ի ցրուիլ ժողովրդեանն 'ի պատճառս դժնդակ պատերազմաց, նախնիք նորա խոյս ետուն և բնակեցան 'ի կիպրոս կղզի : Ընդ ծնաւնա, և 'ի սկզբան կոչեցաւ Յովսէփ. այլ վասն քաղցր բարուց, որով սիրելի էր ամենեցուն, յառաքելոց կոչեցաւ բառնաբաս. որ 'ի բարբառ եբրայական նշանակէ որդի մխիթարութեան : Էր սորա ագարակ. զոր եւեթ յիշատակելով 'որ 'գրոյն՝ լռելով զայլոց, հարկ է ասել թէ ընդարձակ էր և բարեբեր. վաճառեաց զայն, և եբեր զգինսն և եդ առ ոտս առաքելոց :

Գուցէ հարցանիցէ ոք, զիա՞րդ բառնաբաս՝ որ ղևտացի էր ունէր գիւղ. ուր 'որ գիրն ( Թւոց գլ. ժը. 20. և այլուր ) յայտնի արգելու ղևտացւոց ստանալ կալուածս. * յերկրի նոցա մի ժառանգեսցես. և բաժին քո ընդ նոսա մի լիցի ‖. կամ ը՟ լատ. * մի ունիցիս բաժին 'ի մէջ նց՟ ‖ : Եւ այս խնդիր տայ պատասխանի գասպար սանկտիոս. այնպէս լինէր՝ ցորչափ ժողովուրդն եբրայեցւոց ծաղկեցաւ 'ի վարս և 'ի պահպանութիս օրինաց իւրեանց. այլ յետոյ նոր հարկաւորութի եմոյծ նոր սովորութիս : Յորժամ արգել ա՟ծ ցեղին ղևեայ չունել գեօղս և ագարակս 'ի մէջ այլոց, արար այնպիսի նախատեսչութի, զի նա ոչինչ կալուածս ունելով, առաւել հարուստ էր քան զայլ ցեղս : Բաժանելով զամենայն երկիրն աւետեաց 'ի 120 ունկիս. և բաշխելով յերկոտասան մասունս, ամենայն ցեղ առնոյր տասն. յորմէ իւրաքանչիւրն պարտական էր տալ տասանորդս ցեղին ղևեայ. և այսպէս այլոց մնայր ինն ունկի, և սմա անկանէր երկոտասան : Եւ եւս, սմա տային զառաջաւորս ամենայն հնձոց և ամենայն

պտղոց, և փրկանս ամենայն անդրանկաց մարդկան և անասնոց ։ Եւ ևս, յամենայն զոհից զոր մատուցանէին 'ի տաճարին, մի մասն երևելի մնայր 'ի պէտս ղևտացւոց ։ Եւ զի յամենայն եկամտից աստի մի մասն անկանէր գլխաւորի ցեղին որ էր քահանայապետն, վասն որոյ հարուստ էր նա յոյժ ։

Ուստի ցորչափ հրէայք պահէին զօրէնս իւրեանց՝ քահանայք և ղևտացիք անկարօտ էին առանց ունելոյ կալուածս երկրի ։ Բայց 'ի վերջին ժամանակս 'ի լինել ատելի քահանայական և ղևտական կարգի վասն գայթակղական գնացից իւրեանց, աշխարհականք ետուն զանձինս յագահութիւն. մուծաւ և հերետիկոսութիւն սադուկեցւոց. սամարացիք 'ի բաց հերձան յեկեղեցւոյ իւրեանց. խառնակեցաւ ամենայն ինչ. բազումք ոչ տային զտասանորդս, և ոչևս վճարէին ղևտացւոց զիրաւունս իւրեանց ։ Վասն որոյ հարկ եղև, զի սոքա ընդդէմ սահմանադրութեան իւրեանց ձեռն արկանիցեն 'ի ստացումն կալուածոց երկրի, զի կարիցեն ըստ բաւականին դարմանել զանձինս և զորդիս իւրեանց ։

Սակայն առանց դիմելոյ յայս օրինազանցութիւն, որոյ 'ի հաստատութիւն ասէ կաղինոս՝ չունիմք հիմն, պարտ է 'ի միտ ածել ընդ նախագրեալ սահկոփոսի, և ընդ մեծագոյն մասին մեկնչաց զերկու ինչ ։ Մի՝ թէ ած ոչ երբէք արգել ղևտացւոց ստանալ կալուածս արտաքոյ երկրին աւետեաց ։ Երկրորդ՝ զի և 'ի նմին երկրին աւետեաց կամեցաւ զի յարուարձանս, որք ձգէին միլոնաւ չափ հեռի շուրջ զպարսպապատ քաղաքօք, տացի ղևտացւոց տեղի արօտոյ անասնոց նոցա ։ Վասն առաջնոյն ունիմք 'ի գիրս Թուոց (գլ. ժԸ. 20.) * Յերկրի նոցա մի ժառանգեսցես ‖ ևն ։ Բայց 'ի նոյն գլուխ համար 24. ասէ ած. * 'ի մէջ որդւոցն իսրայէլի մի ժառանգեսցեն վիճակ ‖. կամ ըստ լատ. * մի այլ ինչ ժառանգեսցեն ‖. այսինքն՝ յերկրին իսրայէլի. սակայն այլուր կարող էին ստանալ կալուածս և ժառանգել, որպէս ասեն մեկնիչք ։ Վասն երկրորդին ունիմք 'ի նոյն գիրս Թուոց ('ի գլուխ ԼԵ.) * Հրաման տուր

որդւոցն իսրայէլի, և տացեն ղևտացւոց 'ի վիճա-կաց կալուածոց իւրեանց քաղաքս բնակութեանց, և բուրաստանս. (կամ ը՟ լատ. զատուցեալս, այ-ինքն դաշտս շուրջ զքաղաքօք իւրեանց:) Եւ եղի-ցին նոցա քաղաքք բնակութեան և զատուցեալք նոցա եղիցին խաշանց նոցա և ամենայն չորքոտանեաց նո-ցա ||:

Յայսմանէ մեկնիչք հասարակաբար իմաստասի-րեն, թէ գեօղն կամ ագարակն վաճառեալ 'ի ձեռն բառնաբայ` կամ արտաքոյ էր երկրին աւետեաց, կամ էր յարուարձանս եբրայական քաղաքի իմիք: Բայց զմտաւ ածեալ թէ յարուարձանս իսրայէլի ղևտացիք ունէին միայն զգործածութիւն, և ոչ զտէրութիւն, զհետ գայ թէ ագարակն վաճառեալ 'ի ձեռն բառնաբայ` ոչ էր 'ի սահմանս իսրայէլի. և ա-մենեքին բնական է համարիլ, թէ որովհետև տուն բնակութեան նորա էր 'ի կիպրոս, անդ էր և ագա-րակն զոր վաճառեաց:

# ԳԼ. Բ.

## Անանիա և Սափիրա. Խաբէութիւն նոցա և պատիժ.

* Այր մի անուն Անանիա, հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ վաճառեաց զագարակ ||, և այլն.
(գործ. Ե. 1. ցհամար 12.)

Մինչդեռ 'ի համօրէն նորածաղիկ եկեղեցւոջ էր եռանդն ա̃ծային, մինչդեռ հոյէին զարմացմամբ ընդ փոխադարձ սէր միմեանց, ընդ անկեղծութի̃ նոցա, ընդ արիական հրաժարումն յամենայն երկրաւոր ընչից, գտաւ 'ի նոսա որ խուովեաց զհասարակաց ուրախութի̃, և տխրեցոյց զհաւատացեալս, և ետ խօսիլ անհաւատից 'ի սակս նորանշան պատժոյն. Ճշմարիտ եկեղեցին միշտ նոյն եղև, և է, և եղիցի. միշտ անաղտ և անարատ 'ի սրբութեան օրինաց, 'ի ճշմարտութե̃ մասանց հաւատոյ, յանսխալ յամենարդար հատուցման պատժոց և վարձուց, զոր գերագոյն դատաւորն արասցէ ք̃ս արժանեաց. Յաղթանակող եկեղեցին յերկինս՝ է անարատ յերանեալսն. զինուորեալն յերկրի՝ տեսանէ մերթ ընդ մերթ նսեմանալ միոյ մասին ճառագայթից նորա բծիւ իւիք յանդգամս իւր. Թոյլ տայ ա̃ծ ոմանց անկանիլ, որպէս զի ամենեքին զգուշասցին. թոյլ տայ մեղաց, զի ամենեքեան խոնարհեսցին. 'ի ներելն և 'ի պատժելն տայ փայլել քաղցր ողորմութե̃ միացեալ ընդ երկրպագելի արդարութեան. Փրկիչն թոյլ ետ յիւրումն դպրոցի 'ի մէջ երկոտասան աշակերտաց գտանիլ յուդայի. և 'ի դպրոցի առաքելոց թոյլ ետ յանցաւորութե̃ անանիայի և սափիրայի. զի յապա ժամանակս յորժամ բազմանայցէ անհամար թիւ հաւատացելոց, և եկեղեցականաց, մի ոք բամբասեսցէ զմիաբանութի̃

մի ողջոյն , եթէ ոք ստարանայցէ 'ի նոր. օրինաց սահմանադրութեանց իւրոց :

Բազումք էին 'ի ջերմ քրիստոնէից անտի՝ որք վաճառէին զինչս իւրեանց, և զգինն բերէին և դնէին առ ոտս առաքելոց , զոր նոքա բաշխէին կարօտելոց ըստ զիարդ պիտոյ ինչ լինէր : Անանիա միախորհուրդ ընդ կնոջ իւրում սափիրայ վաճառեաց և ինքն զագարակ իւր , այլ կամակցութեամբ կնոջն բերաւ առ ոտս առաքելոց մի մասն միայն գնոյն : Կամեցան խաբել, այլ ինքեանք խաբեցան. և մինչ կամէին գաղտ պահել զմասն գնոյն , կորուսին 'ի վայրկենի զկեանս : Տարաւ Անանիա պատկառ դիմօք , և ստախօս լեզուաւ զարծաթն : Սբն պետրոս իմացեալ երկնային լուսով զխաբէութիւն , ասաց. Անանիա , զիա՞րդ ընաւ հաւանեցաւ սիրտ քո յայտնի փորձութեան սատանայի՝ ստել հոգւոյն սբյ , կեղծելով բերել աստ ամբողջ զգինն , յորժամ այչափ ինչ գաղտ խորեցեր : Եթէ կամէիր պահել զագարակ քո , միթէ ո՞չ էիր տէր. և զկնի վաճառելոյդ միթէ ո՞չ էիր տէր պահելոյ քեզ զբոլոր գինն. զի՞ է զի եդիր 'ի սրտի քում զայս խաբէութիւն : Ոչ ստեցեր մարդկան այլ այ : Առաքեալն աւելի ինչ ոչ ասաց. և Անանիա անկաւ մեռեալ : Զայս յանկարծ մահ ամենեքեան ծանեան լինել պատիժ. և եղև ահ մեծ 'ի վերայ ամենեցուն որք լուան՝ չառնել այնպիսի ինչ : Յոտն կացին երիտասարդք ոմանք , և ամփոփեալ զնա , տարեալ թաղեցին :

Լուր այսր ահարկու պատահարի , որ նոյնժամայն սփռեցաւ , թուի թէ ընդապէս նախ առաջին յականջս սափիրայ կնոջ նորա ունէր հասանել. այլ նա՝ այնպէս կարգելով այ՝ ոչինչ գիտաց : Ապա զկնի իբրև երից ժամուց ողորմելին որ խորհրդակից էր խաբէութեան , այլ անգէտ պատժոյն , համեստ և երկիւղած իմն ձևով , որպէս գիտէ կեղծել կին այսպիսի , եկն եմուտ 'ի նոյն տուն , ուր տակաւին ժողովեալ կայր ժողով առաքելոց : Սբն պետրոս եհարց ցնա և ասէ. ասա դու ինձ զճշմարիտն , զգինն զոր եբեր այր քո՝ է՞ ամբողջ գին ագարակի ձերում

զոր վաճառեցիք . և նա ասէ համարձակ , այո՛ ամբողջ է ։ Յայնժամ սրբն պետրոս առաքելական նախանձու և դատաւորական դիմօք ասէ ցնա . զիա՞րդ միաբանեցայք դուք փորձել զՀոգի Տն . ահա արդ իսկ հասանեն 'ի դառնալ և կան առ դրանն նոքա որք թաղեցին զայր քո , նոքա թաղեսցեն և զքեզ ։ Առ այս բան պետրոսի անկաւ անդէն կինն առ ոտս սրբոյն , և եհան զոգին ։ Մտին երիտասարդքն և գտեալ զնա մեռեալ , հանին թաղեցին առ առն իւրում ։ Եւ եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն եկեղեցւոյն՝ որք լուան զայն սքանչելի արկած ։

Արդ՝ կարևոր է աստ բացատրել զերկու ինչ ։ Նախ՝ թէ յորո՞ւմ էր մեղք սոցա ։ Երկրորդ՝ զիա՞րդ գորովագութ առաքեալն փոխանակ յանդիմանելոյ զնոսա եղբայրական յանդիմանութեամբ յուղղութիւն , յանկարծական մահուամբ պատուհասեաց զնոսա ։ Առ առաջինն ասելի է . երևի թէ չիցէ մարթ ասել թէ նոքա պարտապան էին բերել զգինն ամբողջ առ ոտս առաքելոց զօրութեամբ ուխտի աղքատութեան ։ Սրբն պետրոս յայտնի ասաց ցանանիա . * ո՞չ ապաքէն մինչ կայրն՝ քո էր . և 'ի վաճառելն ընդ քո իշխանութ էր ‖. իբր ասել . դու ազատ էիր պահել զագարակդ . և զկնի վաճառելոյդ ազատ էիր պահել զգինն 'ի պէտս քո ։ Ապա ոչ վաճառեցաւ ագարակն , և ոչ զգինն բերաւ 'ի պարտեաց ուխտի ։ Եւ թէ անանիա ասացեալ էր ցսրբն պետրոս , զագարակ իմ վաճառեցի , և զմասն ինչ գնոյն պահեցի 'ի պէտս իմ , իսկ զմնացեալն բերի 'ի նպաստ աղքատաց , գործ ողորմութեան արարեալ էր , և ոչ մեղս ։ * 'Ի վաճառելն ընդ քո իշխանութ էր ‖ ։ 'Ի միւս կողմանէ հաւաստի է , թէ մեղքն ոչ էր պարզ սուտ ինչ անձնաս լոկ ընդդէմ Ճշմարտութեան , այլ նաև ընդդէմ առաքինութեան կրօնի՝ միացեալ ընդ սեղանակապտութեան ։

Այսչափ ինչ քաղեմք 'ի բանից առաքելոյն , որ յանդիմանէ զնոսա ստել Հոգւոյն սրբոյ . * Ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո , ստել քեզ Հոգւոյն սրբոյ , ոչ ստեցեր մարդկան , այլ Այ ‖ ։ Միացուցանելով զբոլոր

ընագիրն՝ 'ի միտ ածանումք թէ մատուցանելով առաքելոց զարծաթն իւր ամբողջ գին ընչից իւրեանց, կեղծէին առնել զուխտ կամաւոր աղքատութեան գէթ լռելեայն, այլ սրտիւ ոչ ուխտելոյ. կամ եթէ սրտիւ ուխտելոյ, եղծանել զուխտն 'ի նոյն իսկ ներգործութե յառնելն զայն: Մեղք նոցա եղև, որպէս այժմ լինէր, եթէ ոք արտաքին գործով ուխտէր կրօնաւորական ուխտ աղքատութեան, սրտիւ ոչ պարտաւորելոյ զանձն. կամ՝ կամելով պարտաւորել, պահէր զմասն ինչ ընչիցն սեպհական իւրեան: Ոչ ինչ գիտէին նոքա սովին խաբէուք՞, ոչ ասէ ինչ ս՟բ գիրն. և ոչ 'ի գրելոցն մարթ է գուշակել հաւաստի:

Մարթ էր ունայն կեղծաւորութեամբ ձևանալ առաջի նոր հաւատացելոց՝ իբր առաւել եռանդնոտս, և հրաժարելով յամենայն երկրաւոր ընչից, դիմել 'ի բարձրագոյն կատարելութի: Մարթ էր շարժիլ նոցա 'ի շահախնդրութէ. յոյր սակս կեղծելով թէ մերկացեալ են յամենայնէ, ակն ունէին թէ 'ի բաշխել առաքելոց 'ի հասարակաց եկամտից զպէտս իւրաքանչիւրոց, առաւել յոյժ ընկալցին, քան զայն յորմէ հրաժարեցին: Մարթ էր շարժիլ նոցա 'ի փոքրոգութէ՝ որոյ վասն 'ի միոյ կողմանէ ցանկային անգործ կամօք կատարելութե կենաց, և յայլմէ կողմանէ ոչ վստահանային առնուլ նպաստս կարևորս առ մասնաւոր պէտս իւրեանց: Թէ մեղք նոցա լեալ իցէ ծանր, ոչ իմանի 'ի պատմոյ նոցա. մահ յանկարծական ըստ ինքեան՝ ոչ է առաւել ինչ քան թէ ժամանակեան պատիժ. և 'ի լոկ ժամանակեան պատժոյ չէ մարթ հետևեցուցանել ծանր մեղս: Նայց թէ ծանր էր մեղք նոցա, գոյ իմանալ 'ի բանից ս՟բյն պետրոսի, որով յանդիմանեաց զանանիա ասել ընդդէմ հոգւոյն ս՟բյ:

Սակայն և այնպէս ս՟բն պետրոս դամիանեան 'ի գիրս յաղագս արհամարհելոյ զաշխարհ, (գլ. Դ.) քաղցրութեամբ անբասիր առնէ զնոսա իբրև զռեհիկս և տգէտս, որով 'ի սկզբան անդ նոր եկեղեցւոյն ոչ որոշէին նոքա, որպէս մեք այժմ որոշեմք

ղծանր չարութ͞ի ստախօսութ͞ե. ուստի և բարեխօս է 'ի վերայ փրկութեան նոցա. * Խիստ ասէ, այլ գթած դատաստանաւ միայն՝ ը͞ն որում հաւատամք՝ մահու պատժեցան ||: Նմանապէս որոգինէս, այլ մերոյն, գասպար սանկտիուս և այլք յօժարին 'ի փըրկութիւն նոցա. և բերեն 'ի նպաստ իւրեանց ըզվկայութիւն սը͞րբ օգոստինոսի և սը͞րբ հերոնիմոսի. այլ սոքա երկոքեան մթին խօսին 'ի տեղիս յայնոսիկ, զոր յառաջ բերեն մեկնիչք: Ուր սը͞րբն օգոստինոս յայտնի համարի զնոսա դատապարտեալս ('ի Ճառն ի͞է. յաղագս բանից առաքելոց). և ասէ. *. կորուսին զարծաթ և զփրկութիւն ||: Դատապարտեալ համարի զնոսա բեդա. որպէս և սը͞րբն բարսեղ 'ի զանազան տեղիս, և յատկապէս 'ի Ճառն պահոց. ուր խօսելով վասն անանիայի՝ ասէ. * Ոչ գտաւ արժանի՝ զի շնորհեսցի նմա կարողութ͞ի ճանաչելոյ. որով փոքու իմն կարէր վասն մեղացն առնել ապաշխարութիւն. և ոչ միջոց ցաւելոյ, և ո՛չ սահման զղջանալոյ ունել մարթացաւ եղկելին ||:

Նա ասէ կաղինոս կամելի զամենեսին մուծանել յերկինս, բայց վասն երկոցուն սոցա ոչ գտանեմ իրաւունս: Մեղք նոցա ը͞ն իւրեանց եղև մահուչափ. և չունիմք 'ի սը͞ր գիրս և ոչ փոքր նշան անբասիր առնելոյ զնոսա վասն ողորմութ͞ե: Մեռան 'ի ներգործութ͞ե անդ ստախօսութ͞ե իւրեանց. և չունիմք ապացոյց հաստատելոյ՝ թէ 'ի համառօտ յանդիմանութ͞են զոր արար նոցա սը͞րբն պետրոս, յեղակարծ իմն հրաշական փոփոխութ͞բ կամնեալ իցէ 'ի նոսա ներգործութ͞ի կատարեալ զղջման՝ յառաջ քան զյանկարծական մահն: Ոչ կարեմք պնդել համարձակ՝ թէ դատապարտեալք իցեն, բայց ամենայն նշանք զդատապարտութ͞ի յուցանեն:

Ըստ երկրորդ խնդրոյն ստգտանէ ամպարիշտն պորփիւրոս, որպէս սը͞րբն հերոնիմոս յիշատակէ, զը͞ն առաքեալն իբր անգութ. որպէս թէ կամ դատապարտեաց, կամ աղօթիւք խնդրեաց զմահ երկուց եղկելեաց. որպէս թէ անգութ իցեն դատաւորք, յորժամ 'ի մահ դատապարտեն զմահու յանցաւորս:

Նորեւ թէ կարծիք ՚սբյն օգոստինոսի է, թէ ՚սբն պետրոս ՚ի յանդիմանելն դիտէր զմահ նոցա. զի ասէ յերրորդ գիրս յաղագս հրաշալեաց ՚սբ գրոց. ( գլ. վերջին. ) * ՚Ի յանդիմանելն պետրոսի՝ միայն բանի հրամանաւ ՚ի մահ կապեաց զանանիա ‖ : Բայց դիւրաւ մեկնի թէ մահն ոչ եղեւ հրամայեալ ՚ի նոմանէ, այլ միայն եղեւ հետեւութի իւրում իշխանական խօսից : Այս է կարծիք ՚սբյն գրիգորի պապին. յասելն յերկրորդ գիրս իւրոց տրամախօսութեց (՚ի գլ. ի.) թէ ՚սբն պետրոս որ յաղօթս եկաց վասն կենաց տաբիթայ, ոչ խնդրեաց վն մահու անանիայ եւ սափիրայ : Ինքն միայն յանդիմանեաց, եւ նոքա մեռան. * Պետրոս որ զտաբիթայն մեռեալ՝ աղօթելով յարոյց. զանանիա եւ զսափիրա յանդիմանելով մատնեաց ՚ի մահ. զի ոչ ընթեռնումք թէ խնդրեալ իցէ անշնչանալ նոցա. այլ միայն զմեղս զոր գործեալ էին՝ կշտամբեաց ‖ : Որոգինէս եւ հասարակաբար հարք եւ մեկնիչք յայս միտս են, թէ ՚սբ առաքեալն միայն դիտէր ընդդէմ յայտնի գայթակղութեն դնել յայտնի ուղղութի. եւ ած ՚ի սկզբան անդ նոր եկեղեցւոյն իւրոյ կամէր զի երկիցեն ՚ի պաշտօնէից իւրոց, եւ ՚ի մեղաց. ինքն պատժեաց մահուամբ զերկու մեղուցեալս : Յասելն ՚սբյն պետրոսի առ սափիրա. * Ահա ոտքն որ թաղեցին զայրն քո ՚ի դրան հանիցեն եւ զքեզ ‖ . ոչ խօսեցաւ իբր դատաւոր, այլ իբրեւ մարգարէ գուշակեաց զվերահաս մահ նորա. ոչ հրամայեաց եւ ոչ կամեցաւ զմահ նորա : Այդ պատահարն եղեւ վասն ամենեցուն ընթերցուած մեծ՝ խորշիլ ՚ի կեղծաւորութէ. եւ չկեղծել ինչ՝ ուր հարկ իցէ վարիլ ընդ պաշտօնէիցն այ :

## ԳԼ. Թ.

Առաքեալք գործեն բազում և մեծամեծ սքանչելիս։ Արկա-նին 'ի բանտ 'ի քահանայապետէն. և ազատին 'ի հրեշտակէն։ Գանակոծ լինին 'ի չարաժողովոյն հրէից. և ինքեանք ուրա-խութեամբ տարեալ գանիցն, ջերմագոյն ևս քարոզեն զաւե-տարանն։

*Իսկ 'ի ձեռս առաքելոցն լինէին նշանք և արուեստք բազումք 'ի ժողովրդեանն ‖, եզ. (գործ. Ե. 12. ցվերջ գլխոյն։)*

*Մեղձաւորութի՛ և յանկարծական մահ երկուց լծակցացն տրտմեցոյց զբազմութի՛ նոր հաւատացելոց. բայց չեղև ինչ խափան, նա՛ օգուտ մեծ 'ի գործումն առաքելոց։ Որք և կանայք գունդագունդ մերձենային 'ի լոյս վարդապետութե՛ առաքելոց և 'ի մկըրտութի։ Առաքեալք համապազօր միաբան ժողովեալ 'ի սրահին սողոմոնի, ուսուցանէին զժողովուրդն. և այնչափ 'ի յարգի էին առ նոսա, զի ոչ ոք իշխէր մերձենալ առ նո։ Մեծամեծք էին նշանքն և սքանչելիք զոր գործէին առաւելապէս 'ի ժողովուրդն. ոչ զի սէր նոցա ոչ ձգէր և առ մեծամեծս և առ ազնուականս, այլ զի նոքա ըմբռնեալք 'ի մարդահաճութե՛, սակաւք 'ի նոցանէ մերձենային առ առաքեալսն։ Սակայն ամենեքեան այնչափ վստահ էին 'ի սքանչելի բարերարութի՛ նոցա, մինչև 'ի հրապարակս հանել զհիւանդս և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց, զի ընդ անցանելն պետրոսի, գոնէ հովանի նորա հասցէ ումեք 'ի նոցանէ, որ և առժամայն բժշկէր։ Իսկ ոչ միայն յերուսաղէմ, այլև 'ի շրջակայ քաղաքաց բազմութի՛ յոյժ գային և ժողովէին անդր, և բերէին զհիւանդս և զնեղեալս յայսոց պղծոց առ այսոսիկ սքանչելագործ բժիշկս. և բժշ-*

կէին ամենեքեան յայսոց իւրեանց և յամենայն խօթութեանց։

Այս խառն դիմեցումն ժողովրդեան, այս աքանչելագործութիւնք որք յայլ զարմացումն պատճառէին, ՚ի քահանայապետսն և ՚ի համախոհս նորա չար նախանձ յարուցին։ Սադուկեցիք հերետիկոսք հերձեալք յեկեղեցւոյ նոցա, որք թէև անխորտակելի յամառութբ ուրանային զյարութի մեռելոց, սակայն հանդերձ բացայայտ հերետիկոսութբ իւրեանց միաբան էին ընդ քահանայից ՚ի հալածել զառաքեալսն։ Սադուկեցիք ոչ կարէին տանել, զի հաստատեսցի իբր մասն հաւատոյ յարութիւնն Յի, և հանդերձեալ հասարակաց յարութիւն համօրէն ազգի մարդկան։ Քահանայք ոչ կարէին հանդուրժել, թէ այլք առաւել մեծարգի լիցին, և նուազեսցի շահ պաշտաման իւրեանց։ Սոքա միաբանեալ հաստատեցին թէ չիք այլ հնար ՚ի խափանել զվնաս շահու իւրեանց և պատուոյ, եթէ ոչ փակել զառաքեալսն ՚ի բանտի։ Աննա՝ որ ՚ի լրման տարւոյ կայիափայի, վարէր յայնժամ զքահանայապետութի, ոչ յամօթ համարեցաւ անձին՝ առնել զգործ կալանաւորապետի։ Եկն ընդ սադուկեցւոց, և կալեալ զառաքեալսն եդ զնոսա հրապարակաւ ՚ի բանտի, կարգելով առ դրան պահապանս ՚ի զգուշութի։ Ընդ առաւօտն գումարեցին ժողով մեծ. զի եկն անդր ամենայն ծերակոյտ որդւոցն իսրայէլի, և առաքեցին ՚ի բանտն ածել զդատապարտեալսն յատեան անդր։ Ամենայն մեծաւ անձկութբ հասանելոյ նոցա. և ահա եկին սպասաւորքն, պատմեցին և ասեն, ըզբանտն գտաք փակեալ ամենայն զգուշութբ, և ըզպահապանսն զի կային առ դրանն. բացաք և խնդրեցաք յամենայն խորշս, այլ զոք ոչ գտաք անդ։

Այս նոր հրաշալի լուր հիացոյց զժողովն և զիշխանս տաճարին, և զքահանայապետսն, և ոչ գիտէին թէ զինչ եղեն նոքա։ ՚Ի բանտն ոչ երևէր խրամատութի. ոչ կարէին կասկածիլ ընդ հաւատարմութի պահապանաց, և ոչ գիտէին գուշակել զինչ զդատապարտելոց։ Մինչդեռ ամենեքին կային յայ-

ոգւոյ յուզմունս խորհրդոց, եկն ոմն և պատմեաց նոցա, թէ աՀա արքն զորս եդիք 'ի բանտի՝ են 'ի տաճարն և ուսուցանեն զժողովուրդն։ Զի 'ի նմին գիշերի հրեշտակ տն եբաց զդուրս բանտին, և ասաց նոցա երթալ կալ 'ի տաճարի և խօսել առ ժողովուրդն զամենայն պատգամս աւետարանին։ Նախնքն հրեշտակն եհան զնս 'ի բանտէն, արգելեալ զի պահապանքն մի գիտասցեն զազատութիւն բանտարգելոց. ապա նովին դիւրութբ որով եբաց, փակեաց անդրէն զդուրս որպէս յառաջն։

Ընդ այս լուր՝ ել իշխանն 'ի ժողովոյն սպասաւորօքն հանդերձ, և եկեալ 'ի տաճարն, քաղցրութբ ած զնոսա 'ի ժողով անդր։ Ոչ արար բռնութիւն ինչ նոցա, ոչ զի զիջեալ էր ատելութին 'ի գազանացեալ սիրտս նոցա, այլ զի երկնչէին զի մի քարկոծ լիցին 'ի ժողովրդենէ, փութային ամբաստանութե 'ի մի գլուխ ևեթ ամփոփեցաւ։ Խօսեցաւ քահանայապետն և յիշեցոյց զպատուէրն, որով սաստիկ սպառնալեօք արգել՝ մի ուսուցանել յանուանն յայն. ամենեքեան իմանային զանունն Յսի. այլ այնչափ էր ատելութի նորա ընդդէմ Յսի, զի և յիշել անգամ ոչ կամէր զնա։ Նոյնպէս է ասէ. պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի ուսուցանել յանունն յայն, և դուք աՀաւասիկ լցիք զերուսաղէմ ուսմամբ ձերով. և կամիք յարուցանել զժողովուրդն 'ի վերայ մեր 'ի վրէժխնդրութի արեան առն այնորիկ։ Նա պատասխանի պետրոս և այլ առաքեալքն և ասեն. հնազանդել պարտ է այ առաւել՝ քան մարդկան։ Ած հարցն մերոց յարոյց զՅս, զայն Յս զոր դուք սպանիք կախեալ զփայտէ։ Զնա ած իշխան և փրկիչ բարձրացոյց ամենակարողութբ իւրով լինել փրկիչ. զի հաւատով և յուսով որդեանց նորա ապաշխարեալ մեղաւորաց, և ապաշխարութի նոցա զօրացեալ յորդեանց նորա, լիցի նոցա թողութի մեղաց։ Մեք եմք վկայք այսմ ճշմարտութե, մանաւանդ թէ հոգին սբ, զոր ետ ած ամենեցուն որք հնազանդին նմա։

Ընդ այս արիական պատասխանի կատաղէր բոլոր

ատեանն, և խորհէին սպանանել զնոսա։ Յայնժամ իմաստուն փարիսեցի ոմն օրէնսուսոյց վարդապետ՝ պատուեալ և փառաւորեալ յամենայն ժողովրդենէ հրամայեաց սակաւիկ մի արտաքս տանել զառաքեալսն, զի կարիցէ ինքն համարձակ ասել զկարծիս իւր։ Անուն նորա էր Գամաղիէլ. և որպէս տեսցուք յիւրում տեղւոջ, եղև առաջին ուսուցիչ ՚սբյն Պօղոսի յետ դարձի նորա։ Եթէ ճշմարիտ է այն, որ գրեալ կայ յաւարտ գրոց ծանօթութեց ՚սբյն կղեմայ հայրապետին հռովմայ աշակերտի ՚սբյն պետրոսի, Գամաղիէլ յայնժամ քրիստոնեայ էր, զոր ՚ի ծածուկ ունէր, ոչ առ երկիւղի, կամ վասն այլ ինչ մարդկային նկատման, այլ խորհրդով ՚սբյն պետրոսի. * Եղբայր մեր (այսպէս խօսի առաքեալն առ նորին կղեմայ) եղբայր մեր ՚ի ծածուկ հաւատացեալ էր. այլ մերովս խորհրդով էր ՚ի մէջ նց ‖։ Գիտէր մեծ փոխանորդն Քնի տն մերոյ, թէ ած օգնական է իւրումն եկեղեցւոյ. բայց քանզի եկեղեցին էր ժողով մարդկան, կամէր զի կառավարութիւն նորա լիցի ՚ի մարդկանէ մարդկային և ըստ մարդկան։ Գիտէր զի ամենայն հնարք մարդկային խոհեմութեան անօգուտ են, եթէ ոչ յաջողեսցին ածային օրհնութբ. բայց գիտէր և զայն թէ կամի ած յինքեան ևեթ հաստատել զամենայն յոյս մեր, և միանգամայն ՚ի վար արկանել զհնարս մարդկային խոհեմութե։

՚Նպաստ մեծ էր նոր եկեղեցւոյն՝ ունել զայր այսպիսի մեծարգոյ, որ մտանիցէ ՚ի ժողով անհաւատից գիտել զխորհուրդս նոցա, և մարթանօք դարձուցանել զառաջարկութի նոցա, և փոխել զմիտս նոցա, զոր ոչ կարէր առնել եթէ յայտնի ցուցանէր զանձն աշակերտ Քնի, կամ գէթ կասկածելի՝ թէ այնպիսի ոք է։ Գամաղիէլ ոչ յայտնելով զքրիստոնէութի իւր, ՚ի ժողովն անդ համարիւր իբրև զմի յայլոց ժողովականաց. ուստի և համարձակ կարէր նպաստել եկեղեցւոյն խորհրդով իւրով։ Որպս և արար իսկ. զի այն ինչ ամենեքին խորհէին սպանանել զառաքեալսն, ինքն ընդդէմ եկաց իւրով խորհրդով. և

եւ փոխել նոցա զխորհուրդ սպանութեան ։ Յոտն եկաց 'ի մէջ ատենին եւ խօսեցաւ համարձակ եւ ասէ. Արք իսրայէլացիք, հայեցարո՛ւք 'ի ձեզ չլինել դահաւէժ 'ի վճռել ինչ վասն արանցս այսոցիկ ։ Դիտէք զի փոքր մի յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ ոմն կոչեցեալ Թեւդաս, ասել զանձնէ թէ իցէ մեծ ոմն. յոր յարեցան արք թուով իբր չորեքհարիւր. եւ վախճան իւրայն եղեւ, զի ինքն սպանաւ, եւ ամենեքեան որք միաբան էին ընդ նմա՝ քակտեցան եւ եղեն յոչինչ ։ Յետ նորա յաւուրս աշխարհագրին՝ յորժամ ամենեքեան երթային տալ վկայութիւն հաւատարիմ հպատակութեան իւրեանց հռովմայեցւոց, եւ վճարել զսահմանեալ հարկն, յարեաւ Յուդա գալիլեացի, եւ ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. եւ ինքն կորեաւ, եւ ամենեքեան որ նմայն հաւանեալ էին՝ ցրուեցան ։ Ըստ օրինակացս այսոցիկ եւ ես ասեմ ձեզ. 'ի բա՛ց կացէք յարանցդ յայդցանէ, եւ թողէք զդոսա ազատ. զի թէ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ, ինքնին քակտեսցի. ապա թէ յա՟յ է, ոչ կարէք քակտել զդոսա, գուցէ եւ դուք ա՟ծամարտ գտանիցիք ։

Այս ատենաբանութի՟ն թէպէտ ոչ շահեցաւ ամենայնիւ զոր ինչ խնդրէրն գամաղիէլ, այսինքն է՝ արձակել զառաքեալսն առանց վիշտս ինչ հասուցանելոյ նոցա, բայց շահեցաւ բազում, զի ողջոյն ատեանն փոխեաց զխորհուրդ իւր, զգուշացաւ մատնել զնոսա 'ի ձեռս դահճաց, կամ պահել 'ի բանտի ։ Գան հարին զնոսա խոտիւ, զոր ոչ կարաց խափանել գամաղիէլ. եւ պատուիրեցաւ նո՟ց մի եւս խօսիլ յանուն Յի. եւ արձակեցին զնոսա ։ Ծանր էր անիրաւութի՟ն գանիցն, այլ խնդութի՟ն տարան այնմիկ, զի արժանի եղեն վ՟ս փառաց երկնաւոր վարդապետին անարգելոյ. Ծանրագոյն եւս էին սպառնալիքն, բայց նոքա արհամարհեցին զայն. զի զամենայն օր 'ի տաճարին եւ առ տնին ոչ դադարէին ուսուցանել եւ աւետարանել զՅ՟ս Ք՟ս ։

Յովսեպոս եբրայեցի 'ի քսաներորդ գիրս եբրայական հնութեանց (գլ. Ե.) յիշէ զԹեւդաս ոմն խաբե-

բայ, յորոյ վերայ փադոս արձակեաց խումբ մի հե-
ծելոց, եհատ զգլուխ նորա և կոտորեաց զընկերս
նորա առ յորդանան գետով։ Նմանապէս 'ի յաջորդ-
գլուխն յիշէ զոմն յուդա գալիլեացի և զապստամ-
բութի նորա 'ի ժամանակս կիւրենեայ չորրորդապե-
տի ասորւոց։ Բայց ասելի է թէ Թեւդասն նորա այլ
ոմն էր․ զի գամաղիէլ յայտնի խօսի զԹեւդասայ՝ որ
իբր յառաջ էր քան զյուդա․ իսկ յովսեպոս խօսի
զնմանէ իբր յետոյ քան զյուդա․ եթէ նոյն են սո-
քա, յայտ է թէ առաւել արժանահաւատ է գամա-
ղիէլ․ և յայնժամ հարկ է ասել թէ յովսեպոս շփո-
թէ զժամանակն։

Վասն յուդայի գալիլեացւոյ և ընկերաց նորա մե-
ծապէս սխալէ, որ համարի թէ նոքա են, զորոց ասի
յաւետարանի թէ պիղատոս խառնեաց զարիւն նո-
ցա ընդ զոհս նոցա։ Նշանք ժամանակին յայտնի
զանազանեն զառաջին դիպուածն՝ որ եղև 'ի ժա-
մանակի կիւրենեան աշխարհագրին, այսինքն իբր
յամի ծննդեան փրկչին․ և զերկրորդ դիպուածն որ
ըստ որում ցուցաք յիւրում տեղւոջ, եղև իբր ե-
րեսուն ամօք յետոյ 'ի ժամանակս քարոզութեան
Յոհ․

# ԳԼ. Ժ.

Տրտունջ յունաց. Ընտրութիւն եօթն սարկաւագաց.

*Իբրեւ յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշակերտաց, եղեւ տրտունջ յունաց||, եւ այլն. (Գործ. Զ. 1.)

Արտաքին հալածանք ոչ վշտագնէին զառաքեալսն. Գիտէին՝ զի բարբարոսութիւն այլոց ոչ եթէ զարհուրեցուցանէ, այլ առաւել սրտապնդէ զայն, որ ոչինչ իմիք առաւել ցանկայ՝ քան թէ մեռանել վասն Յիսուսի Քրիստոսի. Գիտէին զի արիւն մարտիրոսաց է սերմն քրիստոնէութեան. Գիտէին զի պարտ էր եկեղեցւոյ պսակիլ մարտիրոսօք, եւ աճել 'ի տանջանս. Ոչ այսպէս կարէին տեսանել առանց ցաւոց զներքին հերձուածս, որք սկսանէին պատառել զեկեղեցի. 'Ի բազմանալ աշակերտաց, այսինքն քրիստոնէից, ոչ ամենեքեան նոյնն եռանդեամբ հոգւոյ վարէին, որ անկ էր դաւանութեան նոցա. Յոյնք որք էին յԵրուսաղէմ, տրտնջէին. * զի արհամարհեալ լինէին 'ի պաշտամանն հանապազորդ այրիք նոցա||. Իսկ թէ իւ էր այն արհամարհութիւն, չէ այնչափ ինչ յայտնի. Սր̃ ոսկեբերան, բեդա, հուկոն կարդինալ եւ այլք համարին թէ նոքա մերժեալ լինէին 'ի սպասաւորութենէ. եւ այրիք եբրայեցւոց առաւել զգաստ համեստ, աշխոյժ եւ յաջողակ համարեալք, զնոսա 'ի կիր առնուին 'ի բաշխել զկերակուրս, եւ ոչ զյոյնս. Կայետանոս համարի թէ յայս ցածուն եւ աշխատալի սպասաւորութիւն՝ զայրիս յունաց վարէին առ 'ի չառնել աշխատ զհրէայս. Երկոքին մեկնութիւնք համաձայն են ընդ բնագրին. բայց ինձ ոչ են հաճոյ՝ ասէ կաղմետ, զի ոչ համաձայնին այլոց բանից գրոյն.

Մոռացեալք առ 'ի խաղաղել զխռովութիւն, ժողովեցին զբազմութիւն աշակերտաց և ասեն, ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն ա̃յ և պաշտել զսեղանս, այսինքն սպասաւորել և միտ դնել մարմնաւոր սեղանոյ. ընտրեցէք ասեն եղբարք 'ի բազմուէ̃ աստի վկայեալս 'ի ձէնջ արս եօթն լի հոգւով սրբով և իմաստութ̃, զորս կացուսցուք 'ի վերայ պիտոյից այսոցիկ։ Եթէ տրտունջն ծագէր անտի, զի 'ի պաշտօն պատուոյ 'ի կիր արկանէին միայն զեբրայեցիս, կամ 'ի պաշտօն ցածուն և աշխատալի զյոյնս միայն վարէին, երևէր առաւել օգտակար, կարևոր և համառօտ դարման՝ բաժանել զպատիւն և զաշխատութիւն 'ի մէջ երկուց դասուց. չէր հարկ զբաղեցուցանել եօթն անձինս ընտիրս յայն դիւրին գործ, տանիլ 'ի սեղան կերակուրս, և զայլ սպասաւորութիւնս սեղանոյ առնել։ Աստի կաղինոս յայսմ զհետ երթայ կարծեաց Եւկումենիոսի, որ համարի թէ այրիք յունաց այսու արհամարհեալ լինէին, զի ոչ հոգային, և ոչ մատակարարէին զպէտս նոցա այնպիսի առատութ̃ և այնպիսի յօժարամիտ պատրաստութ̃, որով խնամէին զայրիս եբրայեցւոց։ 'Ի բարեպաշտից ոմանք բերէին զինչս իւրեանց, այլք առատ տուրս ողորմուէ̃ առ առաքեալսն. և նք̃ գոլով պարապեալ 'ի պաշտօն բանին ա̃յ, ոչ կարէին շրջել 'ի տունս տունս, և տեսանել զկարօտութի̃ նոցա, և մխիթարել զնոսա մատակարարելով զամենայն պիտոյս նոցա։ Յայս 'ի կիր արկանէին անձինս ծանօթս և ընտանիս իւրեանց. բայց նոքա ընդդէմ կամաց առաքելոց՝ անփոյթ արարեալ զարտաքնովք, զիւրեանց ազգայինս յաւէտ խնամէին։

Այրք կամ յօժարութի̃ ազգակցուէ̃ կարի նուրբ է, և բազում անգամ դիւրաւ թագչի 'ի սիրտս նաև անձանց հոգևորաց. և դնեն 'ի մտի խնամել զիւրեանցն՝ ոչ զի համազգայինք են, այլ զի առաւել արժանաւոր են. և ոչ իմանան թէ այն բոլանդակ արժանաւորութի̃ է հայրենիքն, և ոչ առաքինութի̃ն։ Դնեն 'ի մտի խորշել յարտաքնոց՝ ոչ զի արտաքինք են և օտար, այլ զի նուազ արժանաւորք են. և ոչ

խմանան թէ այն պակասութիւն արժանեաց նկարի յերևակայութեան նոցա լոկ վասն օտարութեան, զի յօտար գաւառէ են։ Զեն իմ կամք ասել կաղկնոտ՝ հաւատալ թէ 'ի պաշտօնեայս առաքելոց եղեալ իցէ միտակողմութի. այլ յաւէտ հաւատամ, թէ յոյնք ազգաւ յայնժամ անհանդարտք, ձեռներէցք, խռովարարք՝ պահանջէին առաւել քան զպատշաճն։ Սակայն չէ մարթ ժխտել՝ թէ անհանդիստ առնելոյ և հերձուածս արկանելոյ նիւթ իչ է՝ տեսանել զի ստորագաս լինի որք ոչ վասն այլ ինչ պատճառի, բայց զի առ դժբաղդութեան իւրոյ յօտար երկիր ծնեալ է, առ որ նա՝ որ կառավարէ, չունի յօժարութի։

Առաջին խռովութի որ յարեաւ յեկեղեցւոջ, ծնաւ 'ի խտրելոյ զհրեայն 'ի յունէ։ Առաքեալք ոչ յանդիմանեցին զտրտունջ յունաց, այլ կարգաւորեցին՝ զի բարձցի 'ի միջոյ ամենայն պատճառ տրտընջմանց։ Ոչ ինքեանք ընտրեցին, այլ թողին բազմութեան զընտրութի պաշտօնէից։ Ոչ ցուցին զյօժարութի իւրեանց առ այս կամ առ այն որք. այլ միայն զհանգամանս ընտրելեաց առաջի արարին, զի նոքա կալցին զհոգ մարմնոյ պիտոյից. և մեք ասեն՝ աղօթից և քարոզութեան բանին հպատակ լիցուք։ Հաճոյ թուեցաւ առաջարկութիւն ամենայն բազմութեան. և հասարակաց հաւանութբ ընտրեցան Ստեփաննոս, Փիլիպպոս, Պրոխորոն, Նիկանովրոս, Տիմոնա, Պարմենա, և Նիկողայոս անտիոքացի։ Զամենեսին կացուցին առաջի առաքելոց, և աղօթս արարեալ, եդին 'ի վերայ նց ձեռս. և եղեն նոքա եօթնեքին առաջին սարկաւագունք 'որյ եկեղեցւոյ։ Է կարծիք բազմաց թէ Նիկողայոս նսեմացոյց զպայծառութի այսպիսի գեղեցիկ եօթնեակ դասու՝ տգեղութբ նողկալի հերետիկոսութե։ Այսմ կարծեաց պատճառս ետ բանն զոր ընթեռնումք 'ի գիրս յայտնութե. (գլ. բ. 15.) *Ունիս զվարդապետութի Նիկողայեցեաց զոր ես ատեամ||. որում հեղինակ՝ ոչ յովհաննէս, այլ նոքա դնեն զայն զայս Նիկողայոս սարկաւագ, զվերջինն ասեն՝ 'ի մէջ սարկաւագաց, որպէս Յուդաս վերջին 'ի մէջ առաքելոց. զի երկո-

քին անարժան եղէն այնմ ազնուական աստիճանի։

Երևի թէ յայս կարծիս էր ոմն Հերմնիմոս, յոր-ժամ ՚ի խրատելն թէ չէ պարտ ումեք համարիլ զանձն լինել ինչ վասն եկեղեցական իշխանութեան իւրոյ, գրէ յառաջին թուղթն առ Հեղիոդորոս. * Ոչ ամենայն եպիսկոպոսունք՝ եպիսկոպոս են։ Տեսանես զպետրոս, բայց յուշ ած և զյուդաս. պատուես զստեփաննոս, այլ հայեաց և ՚ի Նիկողայոս, զոր ոմն ՚ի յայտնութ̃ե իւրում վճռաւ դատապարտէ, որ զայնպիսի աղտեղիս և նողկալիս հնարեցաւ. մինչև հերետիկոսութեան նիկողայեցեաց յարմատոյ անտի վերընձիւղիլ։ Փորձեսցէ այր իւրաքանչիւր զանձն, ապա մատիցէ։ Եկեղեցական պատիւն ոչ առնէ քրիստոնեայ ||։

Բայց արժան է աստ միտ դնել. զի ՚ի յայտնուե̃ անդ յիշատակին նիկողայեցեանք, և ոչ յիշատակի Նիկողայոս, որպէս տեսաք։ Իսկ ոմն Հերմնիմոս խօսի յաւէտ ըստ կարծեաց այլոց՝ քան թէ իւրոյ. զոր տեսանեմք ՚ի խէ̃. թուղթն իւր. ուր գրելով առ սաբինիանոս՝ որ և նա սարկաւագ, այլ ընացող և աղգապիղծ, ասէ ցնա. * Յիշեա՛ յորմէ՞ եպիսկոպոսէ ձեռնադրեցար սարկաւագ։ Չէն զարմանք թէպէտ այր ոք, սակայն յընտրութ̃ի առն կարաց սխալիլ. զի և ա̃ծ զղջացաւ, զի օծ զսաւուղ թագաւոր. և յերկոտասան առաքելումն յուդա մատնիչ գտաւ. և վասն առն միոյ քո կարգակցի՝ նիկողայոս կոչեցել̃ անտիոքացի՝ ամենայն գարշութ̃եց և նիկողայեցեաց հերետիկոսուե̃ պատճառ լեալ հեղինակ ||։ Ուր բաղդատէ, ցուցանէ թէ ոմն ոչ քննէ զայս խնդիր, այլ յարմարելով իւրում առաջարկուե̃ ՚ի կիր առնու զկարծիս այլոց։

Բայց ՚ի նախնի հարս գտանեմք թէ նիկողայեցեանք այսպէս կոչեցան, ոչ որպէս թէ նիկողայոս եղեալ իցէ գլուխ և վարդապետ մոլորուե̃ նոցա, այլ զի հաւանելի անուամբ բարեպաշտ սարկաւագին խնդրէին տալ փոքր մի պատիւ գարշելի մոլորութ̃ իւրեանց, որպէս սովոր են հերետիկոսք։ Ս̃ն իգնատիոս ՚ի թուղթն իւր առ տրալլիացիս գրէ. * փա-

խնրմուք փախնրուք 'ի պիղծ նիկողայեցեանց, որք սուտ անուն առնուն յինքեանց ‖ ։ Նաև 'ի Թուղթն որ առ Փիղադելփիացիս. * Օ վախճան երանութեան դնէ 'ի հեշտութեն, որպէս՛նա որ սուտ անուն նիկողայեցեան ասի ‖ ։ Սը կղեմէս հայրապետն 'ի վեցերորդ գիրս սահմանադրութեց ասէ. * Այլք անամօթաբար պոռնկին, զոր այժմ առնեն սուտանուն նիկողայոսեանք ‖ ։ Սըն օգոստինոս 'ի գիրս յաղագս հերետիկոսութեց. (գլ. ե ։) Սըն եպիփան 'ի վերայ իե. հերետիկոսուե ։ Կղեմէս աղեքսանդրացի յերկրորդումն յաճախապատում գրոց իւրոց. (գլ. Թ.) և յերրորդումն. (գլ. դ ։) Եւսեբիոս յերրորդ գիրս պատմուե իւրոյ. (գլ. իդ ։) Թէոդորետոս յաղագս յունական առասպելեաց. (յերրորդ գիրս ։) Նիկեփորոս յերրորդ գիրս (գլ. ժե.) պատմութե իւրոյ ։ Նաև 'ի նորոց կարդալսեանն աստ, Սփիպերա 'ի վերայ երկրորդ գլխոյ յայտնութե ։ Բարոնիոս 'ի տարեգրութիս իւր ։ Լորինոս աստ. և այլք բազումք պաշտպանեն զանմեղութի նիկողայոսի սարկաւագին. և տան լոկ չարութե այնց առաջնոց աղանդաւորաց, որք առին իբրև զնորայն վարդապետութի զասացուած ինչ նորա չարաչար մեկնեալ 'ի նոցանէ. և որպէս առ յարգի ընծայեցուցանելոյ զսուտ դրամ ինչ՝ դրոշմեն 'ի նա զանուն օրինաւոր Թագաւորի, նոյնպէս և նոքա առ 'ի տալ հաւատարմութիւն ինչ աղտեղի վարդապետութե իւրեանց, զանուն նիկողայոսի բարեպաշտ սարկաւագին դրոշմեցին 'ի վերայ ։ Այչափ ինչ վասն այսր սարկաւագի. մատիցուք անդրէն 'ի կարգ պատմութեան գործոց առաքելոց ։

# ԳԼ. ԺԱ.

## Ատենաբանութիւն եւ մահ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային :

* *Եւ ասէ քահանայապետն արդարեւ այդ այդպէս իցէ‖. (գործ. է. 1:)*

Ստեփաննոս այր լի շնորհօք եւ զօրութ̃բ առնէր արուեստս եւ նշանս մեծամեծս 'ի ժողովրդեանն : Յոյնն ընթեռնու, լի էր հաւատով: Ասորին ընթեռնու, լի էր բարութ̃բ, շնորհօք եւ բարեգործութ̃բ : 'Ի զանազան ընթերցուածոց աստի հաւաստեալ տեսանի թէ ո̃ր սարկաւագն հարուստ էր 'ի գերազանց աստիճանի համօրէն առաքինութեանց : Ա̃ծ լիաձեռն եհեղ 'ի վերայ նորա զնախաժամման շնորհս, որ զարթուցանէ զհոգին 'ի գործս փրկարարս, եւ օգնական լինէր նմա զուգընթաց շնորհօք : Որ 'ի նմա գանձ հաճոյարար շնորհաց՝ որ առնէ զմարդ հաճոյ եւ սիրելի Ա̃յ : Նա եւս լի էր եւ շնորհօք, զոր կոչեմք ձրի տուեալ. որ կարգեալ է 'ի գործել հրաշալի բարութ̃իս այլոց : Լի էր հաւատովք, ոչ լոկ հաւատովն որ հասարակ է եւ այլոց հաւատացելոց, այլ նաեւ այնուիկ՝ որ կոչի հաւատ սքանչելեաց. զոր ունէր 'ի գերազանց աստիճանի՝ միացեալ ընդ մանաւոր վստահութե̃ 'ի վերայ ա̃ծային կարողութե̃ եւ ա̃ծային բարութե̃ : Լի էր եւ սիրով, եւ ո̃ր նախանձու, եւ այնուիկ զօրաւոր արիութ̃ որ խնդրի յամենայնի ձեռնարկել, եւ ամենայնի տանիլ, որչափ ինչ խնդրի 'ի ծաւալել զմեծագոյն փառս Ա̃յ :

'Ի բազմութե̃ ժողովրդեանն առնէր սքանչելիս մեծամեծս. ո̃ր գիրն ոչ նշանակէ զնոսա մի առ մի, զի բազում էին յոյժ : Այսչափ զօրութ̃իք եւ այսչափ սքանչելիք որք յինքեանս ձգէին զաչս բազմութ̃ն, զրգռէին եւ զկատաղութ̃ի անհաւատից . Յարեան

ընդդէմ նորա բազումք 'ի հրէից անտի որք ծնեալք արտաքոյ երուսաղեմի, այլ անդ յերուսաղէմ ունէին տունս և ժողովրդանոցս. *Յարեան ոմանք 'ի ժողովրդենէն (լատ. 'ի ժողովրդանոցէն) որ կոչի լիբեռացւոց‖, ծնեալք 'ի լիբիա, 'ի կիւրենա, յաղեքսանդրիա, 'ի լիւրիկիա, և 'ի փոքրն ասիա՝ վիճել ը̄ ստեփաննոսի, 'ի յաղթահարել զնա և լռեցուցանել. այլ 'ի ձգնելն յաղթահարել, ինքեանք նկուն լինէին. և 'ի ջանալն լռեցուցանել զնա, ինքեանք ափ'իբերան լինէին.

Փրկիչն խոստացեալ էր իւրոցն, թէ 'ի հարկաւորութե̄ գիցէ 'ի բերան նոցա բան, որում ոչ կարիցեն կալ հակառակ ամենայն զօրութի̄ք թշնամեաց. *Տաց ձեզ բերան և իմաստութի̄, որում ոչ կարիցեն կալ հակառակ ամենայն հակառակորդք ձեր‖. Այս խոստումն զօրհանապազ արդիւնանայր 'ի քաջ սարկաւագն. Այնչափ աշակերտք հուչակաւոր համալսարանաց յարձակէին 'ի վերայ նորա, բայց ոչ կարէին ընդդէմ կալ նորա իմաստութե̄ն՝ որոյ լեզուաւ խօսէր հոգին ս̄բ, և յամօթ առնէր զամենայն մարդկային իմաստութիւն. Յաղթեալք ոչ կարէին կալ հակառակ լեզուաւ, և ուշով մնաց, և գիտութե̄. տակայն և այնպէս հակառակէին չարութեամբ կամաց: Հազիւ երբէք լինի, զի որ 'ի վիճաբանութի̄ս պարտութի̄ խոստովանեսցի: Խաղաղական խօսակցութի̄ք օգնեն մտաց այնոցիկ, որք 'ի խօսակցութի̄ս յայնոսիկ խնդրեն հասու լինել ճշմարտութե̄. Այլ 'ի պատերազմական վէճս՝ ըմբոստ միտք մաքառին որչափ կարեն. և յորժամ միտք յաղթահարին 'ի վէճս բանի, յայնժամ յաջորդէ կարողութի̄ կամաց. ոչինչ փոյթ առնէ ճշմարտութե̄ յայնմ մարտի, այլ սոսկապէս խնդրէ զյաղթութի̄.

Արքն ամբարտաւանք՝ յաչս անձանց իմաստունք՝ տեսեալ զի միշտ ափ'իբերան մնան 'ի վէճս, փոխեցին զզէնս, և առին 'ի ձեռս զզրպարտութի̄. Հրապուրեցին սուտ վկայս, որք վկայեցին 'ի դատաստանի, թէ լուան 'ի բերանոյ նորա խօսիլ բանս հայհոյութեան 'ի մովսէս և յա̄ծ. և զայս զրպարտութիւն

սփռեցին 'ի ժողովուրդն, և յերկիւղս, և 'ի ծերս, և 'ի դպիրս, և ցայն վայր խռովեցին զնոսա, մինչև իբրև գազանք կատաղիք հասեալ 'ի վերայ Ստեփաննոսի յափշտակեցին զնա և ածին յատեան։ Ամբաստանութիւն սուտ վկայից էր այս. * այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զքաղաքէս սրբոյ և զօրինաց. լուաք 'ի դմանէ զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի նա քակեսցէ զերուսաղէմ քաղաքս, և փոխեսցէ զօրէնս զոր ետ մեզ Մովսէս||։ Այս ամբաստանութիւն ծայրագոյն չարութեամբ նիւթեցաւ. զի յարուցանէր ընդդէմ Ստեփաննոսի զբազուկ քաղաքական վասն քաղաքին և զբազուկ եկեղեցական վասն Մովսիսեան օրինաց։ Այլ ևս էր ամբաստանութիւն չարիմաց խորհրդով հնարեալ. զի 'ի ստութեան ասացուածոյն՝ պարունակէր և զճշմարտութիւն։ Որ յայտնապէս գուշակեալ 'ի Յիսուսէ, թէ քակեսցի երուսաղէմ, զոր Ստեփաննոս ոչ կարէր ուրանալ, զի էր անստելի մարգարէութիւն. Եւ առաւել՝ եթէ նա ինքն, որպէս և ամենևին հաւատալի է, 'ի բանս և 'ի վարդապետութիւնս իւր յիշատակեալ իցէ զայնպիսի ինչ։ Բայց Յիսուս ոչ էր ասացեալ, ես քակեցից. և ոչ իսկ հաւատամ թէ Ստեփաննոս ասացեալ իցէ, Յիսուս քակեսցէ. այլ մին ասաց, և միւսն յիշատակեաց զնորա զասացեալն՝ թէ 'ի հեթանոսաց քակեսցի. յայսմ այլայլութեան ստեցին ամբաստանողք։ Այլ առաւել ստեցին, ցուցանելով զնա իբր թշնամի քաղաքին և զանկայօղ կործանման նորա, և ոչ իբրև պարզ գուշակօղ և եթ։ Նմանապէս սուտ էր դնել 'ի բերան նորին թէ Յիսուս փոխեսցէ զօրէնս։ 'Ի տեսութիւնս նոցա աւետարանաց ցուցաք թէ օրէնքն ոչ փոխեցան, այլ կատարելագործեցան. Յիսուս իբրև գերազանց նկարիչ, զառաջին ուրուական գծագրութիւն ազնիւ երանգօք ծածկեալ՝ ոչ փոխեաց, այլ 'ի կատարումն եած զանկատարն։

Ստեփաննոս աներկիւղ արիութեամբ լսէր զբանս թշնամեաց իւրոց. և եթէ 'ի լուր այնց ամբաստանութեանց փոխեցաւ գոյն երեսաց իւրոց՝ ոչ առ երկիւղի, այլ 'ի գերագոյն սրբութենէ ներքին հրաշալի

գեղոյ հոգւոյ նորա թափանցանց յերեսս երևելով,
նման հրեշտակի որ յերկնային փառսն ։ Որչափ ինչ
յիշեմ աստ կաղկնոս, ոչ կարծեմ թէ 'ի բովանդակ
ա̃ծաշունչ գիրս տացի այլում անձին այսպիսի գո_
վեստ ։ Նեքուս թագաւոր այլազգեաց, կինն թե_
կուացի. մեմփիբոսթէ որդի յոնաթանու եսուն
գաւթի գովեստ նմանութեան հրեշտակի. բայց ոչ
տայցին՝ տեսանել զերեսս նորա նման հրեշտակի ։
Եսթեր 'ի զիջուցանել զբարկութ̃ի արտաշխի ասաց
եթէ ետես զնա. * իբրև հրեշտակ ա̃յ ||. բայց կին է,
և ոչ 'որ գիրն որ աստ զայն ։ Մովսեսի լուսաւորե_
ցան երեսք՝ խօսելով ընդ ա̃յ. միայն երեսաց ստե_
փաննոսի այս 'որ գիրն զգովեստ հրեշտակականնմա_
նութ̃ե ։ Ամենեքեան որք համախմբեալ էին անդ,
տեսին զգերաշխարհիկ կերպարանս երեսաց նորա ։
* Եւ հայեցեալ 'ի նա ամենեցուն որ նստէին յատե_
նին՝ տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի ||.
բայց այնու ոչինչ մեղմացան 'ի չարեաց իւրեանց ։
Եհարց զնա քահանայապետն, եթէ այն ամենայն
որ ասացաւ ընդդէմ նորա, ճշմարիտ իցէ. * Ար_
դարև այդ այդպէ՞ս իցէ ||.

Սա ոչինչ փոյթ կալեալ զանձնէ, այլ միայն զծա_
նօթու̃ի Տ̃ն Յ̃ի ջանացեալ հրատարակել, եանց
յամենն առաջինս, և սկսեալ 'ի նախնի նահապետաց
զկնի ցուցանելոյ նոցա զմիամիտ հնազանդութ̃ին ար_
րահամու և իսրայելի, էջ առաջի դնելով նոցա զան_
ընդհատ բարերարութ̃ին ա̃յ առ եբրայական ժողո_
վուրդն, և զապերախտութ̃ի նոցա առ ա̃ծ ։ Եցոյց
թէ համեմատութ̃ի իւն արարին մովսեսի զայն, զոր
առնէին Յ̃ի ։ Մովսէս առաքեցաւ առ ժողովուրդն
յեգիպտոս, և նոքա ուրացան զնա. թէպէտ առա_
քեալ էր իշխան և փրկիչ յեգիպտական գերութ̃է.
* Զայն մովսէս զոր ուրացանն և ասէին, ո՞ կացոյց
զքեզ իշխան և դատաւոր 'ի վերայ մեր, զնա ա̃ծ
իշխան և փրկիչ առաքեաց 'ի ձեռն հրեշտակին որ
երևեցաւ նմա 'ի մորենւոջն եա̃ ||. Յուշ արար զան_
հնազանդութ̃ի նոցա մովսեսի. * Որում ոչ կամե_
ցան հնազանդ լինել հարքն մեր ||. Յիշեաց և զմեր_

ժել ա̃յ զնոսա, և յետ այնորիկ անկան յամենայն անօրէնութի̃ս։ Ապա էջ յաջորդաբար մինչև եհաս ՚ի սողոմն և ՚ի տաճարն. ուր յառաջ բերեալ զմարգարէութի̃ն եսայեայ, թէ ա̃ծ անկարօտ է ձեռագործ տաճարի. զի երկինք աթոռ նորա են, և երկիրս պատուանդան ոտից ն̃ր, զոր ձեռք նորա արարին։ Ապա փոխեալ ՚ըյն զձայն իւր և զբարբառ, յարձակեցաւ ծանր՝ բայց արդար կշտամբանօք ՚ի վերայ անօրէն ատենակալաց, խստապարանոցս և անթլփատ սրտիւք և ականջօք կոչելով զնո̃. դուք աւէ հանապազ հոգւոյն ՚ըյ հակառակ կայք, որպէս հարքն ձեր և դուք. Զո՞ ՚ի մարգարէից ոչ հալածեցին հարքն ձեր, և սպանին զայնոսիկ որք յառաջագոյն պատմեցին վասն գալստեան Ք̃ի, որոյ դուք այժմ մատնիչք և սպանողք եղէք. որք այդչափ պարծիք յօրէնսն մովսէսի, զոր առիք սպասաւորու̃ հրեշտակաց, և ոչ պահեցիք։

Բազում դժուարութի̃ս գտանեն մեկնիչք ՚ի համաձայնութի̃ բանից սրբոյ նախասարկաւագին ընդ պատմու̃ հին կտակարանաց. զոր ընդարձակ քննեցաք ընդ կաղինոսի, անդր առաքեմք զընթերցօղն։ Այլ միայն մնաց՝ զոր անդ ոչ քննեցաք, զի ոչ հայէր յառաջարկութի̃ մեր. և է ՚ի ժզ̃. համարն եօթներորդ գլխոյն զոր աստ բացատրեմք. * Եւ վախճանեցաւ ինքն (յակոբ.) և հարքն մեր (որդիք յակոբայ) փոխեցան ՚ի սիւքեմ, և եդան յայրին զոր ստացաւ աբրահամ գնոց արծաթոյ յորդւոցն եմովրայ ՚ի սիւքեմ. (լատ. որդւոց սիւքեմայ)‖։ Բազմաց դժուարիմաց երևի այս բան. զի ՚ի գիրս ծննդոց գտանեմք (՚ի իգ̃. գլուխն,) թէ աբրահամ գնոց արծաթոյ ստացաւ զագարակն ՚ի գերեզման իւր. այլ ստացաւ զայն ՚ի քետացւոց, զոր վաճառեաց նմա եփրոն որդի սահառայ. և այն ագարակ էր ՚ի քեբրոն, և ստեփաննոս խօսի զտեղւոյ զոր աբրահամ գնեաց յամովրհացւոց լիջելոց յառնէ որ կոչիւր սիւքեմ. և այն ագարակ էր ՚ի սահմանս սիւքեմ քաղաքի։ Յակոբ (՚ի գլուխ լգ̃. ծննդոց,) գնեաց ագարակ մի յամովրհացւոց, այլ գնեաց զայն ՚ի հարկանել անդ ըղ-

խորան իւր, և ոչ 'ի թաղել զմեռեալս. և եմովր զոր մերն ստեփաննոս կոչէ որդի սիւքեմայ, 'ի դաշնագրութեան որ արարաւ ընդ յակոբայ՝ գտանի հայր սիւքեմայ, և ոչ որդի նորա: Եւ եւս՝ յայտնապէս եբրայեցի 'ի չորրորդ գլուխ երկրորդ գրոց եբրայական հնութեանց, հաստատէ թէ որդիք յակոբայ թաղեցան 'ի քեբրոն. *զորոց զմարմինս որդիք և թոռունք 'ի քեբրոն տարեալ թաղեցին‖. ապա ոչ 'ի սիւքեմ:

'Ի լուծումն այսց դժուարութեանց, բազումք դիմեն առ բանական մեկնութիւն. իսկ կաղինոս որում զհետ երթամք, ոչինչ անպատշաճութիւն գտանէ ասել. նախ՝ թէ որդւոյ կամ թոռան դիցի անուն հաւուն. աւելորդ է աստ բերել օրինակս 'ի ս. գրոց, ուր բազումս ունիմք. ապա ասեմք ընդ մերն ստեփաննոսի՝ 'ի ժամանակս աբրահամու յերկրին սիւքեմայ իշխէր եմովր որդի իշխանի միոյ՝ որ կոչէր սիւքեմ. և եմովր ունելով որդիս, միում 'ի նոցանէ ետ զանուն հաւուն, կոչելով զնա նորին անուամբ սիւքեմ. ահա ունիմք զեմովր որդի սիւքեմայ, զորմէ խօսի մերն ստեփաննոս առ ժամանակաւ աբրահամու, և զեմովր հայր սիւքեմայ, զորմէ խօսի գիրն ծննդոց յետոյ 'ի ժամանակս յակոբայ: Երկրորդ՝ ասէ կաղինոս. ոչ գտանեմ անպատշաճութիւն ինչ, թէ բնակելով ուրուք յերկրի ուրեք, անդ պատրաստեսցէ իւր գերեզման. ապա անցանելով յայլ գաւառ, և ոչ կամելով յանձն առնուլ զդժուարութիւն առաքելոյ զմեռեալ մի իւր հեռի ուրեք, անդ պատրաստեսցէ այլ գերեզման: Աբրահամ 'ի սկիզբն պանդխտութեան իւրոյ բնակեցաւ 'ի սիւքեմ. որպէս ունիմք 'ի ժբ. գլուխն ծննդոց: Ո՞ ինչ անպատշաճութիւն կարեմք գտանել 'ի հաստատել թէ այրն բարեպաշտ ունելով ընտանիս բազումս, գնեալ իցէ անդ տեղի 'ի պէտս գերեզմանի: Ապա բնակելով 'ի քեբրոն, և անդ մեռեալ սարրայի կնոջ նորա, ոչ կամելով առն նորա հեռացուցանել զմարմին նորա, անդ գնեալ իցէ տեղի գերեզմանի:

Կարի յաճախ է յաստուածային գիրս գտանել ծանօթութիւն ինչ 'ի մի գիրս, որ ոչ գտանի յայլ գիրս:

'Ի բանից ծննդոց գիտեմք՝ զի աբրահամ գնեաց տեղի գերեզմանի 'ի քեբրոն. և 'ի բանից գործոց առաքելոց ուսանիմք 'ի նոյն ստեփաննոսէ, թէ աբրահամ յառաջագոյն գնեալ էր տեղի գերեզմանի այլուր 'ի մէջ սիկիմացւոց: Եւ այսպէս առանց բռնական մեկնութեանց ինքնին ամենայայտ է բնաբանն: Իսկ առ վկայութիւն յովսեպոսի աւելի է: Սուրբն ստեփաննոս ասէ թէ որդիք յակոբայ 'ի սիւքեմ թաղեցան, յովսեպոս ասէ թէ 'ի քեբրոն: Լորինոս առաջի առնէ իբրև կարծիք ոչ մերժելի՝ ասել թէ 'ի սկզբան 'ի սիւքեմ թաղեցան, ապա փոխադրեցան 'ի քեբրոն. և զի այս փոխադրութիւն գիտակցաց ոչ էր ինչ, մարթ է հաւանութիւն ընծայել այսմ կարծեաց: Սուրբն Հերոնիմոս ('ի իէ. թուղթն իւր) ասէ թէ այն նահապետք էին թաղեալ 'ի սիւքեմ, որոց շիրիմք երևէին մինչև 'ի ժամանակս իւր. ապա մեծագործ շինուածք էին, իբր հնայուն հանգստարան. և ոչ իբր վէր 'ի վերոյ պահեստ պատուական նշխարաց: Չունիմ ասէ կաղինոս մեծ ինչ փոյթ միաբանել զսբ. գիրն ընդ յովսեպոսի, թէ 'ի սիւքեմ թաղեցան՝ չիք տարակոյս. իսկ թէ անտի փոխադրեալ իցեն 'ի քեբրոն, կարէ հաւատալ որ հաւատայ յովսեպոսի: Այլ մեք դարձցուք անդրէն առ նոյն ստեփաննոս:

Ամենեքեան յատենի անդ որք լսէին զաստուածային ատենաբանութիւն, զայրանային 'ի սիրտս իւրեանց, և կրճտէին զատամունս 'ի վերայ նորա: Եւ առաւելապէս կատաղէին՝ զի յայտնի ճշմարտութիւն յանդիմանէր զնոսա, քան թէ բացայայտ զրպարտութիւն կշտամբէր. զի ընդ արտաքին ճշմարիտ յանդիմանութեան միայնոյ և ներքին խայթ գիտակցութեան մտաց. իսկ 'ի զրպարտութեան թեթևութիւն մեծ է վկայութիւն անմեղ խղճի մտաց. յայսմ գոյ ճանապարհ արդարանալոյ, իսկ յայնմ չիք ջատագովութիւն: Ոչ կարէին ժխտել զանօրէնութիւնս, զորս համարձակ 'ի դէմս ածէր նոցա արի սարկաւագն. կամէին տեսանել զնա մեռեալ, բայց ոչ կամէին երևիլ սպանող 'ի վրէժխնդրութիւն ճշմարտաբան յանդիմանութեան. և այս ցանկութիւն նոցա՝ ոչ գիտէր թէ որով հնարիւք հասանիցէ 'ի կա-

տարածմն, տանջէր զնոսա, և ամբոխէր յուզմամբ անբաւ խորհրդոց, և պատառէր զսիրտս նոցա կատաղի անձկութ և լի տագնապաւ: Մինչ նոքա տագնապէին յայն դժոխային ամբոխմունս, բացաւ առաջի աչաց ստեփաննոսի տեսութի արքայութե: Ամբարձ զաչս, և Թափանցանց ընդ օդմ և ընդ ձեղունս և ընդ այլ ամենայն արգելս ետես, և հրապարակաւ յայտնեաց. ետես բացեալ զերկինս, և զիւր սիրեցեալն Յն կալ ընդ աջմէ մեծի լուսոյն, յորում փայլէր փառք և զօրութի այ: Այս ըստ կաղինոսի ոչ էր տեսիլ լոկ մտաւոր, կամ լոկ երևակայական. այլ համարի նա Թէ աչք ստեփաննոսի վայելեցին յայն հրաշալի տեսարան: Հեռաւորութին ոչ բաւնայ 'ի տեսութե զայն առարկայ՝ զոր ածային ամենակարողութին կամեցի ցուցանել մերում տեսութե: Յն առանց շարժելոյ յերկնից, որ է 'ի վերուստ անտի երևեցուցանել զինքն այնմ՝ որ տակաւին պանդխտի յաքսորանս 'ի յերկրի աստ:

Մօտ գոլով ստեփաննոսի առնուլ զպսակ իւրոյ մարտիրոսութե, հոգին սբ մեծագոյն առատութբ իւրոյ պարգևաց ջերմացոյց զբոց սբ նախանձու նորա և զսիրոյ առ Յն. ոչ ևս խորհէր նա ոչ զերկրէ, ոչ զամբաստանողաց, ոչ զդատաւորաց, ոչ զչարաժողովսն, և ոչ զանձնէ. բովանդակ խորհուրդ իւր և սիրտ դարձեալ էր յերկինս. ամենաքաղցրն տէր կամեցաւ տալ նմա զճաշակ իմն յառաջ քան զժառանգելն: *Եւ նա էր լի հոգւով սրբով. հայեցաւ յերկինս, և ետես զփառս այ. և զՅն զի կայր ընդ աջմէ այ. և ասէ՝ ահա տեսանեմ զերկինս բացեալ, և զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ այ ||: Այս բան չար ատեանն էառ իբրև հայհոյութի. նախ խցին զականջս իւրեանց, ապա առհասարակ ձայն բարձեալ դիմեցին 'ի վերայ սրբոյն, կատաղաբար հանին քարշեցին զնա արտաքոյ քաղաքին. և անդ քարկոծէին զնա նոքին իսկ սուտ վկայքն, որք առ Թեթևանալոյ՝ հանեալ զհանդերձս իւրեանց եդին առ ոտս երիտասարդի միոջ 'ի պահպանութի որ կոչէր սաւուղ, 'ի ժամուն առաւել դժնդակ 'ի

հաղորդելոյն, այլ գիտէր ամփոփեալ առաքինութեանց նոցա զիրս աստուծոյ Միածնոյն 'ի պաշտպանութիւն 'նոյն եկեղեցւոյ : Նա այնպէս Թեթեւացեալ յարգելոյց արգելիցն զատուցանէ քաղաքաց 'ի վերայ այնոցին, որ կարգեալք և առաքել . Տէր Յիսուս ընկալ զհոգի իմ : Հասեալ յետոյ 'ի վերջինս կենս հասեալ' եւ ծածկեալ 'ի գետնի, և զհոգին իւր աւանդեաց յերկինս . մնացեալ զմարմինն զառանձնգակ քարեղէն վիրաց ու անտանելամ տարածեալ իւր անձամբ : Սա նոքա ապար գլխոյն խնդրութեան անձամբ . * Տէր մի համարիր դոցա զայս մեղս | . զայս աղաչեալ 'ի մէջ անդամատանէ քարանց, մեռանէ հանգստեամբ և խաղաղական մահուամբ, այնպէս արտասուելի իւրեանց արարեալ, որ ոչ Թուէր մահ, քան Թէ 'նինջ քնոյ : * Եւ զայս իբրեւ ասաց' 'ննջեաց | : Որպէս մեռանելն Յիսուսի ծառայց ամ : Մահ ասէ արդարոց 'նոյն 'ի մէջ մեղկոց անհաւասարութեան' մեծ է հանգիստ իւր քնոյ :

Նա որք համարեցան Թէ մորթեալ յանձնեցաւ զ աւուրց 'ի պարհապանութիւն' կեն հանդերձեալ ոչ ստեփ վկայից քարկոծողաց, այլ ստեփաննոսի քարկոծելոյ : Աչքեր Թէ յայս մեռա եր 'նդ ընծայաբար և 'նոյն պետարա զանմահանան 'ի Յասան զոր արար 'ի վերայ 'նոյ նախավկայից . և համարեցին Թէ շաղափեալ այնչ պատուական 'նշխարաց նորա յետոյ ամաստոյ հեթեն արձանական զատանել յոյժ զարդարեն : Որպէս կարծեն մեռեալ 'ի նախ լառալին Թագաւորութեան . բայց յոյն ընծայեցին բառնալ զամենայն եկեղեցւոյ Թիւն . զի ոչ լառալին ասէ, զհանդերձեալն իւր, յորնն ամեն իւրեանց, այսպիսին զհանդերձեալ քարկոծողաց : Եւ աստուծոյ բազմապատիկ նա խնդիր առաւել, որ ոչ եւ աւել, այլ պտղաբ, ('ի գլ. ԻԲ. 20. գործոց.) խոստովանի առաջեալ ամ. * Եւ յորժամ հեղոյր արիւնն ստեփաննոսի վկայի քո, ես ինքն էի որ 'ի վերայ կայի, և կամակից լինէի սպանմանն նորա, և պահէի զհանդերձս սպանողաց |: Աւասիկ պահէր զհանդերձս զաւհանց, որք բաց կատարութեն ծնելին. այլ այսուհետեւ ստեփաննոսի ընկալան վասն նորա զշնորհութեան մեծացին :

## ԳԼ. ԺԲ.

Հալածումն եկեղեցւոյ յերուսաղէմ ։ Յայտնութիւն սրբ̄ին Ստեփաննոսի ։ Քարոզութիւն սրբ̄ին Փիլիպպոսի աշակերտի 'ի Սամարիա ։ Գալուստ սրբ̄ց առաքելոց Պետրոսի և Յովհաննու 'ի Սամարիա. և անպարտութիւն Սիմոնի Մոգի ։

* Եւ եղև յաւուր յայնմիկ հալածումն մեծ 'ի վերայ եկեղեցւոյն ¶. և այլն. (գործոց Ը. 1. մինչև ց26 համար ։)

Սատաղի եռանդն հրէական ոչ շիջաւ արեամբ սրբոյն Ստեփաննոսի ։ 'Ի նմին իսկ աւուր ել հալածումն դժնդակ 'ի վր̄ եկեղեցւոյն յերուսաղէմ քաղաքի, և խնդրէին զհաւատացեալս 'ի մահ ։ Սակայն և այնպէս յայնմ մեծի հալածման արարին մեծահանդէս յուղարկաւորութիւն պատուական մարմնոյ սրբոյ նախավկային ։ 'Ի գործս առաքելոց սրբ̄ն ղուկաս շատանայ համառօտիւ ասել. * Իսկ բարձին զստեփաննոս արք երկիւղածք, և արարին կոծ մեծ 'ի վերայ նորա ¶. այլ ունիմք առաւել որոշ ծանօթութիւն 'ի սրբոյն գամաղիէլէ 'ի միում յայտնութեան իւրում բարեպաշտ քահանային ղուկիանոսի ։ Նոյն ղուկիանոս էր աւագերէց յերուսաղէմ քաղաք 'ի սկիզբն հինգերորդ դարուն, յորժամ երևեցաւ նմա սրբ̄ն գամաղիէլ երեք անգամ. և յայտնեաց նմա զտապանն, ուր 'ի միասին ընդ իւրումն մարմնոյ, և ընդ մարմնոյ որդւոյ իւրոյ աբիբայ՝ եդեալ կայր պատուական մարմին նորին Ստեփաննոսի, և նորին նիկոդեմոսի ։

Յայն երևմունս բազում ինչ յայտնեաց նոյն գամաղիէլ ղուկիանոսի. և նա հրատարակեաց զայն 'ի թղթի միում գրեալ 'ի նմանէ 'ի յոյն լեզու. զոր

յետոյ աւիտոս քահանայ սպանիայի դարձոյց 'ի լատին բարբառ ։ Այն թուղթ անհարազատ դատեցաւ 'ի լիբոմանոսէ . բայց այլոց ընդունելի եղև , զոր և բազումք բերեն 'ի վկայութի . ուստի և ունի բազում հեղինակութի ։ Պատմեմք 'ի նմա , զի գամաղիէլ յայտնեալ է նմա թէ սրն ստեփաննոս քարկոծեալ 'ի հրէից , և յիշխանաց նոցա և 'ի քահանայապետաց վասն հաւատոյ Քի Յի տն մերոյ յերուսաղէմ , արտաքոյ հիւսիսային դրան որ հանէ 'ի կեդար , մնացեալ իցէ անդ օր մի և գիշեր մի . պատուիրելով անօրէն իշխանաց՝ զի մի ոք իշխեսցէ առնուլ և թաղել զայն սրբ մարմին . կամէին նոքա թէ զպատառեալն և զաղճատեալն 'ի նոցանէ քարամբք՝ գազանք ապառեսցեն ատամամբք . սակայն ոչ թռչունք , ոչ գայլք , և ոչ շունք մերձեցան առ նա ։ Ես ասէ գամաղիէլ ցաւելով ընդ այնչափ անարգութիւն պաշտօնէին Յսի Քսի , ջանկացեալ առնուլ վարձս յայ , հաղորդ լինելով հաւատոյ սրբ վկային , գիշերայն առաքեցի զբազումս զօրս կարօղ եղէ հաւաքել յերկիւղած հաւատացելոց բնակելոց յերուսաղէմ 'ի մէջ հրէից . և պատրաստեալ զամենայն հարկաւորս , յորդորեցի զնոսա գաղտ երթալ առնուլ զսրբ մարմինն , և եդեալ 'ի կառս իմ տանիլ 'ի գեօղն իմ կոչեցեալ Կաֆար Գամալա , քսան մղոնաւ հեռի 'ի քաղաքէն ։ Անդ ետու առնել յուղարկաւորութի մեծ յաւուրս եօթանասուն , և զսրբ մարմինն հանգուցանել յիմում նոր գամբարանի յարեւելս կոյս . և պատուիրեցի իմոց սպասաւորաց՝ մատակարարել զամենայն պէտս յուղարկաւորութեան ։

Յայսմանէ իմանամք ասէ կաղինոս , նախ թէ ինքն գամաղիէլ մնաց յայնժամ յերուսաղէմ ։ Երկրորդ՝ թէ կոծ մեծ զորմէ խօսի սրբ ղուկաս , ոչ նշանակէ հեղեղս արտասուաց , ողբս և հեծութի , այլ որպէս քաջ նշանակէ սրն հերոնիմոս 'ի նէ . թուղթ իւր առ պաւլա , է պայծառ հանդէս յուղարկաւորութեան . * Կոծ մեծ ոչ լացողաց յդուցհանութիք՝ որպէս դու կարծես , այլ մեծավայելուչ հանդէս յուղար-

կատարութեան իմանալի է ‖. Նա ինքն սբ վարդապետն ՚ի Թուղթն ծք. առ րիպարիոս, գրէ թէ նոքին իսկ առաքեալք մեծաւ շքով պատուեցին զայն կոծ. ցուցանելով ՚ի վերայ այնր առաջնոյ վկայի թէ որպէս արժան է փառաւորել զնշխարս՝ որոց հեղուն զարիւնս իւրեանց վասն սիրոյ տն մերոյ Յի Քի. Երրորդ իմանի՝ թէ յասել սբյն ղուկասու. * Եւ ամենեքեան ցրուեցան ՚ի գեօղս հրէաստանի և ՚ի սամարիա ‖, ոչ կամի ասել թէ ամենայն հաւատացեալք ցրուեցան. այլ՝ կամ մեծ բազմութիւն հաւատացելոց, կամ եօթանասուն և երկու աշակերտք, զի և նոքա էին վարդապետք և քարոզք հաւատոյ. և այս հաստատի այնու, զոր վաղվաղակի յարէ սբ գիրն, որպէս փոքր մի յետոյ տեսցուք.

Ցրումն աշակերտաց ՚ի գեօղս հրէաստանի և ՚ի սամարիա ոչ եղև ՚ի կարճմտութէ, կամ յանարի երկչոտութէ. Արդէն պատուիրեալ էր Յս քարոզել զաւետարանն՝ հրէից, սամարացւոց և հեթանոսաց. առաքեալք ՚ի հալածանաց աստի պատճառս առին սփռել յայլ և այլ կողմանս զառաջին քարոզս սբ հաւատոյ. * լսեն (այսպէս խօսի սբն աթանաս ՚ի Ճառն որ յաղագս խմբոյ,) լսեն ՚ի գործս առաքելոց՝ թէ զկնի քարկոծման ստեփաննոսի աշակերտքն ցրուեցան, ո՛չ առ տկարութե ցանուցիր լինելով, այլ յաղագս հաւատոյ այնպէս բաժանեցան. Այլ զի այնպէս ցրուեցան՝ եղեն իբրև սերմանօղք ցորենոյ ՚ի գործել հաց գերերկնային. շրջեալ ընդ ամենայն ոլորտս երկրի, զկենդանարար զօրութիւն և զազդումն վարդապետութե սերմանեցին ‖. Եւ սբ գրիգոր նիւսացին ՚ի Ճառն հոգւոյն սբյ, ասէ թէ ՚ի հալածմանէ աստի սկսաւ տարածիլ աւետարանն ընդ ամենայն երկիր. * Աստի ընդ ոլորտս երկրի աշակերտք ընթանալ սկսան. այս սկզբնաւորութի հրատարակութե բանին ‖. Առաքեալք ոչ մեկնեցան յերուսաղեմէ. կացին միայն անշարժ ՚ի դժնդակ հալածմունս. Զեր ՚ի Ճահ, զի թշնամիք նոցա նախատեսցեն զնոսա իբրև անարի վատասիրտս. Զեր ՚ի Ճահ, զի ամպարիշտ ժողովն պարծեսցի եթէ սա-

սանեցոյց զհաստատուն զայն խարխախս աւետարանին ։ Չէր 'ի ճահ, զի այնչափ հաւատացեալք՝ որք կային նպատակ հալածչաց իւրեանց, զուրկ մնասցեն յօգնութենէ և 'ի քաջալերութենէ, զոր ունէին յառաքելոց ։

Հաւաստի է թէ բազմութիւն հաւատացելոց կացին մնացին յերուսաղէմ. զոր իմանամք 'ի նոյն ղուկասայ պատմելոյն. * սողոս վնասակար էր եկեղեցւոյն. 'ի տունս տունս մտանէր, քարշէր զարս և զկանայս, մատնէր 'ի բանտ ‖ ։ Եւ է յայս հալածանս բազումք սպանան վասն հաւատոյ, ունիմք յանդիմադարձ վկայութենէ նորին իսկ սողոսի փոխելոյ 'ի պօղոս. որ ( 'ի գլ. իզ. գործոց առաքելոց ) ասէ զանձնէ. * Զբազումս 'ի նոցա ես բանտարգել առնէի, 'ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն. և զսպանելոյն նոցա բերէի զհամար ‖ ։

'Ի նախագրեալ յայտնութենէ նոյն գամաղիէլի առ ղուկիանոս քահանայ՝ ունիմք թէ յայս հալածանս նիկոդեմոս լոկ վասն լինելոյ իւրոյ աշակերտ Յսի, մերկացուցաւ յիշխանութենէ իւրմէ, և յընչից իւրոց, և նզովեցաւ և աքսորեցաւ. այլ նա ինքն բարեպաշտն գամաղիէլ ընկալաւ զնա մարդասիրութբ, և պահեաց 'ի գեղջ իւրում, և կերակրեաց մինչև 'ի մահ. և 'ի մեռանել նորա, հանգոյց 'ի նմին տապանի ընդ ստեփաննոսի ։ * Զնիկոդեմոս զի աշակերտ էր Քսի հանեալ հրէից յիշխանութենէ և նզովեալ, և յաքսորս վարեալ, ես յիմում ագարակի ընկալեալ դարմանեցի և զգեցուցի մինչև 'ի վախճան կենաց նորա. ապա առընթեր ստեփաննոսի պատուով թաղեցի զնա ‖ ։ Նմանապէս յայսմ հալածման եղև՝ որպէս ընթերցեալ լինի 'ի վարս նոյն մարիամու մագդաղենացւոյն և ընկերաց նորա. յորժամ վեհաբարոյ սրբուհին ը քեռ իւրում մարթայի և եղբօր իւրոյ ղազարու, և մարկեղայ, և մաքսիմիանոսի եդեալ 'ի նաւ փուտ և խարխարեալ, անառագաստ, անղեկ, անառաջնորդ մատնեցան հողմոց և ծովու, առաջնորդութեամբ բարձրելոյն տարան 'ի մարսիլիա ողջամբ. և անդ յաշխարհն գաղ-

զխացուց մուծին զհաւատ աւետարանին ։ Այսպէս նովին Ճանապարհաւ որով զուն գործէին 'ի միում քաղաքի ընջել զոր հաւատն, ընդարձակեալ ծաւալէր ընդ աշխարհ ամենայն․ զի ամենեքեան նոքա որք ցրուեալք էին՝ աւետարանէին զբանն այ ․ * Եւ սփռեալքն շրջէին աւետարանէին զբանն ‖ ։

Այլ 'ի մէջ ամենեցուն որոց ղուկաս մեծաւ գովութեամբ յիշատակէ զաշակերտն զորն փիլիպպոս ։ Եմուտ նա 'ի սամարիա քաղաք ․ քարոզեաց անդ ․ արար հրաշս մեծամեծս ․ ազատեաց զայսահարս յայսոց պղծոց, բժշկեաց զանդամալոյծս, և զկաղս ․ զերխ զայսօսիկ որոշ նշանակելով, տալ իմանալ °զայլ ամենայն ազգս հիւանդութեանց ։ Սամարացիք միաբան տեսանէին զհրաշս, և լսէին զվարդապետութիս, և եղև անդ դարձ բազմութեան յոյժ ։ Գուցէ զարմասցի ոք, որ գիտիցէ թէ սամարացիք հերետիկոսք էին առ երբայեցիս, հերձեալք 'ի հին եկեղեցւոյն ․ և փորձն ուսուցանէ մեզ թէ առաւել դժուարին է հերետիկոսաց դառնալ, քան կռապաշտից ։ Եւս առաւել զարմասցի, թէ որպէս այնչափ յօժարութբ ընկալան զհաւատս քարոզեալ նոցա 'ի փիլիպպոսէ ․ որովհետև գիտէին զդժնդակ հալածումն զոր կրէր նոյն հաւատն յերուսաղէմ ։ Սակայն՝ ասէ կաղմետ ․ ես կարծեմ թէ վասն այնորիկ իսկ զի էին հերետիկոս երբայական ժողովրդեան, առաւել պատրաստական էին ընդունել զհաւատ զոր հալածէին երբայեցիք ․ և վասն առաւել ատելութն զոր ունէին սամարացիք ընդդէմ ամբարտաւան երուսաղէմացւոց, առաւել յօժարամիտ ընդգըրկէին զհաւատն Քի ։ Սամարացիք կամակար սրտիւ ընկալան երբեմն զսերմն ճշմարտին բանից 'ի բերանոյ Յի տն մերոյ ․ և այժմ մշակութեամբ աշակերտին տայլին զպտուղ սերմանեացն յերկնաւոր վարդապետէն ։ Ուրախութիւն մեծ էր ընդ քաղաքն ողջոյն ․ արք և կանայք ընթանային 'ի սբ փրկարար մկրտութիւն Քրի ։

Ընդ բազմութեան դիմելոց 'ի մկրտութիւն էր և այր ոմն նշանաւոր անուն սիմոն, որ մինչև ցայն ժամ

վարէր զմոգութիւն 'ի քաղաքին յայնմիկ. և ապշե-ցուցանէր զժողովուրդն ասելով զանձնէ թէ մեծ ոմն իցէ, այնչափ զի ամենեքին ասէին զնա մեծ զօ-րութիւն ա̃յ: Սա ևս հաւատաց և մկրտեցաւ. և թուէր թէ ոչ կարէր հեռանալ 'ի փիլիպպոսէ: Ս̃բ հարք առհասարակ հաստատեն, թէ նա սուտ և կեղծաւոր սրտիւ մատեաւ 'ի մկրտութի̃ն. և չէ ինչ ընդդէմ այն զոր ունիմք առ 'նրն ղուկայ որ ասէ. * Այլ և ինքն սիմոն հաւատաց ||: Երկու եղանա-կաւ մարթ է հաւատալ. մի՝ բարեպաշտ յօժարու-թեամբ և խոնարհամիտ հպատակութեամբ առ ա̃ծ որ յայտնէ. այսպէս հաւատան Ճշմարիտ հաւատա-ցեալք: Երկրորդ՝ մարթ է հաւատալ վասն մասնա-ւոր իմն բռնութեան զոր առնեն նշանք հաւատալիու-թեան. յորոց միտքն որ քաջ խելամուտ լեալ՝ յաղ-թահարի, թէպէտ և ակամայ. և որչափ օտարանայ 'ի հաւատալոյ, ոչ գտանէ թէ զինչ ընդդէմ այնմ հաւանեցուցէ և հանդուցանիցէ զկամս: Այսպէս հաւատան դևք. այսպէս հաւատան բազումք որք Ճշմարիտ գտեալ զկաթուղիկէ ուղղափառ հաւատն, թէև ընդդէմ այնմ ունիցին թշնամութի̃ն:

Ըստ այսմ երկրորդ եղանակի համարի կաղինոս թէ՝ հաւատաց սիմոն մոգն. տեսանէր ասէ՝ զմեծա-մեծ սքանչելիսն որք լինէին 'ի ձեռն փիլիպպոսի. և ինքն Ճանաչէր թէ ոչ կարէ հասանել առ այն չափ հանդերձ ամենայն գործակցութ̃բ դիւին իւրոյ: Հա-ւատաց թէ Ճշմարիտ է այն զոր փիլիպպոս քարո-զէր, բայց ոչ յարեցաւ սրտիւ առ այն Ճշմարտու-թի̃ն. ոչ խոնարհեցաւ միամտութ̃բ ընդունել զՃշ-մարտութիւն առ յ̃այ յայտնեալս. սակայն ընկալաւ զմկրտութի̃ն, և յարեցաւ 'ի փիլիպպոս 'ի փորձել թէ գուցէ նովին Ճանապարհաւ կարիցէ անդրէն յինքն դարձուցանել զժողովուրդն և յարգոյ ընծայեցու-ցանել զանձն, որպէս համբաւեալ էր փիլիպպոս ոչ առ աչօք պատրանօք, այլ Ճշմարիտ սքանչելեօք. որք որպէս զարմացուցանէին զնա, նոյնպէս յերևա-կայութեան նորա վառէին զփառասիրութիւն. մի միայն երջանկութի̃ն անձին համարէր հասանել յայս

չափ կարողութեան ։ * Այլ և ինքն սիմոն հաւատաց. և մկրտեալ կանխէր առ փիլիպպոս, տեսեալ զնշանս և զմեծամեծ զօրութիւնս որք լինէին՝ զարմանայր ‖ ։

Եհաս յերուսաղէմ յականջս առաքելոց լուր ուրախի երջանիկ յառաջադիմութեան նորատունկ եկեղեցւոյ 'ի սամարիա, և կարևոր դատեցան երկուց 'ի նոցանէ երթալ անդր 'ի պաշտել նորոգ մկրտելոց զխորհուրդ դրոշմին. և առ 'ի ցուցանել առաւել պատիւ և մարդասիրութեան, 'ի դէպ վարկան զի երթիցեն գլխաւորքն առաքելոց. որպէս զի սամարացւոց տեսեալ զայն պատիւ առաւելապէս յօժարամտէին 'ի հաւատս. և եթէ պիտոյ լինէր նոր ինչ կարգ սահմանել այնմ եկեղեցւոյ, բարձրագոյն իշխանութեամբ լինէր այն ։ Սոյն այսորիկ միաբան հաւանութեամբ ընտրեցան պետրոս և յովհաննէս, և առաքեցան ոչ իբր ստորինք 'ի վերնագունից հրամանաւ, այլ մին իբր գլուխ, միւսն իբր ընկեր, իմաստուն խորհրդականք միմեանց ։ Եկին և կացին յաղօթս 'ի վերայ նոցա, որպէս զի հոգին սուրբ իջցէ 'ի նոսա՝ նովին առատաձեռն պարգևօք և զգալի նշանօք, որով էջ յերուսաղէմ 'ի վերայ հաւատացելոց ։ Պաշտեցաւ խորհուրդ դրոշմին. և 'ի դնել առաքելոց զձեռս, հոգին սուրբ ցուցանէր նշանս զգալի գալստեան իւրոյ. տալով ոմանց զպարգև լեզուաց՝ ոմանց զզօրութիւն հալածելոյ զդևս, այլոց առնել զայլ նշանս հրաշալիս ։ Իսկ սիմոն մերկացաւ զպատրուակն, մեծապէս շահաբեր դատելով իւրումն շահասիրութեան ունել զօրութիւն աքանչելագործութեան ։ Համարեցաւ ամպարիշտն վաճառելի զհոգին սուրբ. մատոյց առաքելոց արծաթ՝ զի վաճառեսցեն նմա զայն իշխանութիւն, որպէս զի և ինքն յոր վերայ դնիցէ զձեռս, առցէ հոգի սուրբ ։

Զարհուրեցան առաքեալք ընդ այն առաջարկութիւն. և սուրբն պետրոս հրաժարեալ արդար նախանձու ասաց ցնա, արծաթ քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ. համարեցար թէ մարթ է արծաթով ստանալ զայն՝ որ բոլորովին է ձրի պարգև Աստուծոյ ։ Ոչ գոյ

քեզ մամն 'ի հաւատս յայս, և ոչ վիճակ 'ի պար-
գևս յայսոսիկ. զի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի
այ՟. Ընկալ զխրատս իմ. ապաշխարեա 'ի մեղացդ և
յամենայն չարեացդ քոց յայդցանէ, և աղաչեա
զՏ՟ր զի թերևս գթացեալ թողութիւն տացէ քեզ 'ի
ներգաւոր խորհրդոց քոց, այլ դու՝ որ հոգւով լո-
ղաս 'ի դառնութեան մաղձի. և կամաւորապէս կաս
կաշկանդեալ 'ի շղթայս անիրաւութեան: Յայսպիսի
սաստիկ յանդիմանութէ՟ ոչինչ շահեցաւ. երկնչէր
զի մի՛ չար ինչ դայցէ 'ի վերայ իւր, բայց և ապաշ-
խարել ոչ կամէր. նա՝ և ոչ իսկ դառնալ առ ա՟ծ
պաղատանօք իւիք. եւ պատասխանի ցրտութ՟ իմն,
յանձնելով զանձն աղօթից երկուց առաքելոց, և
գնաց:

'Ի ս՟բ գրոց չունիմք այլ ինչ ծանօթութիւն վ՟ն
այսր սիմոնի մոգի. սակայն համօրէն նախնի եկեղե-
ցական մատենագիրք լրումն տան պատմութեանն,
հաստատելով թէ զկնի մեկնելոյ ս՟րյն պետրոսի և
ս՟րյն յովհաննու 'ի սամարիոյ, մնաց անդ. և իւրով
մոգութե՟ արուեստիւ ձգեաց յինքն նոր հետևողս,
և եհան 'ի հաւատոց ոչ սակաւ հաւատադրուժս:
Ս՟բ կղեմէս պապն 'ի գիրս իւրոց սահմանադրութեանց
յեօթներորդ գլուխն՝ պատմէ թէ յետոյ վերստին
դտաւ ընդ ս՟րյն պետրոսի 'ի կեսարիա՝ և ոչ կարե-
լով զդէմ ունել ս՟րյն առ առաւել հեռանալոյ 'ի
նմանէ որչափ ինչ մարթ էր, եկն յիտալիա: 'Ի
հռովմ 'ի սկզբանն ընդունելութի՟ մեծ եգիտ, մինչ
զի որպէս ունիմք 'ի յուստինոսէ. (գիրք. ա՟. գլ.
20.) 'ի տիբերիս ընդ մէջ երկուց կամրջաց 'ի կղզ-
զին որ յայնժամ կոչէր լիկանոնիա, այժմ ս՟բ բար-
դուղիմէոս, կանգնեցին նմա արձան՝ այսպիսի վեր-
տառութ՟. սիմոնի աստուածոյ սրբոյ: Նաև յետոյ և
'ի հռովմ առընթեր նորա երևեցաւ յայտնիչն խա-
բէութեանց նորա: Յաւուր միում մինչ օգնութ՟
դիւին իւրոյ 'ի վեր յօդս ճախրէր, ս՟բն պետրոս հա-
մառօտ աղօթիւք ընկէց զեղկելին 'ի գետին, և
խորտակեցան սրունք նորա. հուսկ յետոյ նկուն,
անուանարկ և յուսահատութ զկնի կրելոյ դառն և

դժնդակ ցաւս, զահավէժ արարեալ զանձն 'ի բարձանց, վճարեաց զկեանս իւր. և գնաց 'ի մէջ դիւաց իւրոց ընկերաց քաղել զդառն պտուղս մոլութեան իւրոյ։

## ԳԼ. ԺԳ.

### Դարձ Եթեովպացի ներքինւոյն տիկնոջն Կանդակայ։

* Հրեշտակ Տն խօսեցաւ առ փիլիպպոս, || և այլն.
(գործ. Ը. 26. ցվերջ գլխոյն.)

Փիլիպպոս տակաւին էր 'ի սամարիա, և այս յայտնապէս երևի 'ի շարունակութէն սբ գրոյն, որ զկնի պատմելոյ զգործս զոր գործեաց փիլիպպոս 'ի քաղաքին յայնմիկ, յարէ անմիջապէս զհրամանն տուեալ նմա 'ի հրեշտակէն երթալ այլուր. որպէս և 'ի հրամանէ անտի երևի թէ ոչ էր նա յերուսաղէմ։ Գաղայ անկանի յարևմտեան հարաւակողմն երուսաղէմի. և հրեշտակն հրամայեաց փիլիպպոսի երթալ 'ի կողմն հարաւոյ. և թէպէտ գաղայ նաև համեմատութեամբ սամարիոյ խոտորէր յարևմուտս, բայց հրեշտակական հրամանն ոչ առաքէր զնա 'ի գաղա, այլ ընդ ճանապարհ որ առ երուսաղէմաւ երթայր ընդ հարաւակողմն. * Արի և գնա դու 'ի կողմն հարաւոյ ընդ ճանապարհ որ իջանէ յերուսաղէմէ 'ի գաղա ||։ Յաւել * այս է անապատ ||. այսինքն այս ճանապարհ է անապատ, Ը որ չէր յաճախ երթևեկ. որով տայր իմանալ փիլիպպոսի, զի մի երթիցէ ընդ սովորական ճանապարհն, այլ ընդ այն անսովոր ճանապարհ։ Ած որ իրաւամբք կամի՝ զի հնազանդեսցուք նմա, առանց զննելոյ զպատճառ հրամանի նորա, հրամայեաց զայս ճանապարհորդուի փիլիպպոսի. ոչ ասաց թէ

վասն էր և առ ինչ. և ոչ փիլիպպոս խնդրեաց զպատճառն. այլ վաղվաղակի հնազանդեցաւ, և գնաց ընդ հրամայեալ ճանապարհն ։

Եւ ահաւասիկ այր մի եթէովպացի ներքինի՝ հզօր պաշտօնեայ կանդակայ տիկնոջ, գանձապետ ամենայն արքունի գանձուց նորա. որ եկեալ էր յերուսաղէմ երկիրպագանել ա̃յ ճշմարտի 'ի տաճարի նորա, և դառնայր անդրէն յարքունիս, և նստեալ 'ի կառս իւր ընթեռնոյր զմարգարէն եսայի՝ առ 'ի բառնալ օգտակար ընթերցմամբ զձանձրոյթ ճանապարհին ։ Յայնժամ ասաց հրեշտակն ցփիլիպպոս՝ երթալ մատչել 'ի կառսն յայնոսիկ. և նորա ընթացեալ իբրև մերձ եղև, լուէր զի գիր ընթերցուածոյ նորա էր մարգարէութիւն եսայեայ ։ Անտի պատճառս առեալ փիլիպպոսի խօսից, ասէ. գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուդ ։ Եւ պատասխանի ներքինին, և զիա՞րդ կարիցեմ գիտել, թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ. և ակն ունելով թէ փիլիպպոս կարիցէ թարգմանել նմա, աղաչեաց զնա ելանել նստիլ ընդ նմա 'ի կառսն առ օգտակար զրոյցս ։ Գլուխ գրոյն զոր ընթեռնոյր էր այս. * Իբրև զոչխար 'ի սպանդ վարեցաւ, և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր ։ 'Ի խոնարհութե̃ նորա դատաստան նորա բարձաւ. և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ, զի բառնան յերկրէ կեանք նորա ‖ ։ Ասէ ներքինին ցփիլիպպոս, աղաչեմ զքեզ ասա ինձ, վասն ո՞յր ասէ մարգարէն զայս, վասն ի՞ւր, եթէ վ̃ն այլոյ ուրուք ։ Աստի սկսաւ փիլիպպոս զհրահանգութիւն իւր. և դուռն եբաց տալ կատարեալ ծանօթութիւն վասն տ̃ն մերոյ Յ̃սի Ք̃սի. փիլիպպոս խօսէր, և ա̃ծ 'ի ներքուստ լուսաւորէր, այնչափ զի զճանապարհայն հասեալ 'ի ջուր ինչ, ասէ ներքինին. ահաւասիկ ջուր, և զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ. ասէ փիլիպպոս՝ եթէ հաւատաս բոլորով սրտիւ, մարթ է. ասէ ներքինին, հաւատամ թէ Յ̃ս Ք̃ս է որդի ա̃յ. և հրամայեաց կացուցանել զկառսն. իջին երկոքեան 'ի ջուրն, և փիլիպպոս մկրտեաց զնա ։ Իբրև ելին 'ի

Ջրոյ անտի, հոգին սբ եկն 'ի վերայ ներքինւոյն. և հրեշտակ տն յափշտակեաց զփիլիպպոս, և ոչ ևս ետես զնա ներքինին, զի հրեշտակն տարաւ զնա յազովտոս, և անտի անց փիլիպպոս 'ի կեսարիա՝ քարոզելով զաւետարանն ամենայն քաղաքաց ընդ որս անցանէր, և ներքինին գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ.

Երկու յայտնի նշանս ունիմք 'ի սբ գիրս, թէ փիլիպպոս ոչ էր առաքեալ, այլ մի յեօթանասունն և երկու աշակերտաց. Մի՝ զի առաքեալք յայնժամ ոչ ցրուեցան 'ի հրէաստան և 'ի սամարիա. ուստի ամենեքին կացին մնացին յերուսաղէմ. Երկրորդ՝ զի առ 'ի տալ մկրտելոցն 'ի սամարիա ըղդրոշմ, եկին անդր երկու առաքեալք. ապա փիլիպպոս ոչ ունէր իշխանութիւն տալոյ զայն խորհուրդ, ապա ոչ էր առաքեալ.

Վասն ներքինւոյն՝ հասարակաց կարծիք է, թէ ոչ էր նա ծննդեամբ 'ի մաւրիտանիոյ. այլ յերկրէն մադիամու՝ որ սահմանակից է եգիպտոսի, որ և այժու 'ի սբ գիրս եթէովպիա կոչի. Հիմն այսպիսի կարծեաց է՝ ոչ կարի հեռաւորութիւն նորա յերուսաղէմ. և թէպէտ այս պատճառ չունի ինչ մեծ զօրութիւն, սակայն յայսպիսի թեթև իրս բաւական է. Ստոյգ է թէ այս ներքինին ընկալեալ էր զհրէական օրէնս, թէ տակաւին հեթանոս էր. Այլ պարապիլ նորա յընթերցումն հոգևորական գրոց զճանապարհայն 'ի կառս իւր, և ընթեռնուլ մտադիր քննութեամբ զայնպիսի գիրս՝ որ յայնժամ մթին էր յոյժ, յօժարութիւն առնուլ ընդ իւր 'ի կառսն ըղթարգմանն անծանօթ նմա, պատրաստութիւն անսալ նախաժամանն շնորհացն տն. այս ամենայն ցուցանէ թէ էր նա բարեբարոյ այր բարւոք տրամադրեալ. չեղև հարկ փիլիպպոսի բազում աշխատ լինել 'ի հրահանգել զնա, վասն զի արդէն ծանօթութիւն յոյժ ունէր հաւատոյ ճշմարտին տն.

Սբն Երանոս հաստատէ թէ դարձեալ նորա յարքունիս, քարոզեաց եթէովպացւոց զՔս հաւատն Քնի. Իսկ որն հերմոնիմոս 'ի վերայ ծէ. գլխոյ մար-

գարէուն̃ եսայեայ, և 'ի Թուղթն Ճշ. կոչէ զնա առաքեալ եթեովպացւոց իւրոյ ազգին ։ Տորոթէոս հաստատէ թէ փառաւոր մարտիրոսութ̃բ պսակեաց զկեանս իւր. և թէ հռչակաւոր էր 'ի պատճառս բազում սքանչելեաց որք լինէին 'ի գերեզմանի նորա ։

## Դ·Լ: ԺԴ·

### Դարձ մեծին Պօղոսի ։

* Իսկ սօղոս տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ ||, և այլն. ( գործ. Թ. 1. ցհամար. 23 ։ )

Հալածումն բորբոքեալ ընդդէմ հաւատացելոց յերուսաղէմ, ոչ մնաց անդ. զի հալածեալ քրիստոնեայք սփռեալք, 'ի բազում քաղաքս, և 'ի բազում աւանս տարածեալ էին զհաւատս. այլ հրէական մոլեգնութ̃իւն եհաս սրով և հրով և զինու՝ հալածել զնոսա եւս և յարտաքին գաւառս ։ Սօղոսն այն որ պահէր զձորձս քարկոծողացն ստեփաննոսի, տակաւին լցեալ սպառնալեօք և սպանմամբ աշակերտացն, մատուցեալ առ քահանայապետն խնդրեաց 'ի նմանէ գիրս և թուղթս առ ժողովրդանոցս հրէից որ 'ի դամասկոս, զի օգնական և ձեռնտու լիցին նմա ըմբռնել և կապել զնոսա զամենեսին որք գտցին 'ի քաղաքի անդ դաւանօղք հաւատոյն Ք̃ի Յ̃ի ։ Դամասկոս էր քաղաք մեծ, մայր քաղաքաց ասորւոց, սովորական աթոռ թագաւորաց նոցա. և յայնժամ թագաւորէր անդ արետաս արքայ ։ Սա ոչ էր հպատակ հրէից. և ոչ կախեալ զքահանայապետէն. և 'ի տէրութ̃եան իւրում ըմբռնել զոք և կապել առանց հաւանութ̃եան նորա, էր բռնաբարութիւն արքայական իրաւանց. յայսմանէ ունիմք բա-

ղել զպարունակեալն 'ի թուղթն յայնոսիկ՝ թէև ոչ նշանակէ ո՟ք գիրն, թէ կայր յանձնարարութ՟ի օգնել տղայի, և հաւանեցուցանել զթագաւորն տալ 'ի ձեռս զկարճեցեալ ապստամբս 'ի կրօնէ, և թոյլ տալ զի կապեալ և քաջ զգուշութ՟բ տարցի զնոսա յերուսաղէմ ։

Նայելով յանձնարարութ՟բ երթայ տղայս բազում ընկերակցօք 'ի դամասկոս, և զմիջաւուրբ 'ի մերձենալ նորա 'ի քաղաքն անդր՝ յանկարծակի յերկնից փայլատակեալ լոյս սաստիկ շուրջ զնովաւ՝ զարհուրեցոյց զնա և կուրացոյց, և արկեալ զնա 'ի գետին, լսելի արար նմա բարբառ որ ասէր ցնա, սաւուղ սաւուղ, զի՞ հալածես զիս ։ Սաւուղ որ չէր երբէք տեսեալ զերեսս, և ոչ զձայն այնր անձին լուեալ, ասէ՝ ո՞վ ես տ՟ր․ լուաւ պատասխանել, ես եմ Յ՟ս զոր դու հալածես․ խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել ։ Եւ սաւուղ զարհուրեալ և անշշունջեալ, տ՟ր ասէ՝ զի՞նչ հրամայես զի արարից․ ասէ տ՟րն․ յոտն կաց և մուտ 'ի քաղաքդ, և պատմեսցի քեզ զի՞նչ պարտ իցէ քեզ առնել ։ Իսկ արքն որք ընդ նմայն երթային, կային անշշունջ․ զձայն սաւուղայ միայն լսէին, բայց տեսանէին և ոչ զինչ․ և ոչ գիտէին թէ ը՟ ում խօսէր ։ Յարեաւ սաւուղ յերկրէ անտի, այլ աչօք բացօք ոչ զոք տեսանէր․ զձեռանէ առեալ ընկերք նորա մուծին զնա 'ի դամասկոս․ ուր աւուրս երիս հեղացեալ 'ի կուրութ՟են, ոչ եկեր և ոչ արբ․ միշտ խոնարհելով առաջի ա՟յ ջերմ պաղատանօք ։

Յայնժամ եղև առ նա տեսիլ․ թուէր նմա տեսանել աչօք զայր մի կոչեցեալ անանիա անուն՝ հաւատարիմ աշակերտ տ՟ն, որում ինքն տ՟րն հրամայեաց երթալ ընդ փողոցն որ կոչէր ուղիղ․ և անդ մտեալ յապարանսն յուդայ՝ խնդրել զտղայս անուն տարսոնացի, զոր գտցէ յաղօթս ։ Եկաց անանիա հիացեալ ընդ այն հրամանն․ և մեղմով իմն հրաժեշտ տալով, տ՟ր ասէ՝ լուայ 'ի բազմաց վասն առն այնորիկ որչափ արար չարիս սրբոց քոց յերուսաղէմ․ և աստ ունի իշխանութ՟ի 'ի քահանայապետից

կապել զամենեսին որ կարդան զանուն քո ։ Այսպէս ասէր Անանիա, զի աւելի ինչ ոչ գիտէր ․ այլ ա̃ծ որ զամենայն ինչ գիտէ, ասէ ցնա՝ երթ դու, զի անօթ ընտրութեան է ինձ նա սահմանեալ կրել զանուն իմ առաջի հեթանոսաց և թագաւորաց և որդւոցն իսրայէլի ․ և ես իսկ ցուցից նմա որչափ պարտ իցէ նմ̃ չարչարիլ վասն անուան իմոյ ։ Գնաց Անանիա և եմուտ յապարանսն, և եդեալ 'ի վերայ նորա զձեռսն, ասէ ․ Սաւուղ եղբայր, տ̃ր Յ̃ս որ երևեցաւն քեզ 'ի ճանապարհին յորում գայիրն, առաքեաց զիս, որպէս զի տեսցես և լցցիս հոգւով սրբով ։ Առ այս բան անանիայի անկան յաչաց նր̃ իբրև կեղևանք, ետես, և յարեաւ յաղօթից և մկրտեցաւ ․ և առեալ կերակուր զօրացաւ ․ և եղև 'ի դամասկոս աւուրս ինչ ընդ աշակերտսն ։

Եւ վաղվաղակի մտեալ 'ի ժողովրդանոցս սկսաւ քարոզել զՅ̃ս ։ Առաջարկութիւն նորա էր ցուցանել եթէ տ̃ր Յ̃ս Ճշմարիտ որդի ա̃յ է ։ Զարմացեալ էին ամենեքեան, և ոչ կարէին իմանալ զյանկարծ փոփոխութի̃ն ։ Ո՞չ սա էր ասէին ցմիմեանս, ո՞չ սա էր որ յերուսաղէմ աւար հարկանէր զայնոսիկ որ կարդային զանուն Յ̃սի ․ և այսր նմին իրի եկեալ է, զի կապեալս զոսսա տարցի յերուսաղէմ առ քահանայապետսն ։ Այլ եթէ մեծ էր զարմանք նոցա, կարի տկար էին ընդդիմութիւնքն ․ սաւուղ վասն այնորիկ իսկ՝ զի փոքր մի յառաջ 'ի հուր և 'ի սուր հալածէր զհաւատացեալս, առ 'ի ուղղել զառաջին մոլորութիւն իւր առաւել զօրանայր և մեծագոյն ուժգնութեամբ հաստատէր զվարդապետութիւն իւր ․ և յաղթահարէր զհրէայսն որ բնակեալ էին 'ի դամասկոս, պնդելով եթէ Յ̃ս է Ք̃սն, այսինքն մեսիայ ճշմարիտ որդի ա̃յ ։

Աստ ոմանք խնդիր յարուցանեն, թէ ո՞րն պօղոս յորժամ հարաւ 'ի փայլակնացայտ լուսոյն երկնից՝ որպէս պատմեցաք՝ հետի՛ էր, եթէ հեծեալ յերիվար ։ Ոմանք 'ի մեկնչաց ճգնին ցուցանել զնա հետի, այլք՝ հեծեալ 'ի ձի ։ Բայց երկոցունց պատճառք անհիմն են և տկար 'ի հաստատել զմին կամ

զմիւսն ։ Սակայն հայեցեալ 'ի սովորութիւն փրկչին յաճախ առնուլ զայլաբանութիւս իւր 'ի մերձաւոր և յառաջինկայ իրաց, որպէս նշանակեցաք 'ի տեսութիս աւետարանաց, տեսանելով զի աստ 'ի խօսիլ նորա առ ս՟ըն պօղոս, վարէ զփոխաբերութի՟ն խթանի, և աքացող ձիոյ ․ * խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել, ‖ առաւել հաւանելի երևի թէ սաւուղ էր հեծեալ 'ի ձի ․ որպէս և նկարիչք սովորաբար այնպէս նկարեն զնա յայս դիպուած ։ Բայց զի հետի գնալ սաւուղայ կա՟ ձիաւոր, չէր ինչ նշանաւոր և օգտակար պարագայ 'ի պատմութեան յայսմիկ, նմին իրի և ս՟ր գիրն ինչ ոչ նշանակէ զայնմանէ ․ որպէս նշանակեաց զկառսն ներքինւոյն եթովպացւոյ ․ վասն զի այնու ցուցանէ զերկու պարագայս օգտակարս յուսումն և 'ի խրատ ․ այսինքն ընթեռնուլ 'ի կառսն, և առնուլ ընդ իւր 'ի կառսն զայլն անծանօթ նմա, ակն ունելով շահիլ 'ի նմանէ, որպէս և շահեցաւ ․ իսկ աստ չիք այնպիսի ինչ ։ Բայց թողեալ զայս անօգուտ խնդիր՝ մատուցուք յայլ խնդիր որ առաւել հարկաւոր է ։

Խնդրի թէ Յ՟ս տ՟րն մեր յայս նուագ ճշմարտապէս երևեցա՟ ս՟րյն պօղոսի ։ Օ առաջինն 'ի վերին երեսս հայելով՝ թուի թէ ոչ ։ Նախ՝ զի յորժամ 'ի ս՟ր գիրս գտանեմք ասել՝ թէ ա՟ծ երևեցաւ ումեք, գիտեմք զի այն երևումն եղև սպասաւորութեամբ հրեշտակի, որ յանդիման առնէր զա՟ծային մեծվայելչութի՟ն, որպէս ցուցաք 'ի պատմութի՟ս հին կտակարանաց ․ ապա մարթ է ասել, թէ յընթեռնուլ մեր աստ երևել փրկչին սաւուղայ, եղև և այն սպասաւորութ՟ հրեշտակի, որ յանդիման առնէր զերկրպագելի մարդկութի՟ նորա ։ Երկրորդ՝ զի 'ի վեր անդր յերրորդ գլուխ գործոց առաքելոց, լուաք ասել ս՟րյն պետրոսի խօսելով վասն Յ՟սի ․ * Օ որ պարտ է յերկնից ընդունել մինչև 'ի ժամանակս՝ ամենեցուն հաստատելոյ ․ (յ՟ն լատ ․ հատուցանելոյ) ‖ ․ ապա Յ՟ս յետ հրաշափառ համբարձման իւրոյ, ոչ էջ երբէք 'ի բարձանց անտի, և ոչ իջանիցէ մինչև ցյետին օր վերջին դատաստանի ․ ապա ոչ էջ առ 'ի

երեւիլ սաւուղայ . եւ չէ պարտ ասել, թէ որպէս ս՟բյն ստեփաննոսի երեւեցաւ Յս՟ յերկնից . զի այս մեկնուչն ոչ համաձայնի բանից ս՟բ գրոյն ։ Երրորդ՝ սաւուղ ՚ի Ճառագայթից սաստիկ լուսոյն, կուրացաւ . ապա մարթացաւ տեսանել զՅս՟ տեսլեամբ երեւակայութեան, այլ ոչ մարմնոյ աչօք ։

Սակայն ընդ համօրէն մեկնչաց եւ հարց ասելի է՝ թէ սաւուղ ՚ի Ճանապարհի մերձ ՚ի դամասկոս ետես զՅս՟ Ք՟ս տ՟ր մեր ։ Նոյն ունիմք զվկայութիւն անանիայի որ ա՟ծային յայտնութբ՟ ասաց ցնա ինքն սաւուղ . * սաւուղ եղբայր՝ տ՟ր առաքեաց զիս Յս՟, որ երեւեցաւն քեզ ՚ի Ճանապարհին յորում գայիրն ‖ ։ Նոյն եւս ՚ի գլուխ իբ՟ . այսր գործոց . * Ա՟ծ հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց զքեզ Ճանաչել զկամս նորա, եւ տեսանել զարդարն եւ լսել զբարբառ բերանոյ նորա ‖ ։ Յս՟ երեւեցաւ սաւուղայ ՚ի Ճանապարհի . եւ սաւուղ ետես զնա, եւ լուաւ զբարբառ որ անմիջապէս ելանէր ՚ի բերանոյ նորա ։ Նոյնպէս վկայութիւն ունիմք եւ ՚ի ս՟բյն բառնաբայ յայս գիրս գործոց . ( գլ . Թ . ) * բայց բառնաբայ առեալ զնա՝ ած առ առաքեալսն . եւ պատմեաց նոցա՝ որպէս ՚ի Ճանապարհին ետես զտ՟ր . եւ զի խօսեցաւ ընդ նմա ‖ ։ Հուսկ յետոյ ունիմք վկայութիւն եւ ՚ի նմանէ իսկ ՚ի ս՟բյն պօղոսէ . որ յառաջին կորնթացիս . ( գլ . Թ . ) ասէ յայտնապէս * Ո՞չ ապաքէն զտ՟ր մեր Յս՟ Ք՟ս աչօք իմովք տեսի ‖ . եւ եւս ( գլ . ԺԵ . ) * Երեւեցաւ կեփայի . . . ապա երեւեցաւ յակոբայ, ապա առաքելոցն ամենեցուն . Հուսկ յետոյ քան զամենեսին իբրեւ անարգի միոջ երեւեցաւ եւ ինձ ‖ ։

Յայն ա՟ծային երեւմունս զոր ունիմք ՚ի հին կտակարանս, ըստ այնմ ասեմք թէ եղեն սպասաւորութեամբ հրեշտակաց, զի որում ՚ի նոյն ս՟բ գիրս այն որ ՚ի միում տեղւոջ կոչի ա՟ծ, յայլում տեղւոջ յայտնէ մեզ լինել հրեշտակ որ յանդիման առնէ զա՟ծ . բայց վասն Յս՟ի որ երեւեցաւ սաւուղայ, ոչ ուրեք ընթեռնումք, թէ ՚ի կիր արկեալ իցէ զսպասաւորութիւն հրեշտակի ՚ի յանդիման առնել զերեւս

իւր . և յաւելուն նոյն պօղոսի * Հուսկ յետոյ երևեցաւ և ինձ ‖ , խօսի զնոյն առարկայէ , և զնոյն եղանակէ տեսանելոյ , որով տեսին զնա պետրոս և յակոբոս և ամենայն առաքեալք . իսկ նոքա տեսին զփրկիչն յարուցեալ յիւրում ճշմարիտ և իրական մարդկութե . և ոչ զնմանութի նորա ձևացուցեալ ՚ի հրեշտակէ . ապա այնպէս ետես զնա և նոյն պօղոս :

Առ երկրորդ ընդդիմութիւնն պատասխանեմք : Յսն առանց իջանելոյ յերկնից յայնչափ տեղիս կըրկնի հրաշափառագոյն կրկնութբ , որչափ են ՚նշխարք սրբագործեալք ՚ի վերայ երկրի . ևս առաւել կարաց կրկնել փողբրագոյն սքանչելեօք և երևեցուցանել զանձն սաւուղայ ՚ի ճանապարհի : Այլ զի երկինքն ոչ է Յսի բանտ՝ յորմէ ոչ կարիցէ ելանել , եթէ անդ ունի զիւր սովորական բնակութիւն , ոչ վասն այնորիկ բառնայ յանձնէ զիշխանութի ելանելոյ անտի , ՚ի մխիթարել իւրով երևմամբ զանձն ոք յիւրմէ ընտրեալ : Սբն պետրոս խօսի զիջանելոյն յերկնից հրապարակաւ և հանդիսիւ , և ոչ խօսի վասն առանձնական երևման ումեք : Սբ թովմաս ագուինացին , (յերրորդ մասին ՚ի խնդիր ԾԷ . պրակ. Դ . առ երրորդն .) յայն կարծիս է՝ թէ փրկիչն առ ՚ի երևեցուցանել զանձն սաւուղայ էջ ճշմարտապէս յերկնից : * Աւելի է թէ Քս միանգամ համբարձաւ յերկինս , և ընկալաւ ինքեան և մեզ ՚ի մշտնջենաւորս իրաւունս և արժանաւորութի երկնային բնակութե . սակայն այսմ արժանաւորութե ոչինչ վնասէ , եթէ առ տնտեսութե իմիք Քս երբեմն մարմնով իջանիցէ յերկիր , կամ զի ցուցցէ զինքն ամենեցուն , որպէս ՚ի վերջին դատաստանի . և կամ զի ցուցցէ զինքն ումեք մասնաւորապէս , որպէս նոյն պօղոսի ՚ի դարձման իւրում ‖ :

Առ կուրութեն պատասխանեմք : Սաւուղ կուրացաւ զկնի տեսանելոյ զՅս , և խօսելոյ ընդ նմա : Ետես նա զգերահրաշ առարկայն զգեցեալ զլոյս սաստիկ , որ փայլատակեաց յաչս նորա , և համօրէն ուղեկցաց նորա . ընդ նմա խօսեցաւ , այլ առ մե-

ծի երկիւղի և առ խորին յարգութե՟ , և առ չհանդուրժելոյ սաստիկ Ճառագայթից , ապա փակեցան աչքն , և աչօք բացօք կոյր գտաւ ։ * Յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց լոյս յերկնից . և անկեալ յերկիր՝ լուաւ բարբառ որ ասէր ցնա ևն ... Յարեաւ սօղոս յերկրէ անտի , և աչօք բացօք ոչ զոք տեսանէր ‖ ։

* Իսկ արքն որ ընդ նմայն երթային , կային անշշունջ, զձայնն միայն լսէին , բայց տեսանէին և ոչ ինչ ‖ ։ Թուի թէ այս ոչ համաձայնի ընդ պատմութե՟ զոր պատմէ վասն այսր դիպուածոյ նա ինքն ՚սբն պօղոս ( իբ . գլ . ) ՚ի գործս առաքելոց , ուր ասէ թէ ուղեկիցք իւր ո՛չ լսէին զձայնն որ խօսէր . * բայց որ ընդ իմս էին՝ զլոյսն տեսանէին , այլ զձայնն ո՛չ լսէին որ խօսէր ընդ իս ‖ ։ Այս երկու բնաբանք ոչ հակառակին միմեանց . այլ յաւէտ մին պարզէ զիմաստ միւսոյն ։ Սբն ղուկաս ասէ թէ լսէին զձայնն . հարցանեմ, զորո՞յ . պատասխանէ ՚սբն պօղոս , ո՛չ զձայնն Յսի , * այլ զձայնն ո՛չ լսէին այնմ որ խօսէր ընդ իս ‖ ։

Վերստին հարցանեմ . ոչ լսելով զձայնն Յսի , լսէի՞ն զձայն պօղոսի . պատասխանէ ՚սբն ղուկաս . այո՛ * զձայնն միայն լսէին ‖ ։ Տեսանէին զլոյսն , իմանային զի սաւուղ խօսէր ը̄ ումեք . լսէին զպատասխանիս սաւուղայ . բայց ոչ տեսանէին զանձն որ խօսէր ընդ սաւուղայ , ոչ լսէին զպատուէրսն որ լինէին առ նա ։ Յս երբայեցերէն խօսեցաւ ը̄ ՚սբյն պօղոսի . * լուայ ձայն որ ասէր ցիս հեբրայեցւոց բարբառովն . սաւո՛ւղ սաւուղ . ևն ‖ . (գործոց . իզ ։) Նաև ընկերք նորա ՚ի փայլատակել լուսոյն ամենեքեան զարհուրեալ անկան ՚ի գետին ։ * Եւ ամենեցուն մեր անկանել յերկիր ‖ . այլ սաւուղ միայն կուրացաւ ։ Եւ որ ասեն թէ այս եղև , զի ընկերք նորա հեռի էին . ուստի լոյսն փայլատակեալ ո՛չ եհար միապէս զաչս նոցա . նոյնպէս հեռաւորութե՟ նոցա տան չլսել զձայն Յսի առ սաւուղ ։ Զայս հեռաւորութի՟ ո՛չ ընթեռնումք ՚ի ՚սբ գիրս ։ և չէ իսկ բնական արանց սպառազինաց ուղեկցաց հեռի լինել ՚ի մի-

մեանց ։ Եւս ասէ կաղինոս զայլ պատճառ ոչ ճանաչեմ աստ, եթէ ոչ զկամս տն մերոյ Յսի ։ Սաւուղ կուրացաւ, այլք ոչ ․ զի Յս այնպէս կամեցաւ ։ Սաւուղ լուաւ, այլք ոչ լուան ․ զի Յս կամեցաւ լսել սաւուղայ, ոչ կամեցաւ զի և այլք լսիցեն ։

* Խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել ‖ ։ Ի բանէ աստի գասպար սանկտիոս իրաւամբք իմաստասիրէ, թէ սաւուղ յառաջ քան զայս դիպուած կոչեցաւ 'ի դարձ, և թէպէտ հալածէր զեկեղեցին առ նախանձայուզութե օրինաց իւրոց, բայց ոչ էր անյաղթելի տգիտութի նորա ․ և խայթէին զնա սայրասուր խթանք խղճի մտաց իւրոց ․ փրկիչն ոչ ասաց ․ * Անկարելի է քեզ ընդդէմ խթանի աքացել ‖ ․ վասն զի և սովին աքանչելեօք ոչ բառնայր զանձնիշխանութի նորա ․ և տակաւին կարող էր կալ ընդդէմ շնորհաց, որպէս ընդդէմ եկաց 'ի հնումն փարաւոն ․ որ որչափ առաւել հրաշս տեսանէր, այնչափ առաւել խստանայր սիրտ նորա ։ Ասաց * խիստ է քեզ ‖ ․ այսինքն ծանր է կմ դառն է քեզ ․ զի որչափ առաւել աքացես ընդդէմ խթանի, միշտ չարագոյն լիցի քեզ և միշտ առաւել ցաւագին խայթուածս ունիցիս ։

* Արի կաց 'ի վերայ ոտից քոց ‖ ։ Սբն պօղոս պատմելով զայս դիպուած առաջի ագրիպպայ արքայի ('ի իզ ․ գլուխն գործոց,) տայ մեզ ծանօթութիս ինչ, զոր աստ լռէ պատմութին ․ և է բազմօք առաւել զոր յաւել փրկիչն ։ Յաւել թէ վասն այնորիկ երևեցաւ նմա՝ զի կացուսցէ զնա պաշտօնեայ և վկայ իրացն զորս ետես ․ և այնոցիկ զորս յայլ երևմունս յետոյ ցուցանելոց է նմա, առաքել զնա առ ժողովուրդս և առ ազգս, բանալ զաչս նոցա, զի դարձցին 'ի խաւարէ 'ի լոյս և յիշխանութէ սատանայի առ ած ․ և առնուլ նոցա զթողութի մեղաց, և վիճակ ընդ սրբս ․ ընդունելով զայն հաւատ, որ հաւատայ 'ի Քս Յս, և հնազանդի նմա ․ այն ժողովուրդք և ազգք հալածեսցեն զնա, և լարեսցեն որոգայթս նմա ․ այլ ինքն փրկիչն փրկեսցէ զնա ։

* Եւ էր անդ աւուրս երիս ․ ոչ տեսանէր, և ոչ

եկեր և ոչ արբ ||։ Նազովք յայն կարծիս են՝ թէ
յայսմ ժամանակի պարգևեցաւ նմա պարգևն այն
հռչակաւոր՝ յափշտակիլ նորա ցերրորդ երկինս։
Նայց այլոց ամենևին անհաւանելի թուի, թէ գո-
լով նր նորոգ դարձեալ, և տակաւին ոչ մկրտեալ,
յայն գերահրաշ շնորհ իցէ արժանացեալ։ Նա ինքն
նրն պօղոս 'ի գլուխն ԻԲ. գործոց ասէ զանձնէ.
* Եւ եղև ինձ 'ի դառնալն յերուսաղէմ, և կալ
յաղօթս 'ի տաճարին, լինել 'ի զարմացման ||. և
համարին թէ յայսմ յափշտակութե մտաց վերացաւ
յերրորդ յերկինս 'ի լսել զխորհուրդս անճառս.
բայց նա վասն այսր զարմացման իւրում 'ի տաճա-
րին ասէ միայն թէ երևեցաւ նմա փրկիչն, և պա-
տուիրեաց փութով ելանել յերուսաղեմէ. * փու-
թա՛, ել յերուսաղեմէ վաղվաղակի. ԻԲ ||։ Ես, ասէ
կաղինոս, ո՛չ յօժարիմ յածային գիրս աշխատ լի-
նել 'ի խնդրել զիրս որք չեն յայտնեալ, յորժամ
թուի ինձ, թէ 'ի յայտնելոց ոչ կարիցեմք քաղել
հիմնական տրամաբանութի։ Թէ նրն անցուցեալ
իցէ զայս երիս աւուրս անսուաղ, է յայտնեալ.
* Ոչ եկեր և ոչ արբ ||։ Թէ յաղօթս եկաց, յայտ-
նեալ է. * զի կայ դեռ յաղօթս ||։ Թէ յայսոսիկ
յածային յայտնութիւնս հաղորդեցաւ նմա լիալիր
ծանօթութիւն աւետարանին, քաղի հաւաստեաւ 'ի
յայտնութէ։ Պ. առաքեալն առ գաղատացիս յառաջ-
ներորդ գլուխն գրէ թէ զաւետարանական ծանօ-
թութիւնս ոչ էառ 'ի մարդոյ, այլ անմիջապէս 'ի
յայտնութէն Յսի Քսի. * Ո՛չ 'ի մարդոյ առի, և ո՛չ
ուսայ յուսմբէ, այլ 'ի յայտնութէն Յսի Քսի ||։
Եւ ունիմք ասա թէ վաղվաղակի զկնի այնց աւուրց
ինքն սկսաւ քարոզել զՅս, և յաղթահարել զհրէ-
այս. ապա յայնոսիկ աւուրս ուսաւ նա յածային
վարդապետութենէն։

* Եւ եդեալ 'ի վերայ նր ձեռս ||, Թ։ Պ.յս դրու-
թի ձեռաց ոչ էր տալ սաւուղայ զխորհուրդ դրոշ-
մին. զոր և ոչ կարէր տալ անանիայ, զի ոչ էր 'ի
դասէ առաքելոց. և ո՛չ սաւուղ կարէր ընդունել,
զի չև էր մկրտեալ. այն դրութի ձեռաց էր՝ որով

բժշկէին զհիւանդս, ըստ այնմ բանի փրկչին. *Ի վ՛ր հիւանդաց ձեռս դիցեն, և բժշկեսցեն||. (մարկ. ժզ. 18 :) Եւ ինքն իսկ անանխա ասաց առնել, *որպէս զի տեսցես||. և այնպէս եղև. զի *վաղվաղակի անկան յաչաց նորա իբրև կեղևանք. եւտես||: Նմանապէս՝ ինուլ սաւուղայ հոգւով սրբով ոչ ընծայի դրումն ձեռաց, այլ այն եղև պարգև հետևակ մկրտութեն. *եւտես և յարեաւ մկրտեցաւ||:

Յայս վայր յասացելոցս ունիմք ուսումն մեծ՝ պաշտել և սիրել զա͞ծային գթութին 'ի դարձ մեղաւորաց. Ճանաչել և սիրել զառատաձեռնութին 'ի պարգևել զնախաժամանն շնորհս նաև մեղաւորաց, տեսեալ զի պարգևեաց զայն սաւուղայ անդէն մինչ նա կատաղաբար հալածէր զեկեղեցի: Ուսանիմք 'ի միտ առնուլ և սիրել զա͞ծային քաղցրութին, որով այնչափ փոյթ ունի 'ի վերայ իւրոց հաւատացելոց. զի առէ զինքն հալածեալ 'ի հալածիլ նոցա: Ունիմք վարդապետութի մեծ՝ ոչ երբէք արհամարհել զոք 'ի մեղաւորաց. ոչ գիտելով մեր թէ որպիսի ոք լինելոց է առ յապայն: Սաւուղ պահէր զհանդերձս այնոցիկ որք քարկոծ առնէին զստեփաննոս. և եղև մարտիրոս որպէս զնա. և նախ քան զմարտիրոսանալն՝ եղև առաքեալ մեծ քան զստեփաննոս: Եւ միով բանիւ, ամենայն մեղաւորք ունին առաջի աչաց մեծ օրինակ, 'ի գիտել թէ զի՞նչ ունիցին առնել 'ի դառնալ իւրեանց առ ա͞ծ ճշմարտապէս; Եւ են ապաշխարութիւն, աղօթք, փոփոխութի վարուց, վճարումն գայթակղութեց. արիական արհամարհումն ամենայն մարդկային նկատմանց: Սաւուղ քաջ գիտէր զբաջաղանս՝ որով ունէին յերուսաղէմ ծանակել զիւր կարծեցեալ անհաստատութին. գիտէր զարտմտութին իշխանաց խաբելոց 'ի նմանէ. գիտէր լինել ատելի իւրոց հրէից. Սակայն 'ի վերայ այսր ամենայնի 'ի դառնալ իւրում՝ Ի՞ծ քարոզէ զնա՝ զորոյ զպաշտօնեայս փոքր մի յառաջ սուր 'ի ձեռին հալածէր:

## ԳԼ. ԺԸ.

Այն Պօղոս անցանէ յԱրաբիա: Դառնայ 'ի Դամասկոս. Հալածեալ անդ 'ի Հրէից, զերծանի իջուցեալ կողովաւ ընդ պարիսպ քաղաքին: Գնայ յԵրուսաղէմ, ուր մնայ աւուրս հնգետասան ընդ սրբոյն Պետրոսի: Հալածեալ յԵրուսաղէմէ, անցանէ 'ի Կեսարիա. ապա 'ի Տարսոն:

* Իբրև կատարէին աւուրք բազումք ||, եւն. (Գործոց. Թ. 23. մինչև 'ի համար 31:)

Յետ կալոյ նոր առաքելոյն 'ի Դամասկոս առ ժամանակ մի, եանց յԱրաբիա որ չէ ինչ հեռի անտի: Զայս ծանօթութիւն չունիմք 'ի սրբոյն Ղուկասու. բայց ունիմք 'ի նոյն իսկ 'ի սրբոյն Պօղոսէ. ('ի գլ. ա. թղթոյն իւրոյ որ առ Գաղատացիս:) Արդ արժան է գիտել, զի սուրբն Ղուկաս զանց արար գրել բազում իրս պատահեալս Պօղոսի առաքելոյն՝ նաև վասն այնորիկ, զի արդէն գրեալ կային 'ի նոյն իսկ յառաքելոյն 'ի թուղթս նորա առ զանազան եկեղեցիս: Այլ Ղուկաս նշանակեաց զառաւել յայտնիսն և զհրապարակականս, թէպէտ գտանէին և 'ի թուղթս Պօղոսի, զայլսն զանց արար. չերև նմա փոյթ նշանակել զկարգ կամ զչափ ժամանակաց. զի այսպիսիք ոչինչ նպաստէին 'ի վարդապետութիւն և 'ի շինութիւն հաւատացելոց: Վասն Ճանապարհորդութեան առաքելոյն 'ի Դամասկոսէ յԱրաբիա ինչ ոչ գրեաց. բայց ինքն առաքեալն գրեաց առ Գաղատացիս, թէ * ոչ հանգեաւ ||, որպէս ընթեռնու լատինն. կամ * ոչ զգացոյց ||, որպէս ունի մերս. (զորմէ տես 'ի մեկն. թղթոյն, Գաղ. գլ. ա:) * Ոչ զգացոյց ||. այսինքն ըստ կաղինոսի՝ ոչ անսաց խորհրդոյ բարեկամաց որք կամէին արգելուլ զնա, և իւրոյ բնական յօժարութեան և բա-

զուռ դիւրութ՟ն գտանելոյ զգարմանն կենաց. ուստի առաւել հանդիստ էր նմա մնալ 'ի քաղաքի անդ. *այլ չոգայ յարաբիա‖: Զ՞ինչ գործեաց անդ, ինքն ինչ ոչ գրէ. սակայն ոչ կարեմք ասել թէ եկաց անդ անգործ: Ունիմք կանոն մի 'ի գրոց, թէ յոր-ժամ 'ի գիրն լռէ զպարագայս ինչ, պարտ է մեզ դտանել թէ եղեն որպէս սովորաբար լինին. և վասն այսորիկ իսկ մնան ընդ լռութ՟բ, զի չիք 'ի նոսա նշա-նաւոր: Ոչ նշանակի զոր ինչ գործեաց 'սբն պօղոս յարաբիա. ապա գործեաց անդ զայն, զոր համա-րնական է համարիլ յանկաւոր առաքելոյ. այսինքն քարոզեաց, դարձոյց, մկրտեաց, հրաշագործեաց. այսոքիկ են զորս սովոր էին առնել առաքեալք:

Անծանօթ է մեզ՝ թէ որչափ ժամանակ եկաց անդ. գիտեմք զի անտի դարձաւ 'ի դամասկոս. *Եւ դար-ձեալ դարձայ 'ի դամասկոս‖: Ապա եռանդն նորա, քարոզութիւնք, դարձմունք, հրաշագործութիւնք զոր առնէր, գրգռեցին զհրէայս 'ի նախանձ և յա-տելութիւն ընդդէմ նորա. որք զկնի բազում գաղտնի խորհրդակցութեան իւրեանց հաստատե-ցին սպանանել զնա. և աստ 'սբն ղուկաս վերըս-տին առնու 'ի ձեռն զկարգ պատմութ՟ն իւրոյ: Բա-զում որոգայթս լարեցին, այլ վայրապար. հուսկ յետոյ շահեցան զազգապետն, այսինքն զզօրապետն որ 'ի գլխոյ արետայ արքայի իշխէր պարսպապահ զօրաց դամասկոսի: 'Ի խնդրոյ հրէից՝ պատուիրա-նաւ զօրապետին դունդ մի պահակաց պահէին ըղ-դրունսն 'ի տուէ և 'ի գիշերի, զի մի փախիցէ պօ-ղոս: Զինուորք հսկէին ըմբռնել զնա. և հրէայք սպասէին զի տացի 'ի ձեռս իւրեանց, զի սպանցեն զնա: *'Ի դամասկոս ազգապետն արետայ արքայի պահէր զքաղաքն դամասկացւոց ունել զիս‖: Այս-պէս ասէ 'սբն պօղոս. ('ի գլ. ժա՟. երկրորդ կորնթ:) *Պահէին զդրունսն 'ի տուէ և 'ի գիշերի. որպէս զի սպանցեն զնա‖: Այսպէս ասէ 'սբն ղուկաս. ուր բա-զումք են գիտակք գաղտնեաց իմիք, ուր ուրեմն մնայ թագուն: Յայտնեցաւ պօղոսի որոգայթն զոր լա-րէին նմա: Խաղ արար զնոսա որք սպասէին նմա 'ի

դրունսն. զի հաւատացեալք ընդ պատուհան տան միոյ՝ որ էր 'ի վերայ պարսպի քաղաքին և հայէր 'ի դաշտ, զիշերայն կախեալ վանդակաւ իջուցին զնա արտաքոյ պարսպին 'ի դաշտ անդր։ Անտի եկն յերուսաղէմ. պատճառ գալոյ նորա յերուսաղէմ քան յայլ քաղաք, ըստ վկայութեան նորին առաքելոյ, ('ի գլ. ա̃. Թղթոյ նորա առ գաղատացիս.) եղև տեսանել զպետրոս. * Եկի յերուսաղէմ տեսանել զպետրոս‖։ Այլ ոչ ճանաչէր զնա երեսօք, ցանկայր զի այլ ոք 'ի հաւատացելոց մուծցէ զինքն առ նա և 'ի ծանօթութիւն նորա. բայց ամենեքեան երկնչէին 'ի նմանէ, և ոչ վստահանային 'ի նա. ոչ կարելով հաւատալ թէ և սաւուղ իցէ 'ի կողմն իւրեանց, և իցէ առաքեալ։

Ապա մի ոմն յաշակերտաց՝ նա ինքն է սբ̃ն բառնաբաս, որ ունէր հաւաստի ծանօթութիւն իրացն որ 'ի ճանապարհին դամասկոսի, ած զնա առ առաքեալսն. և պատմեաց նոցա որպէս 'ի ճանապարհին երևեցաւ նմա Տէր, և դարձաւ. և 'ի դամասկոս գործեաց իբրև առաքեալ քարոզելով զՔս̃։ Ոմանք յայն կարծիս են՝ թէ այս գալուստ զոր պատմէ սբ̃ն ղուկաս այլ է յայնմանէ զոր նա ինքն սբ̃ն պօղոս պատմէ 'ի թուղթն որ առ գաղատացիս. և զայս կարծիս իւրեանց հիմնեն 'ի վերայ երկուց նշանաց. մին՝ է ժամանակն։ Սբ̃ պօղոս գրէ առ գաղատացիս թէ եկն յերուսաղէմ յետ երից ամաց զկնի դարձմանն իւրոյ. * Ապա յետ երից ամաց ելի յերուսաղէմ տեսանել զպետրոս‖։ Սբ̃ն ղուկաս ասէ. * Իբրև կատարէին աւուրք բազումք‖. Թուի սոյն մատենագրաց թէ զասացեալն աւուրք բազումք ձգել մինչև յերիս ամս՝ իցէ կարի յոյժ։ Երկրորդ նշանն է զի յետ երից ամաց թուի թէ հասեալ էր յերուսաղէմ լուր դարձի նորա և հրատարակեալ. ուստի հաւատացեալք չունէին պատճառս ինչ երկնչիլ 'ի նմանէ. սակայն գտանեմք առ սբ̃ն ղուկաս թէ երկնչէին 'ի նմանէ, և չհաւատային թէ իցէ աշակերտ. ապա չէին անցեալ երեք ամք. ապա այլ անգամ եկեալ էր սաւուղ յերուսաղէմ յետ ա-

ւուրց բազմաց. ապա դարձաւ վերստին անդր յետ երից ամաց:

Այս գուշակութիւնք հաւանելի լինէին արդեօք, եթէ չունէաք ընդ հակառակն զհաւաստի վկայութիւն նորին իսկ ՚նոյն պօղոսի. որ գրէ առ գաղատացիս թէ զկնի դարձի իւրոյ ոչ եկն յերուսաղէմ, այլ չոգաւ յարաբիա, ուստի դարձաւ ՚ի դամասկոս. և անտի յետ երից ամաց եկն յերուսաղէմ տեսանել զպետրոս. * Անդէն վաղվաղակի ոչինչ զգացուցի մարմնոյ և արեան, և ոչ ելի յերուսաղէմ, առ որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին. այլ չոգայ յարաբիա, և դարձեալ դարձայ ՚ի դամասկոս: Ապա յետ երից ամաց ելի յերուսաղէմ տեսանել զպետրոս||: Ասեն՝ յառաջնում նուագի կարի սակաւ եկաց յերուսաղէմ. և զի սակաւն առ ոչինչ համարի, վասն այնորիկ ասէ թէ յայնժամ ոչ ել յերուսաղէմ: Այլ այս մեկնութիւն է կարի բռնական. և ամենևին հակառակ ընագրի առաքելոյն. որ ոչ միայն ասէ թէ ոչ յամեաց, այլ թէ ոչ եկն. * Ոչ ելի յերուսաղէմ||: Եւ յամել նորա անդ՝ ոչ եղև այնչափ համառօտ. որպէս և ՚նոյն ղուկաս ասէ. * Եւ էր ընդ նոսա ՚ի մտանել և ելանել յերուսաղէմ. համարձակեալ յանուն տն||, Իե. որպէս զկնի սակաւուց առասցուք: Ապաքէն յայտնի է, թէ ՚նոյն պօղոս՝ որում ցուցցուք յիւրում տեղւոջ, տայր գաղատացւոց համար զանձնէ զի օտարացուցանէին զժողովուրդն ՚ի վարդապետութենէ նորա. ասելով թէ նա ոչ էր ընդ առաքելոյն ընտրեալ և ուսեալ ՚ի Քսէ Յսէ: Ինքն հաստատէր թէ ոչ ուսաւ և ոչ կարգեցաւ առաքեալ յառաքելոց, այլ անմիջապէս ՚ի Քսէ, և առ ապացուցանելոյ զայս, ասէ թէ ոչ ել յերուսաղէմ. և ոչ վարեցաւ ընդ այլոց առաքելոց, եթէ ոչ յետ երից ամաց առաքելութեան իւրոյ: Ո խորհուրդ կարէր զայս հաւանեցուցանել, եթէ տեսեալ էին զնա հրապարակաւ վարիլ և ընտանեբար կենակցիլ ընդ պետրոսի և ընդ այլոց առաքելոց: Ապա պարտ է քաջայայտ ընագրիւ առաքելոյն պարզել զընդդէմ ընագիր ՚նոյն ղուկասու. և ոչ սովաւ միայն արկա-

նել միւսոյն. և յասել սրբոյն Պօղոսի թէ ոչ եկն յերուսաղէմ խօսիլ ընդ առաքելոց եթէ ոչ յետ երից ամաց զկնի դարձի իւրոյ՝ պարտ է իմանալ թէ այնպէս եղև:

Պատասխանէ Կաղինոս առ առաջին դիմադրութիւնն. յաստուածայինն գիրս յաճախ բառդ օչ՝ նշանակէ ժամանակ անորոշ. ուստի այնպէս է ասել. * Երբև կատարէին աւուրք բազումք||. որպէս ասել՝ երբև անցանէր ժամանակ բազում: Սուրբն Ղուկաս ոչ ասէ թէ որչափ եղև այս ժամանակ. սուրբն Պօղոս ասէ թէ եղեն ամք երեք:

Առ երկրորդն պատասխանէ, թէ ընդ այն ժամանակս ոչ էր՝ որպէս այժմ այնչափ յաճախութիւն թղթաբեր սուրհանդակաց՝ հաղորդել միմեանց դիւրաւ զեղեալսն յօտար երկրի: 'Ի սկզբան գուցէ սփռեցաւ և յերուսաղէմ լուր դարձին Սաւուղայ. այլ հրէայք զհակառակն սփռեալ իցեն, և այնպէս այն առաջին համբաւ յերկրայս անկեալ իցէ: Ապա յանցանել Սաւուղայ յԱրաբիա, չիցէ հնչեալ այլ լուր զնմանէ. և բազումք սուտ համարեալ իցեն զառաջին լուրն, կամ գէթ երկրայական. և այնուհետև չիցէ լեալ զրոյց ինչ զնմանէ: Ապա 'ի գալ նորա յերուսաղէմ, ամենեքեան զգուշութեամբ գնացեալ իցեն ընդ նմա, մինչև յայտնի լինել ճշմարտութեան: Ահա յայսմ միջում ժամանակի հանդերձ այսչափ յաճախութեամբ թղթաբեր սուրհանդակաց և լրաբեր թղթոց՝ այնպէս հնչին, այնպէս յերկրայս արկանին, այնպէս է լուութեամբ մեան իրք հեռաւորք: Իսկ առաւել մարթ էր լինել և յայնժամ:

Յայնմ ժամանակի էին յերուսաղէմ երկու եւեթ առաքեալք. սուրբն Պետրոս և սուրբ Յակոբոս Ալփեայ փոքր ասացեալ, որ էր եպիսկոպոս այնր քաղաքի. հալածումն դադարեալ էր. եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան, 'ի Սամարիա, 'ի Գալիլեա ունէր խաղաղութիւն: Բազմանայր թիւ հաւատացելոց. ամենեքեան վարէին սուրբ երկիւղիւն Աստուծոյ, և ուրախ էին նովին ուրախութեամբ զոր Հոգին սուրբ հեղու 'ի սիրտս արդարոց: Ոչ էին անդ միայն Պետրոս և Յակոբոս՝

լմանամբ 'ի նորին պօղոսէ 'ի նախագրեալ տեղւոջ. ուր ասէ թէ առ նմա բնակեցաւ աւուրս հնգետասան, և թէ բաց 'ի նորին յակոբայ ոչ ետես զայլ առաքեալսն. *Ելի յերուսաղէմ տեսանել զպետրոս և եկաց առ նմա աւուրս հնգետասան. զայլ ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զյակոբոս զեղբայրն տն̃||: Եթէ այլք յերկոտասանից գտեալ էին յայնժամ յերուսաղէմ, յայտ է թէ երևեալ էին նմա. և ընդ այն հնգետասան աւուրս տեսեալ էր զնոսա պօղոս 'ի տան պետրոսի: Պետրոս և յակոբոս բազում մարդասիրութը̃ և ընտանի մտերմութը̃ վարեցան ընդ պօղոսի. յաճախէին ընդ նմա 'ի տան և արտաքոյ. և նա յանուն տն̃ համարձակեալ գործէր, հաւատի գոլով թէ ոչ սխալի: Այսչափ ասէ նրն ղուկաս. *Եւ էր ընդ նոսա 'ի մտանել և ելանել յերուսաղէմ համարձակեալ յանուն տն̃||:

Գուցէ կամիցի ոք գիտել զպատճառն՝ յոր սակս նրն պօղոս յանձն էառ զերկար ճանապարհորդութին 'ի դամասկոսէ յերուսաղէմ տեսանել զպետրոս առաքեալն: Ասեմք. նախ այդ ոչ եղև վասն հարկի ուսանելոյ 'ի նմանէ զաւետարանն. տեսաք 'ի վերոյ զի ուսեալ էր նա յա̃ծային յայտնութենէ: *Գնաց, (ասէ նրն հերոնիմոս 'ի գլ. ա̃. թղթոյն որ առ գաղատացիս) գնաց՝ ոչ ուսանելոյ աղագաւ. որ և ինքն զնոյն քարոզութն իւրոյ ունէր վարդապետ||: Երկրորդ՝ ես առաւել ոչ եկն, ասէ նա ինքն նրն հերոնիմոս 'ի նախագրեալ տեղի, *ոչ եկն տեսանել զպետրոս, ոչ զի զաչս, զայտս, զդէմս զննիցէ թէ վտիտ իցէ, եթէ պարարտ. արծուենկն եթէ ուղղաքիթ. միթէ զճակատն ծածկէին հերք եթէ որպէս պատմէ կղեմէս, ճաղատ էր գլուխն: Այլ 'ի ճահ կարծեմ առաքելական ծանրութեն. զի յետ այնչափ եռամեան պատրաստութեն ինչ մի մարդկային կամեցեալ իցէ զննել 'ի պետրոս||: Երրորդ, ասեմք ընդ նմին նրյն հերոնիմոսի. եկն 'ի պատուել զիշխանն առաքելոց և զգլուխ նոյ եկեղեցւոյ: Չորրորդ՝ ասեմք, եկն 'ի խօսիլ ընդ նմա ոչ վասն քարոզութե իւրոյ՝ զորմէ հաւատի էր. այլ վասն տեղեաց

եղանակաց, և ժամանակաց քարոզու՟ն ։ Կամէր կախեալ կալ զգլխոյ իւրմէ․ և լսել զխորհուրդ նորա ։ Սոյն ՚ոըն ամբրոսիոս․ (գլ․ ՟ա․ Թղթոյն որ առ գաղատացիս․) * Յորժամ էր զի պօղոս ցանկանայցէ տեսանել զպետրոս․ զի առաջին էր ՚ի մէջ առաքելոց որում յանձնեալ էր փրկչին զխնամս եկեղեցւոյ ‖ ։ Նաև բազում յոյժ նպաստէր առ երջանիկ յաջողութիւն պաշտաման իւրոյ գիտել ամենեցուն՝ եթէ համամիտ է և համակամ ընդ գլխոյն եկեղեցւոյ և փոխանորդին Յ՟ի Ք՟ի ։ Իսկ թէ առ ինչ յապաղեաց ընդ ամս երիս զայն այցելութի՟, չիք նշանակեալ ՚ի ՚սբ գիրս․ այլ մարթ է գուշակել զայն՝ որ հաւանական է զհետ եկեալ գործոյն, թէ պօղոս ՚ի դէպ դատեցաւ նպաստել ակնկալութե՟ դարձուցանելոյ զդամասկոս, ուր դարձաւ յարաբիոյ․ և դուցէ յերկար ևս կացեալ մնացեալ էր ՚ի դամասկոս, եթէ դարանք հրէից, և բարի խորհուրդք հաւատացելոց չէին հաւանեցուցեալ զնա տեղի տալ անտի ։ Նաև ՟ած այնպէս տնօրինեաց՝ զի կամէր թէ յայտնի լիցի ունել նորա յ՟այ, և ոչ ՚ի մարդկանէ զառաքելութի՟ իւր․ և այս յայտնի լինէր, եթէ նախ քան զվարիլ նորա ը՟ առաքելոց՝ ՚ի գործ արկեալ էր զառաքելական պաշտօն ը՟ ամս երիս ։

՚Ի հնգետասան աւուրսն, յորս եկաց պօղոս յերուսաղէմ առ է գիրն․ * Խօսէր և վիճէր ը՟ յոյնս ‖․ լատինն փոքր մի այլազգ ունի․ * Եւ խօսէր ընդ հեթանոսս, և վիճէր ընդ յոյնս ‖ ։ Յոյնք ընդ որոց վիճէր, էին հրէայք ծնեալք ՚ի յունաստան․ վասն որոյ կրկնապատիկ յամառք և ամբարտաւանք ծննդեամբ և հայրենեօք, զամենայն ընդ հակառակու՟ արկանէին․ և թէպէտ յաղթահարեալ լինէին, բայց ոչ կամէին անսալ ճշմարտութե՟ ։ Իսկ վասն հեթանոսաց՝ բազումք խղճեն անխրաւիլ ՚ի ՚ոըն պետրոս, եթէ ասասցեն թէ պօղոս ճգնէր ՚ի դարձուցմ՟ն հեթանոսաց յառաջ քան զունել պետրոսի զյայտնութի՟ յերկնից, զորմէ խօսեսցուք յետոյ, զկնի որոյ մկրտեաց զկուռնէլիոս հարիւրապետն ։ Սակայն թէ յառաջ քան զայն արգելեալ էր քարոզել հեթա-

նոսաց. * Ի Ճանապարհս հեթանոսաց մի՛ երթայ-ցէք ||. (մատթ. գլ. Ժ. 5։) Իսկ 'ի վկայութի և զառաջեալն նոյն պետրոսի ասա 'ի գործս առաքելոց ('ի գլ. ԺԵ.) * Արք եղբարք դուք գիտէք, զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում ընտրեաց ած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւե-տարանի, և հաւատալ ||։ Ապա որն պետրոս եղև ա-ռաջին՝ որ քարոզեաց զաւետարանն հեթանոսաց։

Նա հուսկ յետոյ ասէն, 'ի մտանել պետրոսի 'ի տուն հարիւրապետին. * Զարմացան որք 'ի թլփա-տութէ անտի հաւատացեալքն եկեալ էին ընդ պետ-րոսի, զի և 'ի հեթանոսս պարգևք հոգւոյն որբ զե-ղուին ||. (գործ. Ժ. 45։) Ապա նոր ինչ թուեցաւ ընդունել 'ի մկրտութի զհեթանոս հարիւրապետն. ապա յառաջ քան զայն չև էր քարոզեալ հեթանո-սաց։ Որպէս ահա և նոքա որք յառաջին հալածման ցրուեցան 'ի զանազան կողմանս՝ հրէից և եթ քարո-զեցին զբ՜ն Այ՜ն. * Նա ցրուեալքն 'ի նեղութենէն որ եղև 'ի վերայ ստեփաննոսի, հասին մինչև 'ի փիւնի-կէ, և 'ի կիպրոս, և յանտիոքիա. ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն հրէից ||. (գործ. ԺԱ. 19։) Աւա-սի և ասէն թէ որն ղուկաս ասա հեթանոս ասելով իմանայ զհրէայս ծնեալս և սնեալս 'ի մէջ հեթանո-սաց. որպ և յոյն ասելով իմանայ նոյնպէս զհրէայս ծնեալս 'ի յունաստան. որպ ասացաք։ Այսպէս նպաս-տէ յունական բնագիրն, յորմէ և մերս թարգմանու-թի, որ այսպէս ընթեռնու. * Խօսէր և վիճէր ընդ յոյնս ||. ուր չիք բառդ հէլլենոս։

Այս կարծիք է մեծամեծ մատենագրաց. բարո-նիոսի. սուարիզի. պելլարմինոսի. և այլոց։ Ի հարց թուի նպաստել այսմ կարծեաց ոսկեբերան. որ ('ի ճառն ԺԲ. 'ի վերայ գործոց առաքելոց.) ա-սէ. * Տեսանես, ուստի իցէ սկիզբն հեթանոսաց. 'ի բարեպաշտօն առնէն. այսինքն 'ի կոռնելիոսէ ||։ Յե-րոնիմոս 'ի թուղթն առ սալվինա. * Առաջին (Կոռ-նելիոս) յառաքելոյն պետրոսէ մկրտեալ՝ զփրկութի հեթանոսաց ընծայեաց ||։ Պապն Ա. նիկողայոս, 'ի բանն պուլղարաց. զոր (զկոռնելիոս) ինքն (պետ-

րոս) ը̄ հրամանին ա̄յ առաջին 'ի հեթանոսաց արար քրիստոնեայ ։

'Ի վերայ այսր ամենայնի խիստ թուի ինձ առէ կաղինոս՝ հաւանել, թէ այնչափ առաքեալք, և աշակերտք և հաւատացեալք սփռեալք 'ի զանազան կողմանս աշխարհի, 'որք նախանձայոյզք ընդ ամս երիս անընդհատ կացեալ 'ի մէջ հեթանոսաց, բնաւ չիցեն գործեալ ինչ վասն փրկութե̄ նոցա, և չիցեն ջանացեալ ածել զնոսա 'ի հաւատս ։ Այլս առաւել, զի ոչ գտանի արգելք ինչ առ այն արարեալ նոցա 'ի վարդապետէն իւրեանց. և գտանի դրական պատուէր վաստակել առ փրկութի̄ ամենայն աշխարհի ։ Ո՞ ոչ կամեցաւ թէ առ կենդանութե̄ իւրով առաքեալք իւր երթայցեն առ հեթանոսս, վասն պատճառացն, զոր նշանակեցաք 'ի տեսութե̄ աւետարանին. * 'Ի ճանապարհս հեթանոսաց մի երթայցէք ‖. այլ ոչ արգել զնոսա ուսուցանել հեթանոսաց՝ ընդ որս էին յերկրին աւետեաց. և ինքն իսկ թէպէտ առաքեալ միայն առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի, ուսոյց և դարձոյց զսամարացիս և զայլ անհաւատս. ապա յետ յարութե̄ իւրոյ՝ յայտնի ետ պատուէր ասելով. * Քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց. աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա եւ̄ ‖. Թէ այնչափ մարդիկ նախանձայոյզք ունելով զայնչափ առիթս 'ի դարձուցանել զհեթանոսս, յամեցուցեալ իցեն ընդ ամս երիս կատարել զայս պատուէր՝ անկարծելի երևի ինձ առէ կաղինոս ։

Եբրայեցւոց ոչ երբէք եղան արգելք՝ 'ի ձգել զհեթանոսս յօրէնս եբրայականս. և բազումք 'ի նոյն վաստակեցան յօգուտ. կարիցե՞մք հաւանիլ թէ արգելեալ իցէ ածել զհեթանոսս 'ի քրիստոնէութի̄ ։ Արգելեալ էր հրէից ուտել ինչ ինչ, որք յօրէնս նոցա պիղծ համարեալ էին, յորոց և մանկունք նոցա գարշէին. որպէս և մեք, թէպէտ չունիմք օրէնս որ արգելուցու, սակայն զզուիմք և գարշիմք ուտել զմուկն, զչղջիկն, զձի. զորս և տեսանել անգամ 'ի վերայ սեղանոյ ոչ հանդուրժեմք ։ Այլ զի հեթանոսք

պատրաստէին 'ի սեղանս իւրեանց կերակուրս՝ յորոց զարշէին հրէայք, նմին իրի հրէայք մասամբ ինն 'ի ընական զզուանաց հրաժարէին 'ի սեղանոյ նոցա։ Այս զզուումն, այս տաղտկութիւն ուտելոյ ընդ հեթանոսս՝ խոչ մեծ էր նոր քրիստոնէից և առաքելոց ընտանութե՛ կենակցիլ ընդ հեթանոսս. և տայր նոցա օտարանալ 'ի հրէից՝ համարելով զնոսա իբրև աւելորդապաշտս։ Փրկիչն թէպէտ ասացեալ էր իւրոցն. * Ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր ||, այլ նոքա կա՛մ ոչ բարւոք իմացան, կա՛մ տակաւին զզուէին յայնպիսեաց. տեսլեամբն որ եղև առ պետրոս, եբարձ աճ զայս խոչ. և սրբն հրապարակեաց զայն. * Դուք ինքնին գիտէք՝ ասելով, որպէս անմարթ է առն հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի. և ինձ աճ եցոյց մի՛ զոք խառնակ կամ անմաքուր ասել 'ի մարդկանէ || իա. (գործ. Ժ. 25.) և զի 'ի վերայ այսր ամենայնի, դարձեալքն 'ի հրէութե՛ ոչ կասէին 'ի հակառակելոյ, յետոյ արարաւ յառաքելոց յայտարարութի՛ 'ի լրացեալ ժողովի։

Վասն որոյ իրաւամբք ասաց սրն պետրոս, թէ * Ի միջի ձերում ընտրեաց աճ բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի, և հաւատալ ||. զի յայտնելով զընկալեալ տեսիլն, թեթևացոյց զմերձենալ առ այլազգիս, և եբարձ զխոչն դարձի նոցա. եթէ ոչ կամիցիմք ասել թէ սրն պետրոս ակնարկէ զլինել իւր առաջին, որ քարոզեաց յաւուր պէնտեկոստէի բազմութե՛ խմբելոց. յորս էին բազմութի՛ հեթանոսաց, և բազումք դարձան։ Իսկ զարմացումն այն 'ի մկրտիլ կոռնելիոսի՝ թէպէտև չէր առաջին այլազգի լուացեալ փրկարար աւազանաւ, կարէր ծագիլ 'ի նորանշան յայտնութե՛ հաղորդակից լինել սեղանոյ այլազգեաց, բարձման օրինաց որ վասն անմաքուր կերակրոց, և յատկապէս յիջանելոյ հոգւոյն սրբ զգալի եղանակաւ 'ի վերայ ամենեցուն, որք կային անդ 'ի լուր քարոզութե՛ սրյն պետրոսի, թէպէտ տակաւին չէին մկրտեալ։ Ոչ է ցրուեալքն 'ի հալածանաց ոչ քարոզեցին զաւետարանն հեթանոսաց 'ի քաղաքս յորս զտեղի առնուին՝ ոչ ասէ սրն

ղուկաս. և չէ իսկ հաւանելի։ Ինքն զայս միայն ասէ թէ 'ի ճանապարհի միայն հրեից քարոզեսցին զաւետարանն. *Հասին մինչև 'ի փիւնիկէ և 'ի կիպրոս և յանտիոքիա. ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն հրէից‖. և գոյր պատճառ. վասն զի ընապէս իջեւանէին միայն 'ի տունս հրէից. և ընդ նոսա միայն վարէին։ Եւեւս զի հարեւանցի եւեթ անցանելով, և ոչ մնալով ուրեք 'յերկար, և չունելով ժամանակ ուսուցանել սոցա և նոցա, պարտ էր նոցա նախադասել զհրեայս։

Եւ զայս ասեմք ենթադրեալ թէ մկրտութ՟ն կոռնելիոսի եղև երեք ամօք յետոյ քան զդարձ ս՟բյն պօղոսի։ Բայց չունիմք հիմն այնչափ յամեցուցանել զայն։ Վ՟ն ղուկաս պատմէ զայն յետոյ, այլ ոչ ասէ թէ յետոյ եղև. Ինքն կամեցաւ որպէս առնէն պատմաբանք՝ կատարել զպատմութ՟ի ս՟բյն պօղոսի՝ մինչև ածել զնա 'ի կեսարիա. ապա դառնայ յետս ըստ ժամանակին, և զայլ կարգ սկսանի, որ կարի յաճախ է յա՟ծային գիրս։ Ոսկեբերան յառաջին ճառն 'ի վերայ գործոց առաքելոց՝ ասէ թէ ղուկաս պատմաբան բազում ինչ համառօտէ և զժամանակս 'ի մի խառնէ։ Ուէ երբ որոշակի եղև դարձ կոռնելիոսի, ոչ գիտեմք։ Այլ թէ եղև փոքր ինչ յետոյ զկնի նահատակութ՟ն ս՟բյն ստեփաննոսի, և գուցէ նաև յառաջ, այսինքն յառաջնում ամի համբարձման Ք՟ի Տ՟ն մերոյ՝ նշանակէ ս՟բն պետրոս, յասելն *Դուք ինքնին գիտէք զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում ընտրեաց ա՟ծ բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւետարանի և հաւատալ‖. (գործ. ժե. 7.) այսինքն յառաջին աւուրս քարոզութեան մերոյ։

Եդեալ զայսոսիկ ծանօթութ՟ս, մատիցուք 'ի կարգ պատմութ՟ն։ 'Ի վերջն հնգետասան աւուրց՝ 'ի կալ յաղօթս պօղոսի 'ի տաճարին, յափշտակեցաւ միտք և ետես զՏ՟ր, որ հրամայեաց նմա փութացուցանել զմեկնիլ իւր յերուսաղէմէ, զի անդ անպտուղ լինելոց է քարոզութ՟ի նորա։ Զայս ծանօթութ՟ի տայ մեզ նա ինքն ս՟բն պօղոս. որ 'ի գլուխ ի՟բ. գործոց

առաքելոյ 'ի դառնալ իւրում 'ի դամասկոսէ յե-
րուսաղէմ ասէ. * Եղև ինձ 'ի դառնալն յերուսա-
ղէմ և կալ յաղօթս 'ի տաճարին, լինել 'ի զարմաց-
ման, և տեսանել զնա (զՏ՜ր) որ ասէր ցիս փութա՛
ել յերուսաղէմէ վաղվաղակի. քանզի չեն ընդունե-
լոց զքո վկայութիւն վասն իմ‖. Հնազանդեցաւ արա-
գապէս հրամանին. պետրոս և յակոբոս ձեռնտու ե-
ղեն նմա առ այն, քանզի գիտացին զի յոյնք խո-
կային սպանանել զնա. վասն այսր պատճառի ոչ
թողին զնա երթալ միայն, այլ բազումք 'ի հաւա-
տացելոց ուղեկից եղեն նմա, և առ ապահովելոյ
զկեանս նորա, յուղարկաւորեցին զնա մինչև 'ի կե-
սարիա. և անտի չունելով պէտս օգնականի, ինքնին
էանց 'ի տարսոն, և ուղեկիցք նորա դարձան յերու-
սաղէմ. * Եւ նոքա խոկային սպանանել զնա. և ի-
մացեալ եղբարց, իջուցին զնա 'ի կեսարիա. և ա-
ռաքեցին զնա 'ի տարսոն‖: Ոչ եկն առաքեալն 'ի
տարսոն վարեալ 'ի մարմնոյ և յարենէ վասն լինելոյ
տեղւոյն իւր հայրենիք, այլ խորհրդով 'ոգյն պետրո-
սի և այլոց հաւատացելոց, ըստ կարծեաց կաղինո-
սի. և թուի թէ զայս նշանակէ ասելն առաքեցին զնա
'ի տարսոն: Տարսոն էր քաղաք երևելի՝ գլուխ և մայ-
րաքաղաք կիլիկիոյ, ուր էին բազմութիւն հրէից և
կռապաշտից. համարեցան թէ գոլով պօղոսի ծնըն-
դեամբ 'ի քաղաքէ անտի, և ծանուցեալ, աւելի ը-
ունելութիւն գտցէ անդ, և մեծագոյն պտղով վա-
րեսցէ անդ զպաշտօն իւր: Եւ այնպէս եղև. զի
հունձն համեմատ գտաւ մշակութեան. ունիմք տեսա-
նել ստորև, զի յորժամ 'ի ժողովս առաքելոց առա-
քեցան թուղթք առ գլխաւոր և առաւել բազմա-
թիւ եկեղեցիս՝ յանուանէ առաքեցին և 'ի կիլի-
կիա: Արդ թողցուք զպօղոս գործել 'ի կիլիկիա.
և մեք գնասցուք ընդ պետրոսի յայլ քաղաքս:

# ԳԼ։ ԺԸ։

ՍԲՆ ՊԵՏՐՈՍ ԲԺՇԿԷ ԶԱՆԴԱՄԱԼՈՅԾ Մ'Ի ԼԻՒԴԻԱ. ԵՒ ՅԱՐՈՒՑԱՆԷ 'Ի ՅՈՊՊԷ ԶԿԻՆ Մ'Ի ՄԵՌԵԱԼ։

*Եւ եղեւ 'ի շրջելն պետրոսի առ ամենեքումբք, իջանել նմա և առ սուրբսն, ևն. (գործոց Թ. 32. ցվերջ գլխոյն։)

Թէպէտ սովորական բնակութիւն սրբոյն պետրոսի էր տակաւին յերուսաղէմ, այլ ոչ այնպէս անշարժ կայր 'ի քաղաքի անդ, մինչ ոչ ևս շրջել և յայլ քաղաքս, յորժամ դատէր թէ այցելութիւն իւր հարկաւոր կամ օգտակար իցէ։ Ըստ այնմ զոր հաստատեցաք 'ի նախընթաց գլուխդ, չէր անցեալ բազում ժամանակ զկնի գալստեան հոգւոյն սրբոյ, զի պետրոս գնաց 'ի լիւդիա քաղաք ծովեզերեայ՝ ոչ կարի ինչ հեռի 'ի յոպպեայ, որ այժմ կոչի դիոսպոլիս. ուր բնակէին հաւատացեալք ոմանք։ Ի սկզբան անդ եկեղեցւոյ մեծապէս հարկաւոր էր գլխոյն այց առնել նախընծայ հաւատացելոց, որպէս զի նորոգ աշակերտեալք՝ որք լինելոց էին վարդապետք և ուսուցիչք այլոց, մի սխալեսցին, և մի մոլորութիւն ինչ ուսուսցեն։ Սրբազան գիրն սուրբս կոչէ զնոսա. վասն զի նոր է աստուած զոր պաշտէին, նոր հաւատն զոր դաւանէին, նոր օրէնքն որում հնազանդէին, նոր խորհուրդքն զոր ընդունէին, նոր վարքն զոր վարէին, նոր ապաշխարութիւն որով եթէ արատս ինչ գտէին յանձինս՝ մաքրել սրբէին։ Մտեալ պետրոսի 'ի քաղաքն, եգիտ անդ այր մի որում անուն էր ենեա, որոյ ութ ամք էին՝ զի անկեալ կայր 'ի մահիճս անդամալոյծ։ Ոչ գիտեմք թէ սրբն պետրոս յառաջագոյն ճանաչէր զնա կամ թէ այլք ցուցին զնա, և կամ թէ աստուած յայտնեաց զնա նմա և զանուն նորա. զոր առաւել հաւանելի

համարիմք ։ Ստոյգ է զի 'ի տեսանել զնա պետրոսի, ասաց ցնա, ենեա՝ բժշկէ զքեզ Յս Քս. արի և քեզէն թօթափեա զանկողինս քո ։ Բանքն արդիւնք եղեն. զի ենեա վաղվաղակի յարեաւ քաջառողջ և ժիր ։ Ծանուցեալ էր անդամալոյծն, յայտնի էր հրաշքն, առատ եղև և պտուղն ։ Զի ամենեքեան որք բնակեալ էին 'ի լիւդիա, և 'ի շրջակայ տափարակին որ կոչէր սարոնայ՝ դարձան առ Տր ։

'Ի լիւդիայ քաղաքէ անց պետրոս 'ի յոպպէ, քաղաք և նաւահանգիստ 'ի վր միջերկրական ծովու ։ Լորինս աստ հաստատէ թէ մօտ առ այս նաւահանգիստ ցուցանի վէմ մի մեծ, յորոյ վերայ պետրոս լուանայր զուռկանս իւր, յորժամ Յս կոչեաց զնա յառաքելութի. յումմէ՞ առնու զայս ծանօթութի ոչ գիտեմք. գիտեմք զի պետրոս զձկնորսութի իւր ոչ 'ի միջերկրական ծովուն, այլ 'ի ծովակին գալիլեայ առնէր, և անտի կոչեցաւ յառաքելութի. և չէ հաւանելի, թէ ցայնչափ հեռաւորութի իցէ փոխադրեալ վէմն այն մեծ ։

Պատճառ երթալոյ նորա 'ի յոպպէ այս եղև ։ Էր անդ հիւանդացեալ, և ապա մեռեալ երևելի տիկին մի որ 'ի բարբառ ասորւոց կոչէր տաբիթա. որ թարգմանեալ կոչի այծեմնիկ ։ Մեծ էր յանձն նորա կորուստ քաղաքին, մի՝ զի առատ էին ձեռք նորա 'ի բաշխել զողորմութի, և երկրորդ՝ զի լուսափայլ օրինակ էր ամենայն առաքինութեց ։ Լուացեալ էր մեռեալ մարմին նորա, և եդեալ 'ի դագաղս՝ կայր պատրաստ՝ զի ապա մեծահանդէս յուղարկաւորութբ տարցի 'ի գերեզման ։ Հանրական էր սուգն. հաւատացեալք 'ի գութ շարժեալ ընդ աղէտս այնչափ աղքատաց՝ որք զրկեցան յայնպիսի յառատապարգև նպաստից, յուսացան թէ վերստին դարձցի 'ի կեանս՝ լոկ եթէ այց արասցէ նմա պետրոս. և լուեալ եթէ էր նա 'ի լիւդիա, առաքեցին առ նա երկու պատգամաւորս, աղաչելով զի մի՛ դանդաղեսցի գալ առ նոսա ։ Հաճեցոյց զնոսա բարեսէր առաքեալն, ցուցանելով թէ բարութիւն և զիջումն է առաքինութի կարի յանկաւոր ամենայն առաջ-

նորդայ՝ որչափ մեծ ոք իցէ։ Այն պետրոս ընդ պատգամաւորսն. և հանեին զնա 'ի վերնատուն անդր՝ ուր էր մեռեալն. էր տեսարան աղէկտուր՝ տեսանել անդ զայնչափ աղքատս, և առաւել՝ զայնչափ այրիս որք շուրջ պատեալ զպետրոսիւ, լային և ցուցանէին զձորձս և զհանդերձս որչափ առնէր նոցա և որդւոց նոցա այծեմնիկն։ Ընդ այն ողորմ տեսիլ կարեկցեալ առաքելոյն, եհան արտաքս զամենեսեան. և ծունր եդեալ եկաց յաղօթս. ապա դարձաւ առ մարմինն և ասէ. տաբիթա, արի կաց յանուն տն Յսի Քսի. Եբաց տաբիթա զաչս իւր, ետես զպետրոս, նստաւ ուղիղ 'ի դագաղմն անդ. ձեռն ետ նմա պրն, և յարոյց զնա. և կոչեալ զհաւատացեալս և զորբս և զայրիս, առաջի կացոյց զնա կենդանի։

Յայտնի եղև ընդ ամենայն յոպպէ այս սքանչելիք, և հաւատացին բազումք 'ի տր։ Պետրոս առ ժամանակ մի եկաց 'ի յոպպէ առ ումեմն սիմոնի խաղախորդի։ Թուցէ զարմասցի ոք, զի պետրոս կալաւ բնակութիւն 'ի տան աղքատ արհեստաւորի, և ոչ 'ի տան մեծատուն և ողորմած և աղքատասէր տիկնոջն զոր յարոյց։ Զպատասխան այսորիկ ոչ գիտեմք, զի ոչ է յայտնեալ. բայց ըստ կարծեաց կաղինոսի հաւանելի թուի, թէ այսպէս ընտրեաց նա, մի՝ զի մի անհանգիստ եղիցի տաբիթա 'ի բազմութէ որք առ 'ի խօսիլ ընդ 'րյն յաճախէին առ նա. երկրորդ առ 'ի ուսուցանել եկեղեցականաց թէ չէ պարտ նց յամենալ 'ի տունս կանանց, թէպէտ և 'որ իցեն, եթէ կամին զհետ երթալ առաքելոց։

# ԳԼ. ԺԼ.

## Տեսիլ սրբոյն Պետրոսի ։ Մկրտութիւն Կոռնելիոսի ։

*Այր մի էր 'ի կեսարիա, անուն Կոռնելիոս հարիւրապետ ‖, եւ. (գործոց Ժ. 1. ցվերջ գլխոյն ։)*

Չև էր մեկնեալ 'ի յոպպէ քաղաքէ 'սբ առաքեալն պետրոս, յորժամ հասին առ նա երեք պատգամաւորք, և աղաչեցին զնա երթալ 'ի կեսարիա, ուր բաղում անձկանօք սպասէր նմա կոռնելիոս հարիւրապետ ։ Էր նա զօրապետ հրամանատար հարիւր զինուորաց 'ի նշանաւոր և յաղթուական գնդէ իտալացւոց որք էին յիտալիա ։ Որչափ ինչ կարեմք իմանալ 'ի 'սբ գրոց, ունէր նա զայն հաւատ՝ զոր պարտական էին ունել նոքա, որք արտաքոյ էին հրէական օրինաց. և որոց չև ևս էր ըստ բաւականին քարոզեալ աւետարանն ։ Հաւատայր զմիութի այ. և ճանաչէր զնա հատուցանող բարեաց և չարեաց. հաւատայր զհարկաւորութի բարի գործոց առ փրկութի. հաւատայր զանմահութի հոգւոյ. և միանգամայն ասացից՝ հաւատայր զայն մասունս, զոր ինչ առ յայ յայտնեալ աւանդութի ունէին նոքա, որք ճանաչէին զճշմարիտն ած. և ծառայէին նմա բնական օրինօք ։ Ընդ բարւոք հաւատոյն լծորդէր և զբարեգործութի ։ Զերկիւղն այ պահէր զամենայն տուն իւր. բաղում ժամս անցուցանէր 'ի ջերմ աղօթս. առնէր ողորմութիս բազումս 'ի ժողովրդեանն ։ Թէև այս առաքինութիք էին 'ի նմա 'ի գերբնական կարգի, և թէ հոգի նորա զարդարեալ էր սրբարար շնորհօք, և նպաստաւորեալ գործունեայ շնորհօք, յայտնապէս երևի 'ի գովեստից որով բարձրացուցանէ զնա 'սբ գիրն. զի ոչ արդեօք կոչէր զնա ԲԱՐԵՊԱՇՏՕՆ և ԵՐԿԻՒՂԱԾ ՅԱՅ, եթէ պաշտօն նորա կամ կրօն, և եր-

կիւղն ա՟յ չէին առաքինութիւնք արմատացեալք 'ի վե-րայ ճշմարիտ հաւատոյ, ոչ ասէր հրեշտակն թէ ելին առաջի ա՟յ աղօթք և ողորմութիւնք նորա, եթէ ոչ վե-րանալով 'ի կարգ գերբնական. ապա թէ ոչ՝ չէին արժանի երեւիլ յարքայութեան: * Բարեպաշտօն և երկիւղած յա՟յ ամենայն տամբ իւրով, առնէր ողոր-մութիւս բազումս 'ի ժողովրդեանն, և յաղօթս կայր առ ա՟ծ յամենայն ժամ‖: Այս ոչ է գովեստ որ պատշաճիցի առն անհաւատի չև ևս հաճոյացելոյ ա՟յ:

Յաւուր միում զիններորդ ժամու աւուրն, այս-ինքն մերձ 'ի վայրկեանն որ ընդ միջօրեայ և ընդ-մուտս արեւու, ետես կոռնելիոս 'ի տեսլեան յայտ-նապէս՝ որ ոչ թողոյր տեղի երկուանաց խաբէութեան, զհրեշտակ ա՟ն մտանել 'ի սենեակ նորա. և լուաւ 'ի նմանէ կոչել զնա յանուանէ՝ կոռնելիէ: Բովան-դակ արիութի՟ քաջակորով զօրականի ոչ է բաւա-կան խափանել զերկիւղն, յորժամ յանդիման լինի նմա ոք յայլմէ աշխարհէ: Կոռնելիոս որ աներկիւղ էր նաև 'ի ստուար գնդէ միջէ, զարհուրեցաւ 'ի տեսանել զպայծառափառ և զխաղաղարար պատգա-մաւորն. հայեցեալ 'ի նա երկիւղագին ասաց. զի՞ է տ՟ր. հրեշտակն այնպէս խօսեցաւ, յորմէ կարաց հարիւրապետն ճանաչել զնա լինել հոգի երկնային * Աղօթք քո ասէ՝ և ողորմութիւնք ելին յիշատա-կաւ առաջի ա՟յ‖:

Ըստ ոճոյ ս՟բ գրոց, ասել թէ ա՟ծ յիշեաց զիրս ինչ, ոչ կամի ասել թէ յառաջ մոռացեալ էր, կամ չէր ուշ եդեալ. այլ նշան է թէ հասեալ է ժամա-նակ յորում ա՟ծ կամի առնել բարիս. և զի տալ զլոյս աւետարանին, և ածել 'ի մկրտութի՟ էր պարգև մեծ, 'ի ցոյց բազում բարեգործութեանց բարեպաշտ զօրապետին, վասն այսորիկ ասաց ցնա հրեշտակն. աղօթք քո և ողորմութիւնք ելին յիշատակաւ առաջի ա՟յ: Իբր ասել ա՟ծ կամի արդ արդիւնացուցանել զաղօթս քո և զողորմութիւնս: Եւ արդ յղեա արս 'ի յոպպէ, և կոչեա զսիմոն զոմն, որ կոչի պետրոս, և նա մտեալ է առ այլում ումեմն սիմոնի խաղա-խորդի, որոյ տունն մերձ է 'ի ծով. և նա եկեալ ա-

ասիցէ թէ զինչ պարտ է քեզ առնել։ Այսպէս ասաց հրեշտակն և գնաց։ Արժան է աստ միտ դնել բանից հրեշտակին. խօսեսցէ զբանս քեզ, որ կեցցես դու։ Այս եղանակ խօսելոյ ցուցանէ թէ անուն պետրոսի առաքելոյն գլխովին նոր էր կոռնելիոսի. եթէ յառաջագոյն ունէր ծանօթութի՛ւն ինչ զնմանէ գէթ ՚ի լրոյ՝ հրեշտակն ոչ ասէր խօսեսցէ զբանս քեզ որ կեցցես դու, այլ պարզապէս զսիմոն պետրոս. այսպէս խօսին զանձանց որք ծանօթ են այնմ ընդ որում խօսին. ընդ հակառակն ոմն՝ ասէ զմարդոյ, որոյ անուն յառաջ անծանօթ էր։

Յայսմանէ հետեւեցուցանէ կաղլինոս, թէ չէր լուեալ կոռնելիոս զայնչափ և զայնպիսի հռչակաւոր սքանչելագործութիս առն այնորիկ, և ոչ ճանաչէր զնա գոնէ ՚ի լրոյ և յանուանէ. և չունելով ծանօթութի՛ւն ինչ ոչ ը̄ առաքելոց, և ոչ ը̄ աշակերտաց, զհետ գայ թէ չէր նմա մինչև ցայնժամ լուր բաւականին քարոզեալ աւետարանն։ Անհաւատալի երևի, զի եթէ խօսեցեալ էր երբէք ընդ ումեք յառաքելոց կամ յաշակերտաց, չիցէ լուեալ բնաւ զանուն պետրոսի գլխաւորի իւրեանց. և եթէ ունէր ծանօթութի՛ւն բաւական առ ՚ի կարելոյ հետամուտ լինել յուսանել՝ չէր զանց արարեալ, գոլով այր բարեպաշտօն և երկիւղած յայ։

Երկրորդ՝ ՚ի վերայ բերէ կաղլինոս, թէ մկրտութի՛ւն կոռնելիոսի ոչ յամեցաւ ցամս երիս, եւս առաւել ցամս ութ զկնի համբառնալոյ տն մերոյ յերկինս. այլ եղեալ իցէ ՚ի մօտ ժամանակս զկնի գալստեան հոգւոյն ՚սբյ. զի անհաւատալի թուի, թէ ՚ի տեղի այնչափ մօտ հրէաստանի, գոլով պետրոսի այր երևելի վ՛ս սքանչելեաց իւրոց, անուն ն՛ր անծանօթ լիցի կոռնելիոսի. և յընթացս այնչափ ամաց՝ չիցէ հասեալ յականջս նորա։ Կարի հաւատալի է, թէ զօրապետ կարգեալ ՚ի նստիլ ՚ի կեսարիա, որպէս փոքր մի յետոյ ցուցցուք, ոչ գոլով ազատ անցանել յերուսաղէմ, առեալ իցէ զլուր ինչ շփոթ վասն նոր օրինաց, և վասն սքանչելեաց որք եղեն յերուսաղէմ ՚ի պէնտէկոստէի, բայց հանդերձ երկրայական բա-

նիւք . զի հրեայք ամենայնի ընդդիմաբանելն , զամենայն զրպարտելն և յանստուգութեան դարձուցանելն և կամ 'ի կախարդութիւն : Հաւատալի է, թէ բարեպաշտ զօրապետն ոչ կարացեալ այլով եղանակաւ հաստ լինել, և քաջ իմանալ թէ ծանօթութիւն այսր ճշմարտութեան կարի կարևոր է հոգւոյ իւրոյ, զայս խնդրեալ իցէ յԱստուծոյ ջերմ աղօթիւք յաւուրս յայնօսիկ : Օ կնի սակաւուց լուիցուք ասել հրեշտակին առ նա թէ աղօթք նորա լսելի եղեն . շնորհքն որ առաքաւ նմա , էր տալ նմա ծանօթութիւն մկրտութեան և աւետարանի . ապա այս էր շնորհքն զոր նա ջերմ աղօթիւք խնդրէր :

Գուցէ զարմասցի ոք զի հրեշտակն փոխանակ առաքելոյ զկոռնելիոս 'ի յոպպէ առ պետրոս, արար զի պետրոս գնասցէ առ նա 'ի կեսարիա : Բայց յուշ լիցի, զի զօրապետք որք ունին զհրամանատարութիւն զինուորական , չեն ազատ թողուլ զտեղիս յանձնեալս նոցա՝ որոց կան 'ի պահպանութեան . և այս առաւելապէս 'ի քաղաքս նորոգ ստացեալս , զորս միշտ մեծագոյն զգուշութեամբ պահեն : Յայսմանէ հետևեցուցանեմք թէ կոռնելիոս պարտական էր կալ անդ հանդերձ գնդաւ իւրով, և ոչ անցանել յայլ քաղաք : Իբրև գնաց հրեշտակն , որ խօսեցաւ ընդ նմա , նոյնժամայն կոչեաց կոռնելիոս զերկուս 'ի ծառայից իւրոց , և ընդ նոսա եդ զինուոր մի բարեպաշտօն 'ի գնդէ անտի իւրմէ . և պատմեալ նոցա զամենայն , առաքեաց զնոսա 'ի յոպպէ խնդրել զառաքեալն պետրոս :

'Ի վաղիւ անդր իբր 'ի ժամ միջօրէի քաղցեաւ պետրոս , և խնդրէր ճաշել . և մինչ պատրաստէին , ինքն ել 'ի տանիսն կալ յաղօթս : Անդ եղև 'ի վերայ նորա զարմացումն . ետես հոգւով զերկինս բացեալ, և իջանել անտի անօթ ինչ իբրև կտաւոյ մեծի զչորեցունց տանոց կապեալ, և նստիլ 'ի վերայ երկրի : Եւ էին 'ի նմա ամենայն չորքոտանիք և սողունք երկրի, և թռչունք երկնից : Եւ 'ի նմին ժամու եղև ձայն առ նա . արի պետրոս , զեն և կեր : Ետ պատասխանի պետրոս, քաւ լիցի տէր, զի ոչ եր-

բեք կերպ խառնակ ինչ և անմաքուր ըստ օրինաց մե-րոց ։ Ձայն եղև առ նա յերկնից կրկին անգամ. մի՛ կոչեր դու պիղծ զոր ա͞ծ սրբեաց ։ Այս տեսիլ և այս ձայն եղև երիցս անգամ. և խորհրդաւոր անօթն վերացաւ յերկինս ։ Կայր պետրոս զարմացեալ ընդ միտս իւր՝ թէ զի՞նչ իցէ տեսիլն զոր ետես. և ահա 'ի նմին ժամու հասին պատգամաւորքն առաքեալք 'ի կոռնելեայ 'ի դուռն տան, և հարցանէին եթէ սիմոն որ կոչի պետրոս՝ ա՞նդ իցէ իջևանեալ ։ 'Ի նմին ժամու և հրեշտակն ասէ ցպետրոս, ահաւասիկ արք ոմանք խնդրեն զքեզ. այլ արի՛ էջ և երթ ընդ նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնո-սա ։ Էջ պետրոս. ընկալաւ զնոսա մարդասիրութ͞բ և ասէ ցնոսա, ահաւասիկ ես եմ զոր խնդրէքն. վասն որո՞յ եկիք դուք աստ. և նոքա ասացին որպէս և խրատեալն էին ։ Կոռնելիոս հարիւրապետ այր արդար և երկիւղած յա͞յ, զորմէ վկայէր ամե-նայն ազգ հրէից, հրաման առ 'ի հրեշտակէ 'ոյ կո-չել զքեզ 'ի տուն իւր, և լսել բանս 'ի քէն ։ Պետ-րոս ընկալաւ զնոսա և առ իւր ագոյց զայն գիշեր, և 'ի վաղիւ անդր գնաց ընդ նոսա ընկերակցութ͞բ ոմանց 'ի հաւատացելոց որք էին 'ի յոպպէ. և 'ի յաջորդ աւուր եհաս 'ի կեսարիա, ուր հարիւրա-պետն մնայր նմա 'ի տան իւրում ։

Կոչեալ էր բարեպաշտ զօրապետն առ 'ի մասնա-կից լինել այսպիսի մեծի բարութ͞ե զազգատոհ͞մն իւր և զմտերիմ բարեկամս ։ Հազիւ կոխեաց առաքեալն զսեամս տանն, ընդ առաջ եղև նմա կոռնելիոս, և անկեալ առ ոտսն երկիրպագանէր ։ Պետրոս գիրկս արկեալ նմա, կանգնեաց զնա և ասէ, յոտն կաց, և ես ինքն մարդ եմ. և խօսելով ընդ նմա եմուտ 'ի ներքս, ուր բազմութի͞ն ժողովեալ սպասէին նմա ։ Աստ առաքեալն առաջի ամենեցուն արդարացոյց զմուտ իւր 'ի տուն անդր ։ Դուք ինքնին գիտէք ա-սէ՝ որպէս անմարթ է առն հրէի մերձենալ կ͞մ մտա-նել 'ի տուն այլազգւոյ ։ Այլ ա͞ծ եցոյց ինձ, մի՛ զոք արհամարհել կամ անմաքուր ասել 'ի մարդկանէ ։ Վասն այսորիկ կոչեցեալ եկի առանց ինչ խղճելոյ. բայց

արդ հարցանեմ յի՞նչ պէտս կոչեցէք զիս ։ Հարցանէ պետրոս ինչ՝ զոր արդէն գիտէր 'ի պատգամաւորաց, սակայն և այնպէս հարցանէ. մի՝ զի խոհեմութ̃ն ուսուցանէ, զի պատգամք ինչ բերեալ 'ի ծառայից՝ կրկնեսցին երբեմն 'ի բերանոյ նորին իսկ առաքողին. և երկրորդ՝ զի օգտակար էր բազմութ̃ն անդ ժողովելոց լսել 'ի բերանոյ նորին իսկ կոռնելիոսի զպատճառն կոչելոյ զպետրոս ։ Իսկ նա 'ի լուր ամենեցուն պատմեաց միամտութ̃բ զընկալեալ տեսիլն. յառաջ քան զչորս աւուրս ասէ՝ յիններորդ ժամու մինչ յաղօթս կայի 'ի տան իմում, ահա այր մի եկն եկաց առաջի իմ 'ի հանդերձս սպիտակս. և ասէ ցիս, կոռնելիէ՝ լսելի եղեն աղօթք քո, և ա̃ծ կամի տալ քեզ փոխարէնս ողորմութ̃ց քոց ։ Արդ յղեա՛ 'ի յոպպէ, և կոչեա՛ զսիմոն՝ որ կոչեցեալն է պետրոս. որ բնակեալ է 'ի տան սիմոնի ուրումն խաղախորդի մերձ 'ի ծովն. և ես իսկ և իսկ յղեցի առ քեզ. և դու բարւոք արարեր զի եկիր անյապաղ. արդ ամենեքին մեք կամք աստ փափաքելով լսել զոր ինչ հրամայեալ է քեզ 'ի տ̃նէ ։

Յայնժամ եբաց պետրոս զբերան իւր և ասէ. Ճշմարտութ̃բ իմանամ և ձեռօք իսկ շօշափեմ, զի ոչ գոյ ակնառութ̃ի առ 'ի յա̃յ. և յամենայն ազգս որք երկնչին 'ի նմանէ, և գործեն զարդարութ̃ի, ընդունելի են նմա ։ Առաքեաց ա̃ծ որդւոց իսրայէլի զա̃ծային բանն իւր, աւետարանելով նոցա զխաղաղութ̃ի 'ի ձեռն Յ̃սի Ք̃սի ։ Սա է ամենայնի տէր ։ Դուք ինքնին գիտէք զբանն որ քարոզեցաւ ընդ ամենայն հրէաստան 'ի յովհաննէ, և 'ի Յ̃սէ՝ յետ մկրտութ̃ն իւրոյ՝ սկսեալ 'ի գալիլեէ, թէ Յ̃ս օծեալ է յա̃յ հոգւով սրբով և ա̃ծային զօրութ̃բ. որ շրջեցաւ ընդ հրէաստան բարի առնել ժողովրդեան, և բժշկել զըմբռնեալս 'ի սատանայէ զօրութ̃բ որ տուաւ նմա յա̃յ՝ որ էր ընդ նմա ։ Մեք եմք վկայք այնչափ սքանչելեաց, զոր արար նա յերկրին հրէաստանի և յերուսաղէմ ։ Եւ թէպէտ ապերախտք ապաշնորհք այնչափ բարերարութեանց նորա, սպանին զնա կախեալ զփայտէ, բայց յաւուր երրորդի յարոյց զնա

ա՟ծ, որ յայտնի եղեւ, եւ երեւեցաւ բազմաց։ Ոչ ե-
րեւեցաւ ամենայն ժողովրդեան, այլ վկայից յառա-
ջագոյն ընտրելոց յա՟յ լինել վկայ յարութեան նորա.
յորոց մեք եմք, որք կերաք եւ արբաք ընդ նմա յետ
յարութեան նորա 'ի մեռելոց։ Նա ինքն պատուիրեաց
մեզ քարոզել ժողովրդեան, եւ վկայութիւն դնել թէ
ինքն է սահմանեալն յա՟յ դատաւոր կենդանեաց եւ
մեռելոց։ Նմա ամենայն մարգարէք վկայեն, թէ 'ի
ձեռն արդեանց նորա ամենեքեան որք հաւատան որ-
պէս արժան է, ընդունին զթողութիւն մեղաց։

Թէ քանի ջերմ զղջութ՟բ եւ սիրով, եւ որչափ փա-
փաքանօք մկրտութեան համօրէն բազմութ՟ին այն ունկն
դնէր այսմ վարդապետութ՟ե առաքելոյն, մարթ է
'ի միտ առնուլ յայնմանէ որ եղեւ։ Զի մինչդեռ
խօսէր պետրոս, էջ հանգեաւ հոգին ս՟բ զգալի ձեւով
'ի վ՟ր ամենեցուն որք լսէին զբանն։ Զարմացան որք
'ի հրէից անտի հաւատացեալք եկեալ էին ընդ պետ-
րոսի։ Լսէին 'ի հռովմայեցւոց անտի յանկարծակի
խօսիլ 'ի զանազան լեզուս. եւ օրհնել եւ մեծացու-
ցանել զա՟ծ բանիւք զոր չէին ուսեալ կամ լուեալ
երբէք։ Սքանչանալին ընդ մարդասիրութին ա՟յ,
տեսանելով զի պարգեւք հոգւոյն ս՟բյ եւ 'ի հեթանոսս
զեղանէին։ Նաեւ ինքն պետրոս հիացեալ ընդ նո-
րահրաշ սքանչելիս, ոչ եւս հարկաւոր դատեցաւ
յայնժամ պէտս ունել նոցա առաւել հրահանգուե
առ մկրտութի, ոչինչ երկուանալով լինել նոցա լիով
պատրաստեալ առ այն։ Աստի եւ ասէ, միթէ զջուր
ոք արգելուլ կարէ առ 'ի չմկրտելոյ զոսա, որք եւ
զհոգին ս՟բ ընկալան, որպէս եւ մեք, եւ հրամայեաց
նոցա մկրտիլ յանուն Յ՟ի Ք՟ի. այսինքն մկրտու-
թբ զոր Յ՟ս Ք՟ս սահմանեաց։ Նոքա նորոգ մկր-
տեալքն ցանկանալով լսել յառաքելոյն այլեւս վար-
դապետութիս, աղաչեցին զնա լինել ընդ աւուրս
ինչ։ Այլ ղուկաս, ոչ ասէ թէ եկաց. բայց եւ ոչ
զհակառակն ասելով՝ իրաւամբք մարթ է համարել
ըստ կանոնին՝ զոր բազում անգամ կրկնեցաք, թէ
հաւանեցոյց զնոսա։

# ԳԼ. ԺԲ.

Պետրոս արդարացուցանէ յերուսաղէմ զգնալս իւր ընդ հեթանոսաց։ Դարձ բազմութեան յանտիոք քաղաքի։ Անդր առաքի մեն Բառնաբաս․ անդր ածէ եւ մեն պօղոս, որք տանին անտի առատ ողորմութիւն հաւատացելոց Երուսաղէմի։

* Լուան առաքեալքն եւ եղբարք, ‖ եւ այլն․ (գործոց ժա̄․ 1․ մինչեւ ցվերջ գլխոյն։)

Լուր հեթանոսաց մկրտելոց 'ի կեսարիա՝ եհաս առ առաքեալսն եւ առ այն հաւատացեալս որք էին յերուսաղէմ․ ուստի 'ի դառնալ պետրոսի անդր, կռուեցան 'ի վերայ նորա որք 'ի հրէից անտի հաւատացեալքն, եւ տրտնջէին զնմանէ եւ մասամբ իմն ստգտանէին զնա զի եմուտ առ արս անթլփատս եւ եկեր ընդ նոսա։ Այն տրտունջ ծագեցաւ ոչ յարհամարհութէ, այլ 'ի նախանձայուզութէ, բայց ոչ գիտութե․ որպէս փոքր մի զկնի տեսցուք։ Ոչ է վաղվաղակի դատապարտելի հպատակն՝ եթէ երբեմն յանդիման առնէ առաջնորդին զտրտունջ իւր։ Զի եւ առաջնորդն կարէ սխալել 'ի գործս իւր․ եւ թէպէտ չէ պարտական տալ համար զանձնէ իւրոց հպատակաց իբր իւրոց դատաւորաց, բայց երբեմն պարտի ըստ իմիք տալ համար զանձնէ առ 'ի խափանել զգայթակղութիւնս։ Ուր հարկաւոր է գաղտնութի, պարտ է յաւէտ յանձն առնուլ զտրտունջ ինչ, քան եղծանել զպատշաճաւոր գաղտնութին․ բայց ուր չէ հարկաւոր գաղտնութին, ոչ է ընդդէմ մեծութե առաջնորդին՝ արդարացուցանել զգործողութի ինչ իւր զորմէ տրտնջեն հպատակքն։ Ի միայն անկեղծ ծանօթութիւն բազում անգամ վերջ առնէ հարկաւոր տրտնջմանց։ Հաւատա-

ցեալք երուսաղէմի ստգտանէին զգնացս սրբոյն պետրո-
սի տարապայման իմն ջերմութբ̃ . * Խղճէին 'ի նմա-
նէ ‖ . ուր լատինն ընթեռնու * վիճէին ընդդէմ նո-
րա ‖ . և մեծ փոխանորդն ․ Բնաւ ոչ վշտացաւ ։ Սարթ
էր նմա զմտաւ ածել , թէ լաւ ևս է առաջի դնել
առաջնորդին զտրտունջս որ լինէին զնմանէ , քան առ
երեսս պատրուակել և 'ի յետուստ չարախօսել .
արդարութ̃ի մի առ առաջնորդն , կարէ ուղղել
զհարկաւոր անկարգութիւ . ուր մի միայն անկար-
գութ̃ի ոչ լռեցուցանէ զհարկաւոր քրթմնջիւն ։

Հաճեցաւ պետրոս ընդ տրտունջ նոցա , և ետ
զպատճառս այնպէս առնելոյ նր̃ ։ Պատմեաց զտե-
սիլ իւր 'ի յոպպէ , զհասանել անդր պատգամաւո-
րաց , զհրամանն տուեալ նմ 'ի հոգւոյն սր̃ , զերևիլ
հրեշտակին կոռնելեայ , զգալուստ հոգւոյն սբյ
զգալի նշանօք մինչդեռ ինքն խօսէր ուսուցանելով
անթլփատից , և հուսկ յետոյ կնքեաց ասելով՝ իսկ
արդ եթէ զհաւասարակաց պարգևն ետ և նոցա որպէս
և մեզ . ո՞վ եմ ես զի կարացից արգելուլ զա̃ծ .
* Ո՞րինչ կարող էի արգելուլ զա̃ծ ‖ ։ Նա տեսաւ
ճշմարիտ զոր յառաջ ասացաք , թէ տրտունջն յա-
ռաջ գայր յանգիտութէ , և ոչ 'ի յանդգնութէ ։
Ոչոք ասաց ինչ . ամենեքեան փառաւոր առնէին
զա̃ծ . և հետևեցուցին , զի թէ ա̃ծ ետ կոռնելեա-
սի և ընկերաց նորա զհոգին սբ̃ նաև յառաջ քան
զթլփատիլ նոցա , ուրեմն նաև յառաջ քան զներգոր-
ծութ̃ն ընդունել նոցա զթլփատութի , արդարացեալ
էին . ուրեմն և 'ի հեթանոսս ետ ա̃ծ յոյս դառնալոյ
առ նա՝ փրկաւէտ , արդարացուցիչ և կենդանարար
ապաշխարութ̃ ։ * Ուրեմն և 'ի հեթանոսս ետ ա̃ծ
զապաշխարութի կենաց . ‖ ապաշխարուէ հիմնեալ
'ի վերայ հաւատոյ * թէ է ա̃ծ , և պարգևատու ‖ .
որպէս խօսի սբ̃ն պօղոս . և ապաշխարութի , որ ցա-
ւելով զի վշտացոյց զա̃ծ զծայրագոյն սիրելին , հան-
դերձ պատրաստութ̃բ առնելոյ զամենայն որ ինչ
խնդրի առ 'ի ունել բարեկամութ̃ի ընդ այ , որ փա-
կէ և զմկրտութ̃ի բաղձանօք ։

Մինչ պետրոս առաքեալն տակաւին էր յերու-

սաղէմ, նոքա որք ցրուեալք էին 'ի հալածմանց բորբոքելոց 'ի ժամանակս նահատակութե՟ սրբոյն ստեփաննոսի, հասին մինչև 'ի փիւնիկէ, և 'ի կիպրոս, և 'ի յանտիոքիա. այլ յայս ճանապարհորդութիւնս իւրեանց ոչ քարոզեցին զաւետարանն այլոց՝ այլ միայն հրէից: Բայց ոմանք 'ի նոցանէ կիպրացիք, և այլք կիւրենացիք, կացին յանտիոք, հմուտ գոլով 'ի յոյն լեզու, խօսէին ընդ յոյնս և աւետարանէին նոցա զՏ՟ր Յ՟ս: Օգնութի՟ն Տ՟ն էր ը՟ն ն՟ս. և բազմութի՟ն դարձան անդ: Լու եղեն այս աւետիք յերուսաղէմ յականջս եկեղեցւոյն. և առաքեցին անդր զս՟րբն բառնաբաս՝ զուարթ ցուցանել զեռանդն, և յառաջացուցանել զայն նորածաղիկ եկեղեցի: Բառնաբաս էր այր զուարթամիտ, լի հոգւով սրբով և հաւատովք. չէ մարթ թարգմանել բանիւ զուրախութի՟ նորա 'ի գտանել անդ այնպէս արմատացեալ զբանն Ա՟յ. մխիթարէր, յորդորէր, խրախուսէր զամենեսին կալ հաստատուն 'ի Տ՟ր. և հունձքն միշտ համեմատ էին սերմանեաց: Ծանեաւ եթէ կարօտ է օգնականի. և խորհեցաւ թէ 'ի մշակութիւն այնպիսի առատաբեր երկրի չէր մարթ գտանել զձեռն լաւագոյն քան զձեռս պօղոսի: Գնաց անձամբ 'ի տարսոն, և գտեալ անդ զխնդրեալն իւր զպօղոս, ած զնա ընդ իւր յանտիոք. ուր կացին զամ մի ողջոյն. և այնչափ եղև անդ բազմութի՟ հաւատացելոց որք մկրտեցան 'ի ք՟ս Յ՟ս, զի անդ նախ հաւատացեալքն, որք յառաջն կոչէին մերթ եղբարք, մերթ աշակերտք, անուանեցան Քրիստոնեայք:

Ընդ աւուրսն ը՟ն այնոսիկ եկին անդր յերուսաղէմէ մարգարէք, յորոց մի ոմն ագաբոս անուն Ա՟ծային յայտնութե՟ գուշակեաց՝ սով մեծ լինել ընդ ամենայն երկիր. որ եղև 'ի ժամանակս կղօդեայ կայսեր: Այս մարգարէութի՟ օգուտ մեծ եղև ոչ միայն բնակչաց անտիոք քաղաքի, այլև քրիստոնէից որք էին յերուսաղէմ. զի անտիոք էր քաղաք բազմահարուստ՝ կարող պատրաստել համբար բազում վ՟ն ժամանակի սովուն, և հաւաքեալ ըստ ժամանակին

առատ ողորմութեն 'ի քրիստոնէից անտի անտիոքայ 'ի ձեռն պօղոսի և բառնաբայ՝ առաքեցին յերուսաղէմ առ երիցունս, բաշխել հաւատացելոց ըստ իւրաքանչիւր կարօտութեն ։

## ԳԼ․ ԺԹ․

Ամին յակոբոս մծ հոլքեան որդի զեբեդեայ եղբայր յովհաննու գլխատի 'ի հերովդէէ յերուսաղէմ ։ Ամին պետրոս արգելանի 'ի բանտ 'ի նոյն հերովդէէ, ազատի 'ի ձեռն հրեշտակի ։ Մահ հերովդէի ։

* Ընդ ժամանակս ընդ այնոսիկ արկ հերովդէս արքայ ձեռն, չարչարել զոմանս յեկեղեցւոյն ։ Եւ սպան զյակոբոս զեղբայրն յովհաննու սրով ։ Եւ տես եթէ հաճոյ է հրէիցն, յաւել ևս ունել զպետրոս, և այլն ․ ( գործք ժբ․ 1 ․ ցվերջ գլխոյն ։ )

Հերովդէս գտեալ շնորհս 'ի հռովմ 'ի կղօդեայ կայսերէ, դարձաւ յերուսաղէմ. Նոյնպէս ցանկայր և յերուսաղէմ շահել զսիրտս հրէից ։ Կարևոր համարէր զսէր հպատակաց, առ 'ի չկորուսանել ըղշնորհս կայսեր․ գիտէր փորձիւ զի գժգհեալ կամ օտարացեալ հրէից 'ի նմանէ, թէպէտ սրով ինչ ոչ կարէին առնել նմա, բայց զամենայն կարօղ էին առնել բողոքմամբ և ամբաստանութբ ։ Աստ որոյ հազիւ հասեալ նորա 'ի հռովմայ յերուսաղէմ և նստեալ յաթոռ իւր, սկսաւ հալածել զքրիստոնեայս ։ Նախ սպան զտրն յակոբոս առաքեալ զեղբայր տրն յովհաննու առաքելոյ․ այս է հասարակ կարծեաց մատենագրաց եղև 'ի վախճան առաջնոյ կամ 'ի սկիզբն երկրորդ ամի կղօդեայ․ որ էր քառասներորդ երրորդ ամ Ծնի Յսի տռն մերոյ ։ Ընդ ժամանակս ընդ այնոսիկ ասելով, հաւանելի է թէ

իմանայ զժամանակն յորում պօղոս և բառնաբաս տարան զտուրս ողորմութեն զհանգանակեալս յանտիոք · զորմէ յաւարտ նախընթաց գլխոյն անմիջապէս խօսի ս՟բն ղուկաս ։ Ետես հերովդէս զի մահ ս՟բյ առաքելոյն յակոբոսի հաճոյ եղև հրէից մեծապէս, և կամեցեալ աճեցուցանել առ ինքն զսէր ժողովրդեան, խորհէր հատանել և զգլուխ ս՟բյն պետրոսի առաքելոյն ։

Էին աւուրքն բաղարջակերաց · և թէ օրէն էր կամ՞ ոչ առ հրէայս՝ յայն աւուրս հեղուլ զարիւն հրապարակաւ, կամեցաւ պատուել զտօնն, չունելով և ոչ մի ինչ պատճառ փութացուցանելոյ զայն մահ · բայց առ ապահով լինելոյ վասն անձին պետրոսի, ետ արկանել զնա ՚ի բանտ · և ոչ շատացեալ փակել զնա ՚ի ներքսագոյն բանտի, ետ կապել և կրկին շղթայիւք · բազմացոյց և զզօրական պահապանսն յաւելեալ ՚ի նոսա վեշտասան զինուորս, որք բաժանեալ ՚ի չորս դասս, պահէին միայն զպետրոս, և երկու ՚ի նոցանէ կային ընդ նմա ՚ի նոյն ներքին սենեակ բանտին և պահէին զնա առաջի աչաց իւրեանց ։ Կամէր հերովդէս մատնել զնա ատելութեն և դատաստանի ժողովրդեան ՚ի լնալ աւուրց բաղարջակերաց, և էր վերջին գիշեր ։

Իսկ հաւատացեալքն տրտմեալք միայնն՝ երկիւղագին տեսանել զկատարածն · և զի ոչ կարելով ն՟ց խօսիլ ընդ արքայի, դիմէին առ ա՟ծ անհանգիստ աղօթիւք ։ Կարողութի թագաւորաց ոչ հաւասարի կարողութե աղօթից ։ Ննջէր պետրոս ՚ի վերայ շղթայից իւրոց · ամենայն սրտմտութիւն բռնաւորաց չէ բաւական բառնալ զհանգիստ ս՟րց · լինել շղթայակապ, ոչ բառնայ զքուն այնր, որ ցնծայ ընդ կապանս շղթայից վասն ա՟յ ։ Ննջէր պետրոս ՚ի մէջ երկուց զինուորաց · եթէ և նոքա ննջէին, այլք հսկէին որք կային ՚ի պահպանութի դրան · բայց ուր ոչ կարէր մարդ մտանել՝ չկայր ինչ փականք ընդդէմ մտից հրեշտակին ։ Լոյս մեծ փայլատակեցաւ և արար տիւ ՚ի խաւարային բանտի անդ · հրեշտակ տ՟ն խթեաց զկողն պետրոսի, զարթոյց զնա, արի

ասէ՝ արի վաղվաղակի. 'ի նմին ժամու անկան եւ շղթայքն 'ի ձեռաց նորա. եւ ըստ նմին՝ որպէս եւ ասաց հրեշտակն, անարգել գօտեւորեցաւ պետրոս, ագաւ զհողաթափս, եւ արկեալ զիւրն զմեկնոցն՝ հետեւեցաւ զկնի ձայնի հրեշտակին, եւ ել գնաց ըզհետ նորա հլութե̃. այլ զամենայն առնէր 'ի միտս իւր ապշութե̃ որպէս 'ի տեսիլ հիացման. զի թէպէտ եւ տիրապէս արթուն էր, այլ չէր հասու ստուգութե̃ եղելոյն, զի համարէր երազ տեսանել:

Մինչ նշանակէ աստանօր ս̃բ գիրն, թէ պահապանքն՝ որ կային 'ի ներքս 'ի բանտի առ պետրոսի, որպէս եւ որ արտաքոյ պահէին զդրունս, տեսի՞ն ինչ արդեօք լոյս, կա՞մ իմացան զոր ինչ եղեն, եւ տակաւին չեղեն կարօղ խլրտիլ եւ խափան լինել ելիցն պետրոսի առ ահի պակուցման յերեւաց հրեշտակի. եւ կամ որ առաւել ստոյգ երեւի, թմբրեալ ա̃ծառաք քնով քան զզմրեալս 'ի մանրագորաց՝ զգացին ինչ ոչ բնաւին: Իսկ անցանելն ըստ մի պահ եւ ըստ երկուս՝ մինչեւ հասանել յարտաքին մեծ դրունն, որ հանէր 'ի քաղաքն, երեւի յայտ առնել զկրկին կարգ պահնորդաց մեծի ապարանիցն՝ յորոց 'ի ներքս էր բանտն, եւ արտաքոյ բանտին ընդարձակ սրահք եւ գաւիթք եւ հրապարակք զինուորականք, մինչեւ 'ի դուռն փողոցին՝ որ կոչի եւ նախադրունք: Արդ վերջինս այս դուռն մեծ յառաւել ապահովութի էր շինեալ երկաթի կամ երկաթակուռ, եւ աղխեալ երկաթի եւ պղնձի նգօք եւ փակաղակօք. այլ առաջի զօրութե̃ հրեշտակին ոչ միայն չկարաց կալ, այլեւ ինքնին բացաւ առանց մերձենալոյ ձեռին. եւ այնպէս ելին ընդ այն համարձակ ընդ փողոց մի քաղաքին՝ հրեշտակն, եւ պետրոս զհետ նորա. եւ նոյնհետայն աներեւոյթ եղեւ հրեշտակն:

Յայնժամ լուրջ մտօք հասու եղեւ պետրոս, եւ գիտաց՝ զի անցք իւր ոչ են երազ. եւ սկսաւ ասել 'ի մտի իւրում. արդ գիտեմ ճշմարիտ, եթէ առաքեաց տ̃ր զհրեշտակ իւր, եւ փրկեաց զիս 'ի ձեռաց հերովդէի, եւ յամենայն ակնկալութե̃ ժողովրդեան հրէից: Ապա դէմ եդեալ գնաց 'ի տուն մարեմայ

մօր յովհաննու՝ որ կոչեցաւն մարկոս, և զկնի եղև մի 'ի չորից աւետարանչաց՝ որպէս որդիացեալ պետրոսի, այն է՝ որ կոչի քեռորդի կամ եղբօրորդի բառնաբայ ։ Եւ եղև 'ի պահուն՝ յորում կային ժողովեալ 'ի տան անդ և կային յաղօթս, եհաս սրն պետրոս, և բախէր զդուրս . իսկ աղախին տանն հռոդէ անուն՝ այն ինչ եկեալ և հարցեալ թէ ո՞ իցէ, իբրև իմացաւ 'ի ձայնէն թէ ինքնին պետրոս է, առ մեծի խնդութեն ոչ եբաց նմա զդուռն, այլ փութացաւ դառնալ 'ի ներքս և տալ աւետիս ժողովելոյն, թէ պետրոս եկեալ հասեալ կայ . այլ նոքա չկարէին հաւատալ նմա . մոլիս ասէին և բանդագուշէս անկարելիս որպէս ցնորեալ զքեզ . իսկ նա պնդէր՝ թէ նա է . այլք ասէին, թէ գուցէ հրեշտակ նորա 'ի կողմանէ նորա երևեալ իցէ, և բարբառեալ որպէս ձայնիւ նորա ։

Մինչ այս մինչ այն՝ 'ի բախել պետրոսի ստիպաւ կրկին և կրկին, ընթացան բազմութք և բացին զդդուռն, և տեսեալ զնա՝ լի եղեն ուրախութբ և զարմանալեօք, և ընկալեալ 'ի ներքս՝ հնչմամբ և շնչմամբ զուարթուն, այլ զարամբ ելանէին՝ հարցանել, թէ զիա՞րդ ազատեցար 'ի բանտէն ։ Եւ նա լռեցոյց զնոսա՝ նշանակեալ ձեռն 'ի բերան, զի լուռ և անշշունջ կայցեն . և յետ պատմելոյ զայցելութի տն՝ որով եղև նմա փրկիլ, ասաց նոցա՝ հաղորդել զիրսն և յակոբայ եղբօր տն և որոց ընդ նմա . և ինքն մեկնեցաւ չոգաւ այլուր առ ժամանակ մի՝ արտաքոյ սահմանացն հերովդի ։

Իսկ հերովդէս իբրև իրազեկ եղև, թէ պետրոս չիք 'ի բանտի, հարցեալ զվերակացուս և զպահապանս՝ ինչ ոչ կարաց ստուգել . նախ իրի զամենայն զցասումն իւր թափեաց 'ի վերայ պահապանաց՝ հրաման տուեալ կորուսանել զնոսա, որպէս յայտնի գրի 'ի մերումս և յայլոց թարգմանութն միաձայն ընդ երևելի մեկնիչս զոյգ ընդ ոսկեբերանի . այլք իմանալ յօժարին՝ որպէս լոկ խոշտանգեալս բանտիւք և գանիւք ։ Այլ ինքն հերովդէս ընկալաւ 'ի վերուստ զիւր յետին պատուհաս արժա-

նահատ՝ յօրինակ հալածչաց եկեղեցւոյն ։ Զի 'ի գալ խուռն 'ի կեսարիա փիլիպպեայ՝ խորհէր վրէժս առնուլ 'ի տիւրացւոց և 'ի սիդոնացւոց, ընդ որս էր ցասմամբ ; որպէս կարծի՝ իբրև ընդ նենգաւորս արքունի հասից ․ վ̃ն որոյ եկեալ իսկ էին ոմանք 'ի նոցանէ աղաչել զերեսս նր̃ 'ի հաշտութիւն ձեռամբ սենեկապետի արքային ։ Որ և ժամ կարգեցաւ, յորում յանդիման եղեն Թագաւորի արքն աղաչաւորք ․ յայնժամ Հերովդէս նստեալ յատենի շքեղզարդուք 'ի հանդերձս պայծառս՝ սկսաւ խօսել ը̃ն նոսա առաջի բազմութե̃ ահաւոր խոլոխտանօք, և փառացի պերճախօսութբ̃ ․ մինչև մարդելուզաց եղելոց յամբոխին աղաղակել 'ի լուր փառասիրին, թէ բան արքայից ոչ է բարբառ մարդոյ, այլ ա̃յ ։ Եւ զի ոչ սաստեաց նոցա ամբարտաւանն Հերովդէս, և ոչ ետ փառս ա̃յ, այլ անձին խուռն ամբարհաւաճութբ̃, նմին իրի անդէն հարաւ յաներևոյթ զօրութե̃ հրեշտակի ա̃յ ներքին և անհնարին ցաւօք, և որդնալից լեալ սատակեցաւ յետ ոչ բազում աւուրց ։

Իսկ եկեղեցին ք̃ի նորածնեալ ոչ տկարացաւ յերեսաց հալածանաց, այլ ևս քան զևս զօրացաւ և ծաւալեցաւ յայնմ հետէ ։ Եւ յաւուրսն յայնմիկ ս̃րբն պօղոս և ս̃րբն բառնաբաս, որոց եկեալ էր յերուսաղէմ՝ բերել զողորմութի̃ս հաւաքեալս 'ի պէտս աղքատացն ք̃ի անդ եղելոց, միւսանգամ ելեալ անտի՝ չոքան յանտիոք, առեալ ընդ իւրեանս իբրև պաշտօնեայ և գործակից զհաւատացեալ երիտասարդն յովհաննէս՝ զկոչեցեալն մարկոս ։

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼ. Ա.

Առաքելութեան Պօղոսի և Բառնաբայ անդր եւս քան զԱն-
տիոք. ձեռնադրութեան եղեմնեայ մեծի, և դարձ անթիւպատոսին
Սերգեայ Պօղոսի 'ի հաւատս 'ի Պափոս Կիպրոսի, ուստի և
դարձ այլոց 'ի հեթանոսաց յԱնտիոք Պիսիդեայ ։

* *Եւ էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն՝ մարգարէք և վարդապետք ‖, և այլն. (գործ. ժգ. 1. ցվերջ գլխոյն ։).*

*Բանզի սկսեալ յԵրուսաղէմէ՝ զառաջինն յԱնտիոք ծաղկեաց հաւատք քրիստոնէութեան, մինչև գտանել անդ բաւական թուով հաւատացելոց, և զանազանիլ նոցա յօտարաց քրիստոնեայ անուամբ, վասն որոյ և քաղաքն այն իրաւամբք ստացաւ զանուն առանձին եկեղեցւոյ, և եղև իսկ զկնի աթոռ սրբոյն Պետրոսի առ ժամանակ մի. սմին իրի և անպակաս գտանէին յԱնտիոք առաջնորդք եկեղեցւոյ երևելիք՝ մարգարէական և վարդապետական հոգւով լցեալք 'ի հոգւոյն սրբոյ, և 'ի ժամու գլխաւորք էին 'ի նոսա սուրբն Բառնաբաս, և սուրբն Պօղոս՝ որ տակաւին Սօղոս կամ Սաւուղ կոչիւր, և Շմաւոն կոչեցեալն Նիգեր, (որ 'ի Հռովմայեցւոց բարբառ՝ սեաւ լսի, առ որոշելոյ յայլոց համանուանց), և Ղուկիոս Կիւրենացի, և Մանայեն դայեկորդի, այսինքն սննդակից և կաթնեղբայր Հերովդի*

արքայի չորրորդապետի, յայտ է թէ այր նշանաւոր՝ ինքնակամ աշակերտեալ քի և առաքելոց նորա ։

Արդ մինչդեռ սոքա միաբան կանխէին յօրըստօրէ պաշտօն տն հանդերձ հաւատացելովք յանտիոքացւոց անտի, խմն կատարելով զաղօթս ըստ ժամուն, մատուցանելով զքր պատարագ քնական, և հաղորդելով զարժանաւորս, քարոզելով, վարդապետելով, մարգարէաբար նախաձայնելով և ազդելով զազդմունս հոգւոյն սբյ, և ստէպ պահս պահելով վասն անձանն նոր հօտին փոքու, 'ի միում անդ համախմբութե, ասէ հոգին սբ առ նոսա, եթէ իմանալի բարբառ հնչելով յոգիս նոցա, և եթէ բարբառ զգալի, որպէս 'ի ձեռն երևման հրեշտակի, կամ դնելով զբան իւր 'ի բերան միոյ 'ի մարգարէից անտի, այսպէս. որոշեցէք ինձ զբառնաբաս և զսօղոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զնոսա ։ Յայնժամ վերստին 'ի նոր պահս և յաղօթս կանխեալ՝ եդին ձեռն 'ի վերայ նոցա, 'ի նշանակ զօրացուցանելոյ զնոսա հոգւոյն սբյ 'ի պաշտօն առաքելական քարոզութե, և արձակեցին ։ Են՝ որ համարին, թէ բառնաբաս և պօղոս սոյին ձեռնադրութեամբ ընկալան այժմ զառաջինն զկարգ քահանայութե, կամ զեպիսկոպոսութե. այլ 'ի գործոց անտի նոցա առաջնոց յայտնի է, թէ արդէն ունէին նոքա յառաքելոց զքահանայութիւն և զեպիսկոպոսութիւն՝ հանդերձ իշխանութեամբ առաքելական քարոզութե ։

Եւ այսպէս բառնաբաս և պօղոս առաքեալք 'ի հոգւոյն սբյ (որպէս խորհրդով նշանակէ սբ գիրն,) իջին նախ 'ի սելևկիա ծովեզերեայ քաղաք կիլիկեցւոց, և անտի նաւեցին 'ի կիպրոս կղզի. ուրմտեալ 'ի սաղամինա քաղաք (որ ամկ. ֆամակօսդա), քարոզէին զաւետարանն 'ի ժողովրդանոցս հրէից, ունելով և զյովհաննէս մարկոսն պաշտօնեայ որպէս արկաւագ ։ Զայսօրինակ շրջեալ ընդ ամենայն կղզին մինչև 'ի պափոս քաղաք նորին՝ գտին անդ հրէայ զոմն բարեյիսուս կամ բարյեսու (այսինքն որդի յեսուայ) իմաստակ և սուտ մարգարէ, որ

կոչէր զանձն Ելիմաս, ( իմա՛ ալիմ, կամ էլիմար, որ թարգմանի ալիմ կամ գիտնական որոգ մոգ) . որ մնոտի ճարտարաբանութք, և գուցէ նաև աղթարական սատեղագիտութք պատրէր զպարզամիտս . մինչև վայելել և 'ի սեղանոյ հռոմայեցի անթիհիպատոսի տեղւոյն, այն էր փոխանակ բդեշխի կարգեալ անդ, և անուն նորա սերգիոս պաւղոս ( կամ սարգիս պօղոս ), և զի իշխանն այս էր այր իմաստուն և բարեսէր, 'ի լսել զհամբաւ քարոզութեն բառնաբայ և պօղոսի՝ կոչեաց զնոսա աղաչանօք առ ինքն, և խնդրէր լսել անձամբ 'ի նոցանէ զբանն այ : Իսկ ընդ լսելն՝ մտադիւր հաւանութք յօժարեցաւ ընդունել զքրիստոնական հաւատս :

Ոչ չարեցաւ ընդ այն Ելիմաս մոգն յոյժ յոյժ, զի 'ի հաւատալ իշխանին՝ դիւրագոյն ևս ծաւալէր քարոզութիւն աւետարանին, և նշաւակեալ լինէր մոգութի իւր . և ինքն անկանէր յաչաց իշխանին և ամենայն ժողովրդեանն . նմին իրի սկսաւ ամենայն պատիր բանիւք հնարիւ պղտորել զմիտս իշխանին, և ընդ վայր հարկանել զքարոզութիւն առաքելոց : Յայնժամ սօղոս, որ և պօղոս կոչի յայսմ հետէ 'ի նոյն ղուկայ, լցեալ հոգւով սրբով՝ ահագինս հայեցաւ յելիմաս, և ասէ ցնա : Ով լի ամենայն նենգութք և խորամանկութք, որդի սատանայի, թշնամի ամենայն արդարութեն, ոչ դադարես 'ի թիւրելոյ զճանապարհս տն զուղիղս . և արդ ահա ձեռն տն 'ի վերայ քո, և եղիցես կոյր՝ չտեսանել զարև մինչև 'ի ժամանակ մի : Իսկ զոյգ ընդ բանին՝ անկաւ 'ի վերայ աչաց մոգուն մէգ և խաւար շլացութեան, և շրջէր խնդրէր առաջնորդս, զի կալցին զձեռանէ նորա և տարցին : Իբրև ետես փոխանակ բդեշխին զայն նշան ահաւոր 'ի վերայ հակառակորդին ճշմարտութեն, հաւատաց բոլորով սրտիւ 'ի քս, զարմացեալ ընդ վարդապետութի տն, որ ոչ միայն բանիւ, այլև արդեամբք է ամենազօր : Իսկ միտեալ 'ի նոյն պօղոսէ՝ աշակերտեցաւ ամենայն հլութք . մինչ զի ըստ աւանդութեն սպանիացւոց՝ յետ ժամանակաց յանցանել նոյն պօղոսի ընդ սպանիա, կարգեաց

անդ զսերգիոս պօղոսն յեպիսկոպոսութի̃ Նարբոնայ քաղաքին . ուր և վախճանեցաւ 'ի ծեր սրբութ̃ ։

Արդ՝ քանզի 'ի պատմութե̃ աստ սորին սերգեայ պօղոսի զառաջինն կոչի և առաքեալն սօղոս՝ անուամբս որ և պօղոս , նմին իրի 'ի կարծիս լինին մեկնիչք , թէ 'ի յիշատակ իշխանին լեալ իցէ և կոչումն անուան առաքելոյն . իսկ այլք ընդ ոսկեբերանի համարին , թէ որովհետև եբրայական անունն սաւուղ կամ սօղոս մերձաւոր է հռովմէական անուանս բաւլոսս կամ պօղոս , այն ինչ հանդերձեալ էր առաքեալն չուել յանտիոքայ 'ի քարոզութի̃ ընդ այլ և այլ տեղիս ընդ իշխանութ̃ հռովմայեցւոց , գործակիցք նորա 'ի դէպ վարկան , զի յայնմ հետէ բաւլուս կոչեսցի՝ իբրև կոչումն ընտանի առ հռովմայեցիս . մանաւանդ զի և ինքն նոյն պօղոս էր ըստ պատուոյ գաւառին իբր ծննդեամբ հռովմայեցի՝ ծնեալ 'ի տարսոն կիլիկեցւոց ։ (Տես զայսմանէ և 'ի սկզբան մեկն . թղթ . պօղ . առ հռ ։)

Այլ վասն եղիմաս մոգի՝ որովհետև ասաց առ նա նոյն առաքեալն , չտեսանել զարև մինչև 'ի ժամանակ մի , 'ի կարծիս եղեն ոմանք՝ թէ յետ աւուրց լուսաւորեաց պօղոս զխաւարեալ աչս նորա , և նովին առաւել հաստատեցաւ սերգիոս պօղոսն 'ի հաւատս . բայց ինքն մոգն միշտ մնաց ասեն 'ի կուրութե̃ հոգւոյ , և ոչ եկն 'ի լոյս ճշմարտութե̃ ։ Բայց անստոյգ մնայ այս կարծիք ։

Յետ այսորիկ նոյն պօղոս և որք ընդ նմա , այսինքն բառնաբաս և յովհաննէս նաւարկեալ 'ի պափեայ քաղաքէ անտի կիպրոսի եկին 'ի պերգէ քաղաք պամփիլեայ գաւառի 'ի փոքրն ասիա ։ Յայնժամ յովհաննէս մարկոս երիտասարդն մեկնեալ 'ի նոցանէ՝ դարձաւ յերուսաղէմ 'ի տուն մօր իւրոյ , թերևս կամ առ գութ ծնողին , կամ առ 'ի խոյս տալոյ յաշխատութեանց քարոզութեան . մինչև իրաւամբք դժուարել պօղոսի փոքր մի ընդ գործ նորա . այլ բառնաբաս երևի կարի թեթև առնել զայն թերութիւն պատանւոյն . որպէս տեսցի զկնի յընթացս պատմութեան ։

Արդ պօղոսի և բառնաբայ չուեալ 'ի պերգեայ՝ եկին 'ի փոքրն անտիոք, որ կոչէր պիսիդեայ, անդէն 'ի փոքրն ասիա․ ուր մտեալ 'ի ժողովրդանոցն հրէից յաւուր շաբաթու՝ նստան ընդ վարդապետս և ընդ օրէնսգէտս․ և յետ սովորական ընթերցուածոց օրինաց և մարգարէից՝ մեծարեալ հրաւիրեցան 'ի ժողովրդապետաց անտի հրէից, զի թէ յօժարին՝ խօսեսցին ինչ բանս մխիթարութե՟ առ ժողովեալսն՝ որպէս մեկնութիւն ընթերցուածոցն այնոցիկ։

Յայնժամ յոտն եկաց պօղոս, շարժեաց զձեռն իւր 'ի նշանակ կամելոյ իւրոյ խօսել ինչ և պատուիրելոյ զունկնդիրս, կամ 'ի լռութի՟ դադարեցուցանելոյ․ և սկսաւ մեկնաբանել լի հոգւով ա՟յ, թէ բովանդակ նպատակ հին կտակարանաց էր զալուստ հանդերձելոյ մեսիային յայտնի, այսինքն օծելոյ՝ փրկչի հասարակաց․ վասն որոյ զայն առաւել պարտ է հետազօտել յա՟ծեղէն գրոց, եթէ դեռ գալո՟ց իցէ օծեալն այն, եթէ արդէն եկեալ է և գլխաւորեալ ըզփրկութե՟ տիեզերաց։ Ապաքէն յաւուրց անտի աբրահամու ընտրեաց ա՟ծ զհարս մեր իւր ժողովուրդ սեպհական․ բարձրացոյց զնո՟ առ յոլովեփաւ 'ի պանդխտութե՟ եգիպտոսի, և եհան զնոսա անտի 'ի բազուկ բարձր մեծամեծ սքանչելեօք․ և քառասնամեայ ժամանակ կերակրեալ զնոսա յանապատի՝ եմոյծ զնոսա 'ի խոստացեալ երկիրն աւետեաց, քակեալ զբնակիչս երկրին զքանանացիս առ յեսուաւ․ և յետ նորա ետ նոցա դատաւորս ազատարարս 'ի ձեռաց նեղչաց իւրեանց մինչև ցսամուէլ մարգարէ․ բայց ոչ ոք 'ի նոցանէ եղև փրկիչ տիրապէս։ Յետոյ խնդրեցին իւրեանց թագաւոր, և ետ նոցա ա՟ծ զսաւուղ․ այլ սա ևս ոչ եթէ փրկիչ, այլ մանաւանդ կործանիչ գտաւ ազգին․ նմին իրի յարոյց ա՟ծ նոցա թագաւոր զդաւիթ՝ զայր ըստ սրտին ա՟յ․ բայց յայտ արար՝ թէ ոչ է և նա բուն փրկիչն․ այլ խոստացաւ 'ի պտղոյ որովայնի նորա տալ զփրկիչն իսրայէլի․ և ահա ոչ ոք 'ի ծննդոց դաւթի եղև այդպիսի, եթէ ոչ Յ՟ս Ք՟ս որդին դաւթի ծնեալն առ մեօք։

Եւ 'ի հաստատութի՟ այսմ եկն նախ կարապետն

նորա՝ մկրտիչն Յովհաննէս, զոր Ճշմարիտ մարգարէ գոլ բարձրելոյն գիտաց ամենայն իսրայել. մինչև 'ի կարծիս անկանիլ բազմաց՝ եթէ նա ինքն իցէ խոստացեալ մեսիայն. իսկ Յովհաննէս յայտնապէս վկայեաց, թէ չեմ ես քս՟ն, այլ նա ինքն է Յս՟ եկեալն զկնի իմ, որում չեմ ես արժանի և զկօշիկս անդամ ոտիցն լուծանել: Եւ ահա զՃշմարիտ զայս փրկիչ չկամեցան իշխանք մեր ընդունել, այլ առ նախանձու զանպարտականն և զբոլորից բարերարն եդուն պիղատոսի սպանանել 'ի վերայ խաչին. որով և 'ի գլուխ հանին զամենայն գրեալսն զքս՟է, զորս ընթեռնուին յամենայն շաբաթս. մինչև իջուցեալ 'ի փայտէն՝ թաղեցաւ 'ի գերեզմանի: Այլ ա՟ծ յարոյց զնա յաւուր երրորդի 'ի մեռելոց՝ անապական կենդանութ՟բ. որ և զաւուրս քառասուն երևեալ բազմութե՟ աշակերտաց իւրոց՝ վերացաւ փառօք յերկինս. և ահա կենդանի աշակերտք նորա վկայ են այսմ ամենայնի. և մեք ձեզ զնոյն աւետարանեմք, զի լցաւ խոստումն ա՟յ առ հարս մեր. և նոյն ինքն Յս՟ Քս՟ է յարուցեալն 'ի մեռելոց, զորմէ ասաց ա՟ծ 'ի սաղմոսի. որդի իմ ես դու, ես այսօր ծնայ զքեզ. և նա՝ որոյ վասն ասացեալ էր, տաց քեզ զսրբութի՟ն դաւթի զհաւատարիմս, այսինքն զանհրաժեշտ ուխտ սրբութե՟ իմոյ՝ զոր խոստացայ դաւթի յարուցանել փրկիչ 'ի զաւակէ նորա. որպէս և դաւիթ ինքնին ասէր վասն նր՟, ո՛չ տացես ս՟բյ քում տեսանել զապականութի՟. զի այդ ոչ 'ի վերայ դաւթի, և ոչ 'ի վերայ այլոց ուրուք Ճշմարտեցաւ, որք առ հասարակ տեսին զապականութի՟. բայց զոր ա՟ծն յարոյց ոչ ետես զապականութի՟: Արդ 'ի միտ առէք արք եղբարք, զի սա ինքն Յս՟ Քս՟ է փրկիչ ձեր, և արդարացուցիչ յամենայնէ՝ յորմէ ոչ կարացիք օրինօքն մովսիսի արդարանալ. և զգո՛յշ լերուք չլինել արհամարհօտք և ապաշնորհք զի մի՛ ընդ ծանր ծանր դատաստանաւ անկանիջիք:

Ոմանք 'ի լսողաց բանից՝ հաւան ցուցեալ զանձինս աղաչէին զպօղոս և զբառնաբաս յելանելն անդ 'ի ժողովարանէ, գալ և 'ի միւսում շաբաթու երկրոր-

դել նոցա զնոյնպիսի բանս. և այլք յոլովք զհետ գնացին նոցա յօթևանս նոցին, եթէ հրէայք, և եթէ հեթանոսք եկամուտք 'ի հրէայս. և նոքա հաստատէին զնոսա 'ի հաւատս ք̃ի, և յորդորէին կալ մնալ 'ի շնորհսն ա̃յ' որ հաղորդեցաւ նոցա: Եւ եղև 'ի գալ միւսոյ շաբաթուն' իբրև տեսին չարքն 'ի հրէից, թէ գրեթէ ամենայն քաղաքն ժողովեալ է լսել 'ի պօղոսեանց զբանն ա̃յ, լցան նախանձու, և սկսան դիմախօսել պօղոսի, և հայհոյել. յայնժամ համարձակ եղեալ պատասխանի պօղոս և բառնաբաս, և ասեն, արժան էր մեզ նախ առ ձեզ հրէայսդ ուղղել զվարդապետութիւն մեր. այլ քանզի դուք մերժէք զնա, և անարժանս կացուցանէք զձեզ կենացն յաւիտենից, ահաւասիկ դառնամք 'ի հեթանոսս. զի յ̃ս ք̃ս է փրկիչ հասարակաց. վասն որոյ և գրեալ է' եդի զքեզ 'ի լոյս հեթանոսաց' լինել քեզ 'ի փրկութի̃ մինչև 'ի ծագս երկրի:

Ընդ այս ուրախ եղեն հեթանոսք, և փառս տային ա̃յ. և հաւատացին 'ի ք̃ս ընտրեալքն 'ի նոցանէ: Եւ ծաւալեցաւ բանն տ̃ն ընդ ամենայն գաւառն: Որում ոչ կարացեալ տանել անօրինաց հրէիցն' գրգռեցին զգլխաւորս քաղաքին, և մանաւանդ զկրօնաւէր և զբարենախանձ կարծեցեալ կանայս' պարկեշտ անուամբ ակնածելիս, այլ քինախնդիրս' կռուասէրս' չարագրգիռս, և յարուցին շփոթ մեծ, և հալածանս 'ի վերայ պօղոսի և բառնաբայ, մինչև հանել զնոսա 'ի սահմանացն իւրեանց. և նոք առաքեալքն ըստ տ̃ն բանի' թօթափեալ զփոշի ոտից իւրեանց 'ի վերայ նոցա' մեկնեցան անտի, և եկին յիկոնիոն: Նայց աշակերտեալքն' որ յանտիոք պիսիդեայ, ոչինչ թերևհաւատեցան վասն վարդապետացն հալածման. այլ պնդագոյնս հաստատեալ 'ի հաւատս ճշմարտութե̃' լի էին ուրախութ̃ և հոգւով ս̃րվ. քանզի և տ̃ր զօրացուցանէր զնոսա ներքին և արտաքին շնորհօք, և սքանչելի արդեամբք աճմանն հաւատոյ:

# ԳԼ. Բ.

Քարոզութիւն պօղոսի և բառնաբայ յիկոնիոն, 'ի դերբէ, 'ի լիւստրա, մինչև 'ի դառնալ անդրէն յանտիոք։

*Եւ եղև յիկոնիոն 'ի միասին մտանել նոցա 'ի ժողովուրդ հրէիցն, և խօսել նոյնպէս||, ևն. (գործ. ԺԴ. 1։)

Եկեալ պօղոսեանց յիկոնիոն՝ մայր քաղաքաց լիկայոնացւոց (այն է ղոնիա), մտին ըստ սովորութե̄ յաւուր շաբաթու 'ի ժողովարան հրէից, և խօսեցան զբանն ա̄յ. մինչև հաւանեցուցանել զբազումս 'ի հրէից անտի, և 'ի հելլենացւոց բնակչաց երկրին՝ որ էին յոյնք հեթանոսք և այլ ևս այլազգիք։ Ընդ այս դժկամակեալ անհաւան հրէից՝ գրգռեցին ոչ միայն զխուժանս, այլև զհեթանոս ընդդէմ քրիստոնէից, բազում չարիս կարկատելով 'ի վերայ նոցա իբրև 'ի վերայ քարոզչաց և հետևողաց նորանոր աղանդոց։ Բայց պօղոսեանք անվեհեր անդուստ չնորհացն ա̄յ շրջէին անդ զբազում ժամանակս՝ հաստատելով զճշմարտութիւն ք̄նական հաւատոց մեծամեծ նշանօք և արուեստիւք։ Սմին իրի հերձաւ քաղաքն որպէս թէ յերկուս բաժինս. կէսք կուսակից էին հրէից, և կէսք առաքելոց։ Այլ քանզի առաջինքն բռնութ̄բ և խռովութ̄բ միայն վարէին, ամբոխ արարին հեթանոսք և հրէայք այնր կողման՝ դիմել 'ի վերայ պօղոսեանց, և քարկոծ առնել զն̄ս. որում իրազգած եղեալ առաքելոցն՝ և գործակցաց նոցա խոյս ետուն անտի յայլ քաղաքս լիկայոնիոյ 'ի լիւստրա և 'ի դերբէ և 'ի մերձակայ սահմանս գաւառին, և անդ աւետարանէին։ Եւ զի սահմանակից է այնմ գաւառի գաղատիա, ստոյգ համարի կաղլինոս՝ թէ յայնժամ քարոզեալ իցէ զառաջինն

և յաշխարհին գաղատացւոց. Թող զոր այլք վաղագոյն կամ զկնի նշանակեն, որպէս տեսցի զկնի և ՚ի բանս ՚որյն ղուկայ:

Այլ մինչդեռ ՚ի լիւստրա քաղաքին պօղոսեանք, տեսին զայր մի լիւստրացի նստեալ ՚ի հրապարակի՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ. և զի սա ջերմագոյն հաւատով քան զբազումս, և աներկբայ յուսով ՚ի զօրութիւն քնի՝ ունկն մատուցանէր բանիցն ՟այ, հայեցեալ ՚ի նա պօղոսի՝ ասէ մեծաձայն. քեզ ասեմ յանուն ՟ն մերոյ Յնի, յոտն կաց ՚ի վերայ ոտից քոց ուղիղ: Եւ ահա նոյնժամայն յարուցեալ վաղվաղէր այրն և գնայր, որոյ երբէք չէր քայլափոխեալ ոտամբքն: Զայն տեսեալ բազմութեանն՝ բարձին զձայնս իւրեանց հայրենի բարբառով, և ասէին. ՟ածք նմանեալք մարդկան իջին առ մեզ. և կամեցեալ տալ նոցա զանուանս սուտ ՟ածոց իւրեանց՝ կարդային զբառնաբաս դիոս, որ և զեւս կ՟ի արամազդ, հայելով ՚ի փառացի տեսիլ կերպարանաց նորա և ՚ի վայելչութի հասակին. և զպօղոս՝ հերմէս, որպէս զ՟ած պերճախօսութե, զի նա էր առաջնորդ բանին կամ գլխաւոր քարոզիչ. մինչ զի և քուրմն բագնին դիոսի՝ որ կայր կանգնեալ յանդիման դրան քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ ՚ի դուռն հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել նոցա զցուլսն, և զպսակսն դնել ՚ի գլուխս նոցա:

Իբրև ազդ եղև առաքելոցն բառնաբայ և պօղոսի, պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս վազեցին յամբոխէն. և մեծաձայն վկայութի դնէին՝ ասելով. արք զի՞նչ գործէք զայդ, մեք մարդիկ եմք տկարք որպէս զձեզ, առաքեալք ՚ի Ճշմարտէն ՟այ քարոզել ձեզ՝ դառնալ առ նա յայդպիսի սնոտի պաշտամանց, և ՚ի միտ առնուլ զարարիչն ձեր և ըղհամօրէն տիեզերաց. որում վկայ են ամենայն գործք նորա, և անբաւ մարդասիրութի՝ որով մատակարարէ զամենայն բարիս ձեզ իսկ գլխովին՝ որ ոչն ծանեայք զնա: Այսու օրինակաւ հազիւ դադարեցուցին զամբոխն ՚ի զոհելոյ նոցա, և յորդորեցին գնալ իւրաքանչիւր ՚ի տեղի իւր. և ինքեանք մեղմով շըր-

ջէին և ուսուցանէին զճանապարհն ճշմարտութե՟ ։

Յաւուրս յայնոսիկ եկեալ անդր 'ի լիւստրա ոմանց 'ի հրէից անտիոքայ պիսիդեայ և իկոնիոնի, և տեսեալ զյաջողուածս քարոզութե՟ առաքելոցն, սկսան պատրել զժողովուրդն և 'ի բաց քեցել 'ի նոցանէ իբրև 'ի ստաբան և 'ի մոլորեցուցչէ արանց. և այնչափ ամբոխ յարուցին, մինչև քարկոծեալ զպօղոս՝ քարշեցին արտաքս քան զքաղաքն, զի դի նորա լիցի կերակուր գազանաց և թռչնոց ։ Այլ իբրև եկին գիշերի ոմանք յաշակերտաց, և պատեցան զնովաւ՝ որպ՟ թէ բառնալ և թաղել ուրեք պատուով, յարեաւ կանգնեցաւ, և եմուտ ընդ նոսա 'ի քաղաքն. և 'ի վաղիւ անդր կանխեալ ել 'ի քաղաքէ անտի հանդերձ բառնաբաւ, և եկն 'ի դերբէ ։ Ուր աւետարանեալ, և աշակերտեալ զբազումս, դարձան անդրէն 'ի լիւստրա և յիկոնիոն և յանտիոքիա ( որ և անտիոք պիսիդեայ). և հաստատեցին և մխիթարեցին զաշակերտեալսն՝ մի՛ վհատիլ յերեսաց հալածանաց և վշտաց, զի բազում նեղութ՟ պարտ է մեզ մտանել յարքայութի՟ ա՟յ ։ Իսկ յետ ձեռնադրելոյ նոցա ըստ իւրաքանչիւր եկեղեցեաց երիցունս՝ այսինքն քահանայս և եպիսկոպոսունս, յանձն արարին զնոսա տ՟ն ։ Իսկ շրջեալ ընդ գաւառն պիսիդեայ այցելութ՟՝ եկին 'ի պամփիլիա. և միւսանգամ քարոզեալ 'ի պերգէ՝ իջին 'ի ծովեզերեայ քաղաք ատալիա. և անտի նաւարկեալ դարձան 'ի մեծն անտիոք ասորւոց՝ ուստի առաքեալ էին 'ի քարոզութի՟. և հանդիպեալ վարդապետաց և մարգարէից՝ որք յուղարկեցինն զնոսա, պատմեցին առաջի եկեղեցւոյն զէլս գործոյն, զոր կատարեցին 'ի տ՟ր, և թէ եբաց ա՟ծ հեթանոսաց զդուռն հաւատոյ. և եղեն անդ ժամանակս ոչ սակաւս ընդ աշակերտսն ։

Այլ 'ի կարգի երևելի անձանց եկելոց 'ի հեթանոսաց 'ի ք՟նական հաւատս յիկոնիոն քաղաքի՝ հռչակեալ է դարձ ս՟րյն թեկղի աղախնոյն ք՟ի, որ յետ աշակերտելոյ ս՟րյն պօղոսի՝ եղև որպէս առաքելուհի կողմանցն լիկայոնիոյ և իսաւրիոյ. և բազմադիմի փորձանօք և հալածանօք վկայեաց ճշմարտութեան՝

մեծամեծ նշանօք հանդերձ. որպէս միաբան աւանդեն հին հարք և վկայարանք առ հասարակ. զորմէ ունիս տեսանել 'ի վարս 'նըց.

## ԳԼ. Գ.

Ելք պօղոսի և բառնաբայ յանտիոքայ յերուսաղէմ վասն օրէնական խնդրոց. ժողով և սահմանադրութիւն առաքելոց վասն նոյին իրաց. և յառաջադիմութիւն աւետարանական քարոզութեան 'ի հեթանոսս.

* Աւ ոմանք իջեալ 'ի հրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս||, եւն. (գործ. ԺԵ. 1.)

Մինչդեռ պօղոսեանք յայս նուագ ծաղկեցուցանէին զքարոզութիւն աւետարանին յանտիոք ասորւոց ուր արդէն սկսեալ էին բազմամբ հաւատացեալքն և 'ի հեթանոսաց, իջին անդր 'ի հրէաստանէ ոմանք 'ի հրէից հաւատացելոց. և սկսան բանայոյզ լինել՝ եթէ զիարդ անթլփատքն ընդունելի լինիցին յեկեղեցի այ. վասն որոյ և ասէին՝ թէ չիք փրկութիւն ումեք, եթէ ոչ թլփատեսցի ըստ օրինացն մովսէսի: Արմատ հակառակութեանս էր խորանիստ 'ի սիրտս հրէից ընդ ամենայն տեղիս. որպ յայտ է և 'ի պատմութէ դարձին կոռնելիոսի 'ի ձեռն 'նըյն պետրոսի, և 'ի թղթոյն պօղոսի առ գաղատացիս՝ որ կարծի ըստ կաղինոսի գրեալ զայսու ժամանակաւ, և յանցից անցելոց կանխագոյն ընդ պետրոս և ընդ պօղոս յանտիոք վասն խտրանաց ուտելոյ ընդ հեթանոսս առ աչի հրէից. քանզի հրէայք նորահաւատք կամէին զոյգ ընդ օրէնս քի պահել և զօրինական խտրանս մովսէսի. իսկ պօղոս յանդիման կացուցանէր, թէ 'ի հասանել Քրիստոսի դադարեալ են ստուերական օրէնք.

Արդ 'ի լինել ոչ սակաւ հակառակութե՟, թէպէտեւ պօղոս եւ բառնաբաս յաղթահարէին զհակառակորդս բանիւն ճշմարտութե՟, այլ ոչ կարէին շիջուցանել զհուրն բորբոքեալ՝ վասն ոչ գոլոյ իւրեանց 'ի թուոյ առաջին աշակերտացն ք՟ի, որոց եւեթ վկայութիւն եւ իշխանութիւն 'ի ժամուն էր ակնածելի հաւատացելոցն 'ի հրէից, սմին իրի հաստատեցին 'ի խորհրդեան, զի պօղոս եւ բառնաբաս 'ի միոյ կողմանէ, եւ այլք ոմանք 'ի միւս կողմանէ ելցեն յերուսաղէմ, եւ առաջարկեսցեն զխնդիրն ժողովոյ առաքելոց։ Ելեալ պօղոսեանց 'ի ճանապարհ՝ անցին ընդ փիւնիկէ եւ ը՟ սամարիա, պատմելով որոց անդ եղելոց հաւատացելոց 'ի հեթանոսաց՝ թէ նաեւ յայլ բազում տեղիս եղեւ դարձ հեթանոսաց. որով ուրախութի՟ մեծ եղեւ ամենեցուն։ Այնպէս եւ ը՟ հասանելն յերուսաղէմ՝ պատուով ընկալեալք յառաքելոց եւ յամենայն եկեղեցւոյն, պատմեցին՝ որչափ ինչ այցելութի՟ արար ա՟ծ ընդ հեթանոսս 'ի ձեռն նոցա։ Ապա մատուցեալ եւ այլոց 'ի միւսմէ կողմանէ, որպիսի էին հրեայք հաւատացեալք 'ի դասուց փարիսեցւոյն, պնդէին՝ թէ բարւոք է ընդունել զհեթանոսս 'ի քրիստոնէութի, բայց պարտ է նոցա կանխաւ ընդունել զհրէութի, այսինքն թլփատիլ, եւ պահել զխտրամս մովսիսական օրինաց։

Յայնժամ ժողովեցան առաքեալքն եւ երիցունք տեսանել վասն խնդրոյս այսորիկ մեծի. եւ յետ յառաջ բերելոյ զպատճառս դէմ ընդդէմ կարծեաց՝ ս՟րն պետրոս իբրեւ գլուխ ժողովոյն եւ իրաւունս բանիւն պօղոսեանց. գիտէք ասէ դուք ամենեքին, զի կանխաւ ա՟ծ 'ի ձեռն իմ կոչեաց զկոռնելիոս եւ զայլ եւս հեթանոսս յաշակերտութի՟ աւետարանին. եւ առանց հարկեցուցանելոյ զնոսա 'ի թլփատութիւն եւ յայլ խտրուխս հրէականս՝ վկայեաց սրտագէտն ա՟ծ, թէ ընկալաւ զնոսա 'ի հօտ իւր, տալով նոցա զհոգին ս՟բ՝ որպէս եւ մեզ. եւ ոչինչ ընտրութի՟ արար 'ի մէջ նոցա եւ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս ն՟ց. արդ ընդէ՞ր փորձէք զա՟ծ՝ դնել լուծ մովսիսական 'ի վերայ պարանոցի աշակերտաց նորոյ օրինացս. եւ այն՝

լուծ ծանր, զոր և ոչ մեք հրէայքս կարացաք բառնալ. վասն որոյ թողեալ զայդպիսի ծանրու՟ն խրարմնաց, ամենեքին միօրինակ հաւատասցուք ապրել շնորհօքն տ՟ն յ՟ի ք՟ի ։

Այս որոշումն վճռին հաւատոյ լռեցոյց զամենայն հակառակութի՟. և ժողովն սկսաւ հանդարտութ՟բ միտ դնել իրացն ապացուցի, զոր անդրէն սկսան պատմել Բառնաբաս և Պօղոս՝ թէ որպիսի և որքան սքանչելիս արար ա՟ծ 'ի ձեռն նոցա վասն դարձի հեթանոսաց. և եղև ուրախութի՟ լսողաց առ հասարակ ։

Իբրև դադարեցին նոքա 'ի խօսելոյ, խօսել սկսաւ Յակովբոս եղբայր տ՟ն՝ 'ի հաստատուն բանիցն պետրոսի, զի լիցի վերջին վճիռ ժողովոյ. և մի՛ յարիցէ յայնմհետէ յոյզ և խնդիր վասն այնպիսի իրաց ։ Եւ զի ինքն էր եպիսկոպոս երուսաղէմի, ուր բազում մասամբք հաւատացեալքն էին յազգէ հրէից, կարևոր համարեցաւ բարբառել այնու օրինակաւ՝ զի և սիրտ ժողովրդեան իւրոյ հանդարտեսցի, և ոչ ոք 'ի նոցանէ կարողասցի տրտնջել ։ Նախ կնքեաց հաստատութ՟բ, թէ զոր ինչ ասացն շմաւոն պետրոս գլուխ համօրէն առաքելոց և աշակերտաց՝ վասն դարձի հեթանոսաց, է անժխտելի. զի այնմ միաբանին ասէ և բանք մարգարէիցն, թէ ա՟ծ ունէր նորոգել և կանգնել զտուն դաւթի այնպիսի շինութեամբ, մինչև ոչ միայն հրէից լինիցի գտանել զփրկութիւն ակնկալեալ, այլև մնացորդք մարդկան, և ամենայն հեթանոսք խնդրեսցեն զտ՟ր և զեկեալ փրկիչն տիեզերաց, ոչ եթէ հրէանալով, այլ 'ի նոր եկեղեցի ք՟ի ժողովելով, և 'ի վերայ բոլորեցունց կոչեսցի անուն տ՟յ և ք՟ի նորա ։ Եւ զի այս այսպէս, վասն որոյ և ես ասէ իրաւունս համարիմ՝ մի՛ նեղել խտրական օրինօք մովսիսի զայնոսիկ՝ ոյք 'ի հեթանոսացն դառնան առ ա՟ծ. այլ միայն պատուիրել նոցա բանիւ և թղթով, զի յետ հաւատալոյ 'ի ք՟ս ոչ միայն հեռի լիցին յամենայն հեթանոսական մոլորութեց և 'ի սովորութեց, այլև խորշեսցին յայնպիսի իրաց՝ որք են նշանակք իմն հեռոյ հեթանոսութե՟,

եթէ ի՟ ինքեան մեղանչականք լիցին, զօրօրինակ է պոռնկութիւն, և եթէ դայթակղական ևեթ 'ի ժամուն, զօրօրինակ էր ուտելն զկերակուրս զոհելոց կռոց, կամ զմիս մեռելոտի, և կամ զարիւն ։ Ապա թէ ոչ՝ հաւատացեալքն 'ի հրէից օրինադէտք տեսանելով զնա 'ի հեթանոսաց հաւատացեալս անխտիր լինել յայսոսիկ իրս ի՟ բնիկ սովորութեանց իւրեանց, ոչ համարէին զնոսա 'ի բաց կացեալս 'ի հեթանոսութենէ. և այնպէս յառնէին միաբանդամ վէճք և հերձուածք յեկեղեցւոջ ։

Հաճոյ թուեցաւ ամենայն ժողովոյն առաջարկութիւս այս. վասն որոյ սահմանեցին 'ի գործ արկանել զիրսն, առաքելով ընդ պօղոսի և ընդ բառնաբայ յանտիոք երկուս ևս այլ արս գլխաւորս 'ի դիմաց իւրեանց, զյուդա զկոչեցեալն բարսաբայ, և զշիղա (որ և սիղուանոս ասի լինել), որք ունէին և շնորհս մարգարէութեան, համդերձ ժողովական նամակաւ՝ որ ունէր օրինակ զայս ։

* Առաքեալք և երիցունք և եղբարք, յանտիոք (ասորւոց), և 'ի սիւրիա (որ է երկիր ասորւոց), և 'ի կիլիկիա, եղբարցդ՝ որ 'ի հեթանոսացդ էք՝ ողջոյն ։ Վասնզի լուաք, թէ ոմանք ('ի փարիսեցի հաւատացելոց) ելեալ 'ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք՝ խախտել զանձինս ձեր. ասեն թլփատիլ, և պահել զօրէնսն, որոց ոչ հրամայեցաք (մեք զայնպիսի բանս սերմանել 'ի մէջ ձեր)։ Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս՝ արս ընտրեալս յղել առ ձեզ՝ ընդ սիրելիս մեր ընդ բառնաբայ և ընդ պօղոսի. արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վասն անուանն տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի ։ Արդ առաքեցաք (ասեմք) զյուդա և զշիղա՝ և նոցա 'ի բանից զնոյն պատմել. (այսինքն՝ զի և սոքա զնոյն ունին ասել համդոյն բառնաբայ և պօղոսի, կամ զնոյն զայն բան վճռոյ մերոյ երկրորդել ձեզ ։) Զի հաճոյ թուեցաւ հոգւոյն ս՟բյ և մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն 'ի կարևորացս յայսցիկ. խմ՛, 'ի բաց կալ 'ի զոհելոյ կռոց (այսինքն յուտելոյ զզոհեալն), և յարենէ, և 'ի հեղձուցելոյ. և (առաւել ևս՝ որ

ինքնին իսկ յայտ է՛) 'ի պոռնկութենէ (մինչև չտալոյ անգամ և զկասկած խառնակեաց վարուց ). յորոց պահեալ զանձինս՝ բարւոք գործիցէք. ողջ լերուք ‖:

Եկեալ հասեալ ժողովական դեսպանացս յանտիոք՝ ժողովեցին զեղբարս, և մատուցին զթուղթն. և նոցա ընթերցեալ՝ ուրախ եղեն 'ի տէր ամենայն մխիթարութե̃, որ շնորհեցաւ նոցա. զի բարձաւ մնա- տի յոյզ խնդրոց: Յայնժամ և յուդա և շիղա՝ որպէս առաքելական պատգամաւորք, միանգամայն և մարգարէք և վարդապետք հին և նոր օրինաց, կենդանի բարբառով յաւելին մխիթարել զեղբարս եւս քան զեւս, և սրտապնդել և հաստատել 'ի հաւատս և 'ի վարս քրիստոնէականս: Իսկ յետ լինելոյ սոցա անդ ըժամանակ ինչ, յորժամ կամեցան եղբարք անտիոքացիք արձակել զնոսա առ առաքեալսն՝ 'ի յայտ առնել զընդունելութի̃ ժողովական հրամանաց, շատ համարեցաւ յուդա լինել անձամբ դարձուցիչ պատգամաւորութե̃. քանզի հաճոյ թուեցաւ շիղայի մնալ անդէն յանտիոք՝ 'ի մխիթարութի̃ անտիոքացւոց զոյգ ընդ պօղոսի և բառնաբայ. որք միաբան շրջէին և աւետարանէին 'ի կողմանսն յայնոսիկ:

Մինչև տեսեն պօղոսի՝ թէ անտիոք հաստատեալ կայ 'ի ճշմարտութե̃ և յողջմտութե̃, ասէ ցբառնաբաս. դարձցուք անդրէն յայլ քաղաքս յորս քարոզեցաք թէ որպէս ունիցին զաւետարանական աւանդութիւնս: Հաճեցաւ բառնաբաս. բայց կամէր առնուլ 'ի գործակցութիւն և զյովհաննէս զկոչեցեալն մարկոս, որ միւսանգամ եկեալ էր առ 'ի լինել պաշտօնեայ պօղոսեանց, թերևս ստրջացեալ ընդ առաջին բաժանումն իւր ինքնակամութե̃: Իսկ պօղոս աղաչելով ասէր ցբառնաբաս, մի առցուք ընդ մեզ զերիտասարդ՝ որ անհաստատ տեսանի յուրում պաշտաման, մինչև հասցէ 'ի չափ առն կատարելոյ՝ որ հաստատուն իցէ 'ի ճանապարհս իւր. մանաւանդ զի անցք մեծամեծք կան առաջի մեր, որոց չկարէ տանել ամենայն ոք:

Իրաւունս տայր բանիցս բառնաբաս, այլ չկարէր չզիջանիլ թախանձանաց երիտասարդին՝ քեռորդւոյ

կամ եղբօրորդւոյ իւրոյ, որ ոչ կամէր այլ բաժա-
նիլ յիւրմէ։ Նա այսպէս մնաց խնդիրն անլուծանե-
լի. մինչև գտին զերրորդ այլ հնարս միօրինակ
հաւանելի երկոցունց կողմանց կամօքն ա̅յ։ Բառնա-
բաս էառ զմարկոս, և նաւեաց 'ի կիպրոս. ուր ա-
րար առաւել լուսաւորութիւն, և բազմացոյց զհաւա-
տացեալս, և պայծառացոյց զբովանդակ կղզին ա-
ռաքելական վաստակօք. Թող և զքարոզութիւն յայլե-
այլ կողմանս. զի ստէպ շրջէր 'ի զանազան տեղիս և
անդրէն դարձ առնէր 'ի կիպրոս իբրև 'ի սեպհական
աթոռ իւր. ուր և կատարեցաւ պանծալի նահատա-
կութեամբ, որպէս տեսցես 'ի վարս ս̅րց։ Իսկ պօղոսի
ընտրեալ իւր 'ի գործակից զշիղա՝ ել յանտիոքայ,
և շրջէր 'ի կողմանս ասորւոց և կիլիկեցւոց, և հաս-
տատէր զեկեղեցիս՝ որպէս հայր համատարած, և
վարդապետ և առաքեալ հեթանոսաց։ Վասն որոյ
և յայսմհետէ և անդր՝ պօղոսի եւեթ գործք պատ-
մին արձակաբար 'ի պրակս առաքելոց։

## ԳԻՐ։ Դ.

Պօղոս առնու պաշտօնակից և շրջմոլիկս և ընկերս, և քարոզէ 'ի Մակեդոնիա՝ նշանօք և հալածանօք հանդերձ։

* Նա եկն եհաս 'ի Դերբէ և 'ի Լիւստրա‖, եւն.
(գործ. ժզ. 1։)

'Ի շրջիլ Պօղոսի հանդերձ Շիղայիւ ընդ նախ աշակերտեալ քաղաքս՝ եկն եհաս աներկիւղ 'ի Դերբէ և 'ի Լիւստրա, ուստի երբեմն հալածեալ էր քարկոծմամբ. անդ էր աշակերտ մի ընտրեալ՝ Տիմոթէոս անուն, 'ի հեթանոս հօրէ և 'ի հաւատացեալ հրէայ մօրէ, վկայեալ 'ի Լիւստրացւոց և յԻկոնացւոց եղբարց յաստուածպաշտութն և յերկիւղածութեան՝ որպէս և մայր նորա Եւնիկէ, և հանին իւր Լաւոդէ (իմա Լոյիդէ) փայլէին բարեպաշտութբ։ Արդ՝ կամեցեալ Պօղոսի տանել ընդ իւր զՏիմոթէոս 'ի գործ ծն, թլփատեաց զնա, զի մի պատճառս տացէ հրէից տեղւոյն՝ թէ ընկալաւ 'ի գործակցութն աւետարանի զայր անթլփատ որդի հեթանոսի։ Այս ճարտարութն էր առաքելական. զի Պօղոս՝ որ քարոզէր թէ թլփատութի ոչինչ է, և անթլփատութն ոչինչ, այլ հաւատք սիրով յաջողեալ, զայն ևս քաջ գիտէր՝ զի ժողով առաքելոց միաբան ընդ իւրումն հոգւոյ՝ ազատ կացոյց 'ի թլփատութն զառ 'ի հեթանոսաց հաւատացելս, բայց ոչ արգել խոպառ 'ի պահանջել կարևոր ինչ առթի։

Վասն որոյ յետ զայս այսպէս տնօրինելոյ առաքելաբար՝ աւանդէր յամենայն տեղիս ընդ որ անցանէր, պահել զհրամանս պատուիրեալս 'ի ժողովոյ առաքելոց, ձայնակից ունելով և զվկայութն Շիղայի՝ պատգամաբեր եղելոյ 'ի ժողովոյ անտի։ Նա այսու

օրինակաւ հաստատէին առաջին հաւատացեալքն, և յաւելուլ բազմութիւն նորադարձ հաւատացելոց ։ Յետ շրջելոյ այցելութեամբ և ընդ փռիւգիա և ՚ի կողմանս գաղատացւոց, այն ինչ կամէին դեգերել այլ ևս ՚ի սահմանս ասիոյ, գաղտնի տեսչութիւն հոգւոյն որոյ ոչ թողացոյց նոցա անդ քարոզել ՚ի ժամուն . զի այն ինչ հասեալ մօտ ՚ի միւսիա՝ ձեռնէին անցանել ՚ի բիւթանիա, ոչ յաջողեաց նոցա հոգին Յ̃ի ք̃ի . այլ հարկ եղև նոցա անցանել ընդ միւսիա, և իջանել ՚ի տրովադա . ուր իմացան զկամս ա̃ծ՝ թէ յո ունին երթալ աւետարանել ։ Վասնզի տեսիլ երևեցաւ անդ պօղոսի գիշերայն . այր ոմն մակեդոնացի կայր աղաչէր զնա, և ասէր, անցեալ ՚ի մակեդոնիա՝ օգնեսցես մեզ ։ Իսկ իբրև զտեսիլն ետես՝ ասէ ո̃րն ղուկաս պատմօղ բանիցս, վաղվաղակի խնդրեցաք ելանել ՚ի մակեդոնիա, տեղեկացեալ թէ հրաւիրեաց զմեզ ո̃ր աւետարանել նոցա ։ Որով յայտ առնէ ղուկաս, թէ՛ և ինքն էր մին ՚ի գլխաւոր աշակերտաց և ՚ի գործակցաց պօղոսի անդստին ՚ի մեծէն անտիոքայ ասորւոց . և ՚ի ժամանակին յայնմիկ գտեալ ՚ի կողմանս ասիացւոց կամ ՚ի նմին իսկ ՚ի տրովադա քաղաքի, պատուէր ընկալաւ ՚ի պօղոսէ գալ ընդ իւր յառաջիկայ գործ կարևոր ։

Արդ նաւարկեալ պօղոսի և շիղայի՝ տիմոթեայ և ղուկասու ՚ի տրովադայ արևելից, դէպուղիղ եկին ՚ի սամոթրակէ ելլադայ՝ որ է յարևմուտս, և ՚ի վաղիւ անդր ՚ի նոր քաղաք՝ այն է նէապօլիս պեղոպոննիդայ . և անտի ՚ի փիլիպպուս, որ է առաջին մասն աշխարհին մակեդոնացւոց՝ քաղաք կողոնիա, այսինքն գաղթականութիւն հռովմայեցւոց հաւաքեալ ՚ի տեղեաց լցելոց մարդաշատութ̃բ ։ ՚Ի քաղաքի անդ դադարեալ պօղոսեանց աւուրս ինչ, յաւուր շաբաթու առաւել երևելի ընծայեցին զանձինս . զի ելեալ արտաքոյ քաղաքին առ գետափն՝ մատուցին զպաշտօն աղօթից . և ապա նստեալ խօսէին զբանն ա̃յ առ ժողովեալ կանայսն ։ ՚Ի մէջ նոցա կին ոմն ազնուական՝ վաճառօղ ծիրանեաց՝ լիդիա անուն թիւատիրացի՝ երկիւղած յա̃յ, ՚ի ներգործելոյ շնորհայն ա̃յ՝

՚ի բոլոր սրտէ անսայր խօսիցն պօղոսի . և հաւատա-ցեալ մկրտեցաւ ամենայն տամբ իւրով . և բռնադա-տեալ տարաւ զպօղոսեանս ագանել ՚ի տուն իւր ։

Եւ եղև՝ զի օր ը̅ օրէ յելանել պօղոսեանց ՚ի տե-ղին սահմանեալ վասն աղօթից , դէպ լինէր նոցա ՚ի քաղաքէ անտի աղախին մի̅ դիւահար՝ հարեալ յայսոյն պղծոյ , որ կոչէր հարցուկ , այն է ը̅ յունա-կանին պիւթոն կամ պիւթոնիսա . իբր զի դևն որ ՚ի նմա՝ ձևանայր որպէս պատգամախօս ապողոնի և այլոց դից , և խօսէր ըղձութիս և գուշակութիս ը̅ ըղձից հարցողացն զբախտից իւրեանց , և կամ զայ-լոց իրաց . և այսպիսի մոլեգնութի̅ այսահարութե̅ աղախնոյն՝ տայր տերանց նորա ստանալ շահս բա-զում ՚ի ռամկէն . զի ընչիւք լինէր պատասխանա-տուութի̅ ըղձութե̅ց ։ Արդ այսահարն այն բռնադա-տեալ ՚ի ներքուստ՝ ՚ի բազում աւուրս աղաղակէր զկնի սրբոյն պօղոսի և ընկերաց նորա՝ ասելով , արքս այս ծառայք ա̅յ բարձրելոյ են , որ պատմեն ձեզ ըղ-ճանապարհս փրկութե̅ ։ Եւ զի մի̅ կարծեսցի , թէ այն բան այսահարին իցէ համդոյն այլոց ստութե̅ց դիւին , կամեցաւ պօղոս յայտ առնել զզօրութիւնն ք̅սի՝ որ բռնադատէր զնա վկայել ճշմարտութե̅ն . վասն որոյ որպէս ձանձրացեալ ընդ չարախօսութի̅ն դիւին՝ սաստեաց ՚ի նա հրապարակաւ , և ասէ . պա-տուիրեմ քեզ յանուն Յ̅սի Ք̅սի ելանել ՚ի դմանէ . և ել այն ՚ի նմին ժամու . և զգաստացաւ կինն բոլո-րովին , և ոչ ևս ուժէր առնել զառաջին գործս ըղ-ձապատումն լինելոյ ։

Իբրև տեսին տեարք նորա , եթէ հատաւ յոյս շա-հի նոցա , ՚ի բարկութե̅ բրդեցան , և ամբոխ արարեալ՝ ձգեցին զպօղոս և զշիղա հրապարակաւ առ իշխանսն . և նոքօք ածին զնոսա առ զօրագլուխս հռովմայեց-ւոց , ամբաստան լինելով թէ սոքա արք հրէայք ե-կեալ են ՚ի խռովել զքաղաք մեր , և պատմել մեզ օրէնս՝ զոր չէ արժան մեզ ընդունել . զի հռովմայե-ցիք եմք ։ Յայնժամ զանգիտեալ զօրագլխաց յամ-բոխէ անտի՝ պատառեցին զհանդերձս իւրեանց , և հրամայեցին գան հարկանել զառաքեալսն . մինչև լի

վիրօք արկին զնոսա 'ի բանտ. և պատուիրեցին բանտապետին ամենայն զգուշութե̃ պահել զնոսա: Եւ նա արկ զնոսա 'ի ներքին բանտն, և զոտս նց̃ պնդեաց 'ի կոճղս: Եւ 'ի կալ պօղոսի և շիղայի յաղօթս գիշերի օրհնութե̃, մինչդեռ ունկն դնէին նոցա կալանաւորքն, յանկարծակի շարժեցաւ բանտն 'ի հիմանց. և բացան ինքնին դրունքն ամենայն, և ամենեցուն կապանքն լուծան: Յայնժամ ընդոստուցեալ բանտապետին 'ի քնոյ, ընդ տեսանելն բացեալ ըղդրունս բանտին, ձգեաց զսուսեր, և կամէր անձնասպան լինել, կարծելով փախուցեալ զկապեալսն: Գոչեաց առ նա պօղոս մեծաձայն. մի ինչ չար առներ անձինդ, զի մեք ամենեքին աստ եմք: Լոյս առեալ ճրագ՝ ընթացաւ 'ի ներքին բանտն. և պակուցեալ ընդ իրսն՝ անկաւ առաջի պօղոսի և շիղայի. եհան զնոսա արտաքս, և ասէ. տեարք զի՞նչ պարտ է ինձ առնել, զի կեցցէ անձն իմ տ̃վ ձերով: Եւ նոքա ասեն. հաւատա 'ի տ̃ր Յս̃ Քս̃ փրկիչ բոլորից, և կեցցես դու և ամենայն տուն քո. և խօսեցան նմա և ընտանեաց նորա զբանն տ̃ն: Եւ նորա առեալ 'ի նմին ժամու՝ լուաց զվէրս նց̃. և անդէն մկրտեցաւ ինքն և իւրքն առ հասարակ. եդ առաջի նոցա սեղան, և ուրախ եղև ամենայն տամբն:

Իբրև այդ եղև, զօրագլուխքն՝ որ ոչ գիտէին զեղեալսն, այլ միայն կամէին զփութանակի ելս պօղոսեանց 'ի քաղաքէն, զի դադարեսցէ յոյզ ամբոխին, առաքեցին առ բանտապետն զնուիրակս իւրեանց, այսինքն զպաշտօնեայս զինուորականս (որ և ռմկ. նէֆեր կոչին), և ասեն. արձակեա զարսդ զայդոսիկ: Իսկ 'ի պատմել բանտապետին զայն բան, և յասելն ցպօղոս, ելէք և երթայք խաղաղութե̃, ետ պատասխանի պօղոս. ապաքէն և մեք հռովմայեցի եմք, և զի՞արդ առանց հարցափորձի գան հարեալ զմեզ հրապարակաւ որս անմեղս հռովմայեցիս՝ արկին 'ի բանտ. և այժմ լռելեայն հանեն զմեզ. ո՛չ այդպէս, այլ եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: Զայս ասաց, զի միանգամայն ահ և դուլթ արկցէ 'ի սիրտս նոցա. ցուցցի անմեղութե̃ իւրեանց հրապա-

բակաւ, և ունիցի ազատութի՛ և համարձակութիւն քարոզութե՛ 'ի վիճակի հռովմայեցւոց ։ Ազդ եղև զօրագլխաց բանն. և նոքա զահի հարան 'ի լսել անդ՝ թէ հռովմայեցիք են յանպարտս տանջեալքն. մի՛ արդեօք բողոք լիցի 'ի դուռն կայսեր, և խնդրեանք պարտաւորեսցին. վասն որոյ և եկեալ անձամբ ողոքելով հանին 'ի բանտէն, և աղաչեցին գնալ 'ի քաղաքէն ։ Եւ եղեն պօղոսեանց՝ մտին 'ի տուն լիդիայ. ուր տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, և չոքան մեկնեցան 'ի քաղաքէ անտի ։

## ԳԼ. Ի.

Քարոզութիւն պօղոսի 'ի թեսաղոնիկէ, 'ի բերիա, և յաթէնս ։

* Եւ շրջեալ ընդ ամփիպօլիս և ընդ ապողոնիա, եկին 'ի թեսաղոնիկէ ‖, ևն. (գործ. ժէ. 1 ։)

Յետ սերմանելոյ պօղոսի զբանն կենաց 'ի քաղաքին փիլիպպեցւոց՝ բանտարկութե՛ համբերձ, հարկեցաւ չուել անտի ընկերօք իւրովք. և անցեալ քարոզութե՛ ընդ ամփիպօլիս (որ է ամկ. սէրէզ), և ընդ ապողոնիա (ամկ. պօլինէ), եկին 'ի թեսաղոնիկէ (այն է սէլանիկ ,) ուր կայր բազմութի՛ հրէից. վասն որոյ պօղոս եմուտ ըստ սովորութե՛ 'ի ժողովրդանոց նոցա, և շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա 'ի գրոց, թէ Յս է քս՝ որում սպասէին, և 'ի նմա կատարեցան ամենայն բանք մարգարէիցն ։ Ոմանք հաւանեցան և աշակերտեցան պօղոսի և շիղայի. այլ առաւել դարձան առ տր յոլովք 'ի հեթանոսաց, որպէս և 'ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք ։

Ընդ որ նախանձեալ չարասիրտքն 'ի հրէից՝ ամբոխ արարին 'ի դահճկաց անօրինաց. և կուտեալ

առ ապարանսն յաստիճնի ուրումն երևելի առն՝ առ որում վանս կալեալ էր առաքելոց, խնդրէին զնո ածել յատեան հրապարակին: Այլ չգտեալ զնոսա 'ի տան՝ քարշէին զյասոն և զոմանս յեղբարց առ քաղաքապետսն, բողոք բարձեալ՝ թէ խռովիչք աշխարհի հասեալ կան և 'ի քաղաք այսր, և իջևանեալ առ յասոնի, հակառակ կայսեր թագաւոր զոմն հռչակեն Յն անուն: Իսկ 'ի զայրանալ խռովութեանց՝ իբրև ոչինչ վճարէր, առեալ քաղաքապետաց երաշխաւորութիւն առ 'ի յասոնայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա, և զպօղոս և զշիղա խնդրէին: Բայց եղբարք փախուցին զնոսա գիշերայն՝ երթալ 'ի բերիա, որ և պիռաբերիա (այժ. պօյէր). ուր կային հրեայք ազնուականք և բարեբարոյք և իմաստունք:

Սան որոյ իբրև եկն պօղոսեանց մտանել 'ի ժողովարան նոցա, և քարոզել, ընկալան զբանն ամենայն յօժարութբ. և հանապազ քննելով զգիրս՝ բազումք 'ի նոցանէ հաւատացին 'ի քն. որպէս և 'ի հելլենացւոց տեղւոյն՝ յարանց և 'ի կանանց զգաստից ոչ սակաւք: Այլ իբրև լուան չարանախանձքըն 'ի հրէից թեսաղոնիկեայ՝ եկին փութանակի 'ի բերիա յուզել և անդ ժողովս ընդդէմ պօղոսի. սմին իրի եղբարքն հանին զառաքեալն արտաքոյ քաղաքին մինչև 'ի ծովեզրն. և անտի առեալ տարան զնա մինչև յաթէնս. և զի շիղա և տիմոթէոս մնացեալ էին 'ի բերիա, պատուէր ետ պօղոս բերողաց զնքն՝ զի և զնոսա փութով յուղարկեսցեն առ ինքն. քանզի լաւ համարէր 'ի ժամուն չցրուիլ յիւրմէ գործակցաց իւրոց: Այս ընթացք էին երանելի առաքելոյն ընդ ամենայն տեղիս՝ ընդ որ անցանէր. բորբոքել զհուր զարկեալն 'ի տնէ յերկիր, և հալածիլ ամենայն ուստեք առաւել 'ի հրէից քան 'ի հեթանոսաց. մեծապէս բարեբարել ամենեցուն, և ոչ նուազ չարիս կրել, և յայսր ամենայնի վերայ՝ ոչ լքանիլ, այլ առաւել զօրանալ 'ի տր. և պարզաբար՝ մարմնով և ոգւով չափ չարչարիլ, և զհոգիս շահել:

Մինչդեռ սպասէր պօղոս յաթէնս՝ գալստեան շիղայի և տիմոթեայ անդր, եռայր հոգի նորա 'ի

նմա զայրացմամբ, տեսեալ զայնպիսի իմաստուն քաղաք 'ի խոր խաւար կռապաշտութեան : Ապա ըստ սովորութեան սկիզբն արարեալ նախ 'ի Հրէից՝ խօսէր նոցա զբանն տն, և ապա հրապարակաւ քարոզէր հեթանոսաց՝ որոց և պատահէին նմա : Յայնժամ սկսան ոմանք 'ի փիլիսոփայից յունաց յեպիկուրեան և ստոյիկեան աղանդոյ՝ դիմախօսել վարդապետութեան նր. և ոմանք ասէին, զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսել, որպէս թռչուն օտար հասեալ յանդաստանս մեր 'ի քաղել և 'ի բառնալ զ'ի խոր սերմանեալ դենս կրօնից մերոց. իսկ այլք՝ թէ թուի պատմել նոր և օտար ած զոհն անլուր 'ի մէնջ. քանզի զՅն և զյարութիւն աւետարանէր :

Սովին հետաքննութեամբ առեալ ածին զնա 'ի մեծ ատեանն դատաւորաց իւրեանց իմաստնագոյն կարծեցելոց, որոց դատարանն կոչիւր արիսպագոս կամ արէոս բագոս, այսինքն արեսի աւան. և ասէին, կամիմք իմանալ՝ զի՞նչ իցէ այդ քո նորալուր վարդապետութիւն. քանզի և աթենացիք առ հասարակ և եկքն օտարք 'ի նորասիրութիւն զլխովին զակատեալ էին : Իսկ ըստ նմին եգիտ նոցա պօղոս առաքելական ճարտարութեամբ զնոր իմն զարմացուցիչ բոլորեցուն. քանզի կացեալ 'ի մէջ արիսպագին՝ սկսաւ ատենախօսել, և ասել. Արք աթենացիք՝ ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ զձեզ, այլ առանց գիտելոյ ձեր՝ թէ ո՞ր այն իցէ ճշմարիտ պաշտելին. արդ շրջեալ իմ և տեսեալ զմեհեանս և զդիս բազմաթիւս յերկրի ձերում, ոչ գտի 'ի նոսա զած ճշմարիտ, այլ զ'ի մահկանացու մարդկանէ առեալս 'ի պաշտօն ածական՝ դրօշեալս 'ի փայտից և 'ի քարանց. բայց զմի և եթ բագին կամ զսեղան գտի դավելի՝ առանց իրիք դրօշուածոյ և մարդկային ձեռագործի, յորում արձանագրեալ էր այս բան խորհրդաւոր. Անծանօթի այ. յայտ է թէ միոյ միայնոյ ճշմարտին այ, որ է աներևոյթ, անմարմին, անհասանելի և անճառելի, որպէս անկ է լինել իսկութեան ածութեան. և ահա զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ : Իսկ կարի իսկ քաջ. զի և

դուք իմաստունքդ և իմաստասէրքդ ոչ անգիտանայք զայս, թէ Ճշմարիտն ա՟ծ արարիչ աշխարհի և որոց յաշխարհի, նա ինքն երկնի և երկրի է տ՟ր. ոչ ՚ի ձեռագործ տաճարս ամփոփի, և ոչ ՚ի ձեռաց մարդկան կազմի կամ պաշտի իբրև կարօտ իմիք. ուր նա ինքն է՝ որ տայ ամենայնի կեանս և շունչ և զամենայն պէտս. և գործովք իւրովք ՚ի սկզբանէ և այսր ուսուցանէ զմարդիկ՝ խնդրել և գտանել զնա. այն՝ որ և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ՚ի մէնջ. զի նովաւ կեամք և շարժիմք և եմք. որպէս և ոմանք ՚ի ձերոց բանիբուն քերթողաց վկայեցին, թէ նորա և ազգ իսկ եմք, ունելով զնմանութ՟ի ա՟յ հանճարաւոր մտօք և անձնիշխան կամօք։ Եւ զի այս այսպէս, չէ արժան դրօշելոյ ՚ի ձեռաց մարդկան՝ ընծայել զա՟ծական նմանութ՟ի։ Այլ ա՟ծ որ անցաւ է մարդասիրութ՟բ, անտես արարեալ զառաջնով անգիտութ՟ս որդւոց մարդկան, այժմ պատուիրէ ամենայն ումեք դառնալ յապաշխարութ՟ի. ապա թէ ոչ՝ հաստատեալ է նորա զօր երևելի, յորում ունի դատել զաշխարհս արդարութ՟բ՝ ՚ի ձեռն առն, զոր կացոյց միջնորդ ընդ ա՟ծ և ընդ մարդիկ, առաքեալ զնա ՚ի փրկութ՟ի տիեզերաց, և սահմանեալ նովաւ ձգել զամենեսեան ՚ի հաւատս ճշմարտութ՟ն, յարուցեալ զնա ՚ի մեռելոց։

Իբրև լուան զյարութ՟ի մեռելոց, ոմանք ծաղր առնէին. զի ոչինչ կամէին ընդունել ՚ի վեր քան զբնութ՟ի. իսկ այլք ասէին՝ լուիցուք ՚ի քէն վասն այդորիկ միւսանգամ. զի մի՛ տգէտ երևեսցին իբրև անկարօղս հասու լինել գերագոյն վարդապետութ՟ն. քանզի ոչինչ նուազ քան զհրէայս՝ փիլիսոփայք և աշակերտք նո՟ց սիրօղք էին փառաց մարդկան, քան փառացն ա՟յ։ Միայն ոմանք ոմանք ըստ ազդելոյ ա՟ն ՚ի սիրտս նոցա՝ յարեցան ՚ի պօղոս, և հաւատացին ՚ի ք՟ս. յորս երևելի էր մեծն դիոնեսիոս արիսպագացի՝ գլուխ երկոտասան դատաւորաց արիսպագին, և կին մի անուն դամարիս, և այլք ընդ նոսա։ Սա նախագոյն էր աշակերտեալ և մեծանունն յւեթէոս կամ յերոթէոս՝ վարդապետին արիսպագացւոյն։

Թող զանստոյգ կարծիս ոմանց 'ի վարդապետաց, թէ նշանակեալն դամարիս իցէ կին նորուն իսկ դիո-նեսիոսի: Իսկ թէ 'որն դիոնեսիոս լեալ իցէ եպիս-կոպոս աթենացւոց, եւ անդ կատարեալ, կամ ըստ այլոց երթեալ քարոզութե̃ 'ի Գաղղիա՝ անդէն իցէ նահատակեալ, տես 'ի վարս ս̃րբց:

## ԳԼ: Օ.

Գործք պօղոսի 'ի կորնթոս. եւ վերադարձն այցելութե̃ն նորա 'ի կող-մանս ասիայոյ. ուր եւ յաղագս ապեղեսի կամ ապողոսի:

*Յետ այսորիկ մեկնեալ պօղոսի յաթենացւոց անտի եկն 'ի կորնթոս ‖, եւ̃. (գործ. ժը̃. 1:)

Շատ համարեալ երանելի առաքելոյն առ ժամն հաստատել զարմատ ճշմարիտ ա̃ծպաշտութե̃ եւ քրս̃ա-կան հաւատոց 'ի մէջ աթենացւոց սնքացելոց անու-ամբ իմաստութե̃ աշխարհի այսորիկ, յետ աւուրց ել անտի, եւ եկն 'ի կորնթոս: Անդ գտաւ յայնժամ պոնտացի ոմն հրեայ՝ ակիւղաս անուն, եւ պրիսկիղա կին նորա, որք հաւատացեալ եւ մկրտեալ էին 'ի հռոմ՝ թերեւս 'ի ս̃րբյն պետրոսէ. այլ յելանել հրա-մանի 'ի կղօդեայ կայսերէ՝ 'ի բաց հանել 'ի հռո-մայ զամենայն հրեայս, եկեալ էր նոցա յիտալիոյ 'ի կորնթոս՝ անցանել յարեւելս: Ի սոսա յարեցաւ անդ առ ժամանակ մի պօղոս. եւ զի համարուեստ էր, քանզի էին եւ նոքա արուեստիւ խորանակարք՝ իմն վրանաշէնք 'ի փերթից մորթոյ, եղեւ ընդ նոսա եւ գործէր հայթհայթել զկեր պարէն, զի մի ծան-րասցի նոցա: Այլ շաբաթէ 'ի շաբաթ խօսէր զբան ա̃ն 'ի ժողովրդանոցն հրէից, որպէս եւ 'ի հրապարա-կի հաւանեցուցանէր զհրեայս եւ զհեթանոսս անխը-տիր. միանգամայն եւ սպասէր անդ գալստեան շիղայի

և տիմոթէոսի. որ և 'ի նոյն աւուրս հասին անդր 'ի մակեդոնիոյ ։

Յայնմհետէ գործակցութ՟ նոցա ստէպագոյնս դնէր պօղոս վկայութի՟ հրէիցն, թէ քս՟ն՝ զոր խնդրէք, է նոյն ինքն Յս՟՝ զոր մեքն քարոզեմք ։ Իսկ յընդդէմ դառնալ նոցա և 'ի հայհոյել, թօթափեաց զձորձս, և ասէ ցնոսա. քաւեալ եմ ես, յայսմհետէ 'ի հեթանոսս երթամ. և առ որոշելոյ զբնակութի՟ իւր 'ի հրէից՝ չոգաւ վանս կալաւ առ ումեմն հաւատացելոյ 'ի հեթանոսաց առն երևելւոյ, որում անուն էր տիտոս յուստոս (զոր չէ պարտ շփոթել ընդ տիտոսի առաքելոյ կրետացւոյ). և ապարանք նորա ոչինչ հեռի էին 'ի ժողովարանէ հրէից ։ Յայնժամ և գլուխ ժողովարանին՝ որ կոչեցաւ լատին բարբառով կրիսպոս, հաւատաց 'ի տր՟ ամենայն տամբ իւրով. և յետ նորա բազումք 'ի կորնթացւոց անսացին հաւատոց, և մկրտեցան ։ Եւ զի մարթ էր լինել երկիւղի խռովութե՟ և հալածանաց՝ ասէ տր՟ 'ի տեսլեան գիշերոյ ցպօղոս. մի երկնչիր, քարոզեա աներկիւղ և անխափան. քանզի ես ընդ քեզ եմ, և ոչ ոք կարասցէ զդէմ ունել և չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում 'ի քաղաքիս յայսմիկ. և այնպէս նստաւ անդ տարի մի և կէս, և ուսուցանէր նց՟ զբանն այ՟ ։

Եհաս այնուհետև ժամանակ հալածանաց. քանզի յաւուրս անթիհիւպատութե՟ գաղլիոնի յաքայիա՝ կալան հրէայք զպօղոս, և ածին յատեան նորա. ասէն, արտաքոյ օրինաց մերոց գնայ սա, և պատրէ զմարդիկ 'ի նորօրինակ պաշտօն այ՟ ։ Կարճեաց գաղլիոն զդատն, և ոչ իսկ պօղոսի ետ խօսել. եթէ չարագործութի՟ ինչ ասէ, վկայելիք ո՛վ հրէայք զառնեդ- ղայդմանէ, առնէի ձեզ դատ. իսկ վասն խնդրոց օրինաց ձերոց դուք ձեզէն տեսէք, զի ոչ կամիմ դատաւոր լինել այդպիսի բանից. և այնպէս մերժեաց զնոսա յատենէն անտի ։ Եւ ոչ իսկ փոյթ կալաւ վասն սոսթենեսի այլոյ ժողովրդապետի հրէից, զոր հարկանէին առաջի ատենին՝ յոյնք բնակիչք տեղւոյն՝ որպէս ձեռնտու խռովութե՟ 'ի կողմն պօղոսի, յայտ

է թէ 'ի գրգռութենէ հրէից . և այնպէս ցրուեցաւ ամբոխն ։

Այս գաղիոյն փոխանակ բռնելոյն աքայեցւոց՝ էր ըստ ոմանց եղբայր սենեքայ փիլիսոփայի վարժապետի ներոնի կայսեր, այլով անուամբ ղուկիոս յունիոս կոչեցեալ, և որդեգրեալ գաղիոյնի ուռեմին մեծի իշխանի . կամ ըստ այլոց էր նոյն ինքն գաղղիոյն իշխանն՝ մին 'ի մտերիմ բարեկամաց սենեքայի . և յայսպիսի պատճառաց ասի լեալ ընտանութիւն իմն ընդ պօղոս և ընդ սենեքա՝ թղթակցութբ՟ առ միմեանս . ըստ որում նշանակեն և ոմանք 'ի հին հարց . որպէս և ոմանք 'ի յետնոց 'ի ծածուկ քրիստոնեայ անուանեցին զսենեքա . այլ այս ամենայն ոչ միայն անստոյգ գտանի, այլ և ընդ սուտ աւանդութիւնս մտացածինս դրի առ ամենայն իմաստունս քննիչս ։

Արդ յետ անցից առժամայն խռովութեան շիջելոյ՝ մնացեալ պօղոսի այլ ևս աւուրս բազումս 'ի կորնթոս, ետ 'ի մտի դառնալ այց առնել վերստին հաւատացելոցն ասիացւոց . վասն որոյ մտեալ 'ի նաւ՝ կամէր երթալ յասորիս . ուղեկից եղեն նմա և ակիւղաս և պրիսկիղա մինչև յեփեսոս ։ Յայսմ վայրի սրբ՟ն ղուկաս յաւելու 'ի պատճառ նաւարկութեանս զայն բան, * փոքրել զգլուխ 'ի կենքրեայ . քանզի ուխտադիր էր ||. որ հայի յանձն պօղոսի . թէպէտ և եղեն ոմանք՝ որ 'ի վերայ ակիւղայ իմացան, և այլք 'ի վերայ երեցունց ուղեկցաց միանգամայն ։ Արդ՝ ուխտադրութիւնս այս էր ըստ գրելոցն 'ի գիրս թուոց, առանձին իմն արարողութբ՟ ըստ օրինակի նազովրացւոց՝ ուխտաւոր կոչեցելոց . իբր զի եթէ առ ջերմեռանդն կրթութբ՟, և եթէ առ կամաւոր ապաշխարութբ՟՝ այր ոք ինքնակամ հրաժարեալ յըմպելեաց արբեցութն՟, և 'ի խաղողոյ ևս . որպէս և առանց սափրելոյ զգլուխ, մինչև ցսահմանեալ ժամանակ ուխտի իւրոյ . և ապա հանդիսապէս պատարագս նուիրեալ այ՟, և սրբեալ՝ փոքրել զհերս ։ Այլ թէ յորմէ առթէ, և երբ ուխտեալ էր պօղոսի զայսպիսի ուխտ, զոր այժմ ասի հանել 'ի գլուխ, անգիտելի է առ մեկնիչս . ունիմք տեսանել զկնի զբուն

ուխտաւորութիւն պօղոսի կատարեալ 'ի տաճարն
երուսաղեմի. այլ առաջնկայս եղեւ 'ի վերայ ճանա-
պարհի 'ի կենքրա նախքան զհասանելն յեփեսոս. զի
էր առանձին իմն օրինական սրբութ̃ի. որպէս վասն
մերձենալոյ 'ի մտանել, եւ̃ն.

Արդ իբրեւ եհաս առաքեալն ուղեկցօքն յեփե-
սոս, եթող զնոսա անդ. եւ ինքն հարեւանցի մտեալ
'ի ժողովարանն հրէից՝ խօսէր ընդ նոսա. եւ թէպէտ
աղաչեցին զնա եփեսացիք կալ առ նոսա զբազում
ժամանակս, այլ նա հրաժարեաց, եւ խոստացաւ
գալ առ նոսա յայլում նուագի կամօքն այ̃. Ապա
ելեալ անտի՝ գնաց 'ի կեսարիա պաղեստինոյ. եւ
տուեալ ողջոյն եկեղեցւոյն՝ էջ յանտիոք ասորւոց.
եւ եղեալ անդ ժամանակ ինչ՝ դարձեալ եւ շրջել
կարգաւ ընդ գաղատիա եւ ընդ փռիւգիա հաստա-
տել զամենայն աշակերտեալսն.

Յայնու ժամանակաւ եկեալ էր յեփեսոս հրեայ
ոմն ապողոս կամ ապեղէս անուն աղեքսանդրացի,
(զոր կարէ ոք շփոթել ընդ փիլոն իմաստասիրէր ա-
ղեքսանդրացի փայլեալ 'ի նմին ժամանակի), այր
ճարտարաբան, եւ զօրաւոր գրովք: Սա էր տեղե-
կացեալ ճանապարհին տ̃ն, եւ եռայր հոգւով, խօսէր
եւ ուսուցանէր ստուգութ̃բ վասն Յ̃սի, թէ նա է
ակնկալեալն ք̃ս. բայց չէր ամենայնիւ հասու իրայն,
այլ միայն գիտելով զմկրտութիւն յովհաննու՝ հա-
մարձակ քարոզէր զոր գիտէրն. Լուեալ 'ի նմանէ
ակիւղայ եւ պրիսկիղեայ՝ առին զնա առ իւրեանս,
եւ ճշմարտագոյնս պատմեցին նմա զաւետարանն
ք̃սի. Եւ իբրեւ կամեցաւ նա գնալ յաքայիա մինչեւ
'ի կորնթոս, գրեցին եղբարք առ աշակերտս ընդու-
նել զնա. Որ իբրեւ եհաս անդր, բազում նպաստ
լինէր հաւատացելոյն շնորհօք տ̃ն. քանզի պնդագոյն
զհրէայսն յանդիմանէր հրապարակաւ, ցուցեալ
գրովք՝ թէ Յ̃ս է ք̃ս. Եւ այնչափ մեծացաւ զկնի
վաստակ եւ անուն ապողոսի, մինչեւ հաւասարել ո-
մանց զնա պօղոսի եւ պետրոսի 'ի մէջ կորնթացւոց.
այլ նա 'ի չափու ունէր զանձն խոնարհութ̃բ.

# ԳԼ. Լ.

## Երթեալն առաքելոյն պօղոսի յեփեսոս ։

** Եւ եղեւ մինչդեռ ապօղոսն ՚ի կորնթոս էր ||, եւն.
(գործ. ժԹ. 1։)*

՚Ի ժամանակին՝ յորում ապօղոս, նոր աշակերտ պայծառացուցանէր զեկեղեցի կորնթացւոց զհիմն֊արկեալն ՚ի պօղոսէ առաքելոյ, նա ինքն պօղոս յետ շրջելոյ զվերին կողմամբքն ասիացւոց մինչեւ ՚ի գաղատիա՝ եկն էջ ըստ խոստման իւրում յեփեսոս՝ առնել անդ զժամանակ ինչ։ Ուր գտեալ զոմանս ՚ի նոր աշակերտելոց իբրու ըստ հետեւողութեան առաջին ընթացից ապօղոսի, ասէ ցնոսա. միթէ ըն֊կալա՞յք զհոգի՛ն սբ ՚ի հաւատալ անդ ձերում։ Նոքա ասեն պարզութ՟բ. եւ ոչ իսկ լուեալ է մեր՝ թէ կայ֊ցէ կա՞մ տացի ուրեք հոգի՛ն սբ։ Եւ ասէ. իսկ յի՞նչ մկրտեցայք. նոքա ասեն. ՚ի յովհաննու մկրտութի՛ն։ Յայնժամ ուսոյց նոցա առաքեալն, թէ յովհաննէս լոկ մկրտութե՟ ապաշխարութե՟ քարոզեաց ժողովրդեանն ՚ի պատրաստութե՟ ընդունելոյ զմկրտութե՟ ք՟սի հոգւովն սրվ. վ՟ս որոյ եւ ասէր, զի որ գալոցն է յետ նր՝ ՚ի նա հաւատասցեն, այսինքն ՚ի Յ՟ս ք՟ս. եւ իբրեւ լու֊ան, մկրտեցան ՚ի նմանէ ՚ի մկրտութիւն ք՟սի. եւ ՚ի դնել պօղոսի զձեռն ՚ի վերայ նոցա՝ այսինքն ՚ի նշան դրոշմելոյ զնոսա, եկն հոգին սբ ՚ի վերայ նոցա. եւ սկսան խօսել լեզուս եւ մարգարէանալ. եւ էին նո֊քա արք թուով իբրեւ երկոտասան։

Յետ այսորիկ զամիսս երիս յամենայն շաբաթս մտեալ պօղոսի ՚ի ժողովարան հրէից, քարոզէր հա֊մարձակ զաւետարանն. այլ զի ետես զբազումս ՚ի նոցանէ խստասիրտս եւ անլուրս, մեկնեալ ՚ի նոցա֊

նէ՝ որոշեալ զաշակերտեալսն Քսի, և համապազ ու-
սուցանէր 'ի գիւանին տիւրանեայ ուրումն. այն էր
տեղի առանձին որպէս դպրատուն 'ի տան առն նշա-
նաւորի՝ 'ի մէջ քաղաքին կամ յարուարձանս և 'ի
գիւղս նորա. ուր անքոյթ վարդապետեաց առա-
քեալն երկամեայ ժամանակօք, մինչև ամենայն բնակ-
չացն ասիացւոց՝ հրէից և հեթանոսաց՝ կարող լինել
լսել զբանն տն, և դառնալ յոլովից 'ի հաւատս
Քսի. քանզի և ոչ սակաւ նշանս առնէր ած 'ի ձեռն
պօղոսի. մինչև 'ի տանել զ'ի քրտանէ թաշկինակս
կամ զվարշամակս նորա առ հիւանդս, առողջանալ
նոցա, և այսոց չարաց հալածիլ.

Յայնժամ համարձակեցան և եօթն որդիք սկևեայ
ուրումն քահանայապետի հրէից յեփեսոս՝ շրջիլ
տանէ 'ի տուն, և անուանել 'ի վերայ այսահարաց
զանուն տն Յսի, եթէ փորձելով ինն յանդգնութե
զզօրութիւնն Քսի, և եթէ կամելով ինն շահել ինչ
'ի զերծելոյն, և առաջի ամբոխին ցուցանել զին-
քեանս իբրև որդիս քահանայի օրինօք երդմնեցու-
ցիչս. քանզի ասէին ցդիւահարս. երդմնեցուցա-
նեմ զձեզ 'ի Յս՝ զոր պօղոսն քարոզէ: Տագնապեալ
դևին յանուանէն Յսի և առաքելոյ նորա պօղոսի,
չկարէր հանդարտել. բայց յանարժանութե երդմնե-
ցուցչացն վստահացեալ՝ ասէ. զՅս գիտեմ, և զպօ-
ղոս ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք. զայս ասացեալ 'ի
վերայ յարձակեցաւ նոցա այսահարն, և ըմբռնեալ
զերկոսեան 'ի նոցանէ՝ աքացի և բռնցի չարաչար
գանեաց զնոսա, և պատառոտեաց զհանդերձս և
զմարմինս նոցա գազանաբար. մինչև մերկս և վիրա-
ւորս փախչել նոցա 'ի տանէ անտի: Ի հնչել այսր
լրոյ ընդ ամենայն եփեսոս՝ անկաւ երկիւղ մեծ 'ի
վերայ ամենայն հրէից և հեթանոսաց. և մեծանայր
անուն տն Յսի, և աճէր թիւ հաւատացելոց, որք
գային և խոստովան լինէին եթէ հրապարակաւ և
եթէ 'ի ծածուկ զառաջին ընթացս իւրեանց խոտոր-
նակս. որպէս և կախարդք և դիւթք՝ բերէին զգիրս
և զծրարս իւրեանց, և այրէին առաջի ամենեցուն.
մինչզի գին գրեանցն ծախելոց 'ի հուր՝ համարեալ

լինէր 'ի ժամանակին արժել յիսուն հազար դահեկան արծաթի, կամ հինգհազար սկուդ ։ Քանզի յայտնի եղև ամենեցուն, թէ ոչինչ զօրութի̃ դիւական կամ հնարք դիւթական կարէ կալ առաջի անուանն Յի̃ ։

Երբև այսչափ հզօրացեալ տիրեաց յեփեսոս բանն ա̃յ, խորհէր պօղոս անցանել միւսանգամ յարևմուտս մինչև 'ի մակեդոնիա և յաքայիա, և ապա դառնալ յերուսաղէմ. յետ որոյ պարտ է ինձ ասէր ճանապարհ առնել մինչև 'ի հռովմ ։ Սովին խորհրդով առաքեաց առաջի իւր կանխաւ 'ի մակեդոնիա զտիմոթէոս և զերաստոս, և ինքն տակաւին դեգերէր յեփեսոս, և սպասէր պատեհ ժամու չուելոյ անտի ։ Եւ ահա յանկարծակի յարեաւ ամբոխ հալածանաց մեծ յերեսաց հեթանոսաց ։ Դեմետրիոս ոմն արծաթագործ՝ գործէր արծաթի բագինս, արձանս, զարդս և սպասս վասն հոյակապ մեհենի չ̃ծուհւոյն արտեմեայ յեփեսոս, որ և տխանա, կամ անահիտ կոչի. որով լինէր ինքեան և գործաւորաց նորա շահ մեծ ։ Այլ տեսեալ՝ թէ քարոզութ̃ք առաքելոյն բազումք 'ի բաց կացին 'ի պաշտամանց կռոց, և ծաղր առնէին զդիս ձեռագործս մարդկան, կոչեաց զգործակիցս իւր զգլխաւոր արուեստաւորս, և գրգռեաց զնոսա ընդդէմ պօղոսի, թէ նա ունայնացուցանէ զպաշտօն արտեմեայ և ամենայն դից, ընդ նմին հատանէ և զշահ մեր. զի ասէ՝ թէ յետ սակաւուց քակեսցի խոպան և մեհեանն արտեմեան ։ Յայնժամ առ հասարակ լսօղքն լի եղեն բարկութ̃բ, և սկսան աղաղակել. մեծ է արտեմիս եփեսացւոց. կուտեցաւ ամբոխ 'ի հրապարակս, և լցաւ քաղաքն խռովութ̃բ. և խնդրեալ զպօղոս, և ոչ գտեալ, դիմեցին 'ի տեսարան քաղաքին, և յափշտակեցին զգայիոս և զարիստարքոս մակեդովնացի զուղեկիցսն պօղոսի ։ Կամէր և պօղոս մտանել յամբոխն, բայց ոչ թողին աշակերտքն ։

Ոմանք և յասիապետաց, այսինքն յիշխանաց անտի ասիացւոց՝ որք վերակացու և հանդիսադիր էին տեսարանի գազանամարտութե̃ն և այլոց հանդիսա-

կամ խաղուց, բարեկամ գոլով պօղոսի՝ յղեցին առ նա և աղաչեցին, մի՛ տալ զանձն 'ի թեատրոն անդր (որ յունարէն թէատրոն կոչիւր). զի շփոթ և աղաղակ խառն էր յամբոխին, մինչև չգիտել բազմաց՝ թէ առ ինչ ժողովեալ իցեն: Կալան հեթանոսք և զաղեքսանդրոս ոմն յերևելեացն հրէից՝ իբրև ձայնակից պօղոսեանց, և ածին 'ի թեատրոնն իբրև զմի 'ի խռովեցուցչաց. և այն ինչ շարժեալ նորա զձեռն՝ կամէր ընդ անձին պատասխանի առնել, իմացեալ ամբոխին՝ թէ հրեայ է այրն՝ հակառակ դիցն պաշտաման, միաբարբառ սկսան աղաղակել իբրև ժամս երկուս. Մեծ է արտեմիս եփեսացւոց: Տեսեալ դպրապետի դենին հեթանոսաց՝ որ մեծն էր յիրաւագէտս նոցա, թէ 'ի զուր խռովեալ է քաղաքն, յառաջ մատեաւ, և խրատ ետ ամբոխին լռել և գնալ յիւրաքանչիւր տեղիս. զի ո՞չ գիտէ ասէ՝ զեփեսոս հռչակեալ մեծակառոյց մեհենիւ՝ մեծին արտեմեայ զոյգ և դիոսլիտեայ. և զի արքն՝ զորոց ամբաստան լինին, լսեմք զի ոչ զմեհեանն կողոպտեցին, և ոչ զդիսն հայհոյեցին, այլ միայն դեմետրիոս արծաթագործ իւրովք արուեստակցօք ունի ինչ բան ընդ նոսա, թո՛ղ առանձին յատեան երթիցեն դատաւորաց. և եթէ այլ ինչ խնդիր կայցէ, յօրինաւոր ժողովս վճարեսցեն անխռով. ապա թէ ո՛չ՝ կռիւդ այդ այսր աւուր՝ է լոկ յոյզ շփոթութեն առանց իրիք յանցանաց, և վայրապար վիշտ վտանգի մեզ և ձեզ. և այսպէս հանդարտեաց և արձակեաց զամբոխն: Իսկ թէ յի՞նչ միտս արժան իցէ իմանալ զասելն առաքելոյն, թէ 'ի գազանամարտի լեալ իցէ յեփեսոս, տես 'ի մեկնութեան թղթոց նորա:

# ԳԼ․ Բ․

Շրջելն պօղոսի վերստին 'ի մակեդոնիա, յելլադա, 'ի տրո-վադա, 'ի միտիլենէ, եւ 'ի միլետոն. եւ յայտնելն նորա երիցանց եփեսոսի զվերջին հրաժարումն իւր 'ի նոցանէ ։

* Եւ յետ դադարելոյ ամբոխին, կոչեաց պօղոս զաշակերտսն ‖, եւ ․ ( գործ ․ ի ․ ա ։ )

Ըստ յառաջագոյն խորհրդոյ իւրոյ՝ պօղոս ընդ-դադարել յեղակարծ շփոթից յեփեսոս՝ ել անտի, եւ շրջեցաւ 'ի մակեդոնիա՝ այց առնել աշակերտե-լոց, թողեալ որպէս կարծի՝ յայս նուագ փոխանակ իւր յեփեսոս զտիմոթէոս. այլ յետոյ կոչեաց զնա անդրէն 'ի գործակցութիւն իւր՝ 'ի տեղի տիտոսի, զոր թողեալ էր 'ի կրետէ, կամ յղեալ հեռագոյն 'ի քարոզութիւն. որպէս եւ զղուկաս եւ զայլսն՝ որք տարեալ էին աւետարանել 'ի յունաստան։ Ապա եկեալ եւ ինքնին պօղոս յելլադա՝ որ է մասն յու-նաստանի 'ի կողմանս աթենացւոց՝ արար անդ ամիսս երիս, եւ հաստատեաց եւ բազմացոյց զհաւատացեալս։ Եւ այն ինչ կամէր դառնալ յասորիս, եղեւ նմա դաւ 'ի հրէից. վասն որոյ փոխեաց զճանապարհ իւր, եւ անցեալ միւսանգամ ընդ մակեդոնիա՝ յուղի անկաւ անցանել յասիա ։

Եւ զճանապարհայն առաքեաց յառաջ քան զինքն 'ի տրովադա զոմանս յուղեկցաց եւ 'ի գործակցաց իւրոց, մնալ անդ ինքեան. ակն ունէր՝ թէ նաեւ տի-տոս հասցէ անդր յաւուրսն յայնոսիկ. եւ էին յա-ռաջագնացքն յասիա եւ 'ի տրովադա՝ սոսիպատրոս պիւռաբերիացի, արիստարքոս եւ սեկունդոս թեսա-ղոնիկեցիք, գայիոս դերբեացի, տիմոթէոս լիւստրա-

ցի կամ խնամացի, և ասիացիք տիւքիկոս և տրոփի-մոս ։ Եւ ինքն պօղոս առեալ ընդ իւր զղուկաս ան-տիոքացի և զայլ ևս քանի մի գործակիցս և պաշ-տօնեայս, յետ աւուրցն բաղարջակերաց նաւեաց 'ի փիլիպպեայ, և եհաս 'ի տրովադա յաւուրս հինգ . և անդ դադարեաց աւուրս եօթն ընդ յառաջագոյն առաքեալսն յիւրմէ ։

Եւ եղև յաւուր շաբաթու կամ 'ի կիւրակամտի՝ մինչդեռ ժողովեալ էին բեկանել զհացն կամ մա-տուցանել զսբ խորհուրդ պատարագի, պօղոս՝ քան-զի կամէր չուել անտի 'ի վաղիւ անդր, երկայնեաց զճառս վարդապետութեն և մխիթարութեն առ հա-ւատացեալսն՝ որ անդ, մինչև 'ի կէս գիշերոյն, և էին լապտերք բազումք 'ի վերնատանն՝ ուր էին ժո-ղովեալ ։ Իսկ մին երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝ որ նստէր 'ի վերայ պատուհանին յունկնդրութեն, յեր-կարել բանիցն նիրհեալ 'ի քուն թմրութեն, ան-կաւ յերրորդ յարկաց տանն 'ի վայր . զոր եկեալ գտին մեռեալ, և չփոթեցան ունկնդիրքն ։ Փութա-ցաւ էջ ինքնին և առաքեալն 'ի վայր . անկաւ զպա-րանոցաւ պատանւոյն, և առեալ զնա ընդ գիրկ՝ ասէ . մի խռովիք, քանզի ոգի սորա 'ի սմին է . որ էր ասել, կամ յետ մեռանելոյն՝ ահա այժմ դար-ձաւ անդրէն ոգի սորա, և կամ թէ մերձ էր յա-ւանդումն ոգւոյն, և տր շնորհեաց ինձ և ձեզ ըզ-կեանս նր . յորոյ երկաքանչիւրն էր մեծ սքանչելիք ։ Եւ այնպէս ածին 'ի վեր զպատանին կենդանի, և մխիթարեցան ոչ սակաւ ։

Յայնժամ առաքեալն տեսեալ զհանդարտութիւն սրտից բոլորեցուն՝ մատոյց զսբ խորհուրդն և հա-ղորդեցոյց զարժանաւորսն . նոյնպէս էառ զկնի և սակաւ ինչ կերակուր նոքօք համդերձ . և դարձեալ քարոզեաց մինչև յառաւօտն ։ Եւ ապա ողջոյն խա-ղաղութեն տուեալ՝ յուղի անկաւ ինքն ընդ ցամաք, և զուղեկիցսն յղեաց նաւու մինչև 'ի յասոն . ուր եմուտ ընդ նոսա 'ի նաւ, և եկն 'ի միտիլինէ . ու-տի նաւարկեալ հասին հանդէպ քիայ ( որ է սա-խըզ ), և անտի 'ի սամոս, և անտի 'ի մելիտոն,

միով միով աւուրբք ։ Մերջինս այս նաւահանգիստ ոչինչ հեռի էր յեփեսոսէ. այլ ոչ կամէր առաքելոյն գնալ անդր, զի մի յամեցուսցեն զնքն անդ աշակերտք. քանզի փութայր զպենտակոստէն կատարել յերուսաղէմ. Թող զի այն ինչ շիջեալ էր խռովութիւն եփեսացի հեթանոսաց ։ Վասն որոյ յղեալ արս 'ի մելիտեայ յեփեսոս՝ առ ինքն կոչեաց զերիցունս եկեղեցւոյն, և եկին առ նա անյապաղ՝ ուրախութբ մեծաւ ։

Ընդ սկսաւ առաքեալն քոյ լի հոգւով սրբով և սրտառուչ բանիւք խօսել առ նոսա որպէս վերջին կտակ իւր՝ 'ի միտ առնուլ զշնորհսն, որ եղեն առ նոսա 'ի ձեռն անխոնջ վաստակոց իւրոց՝ բաղում հալածանօք հանդերձ. միանգամայն և փութալ պահել զամենայն խրատս իւր և զպատուիրանս, և հսկել արթնութբ 'ի վերայ հօտին քոյ իբրև տեսուչս կարգեալս 'ի հոգւոյն սրբոյ. քանզի այս վերջին իմ տեսութիւն է ընդ ձեզ մարմնով. զի հոգին սբ որպէս թէ կապանօք վարէ զիս յառաջ խաղալ յերուսաղէմ անդարձութբ. և ը ամենայն տեղիս՝ ընդ որ անցի և ունիմ անցանել՝ 'ի ձեռն ընտրելոց յիւմէ 'ի մարգարէութիւն վկայէ ինձ, եթէ կապանք և նեղութիւնք մնան քեզ. և ես ուրախ եմ՝ լնուլ զընթացս վաստակոց և պաշտաման իմոյ վկայական կատարմամբ ։ Այլ գիտեմ զի յետ մեկնելոյ իմոյ՝ գայցեն գայլք յափշտակօղք 'ի վերայ հօտիդ քոյ, և 'ի ձէնջ յարիցեն արք խեղաթիւրք և մոլորաբանք՝ ձգել զաշակերտսն զկնի իւրեանց. վասն որոյ զգոյշ կացէք անձանց, և ամենայն հօտիդ՝ որ է գնեալ արեամբն քոյ ։ Եւ արդ յանձն առնեմ զձեզ այ և շնորհաց ողորմութեն նորա, պահել զձեզ անփորձ և անսասան, միայն փոյթ յանձին կալարուք նմանօղ լինել ինձ, որպէս և ես քոյ. հեռի կալ 'ի զօշաքաղութէ. աշխատել 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր օգուտ այլոց, և ոչ խնդրել զանձին շահ կամ զհանգիստ. դարմանել զտկարս և զհիւանդս. և յիշել զբան տն՝ որ բովանդակի յամենայն վարդապետութիւնս նր, թէ երանելի է մանաւանդ տալն քան առնուլն ։

*Զայս ասաց, և ծունր եդեալ ամենեքումբք՝ եկա՛ց ՝յաղօթս, և անդէն հրաժարեաց 'ի նոցանէ յաւանդ ողջունիւ խաղաղութեան։ Այլ ո՞ կարէ պատմել զկոծ և զլալիւն սիրելի զաւակաց ընդ բաժանիլն յայնպիսւոյ հօրէ հասարակաց. անկանէին զպարանոցաւ նորա, և անյագ համբուրէին՝ համդերձ անհնարին մորմոքանօք, թէ ոչ ևս ունին տեսանել զերեսս նորա, մինչև յուղարկեցին զնա 'ի նաւ անդր։*

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

## ԳԼ. Ա.

Գալուստ առաքելոյն պօղոսի յերուսաղէմ. և սկիզբն հալածանաց և նեղութեանց նորա.

* Եւ իբրև եղև ելանել մեզ և մեկնել 'ի նոցանէ ||. (գործ. իա. և իբ. մինչ ցվերջ գլխոյն.)

Յայս վայր անօթն ընտրութեան 'ի մասնաւոր քաղաքս հանդիսացաւ հոգևոր քրտամբք և բազմորդիւն վաստակօք առաւել քան զամենայն քարոզս բանին. իսկ յայսմ հետէ ունի մտանել 'ի մեծ ևս հանդէս առաքինի համբերութեան կապանօք չափ, և դդրդել զքահանայապետս, զիշխանս և զթագաւորս և զինքնակալս անվեհեր համարձակութեամբ, և տարագնաց լինել յերուսաղէմէ մինչև 'ի հռովմ որպէս պատժաւոր վասն անուանն քնի, և մեծամեծս գործել նաև 'ի բանտի անդ.

Քանզի նաւարկեալ հանդերձ սիրելեաւն իւրով ղուկաս և այլովք ամամբք 'ի տրովադայ 'ի պաղեստին կոյս՝ յետ անցանելոյ ընդ կով, և ընդ հռոդոս, և ընդ պատարա, քերեալ առ կիպրոսիւ, եկն 'ի տիւրոս՝ ըստ հարկի նաւորդութեան, զի անդ էր նաւուն թափելոց զբեռինսն. ուր և գտեալ աշակերտս՝ եկաց աւուրս եօթն, և զի կային 'ի նոսա մարգարէք՝ վկայեցին նմա հոգւով, թէ երթ քո այդ յերուսա-

ղեմ բերել ունի քեզ վիշտս ծանունս. վասն որոյ աղաչէին չերթալ. այլ նա որ պատրաստ էր մինչև 'ի մահ վասն անուանն քսի, չետ տեղի բանից նոցա։ Եւ մեկնեալ 'ի տիւրոսէ՝ եկն 'ի պտղոմայիդա. և ողջունեալ զեղբարս՝ եղև անդ օր մի. և 'ի վաղիւ անդր եհաս 'ի կեսարիա պաղեստինոյ. և ագաւ յապարանս փիլիպպոսի աւետարանչի՝ այսինքն երևելի քարոզի բանին՝ միոյ յընկերացն սրբոյն ստեփաննոսի՝ յեօթանց անտի նախընտիր սարկաւագաց. որոյ էին դստերք չորք կոյսք՝ ձօխացեալք շնորհօք իմաստութեան և մարգարէութեան. (յորս երևելի է տօնելին երմնէ կոյս վկայուհի.) և ոչինչ են զարմանք, եթէ և սոքա գուշակեալ իցեն առաքելոյն զառաջիկայ անցս նորա յերուսաղեմ. այլ նա լռեցոյց զնոսա, զի մի խափան լինիցին ընթացից իւրոյ։

Եւ ահա 'ի նոյն աւուրս էջ 'ի հրէաստանէ 'ի կեսարիա մեծանունն 'ի մարգարէս ժամանակին՝ ագաբոս. և առեալ զգօտին պօղոսի՝ կապեաց որպէս կապանօք շղթայից զոտս և զձեռս իւր, և ասէ. Այսպէս ասէ հոգին սբ. զայրն՝ որոյ գօտիս այս է, այսպէս կապեսցեն յերուսաղեմ հրէայք, և մատնեսցեն զնա 'ի ձեռս հեթանոսաց։ Եւ իբրև լուաք զայն՝ (ասէ սրբն ղուկաս ականատես), աղաչեցաք մեք և այլք ը մեզ՝ արտասուօք հանդերձ՝ չելանել նմ յերուսաղեմ։ Իսկ պօղոս ասէ. զի՞նչ գործէք լալով և ձմլեցուցանելով զսիրտ իմ. քանզի ես ոչ միայն կապեալ լինելոյ, այլ և մեռանելոյ յերուսաղեմ պատրաստ եմ վասն անուանն տն Յսի քսի։ Եւ 'ի չանսալն նորա՝ լռեցին ամենեքեան, և ասեն. տն կամք լիցին։

Յետ այսորիկ 'ի գնալն պօղոսեանց ցամաքաւ յերուսաղեմ, եկին ընդ նոսա և ոմանք և յաշակերտաց անտի կեսարացւոց. և հասեալ՝ վանս կալան զայն գիշեր 'ի տան մնասոնի կիպրացւոյ առաջին աշակերտի. եկին անդր և այլք 'ի հաւատացելոց, և խնդութբ ընկալան զպօղոս և զորս ընդ նմա։ Իսկ 'ի վաղիւ անդր եմուտ պօղոս ընկերօքն հանդերձ յողջոյն յակոբայ եղբօր տն՝ երուսաղեմի

հայրապետին. եկին անդր և ամենայն երիցունքն։ Եւ յետ ողջունի սկսաւ պատմել պօղոս՝ զոր միանգամ արար Ա̃ծ 'ի ձեռն քարոզութեան նորա 'ի հեթանոսս. և նոքա լուեալ փառաւոր առնէին զԱ̃ծ։ Բայց քանզի եկեղեցին երուսաղեմի գոլով առաւել բաղկացեալ 'ի հրէից, և բնակեալ 'ի հրէաստան, առ ժամն ջանայր տակաւին պահել և զերևելի կարգս մովսիսական օրինաց, ուր ընդ հակառակն պօղոս շրջելով 'ի հեթանոսս՝ գնայր ըստ կարգաւորութե̃ առաքելական ժողովոյն, և համարեալ էր յաչս ամենայն հրէից իբրև քակտիչ մովսիսական օրինաց, խորհուրդ արարեալ յակովբայ և երիցանց՝ խրատ ետուն պօղոսի առնել խակ և խակ ինչ մի երևելի յաչս հրէից ըստ մովսիսական կարգի, զի դադարեսցին 'ի չարախօսելոյ զնմանէ։ Են 'ի մեզ ասեն՝ չորք ուխտաւորք, որք ունին առ վաղիւ սրբիլ պատարագօք 'ի տաճարին, և գերծուլ զհերս. արդ լեր և դու ուխտաւորակից ընդ նոսա. և ծախեա ինչ 'ի նոսա 'ի պէտս պատարագաց և արձակման յուխտաւորութ̃է։ Եւ ոչ գիտէին, թէ 'ի զգուշութ̃է անտի ունէր ծագել սկիզբն խռովութեան ընդդէմ պօղոսի։

Բայց քանզի իբրև յանձն էառ պօղոս առնել զկամս նոցա, և առեալ զարսն՝ եմուտ 'ի տաճարն կատարել զեօթնօրեայ կարգ սրբութե̃ ուխտաւորաց հանդերձ պատարագօք վասն միոյ միոյ 'ի նոցանէ, սկսաւ շշնջիւն 'ի մէջ հրէից վասն պօղոսի. և այն ինչ մերձ էին եօթն աւուրքն 'ի կատարիլ, տեսեալ զնա 'ի տաճարին ասիացւոց հրէից՝ զեղին զնովաւ զամենայն ամբոխն. և արկեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին. արք իսրայելացիք օգնեցէք. այս այր է՝ որ հակառակ կայ տանն իսրայէլի և օրինաց և տաճարին. և այժմ հեթանոսս մուծեալ՝ պղծեաց զտաճարն. զի տեսեալ էր նոցա 'ի քաղաքի ընդ պօղոսի զտրոփիմոս եփեսացի. զոր կարծէին մուծեալ 'ի նմանէ 'ի տաճարն։ Յայնժամ շարժեցաւ քաղաքն ամենայն, առեալ ձգեցին զպօղոս արտաքոյ տաճարին. և փակեալ զդրունսն՝ կամէին զնա սպանանել։ Լուաւ հազարա-

պետ գնդին հռովմայեցւոց զխռովութիւն հրէից, զի նստէր 'ի դղեակն՝ ոչինչ հեռի 'ի տաճարէն, դիմեաց անդր հարիւրապետօք և զօրականօք. և յայնժամ դադարեցին 'ի հարկանելոյ զպօղոս:

Իսկ հազարապետն ետ կապել զնա կրկին շղթայիւք. և հարցանէր՝ թէ ո՞վ իցէ, և զի՞նչ իցէ արարեալ. այլ 'ի խառնաձայն բողոքել ամբոխին՝ անկարացեալ գիտել զստոյգն, հրամայեաց ածել զնա 'ի բանակն՝ որ 'ի դղեկին. և զհետ ընթանայր ամբոխն՝ ասելով, բարձ զդա. մինչև հարկ եղև զօրականաց 'ի տեղի աշտիճանաց՝ որ 'ի մուտս դղեկին, բառնալ զպօղոս, և 'ի վեր հանել զի մի՛ անկցի 'ի ձեռս ամբոխին: Եւ իբրև մերձեցան 'ի մուտս բանակին, ասէ պօղոս ցհազարապետն. եթէ արժան համարիս, տո՛ւր ինձ խօսել ընդ քեզ: Եւ նա ասէ. յունարէն գիտե՞ս. մի՛ արդեօք դու իցես եգիպտացին այն՝ այր աննշան և անպիտան, որ առուրբք յառաջ յարուցեր ապստամբութիւն, և հաներ յանապատ զբազմութիւն արեանարբու արանց սինլքորաց: Պօղոս ասէ. ես այր հրէայ եմ 'ի տարսոնէ կիլիկեցւոց 'ի նշանաւոր և յաղատ քաղաքէ. աղաչեմ հրամա՛ն տո՛ւր ինձ խօսել առ ժողովուրդդ. և նա ասէ. տուեալ է քեզ հրաման: Յայնժամ կացեալ պօղոսի 'ի վերայ աշտիճանաց՝ ուր էրն, շարժեաց զձեռն, և դադարեաց ամբոխն 'ի լռութիւն՝ տեսանել թէ զինչ ունիցի ասել. և զի սկսաւ հեբրայեցի բարբառել, առաւել ևս լռութիւն եղև. զի ամենայն հրէայք կարէին և կամէին իմանալ զխօսս նորա:

Եւ այս էր բովանդակութիւն ատենախօսութեան առաքելոյն առ հրէայս. յայտ արար նոցա զինքն գոլ բնիկ հրէայ յազգէ ծնունդ տարսոնի, այլ սնեալ յերուսաղէմ ընդ վարժապետութ՟ մեծին գամաղիելի. և այնչափ նախանձայոյզ մովսիսական օրինաց, մինչև հալածել զքրիստոնեայս, և մատնել կապանաց և բանտից. որպէս և թղթովք քահանայապետաց և ծերակուտին երթալ 'ի դամասկոս, զի բերցէ անտի զքրիստոնեայս կապանօք յերուսաղէմ: Եւ թէ ո՛րպէս 'ի ճանապարհի անդ երևեցաւ նմա Յ՟ս 'ի բար-

ձանց ահաւոր լուսով. և շլացոյց զաչս նորա, և հրամա՛ն ետ երթալ խնդրել 'ի դամասկոս զանանիա զոմն յաշակերտաց իւրոց՝ վկայեալ 'ի բարեպաշտութե յամենայն հրէից. և նա լուսաւորեաց զինքն մարմնով և հոգւով, մինչև լինել նոր առաքեալ, թող թէ հաւատացեալ քրի. և այսպէս 'ի դառնալ իմում անէ յերուսաղէմ՝ մինչդեռ կայի յաղօթս 'ի տաճարին, տեսի 'ի զարմացման զնոյն ինքն զՏէր Յս̄, որ ասէր ցիս. փութա՛ ել յերուսաղեմէ, զի աստ չեն ընդունելոց զքո վկայութիւն վասն իմ: Եւ ես ասեմ. Տէր ինքեանք իսկ գիտեն զիմ առաջին գնացս՝ սկսեալ 'ի հեղմանէ արեան ստեփաննոսի վկայի քո, որոյ սպանմանն և ես կամակից էի. և այժմ ունին 'ի միտ առնուլ զիմ հրաշալի դարձ, և ընդունել վկայութեան իմում: Եւ ասէ ցիս. գնա՛, զի ես կացուցի զքեզ առաքեալ հեթանոսաց յազգս հեռաւորս:

'Ի բանից աստի ունէին իմաստասիրել աննախանձ լսօղք, թէ պօղոս ոչ է թշնամի հրէից, այլ զի նոքա անլսօղ գտան անժխտելի վկայութե նորա, վասն որոյ և Տէր առաքեաց զնա 'ի դարձուցանել զհեթանոսս: Զայդ քաջ իմացան և հրէայք, այլ չարանախանձ գոլով, և յանդիմանութի ինքեանց գիտելով զասացեալսն՝ ընդհատեցին զբան առաքելոյն, և ձայն բարձեալ գոչէին միաբանաբար. բարձ յերկրէ զայդպիսիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ. միանգամայն և զհանդերձս իւրեանց ընկեցեալ՝ զփոշին յօդս ցանէին 'ի նշանակ յետին ցասման և քինախնդրութե: Զոր տեսեալ հազարապետին՝ ետ 'ի ներքս 'ի բանակն մուծանել զպօղոս, և հրամայեաց գան հարկանել զնա. զի խոստովան լիցի զյանցանս՝ որ վասն այնպէս բողոք կարդայր ամբոխն: Եւ իբրև պրկեցին զնա փոկովք առ 'ի ձաղկել, ասէ պօղոս ցհարիւրապետն՝ որ իբրև ստրկան 'ի վերայ կայր. տեսէք, եթէ արժա՞ն իցէ ձեզ գան հարկանել զայր հռովմայեցի և անպարտ:

Իբրև եհաս բանս այս յականջս հազարապետին, եկեալ անձամբ հարցանէր ցպօղոս. ասա՛ դու ցիս, հռովմայեցի՞ ես. և նա ասէ, այո: Եւ ասէ հազարա-

պետն, և զխա՛րդ. ես զհռովմայեցին անուն և զազա-տութի բազում ընչիւք ստացայ. իսկ պօղոս ասէ, ես ծննդեամբ եմ ազատ հռովմայեցի՝ որպէս ծնեալ 'ի տարսոն։ Յայնժամ իսկ և իսկ 'ի բաց կացին 'ի նմա-նէ՝ որք հարկանելոցն էին զնա. քանզի ընդ լսելն՝ թէ հռովմայեցի է, երկեաւ հազարապետն, և սար-ջացաւ նաև ընդ կապել իւր զնա. վասն որոյ ետ ար-ձակել զկապանսն, և պատուիրեաց՝ զի 'ի վաղիւ-անդր օրինօք քննութիւն լինիցի յատենի. կոչեաց զքահանայապետսն և զծերակոյտ հրէից. և իջուցեալ 'ի դղեկէն զպօղոս՝ կացոյց 'ի մէջ նոցա յառաջիկայ-ութե̄ իւրում ։

## ԳԼ. Բ.

Մարտեան հրէից ձեռն պօղոսի, և դաւ նոցա առ 'ի սպանանել զնա. և առաքումն 'ի հազարապետէ 'ի կեսարիա առ ֆե-լիքս դատաւոր հռովմայեցի ։

*Եւ հայեցեալ պօղոսի յատեանն՝ ասէ. արք եղ-բարք || եւլ. (գործ. իգ̄. 1. մինչև ցվերջն ։)

Երբև ժողովեցան քահանայապետն անանիա և ծերակոյտ հրէից՝ պօղոս յառաջեաց 'ի պատասխանա-տուութի անձին, և ասէ անվեհեր ցամենայն ատեանն. արք եղբարք զի՞ ժողովեալ էք վասն իմ, դուք ինք-նին քաջ գիտէք, զի ես ամենայն ուղիղ մտօք գնա-ցեալ եմ առաջի ա̄յ մինչև ցայսօր. իսկ քահանայա-պետն անանիա կարկեալ 'ի բանէս՝ զորոյ զատուգու-թի՛ն չկարէր ժխտել, դարձաւ բռնութբ̄ վարիլ ընդ-անմեղին. հրամայեաց սպասաւորացն հարկանել ըզ-բերան նորա ։ Տեսեալ պօղոսի՝ թէ չիք իրաւունք յատենի անդ, և ոչ կարգ դատաստանի, 'ի միտ էառ թէ տիրապէս անզղուխ է ժողով հրէիցն. և զի

անյայտ էր 'ի ժամանակին սոյդ քահանայապետ, և այլ իւրաքանչիւր սադուկեցի անգամ տարւոջէ 'ի տարի գնէր զքահանայապետութիւնն, համարձակ յանդիմանեաց զհակառակորդ իւր, ասելով. հարկանելոց է զքեզ ա՟ծ ո՟վ կեղծաւոր որ՟մ որմ բռեալ. զի նստանես դատել զիս ըստ օրինաց, և առանց օրինաց հրամայես զիս հարկանել։ Եւ յասել ումանց 'ի մերձակայից, թէ զքահանայապետ ա՟յ հայհոյես, 'ի վերայ եկած պօղոս. ոչ գիտէի եղբարք՝ եթէ իցէ ընաւ քահանայապետ, թող թէ օրինաւոր. ապա թէ ոչ՝ իրազէտ եմ և ես պատուիրանի գրոյն, թէ զիշխան ժողովրդեան քո մի հայհոյեսցես, և մի բամբասեսցես։

Ապա ուշ եդեալ պօղոսի՝ թէ անմիաբանք յիւրեանս փարիսեցիք և սադուկեցիք՝ ընդդէմ իւր և եթ են միաբանեալ, գեղեցիկ հնարիւք ճշմարտու՟ե քակտեաց զնոսա յիրերաց, աղաղակելով 'ի մէջ ատենին. արք եղբարք՝ ես փարիսեցի եմ որդի փարիսեցւոյ. և վասն պաշտպան կալոյ ճշմարտութե՟՝ զոր փարիսեցիքն պինդ ունին ըստ գրոց, ես աւասիկ 'ի զուր դատիմ. զի վասն յուսոյ հանդերձելոց և յարութե՟ մեռելոց ձգեցին սադուկեցիք զիս 'ի դատաստան։ Զայս իբրև ասաց, անկաւ երկպառակութիւն 'ի մէջ ծերակուտին հրէից բաղկացելոյ 'ի փարիսեցւոց և 'ի սադուկեցւոց. քանզի սադուկեցիքն չընդունէին զանմահ հոգիս, ո՛չ հրեշտակային և ո՛չ մարդկային, և՛ս առաւել զհանդերձեալ անմահութի մարմնոց՝ այսինքն զյարութի. իսկ փարիսեցիքն ընդունէին զերկոսեան։ Վասն որոյ յոտն կացին գլխաւորքն 'ի դպրաց փարիսեցւոց, և եղեն կուսակից պօղոսի. ոչինչ չարութի գտանեմք առեն յառնս յայսմիկ, բայց եթէ հոգի խօսեցաւ 'ի դմա կամ հրեշտակ։ Իբրև զչարեցան ընդ այս սադուկեցիք, և զայրացաւ աղմուկ շփոթին, երկուցեալ հազարապետն՝ թէ գուցէ 'ի խռովն գիշատեսցեն զպօղոս զայր հռովմայեցի, հրաման ետ զօրականին իջանել բազմութ՟բ և յափշտակել զնա 'ի միջոյ նոցա, և ածել անդրէն 'ի վեր 'ի դղեակ բանակին։ Եւ յագանել

պօղոսի անդ զայն գիշեր, երեւեցաւ նմա տէր, եւ ասէ. քաջալերեաց պօղէ, զի որպէս վկայեցեր վասն իմ յերուսաղէմ, սոյնպէս պարտ է քեզ եւ ՚ի հռովմ վկայել:

Իսկ սադուկեցիքն ՚ի հրէիցն՝ աւելի քան զարս քառասուն, ժողով արարեալ ընդ այգն՝ երդուան նզովիւք ոչ ուտել եւ ոչ ըմպել, մինչեւ սպանցեն ըզպօղոս, եւ զայս խորհուրդ իւրեանց յայտնեալ համախոհից իւրեանց ՚ի մէջ քահանայապետաց եւ երիցանց՝ յորդորեցին զնոսա աղաչել հանդերձ ծերակուտիւ զհազարապետն, զի միւսանգամ իջուսցէ ըզպօղոս յատեան նոցա իբրու վասն ստուգագոյն քննութեան. եւ մեք ասեն յառաջ քան զմօտել նորա ՚ի տեղի ատենին պատրաստ գտանիմք ՚ի սպանանել զնա:

Լուեալ քեռորդւոյն պօղոսի զայն դաւաճանութի՝ փութացաւ եկն ՚ի դղեակ բանակին, եւ պատմեաց պօղոսի. եւ պօղոս ՚ի ձեռն հարիւրապետին յղեաց զպատանին առ հազարապետն. զոր առեալ նր յառանձին վայր՝ տեղեկացաւ ամենայն մեքենայից դաւաճանութեան հրէից. եւ պատուիրեալ պատանւոյն չասել ումեք, թէ զայս ցուցեր ինձ, արձակեաց զնա. եւ ինքն կոչեալ երկուս ՚ի հարիւրապետացն՝ ետ պատրաստել երկերիւր հետեւակազօր, եւ երկերիւր տիգաւոր, եւ հեծեալս եօթանասուն, եւ գրաստս պատրաստական վասն պօղոսի քանի մի ընկերօք իւրովք. որպէս զի գիշերայն հանեալ զպօղոս ՚ի դղեկէն՝ ապրեցուսցեն զնա ՚ի ձեռաց հրէից, եւ հասուսցեն ՚ի ՚ի կեսարիա՝ ուր նստէր մեծ դատաւորն հռովմայեցւոց՝ փելիքս անուն. առ որ գրեաց ինքնին հազարապետն եւ նամակ օրինակ զայս:

Կղաւդիոս լիւսիաս՝ առ քաջ դատաւոր փելիքս, ողջոյն: Զայրս զայս կալեալ ՚ի հրէից՝ եւ մերձ ՚ի սպանանիլ ՚ի նոցանէ, հասեալ ՚ի վերայ զօրականաւ ապրեցուցի, իմացեալ թէ հռովմայեցի է. կամեցայ գիտել զպատճառն՝ վասն որոյ ամբաստանէին զդմանէ. իջուցի զդա յատեան նոցա. զոր գտի ամբաստանեալ վասն խնդրոց ինչ իւրեանց օրինաց, եւ ոչինչ արժանի մահու կամ կապանաց ունէր վնաս: Իբրեւ ազդ-

եղև ինձ, թէ նենգութ դարան գործեալ է յայրդ 'ի Նոյանէ՝ յղեցի զդա առ քեզ փութապէս. տամ հրաման և չարախօսացն գալ զկնի, և խօսել զդիմանէ առաջի քո. ողջ լեր: Ճարտար էր այս գրութի հազարապետին՝ որով ոչ միայն ազատ առնէր զանձն 'ի դժուարութեց, այլև անձին տայր զամենայն պարծանս խաղաղելոյ զխռովութիս. այլ որ մեծն է՝ զի վկայէր Ճշմարտութ, թէ պօղոս չունի ինչ յանցանս արժանի կապանաց՝ թող թէ մահու:

Արդ բերեալ զօրականաց յայնմ գիշերի զպօղոս մինչև յանտիպատրիս աւան, յորմէ և անդր անկած էր ուղին մինչև 'ի կեսարիա, ընդ լուսանալ առաւօտու յղեցին ընդ նմա զհեծեալսն ևեթ, և ինքեանք դարձան յերուսաղէմ. որով ինչ ոչ իմացան թշնամիք. որոց յետոյ ուրեմն ազդեաց հազարապետն, թէ որսն ձեր է 'ի կեսարիա. երթայք անդ դատ վարել առաջի փելիքսի դատաւորի: Իսկ հեծեալքն հասուցեալ զպօղոս 'ի կեսարիա, ածին յանդիման կացուցին փելիքսի՝ հանդերձ թղթով հազարապետին կղաւդիոսի լիւսիայ: Իբրև ընթերցաւ դատաւորն, եհարց զպօղոս՝ թէ յորմէ՞ նահանգէ հռովմայեցւոց իցէ. և ստուգեալ՝ եթէ 'ի կիլիկեայ, լուայց քեզ ասէ, յորժամ և չարախօսքն քո եկեսցեն. և հրաման ետ պահել զնա իբրև 'ի դիպահոջ՝ յապարանսն հերովդի:

# ԳԼ. Գ.

Մնաս ևս տեսան վասն պօղոսի 'ի կեսարիա յանդիման փէլիք-սի դատաւորի։

*Այլ յետ հինգ աւուր էջ քահանայապետն անա-նիա ||, եւն. (գործ. իդ. 1. մինչև ցվերջն։)

Անագան ուրեմն իմացեալ սադուկեցւոց հրէից, եթէ ապրեցաւ պօղոս 'ի դաւաճանութենէ իւրեանց, և զերծաւ 'ի կեսարիա, զգեցան զամօթ խայտառակութեան. զի դաւն իւրեանց յայտնեցաւ, և որսն ել 'ի ձեռաց նոցա. և որ առաւելն է, զի կուտեցին նզովս 'ի վերայ անձանց, և հարկեցան մնալ ընդ նզովիւք. զի ոչ միայն չեղեն ձեռնհաս սպանանել զպօղոս, այլև պէտք եղեն այնուհետև ուտել և ըմպել ընդդէմ երդման իւրեանց, զի մի նոքեանք սովամահ կորիցեն։ Այնուհետև տեսեալ՝ թէ օրինաւոր դատաստան ունի կարգիլ առաջի հռովմայեցի դատաւորի 'ի կեսարիա, ընտրեցին նոքեանց զքաջ ճարտարախօս զոմն տերտուղոս անուն. զոր առեալ ընդ իւր քահանայապետն անանիա հանդերձ ոմամբք 'ի ծերակուտէն հրէից՝ եկին հասին և նոքեանք 'ի կեսարիա։

Ապա կարգեցաւ ատեան յանդիման փէլիքսի դատաւորի. ուր սկսաւ տերտուղոսն ճարտարաբանել ընդդէմ պօղոսի, գովելով նախ մարդահաճութբ զդատաւորն իբրև իրաւարար ամենայնիւ և խաղաղարար, և առանձին բարերար ազգին հրէից. և զկնի ամբաստան եղև զպօղոսէ, որպէս թէ իցէ խռովարար ամենայն հրէից, և առաջնորդ նորոյ հերձուածոյ նազովրացւոց, (որպէս թէ ասել, հետևողաց Յի նազովրեցւոյ խաչելոյ առ պիղատոսիւ), մինչև պղծել

նմա և զտաճար մեր․ զոր իբրև կամեցաք դատել ը̃ մերոց օրինաց՝ բռնի եհան 'ի ձեռաց մերոց Լիւսիաս հազարապետ, և այսր յղեաց դատել առաջի քո․ և մեք ուրախ եմք, զի քաջ դատաւորդ լուեալ զմիաբան բողոք մեր՝ առնես իրաւունս ։ Միաբանեցին և հրէայքն, ասեն, այդ այդպէս է․ զի վստահ էին 'ի բազմութեան իւրեանց, և դիւրին համարէին յաղթել միում առն, այսինքն պօղոսի՝ իբր անտէրունջ և առանձին մնացելոյ․ և ոչ գիտէին, զի ոչ միայն անմեղութիւն է յաղթօղ ամենայնի, այլև հոգին որ էր՝ որ տայր պօղոսի խօսել յատենի՝ ըստ տիրական խոստմանն․ Թո՛ղ զի և լոկով մարդկեղէն ճարտարախօսութե̃ 'ի վեր էր պօղոս քան զտերտիւղոս ։

Ապա յակնարկել դատաւորին՝ սկսաւ և պօղոս ասել այսպէս․ Յօժարութե̃ պատասխանի առնեմ վասն իմոց իրաց յատենի դատաւորիդ, որ գիտակ ես անցից անցելոց․ զի դեռ իբր երկոտասան աւուրք են, յորմէ հետէ անցի ես ընդ կեսարիա, և չոքայ երկիրպագանել յերուսաղէմ․ և ոչինչ բան խռովութեան ել յինէն՝ ոչ 'ի տաճարի, և ոչ 'ի քաղաքի․ վասն որոյ ոչ ունին ցուցանել իւիք ոսոխք իմ՝ զոր ինչ ստութե̃ յօդեն 'ի վերայ իմ ։ Այս ինչ ճշմարիտ է, զի զոր դոքա հերձուած անուանեն, այն իսկ է պաշտօն իմ հայրենի ըստ ողջամիտ վարդապետութե̃ աւանդելոյ յօրէնս և 'ի մարգարէս՝ ընդունելիս համօրէն ազգիս, ունել հաւատս հասարակաց յարութե̃ որում և հրէայքդ ակն ունին, և ըստ նմին բարւոք քաղաքավարիլ առաջի ա̃յ և մարդկան․ մինչ զի ոսոխք իմ չունին ասել զինէն բան չարուե̃ կամ խռովութե̃ (զոր 'ի զուր կարկատեն), այլ որք 'ի նոսա ժխտօղք են հայրենի կրօնից՝ յուզեալ են յիմ վերայ վասն հաստատելոյ իմ զայն միաբան ընդ ողջամիտս 'ի փարիսեցւոց․ քանզի բովանդակ ոխակալութե̃ սադուկեցւոց է վասն բարբառոյն, զոր աղաղակեցի յատենի ծերակուտին, թէ վասն յարութե̃ մեռելոց դատիմ ես այսօր 'ի ձէնջ ։ Այս պատճառ անժխտելի պապանձեցոյց զտերտիւղոս և զհամախոհս նորա․ և պօղոս ստէպ վարէր զնոյն պատ-

ճառ առ 'ի դիւրաւ հաւանեցուցանել և զյարութի քմի , որով և զբովանդակ քարոզութիւն աւետարանին ։

Իսկ փեյլքս՝ թէպէտև քաջ գիտակ էր այսմ ամենայնի , վասն որոյ և աներկբայ հաստ իրաւանց և անմեղութեանն պօղոսի , այլ զի էր այր զօշաքաղ և վաճառօղ իրաւանց , և ամենայն անզգամութբ լի , մինչև ըստ ասելոյ տակիտոսի՝ զարքունի իրաւունս ծառայական ոգւով վարէր , ոչ կամեցաւ առնել իրաւունս . այլ պատճառանօք յերկարաձգեաց զիրսն , որպէս թէ 'ի գալ անդր լիւսիայ հազարապետի՝ 'ի նմանէ տեղեկասցի զիրաւն ։ Սակայն հրամայեաց հարիւրապետին՝ յընդարձակի պահել զպօղոս , և մի զոք 'ի նորայոցն արգելուլ սպաս տանել նմա ։ Յետ աւուրց ինչ յառաջիկայութե կնոջ իւրոյ դրուսիլլայ՝ որ էր հրեայ , կոչեաց զպօղոս , և լուաւ 'ի նմանէ սակ հետաքրքրութբ վասն քնական հաւատոց . և 'ի խօսելն պօղոսի ուղղակի գործես ընդդէմ մոլութեց իշխանաց՝ վասն արդարութե և ժուժկալութե , և հանդերձեալ դատաստանին , զահի հարաւ միայն փեյլիքս՝ առանց օգտելոյ հոգւով . և ասէ . դու առ այժմ երթ , և յորժամ ժամ լինիցի իրաւունս առնելոյ՝ կոչեցից զքեզ . և զի ակն ունէր՝ թէ տացի ինչ ինքեան իբրև կաշառ 'ի պօղոսէ , ստէպ կոչէր զնա առանձին՝ խօսել ընդ նմա , և դարձեալ 'ի բաց արձակէր ունայն . մինչև կատարեցան երկու ամք դատաւորութե նորա , և հարկ եղև նմա փոխել յիշխանութէն , և տակաւին չէառ յանձն առնել դատ պօղոսի . այլ 'ի շնորհս հրէից ( յորոց առեալ էր ոչ սակաւ կաշառս ) , եթող զնա կապեալ , զի յաջորդ դատաւորն արասցէ զոր գիտէ ։

# ԳԼ. Դ.

Երրորդ և չորրորդ ատեան վասն պօղոսի առաջի ֆեստոսի հռոմայեցւոց դատաւորի, և ագրիպպայ հերովդի հրէից արքայի. և բողոք պօղոսի առ կայսր:

* *Ֆեստոս իբրև եհաս յիշխանութիւն, յետ երից աւուրց ել յերուսաղէմ ||, եա. (գործ. իե. և իզ. մինչ ցվերջ գլխոցն.)*

Ֆեստոս պորկիոս փոխանակ փելիքսի կարգեալ 'ի դատաւորութիւն հրէաստանի՝ յետ երից աւուրց հասանելոյ իւրոյ 'ի կեսարիա պաղեստինոյ՝ եկն յայցելութիւն բնակչացն երուսաղէմի. յայնժամ մատուցեալ քահանայապետք և գլխաւորք հրէից՝ խնդրէին շնորհս 'ի նմանէ, զի տացէ բերել զպօղոս 'ի կեսարիոյ յերուսաղէմ. և անդ կատարեսցէ զդատ իւրեանց ընդ նմա, զի դարան գործեալ էր նոցա սպանանել զնա 'ի ճանապարհի: Ֆեստոս եթէ խիթալով զչարութէ հրէից՝ ըստ յառաջագոյն տեղեկանալոյ 'ի նախորդէն իւրմէ, և եթէ առ դիւրութիւն անձինն հայելով, արար պատասխանի, թէ ես փութամ դառնալ 'ի կեսարիա. և որ ոք կամեսցի 'ի ձէնջ, եկեսցէ անդր, և տեսցուք զդատ ձեր: Օ այս ասացեալ՝ զկնի ութ կամ տասն աւուրց դարձեան իւրոյ՝ չու արար անդրէն 'ի կեսարիա. և իսկ և իսկ 'ի վաղիւ անդր կոչեաց յատեան զպօղոս, և զեկեալ հրէայս զչարախօսս նց. որք խօսեցան զնմանէ ծանր ծանր յանցանս, բայց առանց կարօղ լինելոյ ցուցանել. ուր պօղոս համարձակ առնէր պատասխանի, եթէ ոչ յօրէնս հրէից, և ոչ 'ի տաճարն, և ոչ 'ի կայսր ինչ վնասակար եմ:

Տեսեալ հրէից՝ եթէ յամօթ եղեն միւսանգամ, աղաչանօք և կաշառօք թախանձէին զդատաւորն՝ փո-

խել զդատ պօղոսի յերուսաղէմ, զի դատեսցեն զնա ըստ առաջին խորհրդոյ իւրեանց. վասն զի չկայր այլ հնարք յաղթելոյ արդարոյն՝ բայց ըմպելով զարիւն նորա անպարտ ։ Իսկ փեստոս եղեալ 'ի բանս հրէից՝ առանց յայտնի գիտելոյ զանզգամութիւնս, 'ի շնորհս նոցին եհարց զբերան պօղոսի. կամիս ասէ յերուսաղէմ ելանել, և անդ վասն դոցին իրաց դատել առաջի իմ։ Յայնժամ պօղոս՝ որ քաջ գիտէր զխորհուրդ չարութեան հրէից, առանց խայտառակելոյ զնոսա, որպէս և առանց յամօթ առնելոյ զանխորհրդութիւն դատաւորին, ճարտարութեամբ կոչեաց զանձն 'ի ձեռաց նոցա՝ ասելով. Ատեան դատաւորիդ ատեան է կայսեր, ուր պարտ է ինձ դատիլ 'ի մահ կամ 'ի կենաց. հրէից ինչ չեմ վնասակար՝ որչափ և 'ի զուր չարախօս լինիցին. եթէ յանցաւոր իցեմ, չզանգիտեմ 'ի մեռանելոյ. վասն որոյ և ոչ ոք կարօղ է զիս յատենէ աստի կայսեր յատեան հրէից ձգել, կամ շնորհել նոցա զիս. ապա թէ ոչ՝ 'ի կայսր անդր բողոքեմ։ Սովին բանիւ կարճեցաւ լեզու չարախօսաց, և ոչ մնաց բան 'ի բերան դատաւորին. այլ հարկեցաւ և նա խորհրդով իւրոյն ասել ցպօղոս. 'ի կայսր բողոքեցեր, առ կայսր երթիցես ։

Յաւուրսն յայնոսիկ մինչդեռ ակամայ կամօք պատրաստէր դատաւորն յղել զպօղոս յառն կայսեր 'ի հռովմ, եկին 'ի կեսարիա յողջոյն փեստոսի ագրիպպաս արքայ վերջինն 'ի տանէ հերովդի՝ խառն ազգակցութեամբ ընդ հրէայս, և քոյր նորա բերենիկէ՝ որ յետ մեռանելոյ այրի յառաջին առնէն, և թողլոյ զերկբորդն, կայր առ եղբօր իւրում իբրև կին նորա. որով և անուն վատթարութեան իւրոյ և եղբօր իւրոյ ծանուցեալ էր առ ամենեսին (որպէս նշանակէ և երգիծաբան քերթողն յոբնաղ.) այլ ըստ արտաքին քաղաքավարութեամբ հիւրընկալեալ եղեն աւուրս բազումս 'ի դատաւորէն ։ Իսկ եղև 'ի լինել բանից 'ի մէջ նոցա՝ պատմեաց փեստոս ագրիպպայ արքայի զամենայն անցս հրէից ընդ պօղոսի, և թէ ոչինչ վնաս տեսանի յայրն. այլ 'ի հարկաւորիլ նորա բողոքել առ քաջ արանցն (այսինքն առ կայսրն,)

հարկ է և ինձ ասէ յղել զսա յոտս նորա ։ Յայնժամ ասէ ագրիպպաս, կամէի և ես լսել առնն ․ զի բազում ինչ լուեալ էր զնմանէ՝ ստոյգ և անստոյգ ․ և նա ասէ, վաղիւ լուիցես ։

Ապա 'ի վաղիւ անդր եկին 'ի տեղի ատենի ագրիպպաս և բերենիկէ երևելի շքով հանդերձ հազարապետօք, և արամբք պատուաւորօք կեսարիոյ ․ և ըստ հրամանի դատաւորին ածին զառաջեաւ զպօղոս ։ Իսկ ասէ փեստոս ․ արքայ ագրիպպա, և ամենայն արք՝ որ ընդ մեզ էք ․ տեսանէք զայրս զայս, որում մահուչափ ստոխ են հրեայք ․ այլ իմ չիք գտեալ 'ի դմա ջնաս մահապարտութե ․ և զի դա ինքն աներկիւղ բողոք կալաւ առ ինքնակալն, անգիտանամ թէ զինչ գրեցից զառնէս 'ի յղելն զսա ․ վասն որոյ ածի զդա առաջի ձեր, և մանաւանդ առաջի քո արքայ ագրիպպա, որպէս զի վերստին քննութ կարող եղեց գրել ինչ տն իմում ․ ապա թէ ոչ՝ անպատեհ երևի տալ տանել կապեալ մի՝ առանց նշանակելոյ յանցանս ինչ զնմանէ ։

Ասէ թագաւորն ցպօղոս ․ հրամայեալ է քեզ խօսել վասն անձինդ քոյ ։ Յայնժամ անվեհեր տայր պատասխանի պօղոս, թէ գեղեցիկ յաջողեաց խօսել յանդիման արքայի՝ գիտակ եղելոյ ամենայն կրօնից և խնդրոց հրէից ․ զի որպէս գիտէր արքայ՝ թէ Ճշմարիտ ածապաշտք 'ի մէջ եբրայեցւոց նոքա են, որք ունին զյոյս յարութե, նոյնպէս և ինքն պօղոս զնոյն քարոզէ ․ և որպ ակնկալուի բոլորից էր համդերձեալ մեսիայն, զնոյն և ինքն աւետարանէ յարուցեալ 'ի մեռելոց ․ և այն յետ զառաջինն հալածիչ լինելոյ անուանն Յսի Ճշմարիտ մեսիայի՝ առաւել քան զամենայն նախանձախնդիրս ․ մինչև ասէ եղև ինձ տեսանել 'ի Ճանապարհին դամասկեայ զնա ինքն զտր Յս յերկնից երևեալ ահաւոր լուսով ․ որ յետ պատուհասակոծ առնելոյ զիս՝ խրատեաց և պատուիրեաց քարոզել հրէից և հեթանոսաց զեկեալ հասեալ փրկիչն և զփրկութի նորա ։ Ուստի արքայ ագրիպպա՝ ոչ եղէ անհաւան երկնաւոր տեսլեանն ․ այլ սկսեալ 'ի դամասկոսէ և յերուսաղէմէ՝ ընդ ա-

մինայն տեղիս քարոզեցի և քարոզեմ զճշմարտութի՟ն
մեծի և փոքու, ոչինչ արտաքոյ ասելով քան զոր
մարգարէքն գուշակեցին ընդ մովսէսի վ՟ս ք՟ի, և
չարչարանաց նորա, և յարութե՟ն նորա, և վասն լի-
նելոյ նորա լոյս հրէից և հեթանոսաց ։

'Ի խօսել առաքելոյն հզօր բանիւք զայսպիսի մե-
ծամեծս, փեստոս 'ի ձայն մեծ գոչեաց, և ասէ. մո-
լիս պօղէ. բազում դպրութ՟իքդ զքեզ 'ի մոլութ՟ի
( այսինքն 'ի ցնորութ՟ս մտաց ) դարձուցանեն ։ Իսկ
պօղոս ասէ. ո՟չ մոլիմ քա՛ջդ փեստոս, այլ զգաստու-
թ՟ե և ճշմարտութ՟ե բանս բարբառիմ. գիտակ է
քաջայայտ բանիցս արքայ, ը՟ որում համարձակեալդ
խօսիմ ։ Իսկ դարձուցեալ զբանն առ թագաւորն՝
եւ և նմա խոստովանել զիրսն գո՛նէ ակամայ կամօք.
զի ասէ. հաւատա՞ս արքայ ազրիպպաս մարգարէից.
գիտեմ զի հաւատաս ։ Որ էր ասել. գո՞նեա չկարես
ժխտել՝ անուանեալդ հրէից թագաւոր ։ Իսկ ասէ
ազրիպպաս ցպօղոս՝ կէս մի 'ի խղճէ, և կէս մի ար-
դեօք 'ի հեգնութ՟է. փոքր ինչ մնայ՝ զի հաւանեցուս-
ցես զիս լինել քրիստոնեայ ։ Իսկ պօղոս ասէ. խըն-
դրեի յա՟յ, զի եթէ փոքր ինչ բանք կամ գործք պի-
տոյ լինիցին, և եթէ մեծ կամ բազում, անխոնջ
աշխատելով՝ կարող եղէց տեսանել զքեզ և զամե-
նայն ունկնդիրս իմ՝ նմանօղս ինձ լինել, բաց 'ի կա-
պանաց աստի ։ Յայն բան յոտն եկաց արքայ և դա-
տաւորն այլովքն հանդերձ. և յետ հանելոյ զպօղոս
յատենէ՝ խօսէին ընդ միմեանս, և ասէին սրտցաւու-
թ՟ը. ոչինչ արժանի մահու կամ կապանաց գործէ
այրս այս. և յաւել ազրիպպաս ասել ցփեստոս, ար-
ձակել մարթ էր զայրս զայս, եթէ ոչ էր բողոքեալ
'ի կայսր ։

Այս օրէնք են անօրէն դատաւորաց, գիտել զար-
դարն, և ոչ առնել զարդարութ՟ի. անմեղ գտանել
զամբաստանեալն, և ոչ արձակել զնա յաղատութ՟ի.
այլ բանիւք արդարացուցանել, և արդեամբք պա-
հել 'ի պատուհասի՝ վասն մարդկային ակնածութ՟ց ։
Ապա թէ ոչ՝ ինքնին յայտ էր, զի բողոքէն պօղոսի
առ կայսր էր վասն ցուցանելոյ զանմեղութ՟ի իւր. և

զխարդ զորոյ ծանեան զանմեղութիւն տիրապէս, անմիաբան վարկանէին զազատութիւն նորա ընդ բողոքոյն առ կայսր ։ Այլ յամենայնի վերին կամք տնօրինել լինէր և 'ի ձեռն անիրաւ դատաւորաց, զի պօղոս կապանօք առաքեսցի 'ի Հռոմ, և անդ մեծամեծս ևս գործեսցէ քարոզն Ճշմարտութեան. Թող զոր արար և կրեաց զՃանապարհայն յօգուտ հոգւոց, և 'ի վարձ առաքինի վաստակոց իւրոց ։

## ԳԼ. Ն.

Պօղոսի նաւարկութիւն մինչ պօղոսն դէպ յիտալիա, և աղետութիւն նորա և ողջոյն 'ի նաւաբեկութեան 'ի կղզին Մելիտինոյ, (որ այժ. ասի Մալթա) ։

* Երբև հրամայեցաւ մեզ նաւել յիտալիա", ևն. (գործ. իէ. 1. մինչ ցվերջն.)

Գտեալ փեստոսի դատաւորի 'ի նաւահանգստին կեսարիոյ պաղեստինացւոց նաւ մի անդրամիտացի, այսինքն յադրամետ քաղաքէ բարբարոսաց ափրիկեցւոց՝ որ յետ պատելոյ զափական ծովեզերեայ քաղաքօք՝ ունէր երթալ յաշխարհ իւր, և անտի յիտալիա, եդ դնել զկապեալն պօղոս, և զայլ ևս կապեալս՝ որք ունէին եւանել յատեան կայսերական. և զի այսպիսի կալանաւորք էին զգուշութե՛ հասուցանելի 'ի Հռոմ, յանձնեաց զպօղոս այլովքն հանդերձ 'ի հարիւրապետ մի հաւատարիմ՝ յուլիոս անուն, որ էր գլուխ հարիւր զինուորաց ընտրելոց՝ ը͞ն անուամբ սեբաստեան գնդի, այն է օգոստական կամ կայսերական ։ Որ ընդ մեզ ասէ 'որն Ղուկաս՝ անմեկնելի վաստակակիցն պօղոսի՝ և արիստարքոս մակեդոն Թեսաղոնիկեցի ։ Երբև հասին 'ի վաղիւ անդր 'ի սիդոն (որ և ծայդան, ամկ. սէյտէ,) մարդասի-

րութեան ցուցեալ յուլիոսի հարիւրապետին առ պօղոս՝ թոյլ ետ նմա երթալ առ բարեկամսն, և դարման գտանել. այլ երանելի առաքեալն առաւել դարմանիչ եղև հոգւոց այլոց՝ մխիթարելով և հաստատելով զաշակերտեալսն որ անդ ։

Նաւեալ 'ի սիդոնէ՝ վարեցան անյաջող հողմովք 'ի կողմանս կիպրոսի. և ապա նաւարկեալ յակամայ կամս ընդ մէջ ծովուն կիլիկեայ և պամփիլեայ՝ խատորեցան 'ի սմիւռա լիկիացւոց (մօտ յիզմիր), կոչեցեալ յայլոց լիւտրա լիկիոյ ։ Ընդ տեսեալ հարիւրապետին զանյարմարութիւն նաւուն, որ ունէր յերկարաձգել զճանապարհորդութիւն, խնդրեաց և եգիտ 'ի նաւահանգստի անդ նաւ մի ընտիր աղեքսանդրացի, որ դէպ ուղիղ ունէր երթալ յիտալիա. և անդր եմուտ ինքն և իւրքն՝ կապելովքն համդերձ ։ Այլ սակայն յայնմհետէ ևեւս ծանրացաւ և անյաջող տեսաւ նաւարկութիւն, զի գրեթէ միշտ հակառակ հողմն շնչէր. մինչև յետ բազում աւուրց հազիւ հասանել մօտ 'ի կնիդոս. ուստի խոտորնակի յառաջ խաղալով քերեցին առ սաղամինաւ կրետէ կղզւոյն բազում դժուարութեամբ. և եկին զտեղի առին փոքր մի յանշուք կղզւոյն՝ որ կոչէր գեղեցիկ նաւահանգիստ՝ մերձ 'ի քաղաքն կոչեցեալ լասեայ, կամ թալասսա (այսինքն ծովաքաղաք՝) արտաքոյ ուղիղ ճանապարհի նաւարկութեան իւրեանց ։ Զի էին աւուրք խառնակութեան օդոց յելս աշնայնոյ, և 'ի մուտս ձմերայնոյ. և որչափ փութային յառաջ խաղալ՝ այնչափ յետս ընդդէմ սխալումն լինէր ։

Եւ վասն այն ինչ ևս պահոցն անցանելոյ՝ ասէ գիրն, այսինքն կամ զի անցեալ էր պահ սովորական նաւորդութեան, կամ ժամանակն աջող՝ որ էր յառաջ քան զամնօրեայ պահս ինչ պահելոյ յաշնան, կամ զուցէ տիրեալ էր և անսուաղութիւն յոյժ, խրատ տայր պօղոս հարիւրապետին և այլոց, թէ լաւ էր 'ի կրետէ ձմերել կամ գոնէ յայս կղզեակ, մինչև փոքր մի մեղմասցին օդք. քանզի ասէ տեսանեմ, զի փութալն ձեր բազում վնաս ունի բերել նաւուն և բեռանց և նաւորդաց. իսկ հարիւրապետն նաւապետին

և ղեկավարին առաւել անսայր՝ քան բանիցն պօղոսի։ Իսկ զի նաւահանգիստն՝ յոր հասեալ էին, ոչ 'ի դէպ երևէր ձմերելոյ, բազումք 'ի նաւորդաց ստիպեցին ելանել անտի և երթալ ձմերել 'ի փիւնիկէ անուն նաւահանգստին կրետացւոց. ապա 'ի շնչել հարաւոյ՝ փոքր մի յետադարձութիւն կարծէին հասանել անդր. և ահա ընդ մերձենալն 'ի կրետէ՝ շնչեաց այլ հողմ մրրկեալ՝ որ կոչէր յունարէն եւրակիկլոն, և ոչ կարացեալ զդէմ ունել բռնութեան նորա՝ թողին զնաւն երթալ յո՛ և գնացեալ 'ի խորս ադրիական ծովուն, որ և հանդերձ անդունդք կոչի, ակն ունելով ըմբռնել զկղզին կղոդա կի՛մ գաւդա՝ որ է մասն մալդայու (ամկ. կոչեցեալ կօծծօ). և սակայն յընթացս անդ օր քան զօր տագնապ 'ի վերայ հասանէր. է զի մակոյկն 'ի բաց լուծէր 'ի նաւէն, զոր հազիւ ըմբռնեցին. է զի 'ի յորձանուտ և յաւաղուտ վայրս մխիլ մերձ էր նաւն, վասն որոյ և 'ի բաց առին զառագաստ՝ զի մի՛ բռնի վարեսցին. այլ այնչափ սաստկացան ալիքն՝ մինչև մերձ լինել ընկղմել. վասն որոյ զկարասին և զբեռն 'ի ծով ընկենուին հետ զհետէ զաւուրս երիս։ Իսկ զի առ խառնակութեան օդոյ՝ ո՛չ արև և ո՛չ աստեղք երևէին 'ի բազում աւուրս, և ալեկոծութիւն չհանդարտէր բնաւին, յուսահատ եղեն 'ի կենաց նաւավարք և նաւորդք հանդերձ անսուաղութե։

Յայնժամ պօղոս կացեալ 'ի մէջ՝ ասէ. պարտ էր ձեզ ո՛վ արք՝ անսալ ինձ, և չելանել 'ի կրետեայ. այլ այժմ քաջալերեցարո՛ւք, զի ոչ ումեք լինիցի վնաս ինչ բաց 'ի նաւէդ և 'ի բեռանց նորա. քանզի երևեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ ա̃յ իմոյ, և ասէ. մի՛ երկնչիր պօղէ, զի անվտանգ հասանես 'ի հռովմ՝ յանդիման լինել կայսեր. և 'ի շնորհս քո ապրեսցին նաև ամենեքին՝ որ են 'ի նաւիդ. և արդ հաւատամ յա̃ծ աներկբայ, և դուք ևս հաւատասջիք, զի այդպէս լինիցի. և մնայ մեզ 'ի մօտաւոր կղզի ինչ անկանել։ Արդ իբրև եղև չորեքտասաներորդ գիշեր, և ծփէին յընդարձակութեան ադրիական ծովուն՝ ընդ մէջ կրետայ սիկիլիոյ և ցամաքին ափրի-

կեցուոց, 'ի մէջ գիշերին 'ի կարծիս եղեն նաւավարք թէ մօտ են 'ի կղզի մի. և զի մի՛ յանկարծ նստցին 'ի ցամաք յանծանօթ վայրս, չափեցին զխորութի̃ ծովու կապարեայ գնտով, և գտին գիրկս քսան, և յետ սակաւու գտին գիրկս հնգետասան. որ էր նշա-նակ ծանծաղութե̃ հետզհետէ: Նմին իրի երկեան իրաւամբք մխելոյ յաւազուտս. և արկին 'ի տեղ-ւոջն խարիսխս չորս յետուստ կողմանէ, զի մի՛ այլ յառաջ վարեսցին, մինչև առաւօտն լուսասցի:

Յայնմ վայրի սկսան 'ի ծածուկ խորհել նաւա-վարքն՝ զանձինս ևեթ ապրեցուցանել 'ի ցամաք. վասն որոյ պատճառանօք իջուցին զկուրն 'ի ծով՛ որպէս թէ առ 'ի ձգել զխարիսխ և յառաջոյ կող-մանէ: Ազդ արար զիրսն Պօղոս հարիւրապետին և զօրականաց՝ ասէ. եթէ թողուք դոցա երթալ, դուք չկարէք այլ ապրիլ. յայնժամ զօրականքն հատին զլարս կրին, և այնպէս հեռացաւ կուրն, և նաւա-վարքն հարկեցան մնալ ընդ նաւորդս: Իբրև առա-ւօտն մերձ լինէր, յորդորեաց Պօղոս զամենեսին՝ զի փոքր ինչ ճաշակեսցեն և զօրասցին, զի գրեթէ նօ-թի էին 'ի չորեքտասան աւուրց հետէ. վասն ձերոյ ազատութե̃ աղաչեմ ասէ զձեզ զօրանալ կերակրով, և մի՛ վհատել. զի ո̃վ ոչ ուրուք 'ի ձէնջ և մազ մի 'ի գլխոյ կորիցէ: Եւ ինքն եղև առաջին առնուլ հաց՝ գոհանալ զա̃յ, բեկանել և ճաշակել. յորմէ քաջալերեալ՝ առին և նոքա կերակուր, այսինքն էին երկերիւր եօթանասուն և վեց ոգիք՝ որ կային 'ի նա-ւին: Յետ այսորիկ դարձեալ թեթևացուցին զնաւն թափելով զցորեանն 'ի ծով, զի դիւրագոյն յառաջ վարեսցին ընդ ծանծաղ տեղիսն:

Իբրև այգ եղև, տեսին զերկիրն՝ այսինքն զկղզին մալդայու կից ընդ կոծծօյի, այլ ոչ կարէին ճանա-չել. միայն գոգ մի նշմարեցին, այն է կոծծօ՝ իբր ծո-վափնեայ խորշ նաւահանգստի. վասն որոյ անդր հնարէին վարել զնաւն. և զի դժուարին էր խա-րիսխ վերացուցանել, և զեկ և առագաստ 'ի կիր արկանել, հատին զպարան խարսխին, զղեկն 'ի վեր առին, և զառագաստն իջուցին, և ետուն զնաւն

բռնութե́ն հողմոյն՝ վարել 'ի ներքս կոյս յայն ծովուն ։ Այլ անկեալ 'ի տեղի մի երկծով որպիսի է ծոցն կոծծոյի՝ որ իբր առուով զատանի 'ի մալդայէ, թիւրեցաւ նաւն 'ի կղզին մալդայի. մինչ զի առաջին կողմն խրեալ մնաց անշարժ, և յետին կողմն քակէր 'ի բռնութե́ն հողմակոծութե́ն ալեաց ։ Յայնժամ անագորոյնքն 'ի զօրականաց սկսան խորհել սպանանել զկալանաւորսն, զի էր ժամ առն իւրաքանչիւր ապրեցուցանելոյ զանձն իւր լողելով. վասն որոյ հնար լինէր նոցա յելանելն 'ի ցամաք՝ փախչել յո՛ և կարօղ իցեն ։ Իսկ հարիւրապետն քանզի կամէր ապրեցուցանել զպօղոս, խնայեաց և յայլս 'ի կապելոց. և հրաման ետ նախ զօրականին, և ապա այլոցն ամենեցուն, զի որ գիտէ լողել, արկցէ զանձն 'ի ծով, և ելցէ 'ի ցամաք, որ չէր շատ հեռի . և որ ոչն գիտէին լողել, առին տախտակս և այլ կահս թեթևս 'ի սատարութի́. և այնպէս ամենեցուն եղև անվտանգ ապրիլ և ելանել 'ի ցամաք, ըստ կանխաւ ազդելոյ առաքելոյն երկնաւոր տեսլեամբ ։

# ԳԼ. Ծ.

Գործք սրբոյն պօղոսի 'ի Մալթա. և անցք ընդ Սիկիլիա և ընդ Կալաբրիա. և մուտն 'ի Հռոմ, ուր կայ 'ի կապանս բանտի ամս երկուս։

* Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք, եթէ մելիտինէ էր անուն կղզւոյն ||, ԻԵ. (գործ. ԻԸ. 1. մինչ ցվերջն։)

Իբրև ելին 'ի ցամաք, յայնժամ գիտացին՝ թէ մելիտինէ է անուն կղզւոյն. զորմէ այլևայլ եղեն բանք առ մեկնիչս և աշխարհագիրս, որպէս և մեք նշանակեցաք յաշխարհագրութեն, բայց ըստ ստոյգ քննութեն և ըստ աներկբայ աւանդութեն մալթայեցւոց՝ որք ճանաչեն զսր͞ն պօղոս առաջին լուսաւորիչ իւրեանց, է մալթա կղզին ընդ մէջ աշխարհին բարբարոսաց ափրիկեցւոց և մեծի կղզւոյն սիկիլիացւոց, իբր կէս ըստ կղաւդիա կամ կօծծօ կղզեակն. և որ միանգամ 'ի կրետեայ նաւարկէ 'ի մալթա, գրեթէ աչօք բացօք տեսանէ, զի այն է համդրին անդունդքն՝ լայնածաւալ խորք և ծագ ադրիական ծովուն վենետկոյ. և բնակիչք իսկ մալթայոյ համարեալ էին մասն բարբարոսաց աշխարհին, (ո͞ր պարպարըշի. իմա՛ թունուզի, ֆէսի, և ճէզայիրի,) վասն որոյ և արաբայի խօսին մինչև ցայժմ։ Արդ վկայէ սր͞ն ղուկաս, թէ բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն մեզ. քանզի լուցին խարոյկ, և ընկալան զամենայն ապրեալսն 'ի ծովէ՝ դարմանել զնոսա յերեսաց սաստիկ անձրևի և ցրտոյ։

Եւ եղև 'ի ժողովելն և սր͞յն պօղոսի խռիւ բա-

զում, և 'ի դնել 'ի վերայ խարուկին, իժ մի կըռ-
ուեալ 'ի խուխս անդ՝ իբրև հատատեցաւ 'ի ջերմունն,
խուսափեաց 'ի հրոյ և դարձաւ 'ի բազուկն կոյս ա-
ռաքելոյն, և կալաւ զձեռանէ նորա՝ որպէս թէ 'ի
խածանել չարաչար: Տեսեալ բարբարոսաց զիժն կա-
խեալ զձեռանէ կալանաւորին պօղոսի, սկսան ասել
տխմարաբար. ուրեմն իրաւամբք կապեալ է այրս
այս որպէս մարդասպան մահապարտ. վասն որոյ թէ-
պէտ զերծանել զերծաւ 'ի ծովէն, այլ իրաւունքն ոչ
եթողուն դմա կեալ: Այլ 'ի թօթափել պօղոսի զգա-
զանն 'ի հուր անդր, իբրև տեսին բարբարոսքն թէ
ոչ եղև այտնուլ ձեռաց նորա որպէս այլոց հարելոց
յիժէ, և ոչ անկանել և մեռանել նմա յանկարծա-
կի, որպէս կարծէին, այլ անփոյթ մնալ բոլորովին,
շրջեցին զբանս իւրեանց, և ասէին ահագին ապշու-
թեամբ, թէ աստուած ոմն է: Եւ հնչեաց լուրս այս
ընդ ամենայն կղզին, և գային 'ի տեսանել՝ թէ որ-
պիսի ոք իցէ այրն այն, յոր ոչ ազդէ և թոյն իժի,
զի ոչ գիտէին՝ թէ տուեալ է աշակերտաց քսի կոխել
զօձս և զկարիճս զերևելիս և զաներևոյթս. կամ
'ի ձեռս իւրեանց բառնալ զօձս, կամ ըմպել և զդեղ
ինչ թունաւոր և մահացու, և ինչ ոչ վնասիլ. այլ
յաւէտ բժշկել զօձահարս, և զայսահարս, և բժըշ-
կել զամենայն ախտս:

Էին մօտ 'ի տեղւոջն՝ ուր զերծան նաւորդքն առ-
հասարակ, գեօղք պօպղիոսի գլխաւորի կղզւոյն, այն
է վերնակոչմն մալդայու՝ այժմ հին մալդա կոչե-
ցեալ, որ հայի յափրիկէ. Նա ինքն պօպղիոս այր բա-
րեբարոյ և մարդասէր՝ էառ յերաշխի 'ի հարիւրա-
պետէն զպօղոս հանդերձ ղուկաւ և արիստարքոսիւ,
և արար նոցա ընդունելութիւն սիրով զաւուրս երիս:
Եւ եղև յաւուրսն յայնոսիկ ծերունի հօրն պօպղիո-
սի ախտանալ ջերմամբ և թանչիւ, և վտանգիլ առ
'ի մահ. առ որ մտեալ պօղոս՝ և յաղօթս կացեալ
ծնրադրութբ, իսկ և իսկ բժշկեաց և յարոյց զնա
'ի մահճաց, 'ի լինել այսր՝ սկսան մալդացիք բերել
զհիւանդս իւրեանց առ հասարակ առ ոտս առաքե-
լոյն. և նա անուամբ քն բժշկէր զամենեսին. նմին

իրի և կղզեցիք համօրէն պատուէին զնա, և բերէին զամենայն պէտս նորա և նորայոյն ։ Եւ զի զամիս երիս մնացին ուղևորք 'ի կղզւոջ անդ, զոր ամենայն քարոզէր պօղոս զբանն այ̄, մինչև դարձուցանել գրեթէ զկղզին ողջոյն. և ըստ աւանդութե̄ մալդացւոց՝ ձեռնադրել քահանայս, և կարգել 'ի վերայ նց̄ եպիսկոպոս զպոպղիոս. որոյ և տունն ցուցանի անդ մինչև ցօրս ցայս՝ շինեալ յետ ժամանակաց 'ի կրկին եկեղեցի, մին յանուն սրբոյն պօղոսի առաքելոյ, և միւսն յանուն սրբոյն պոպղիոսի եպիսկոպոսի. որպէս և ոչինչ հեռի 'ի տեղւոջէն՝ ցուցեալ լինի քարայր մի իբրև սենեակ առանձնութե̄ և աղօթից սրբոյն պօղոսի. թող զոր յամենայն հրապարակս կանգնեալ են զարձանս առաքելոյն՝ 'ի ձև հրապարակաւ քարոզելոյ, զյաճախութի̄ պատկերաց նորա, յորս նկարի օձ կախեալ զձեռանէ պօղոսի, համդերձ այլ և նշանակօք հին աւանդութեանց ։ Այլ մեք 'ի կարգ պատմութեան դարձցուք ըստ գրելոցն 'ի սրբոյն ղուկայ ։

Յետ երից ամսոց դեգերելոյ 'ի մալդա՝ մտին ուղևորք ամենայն 'ի նաւ մի աղեքսանդրացի, որ անդ ձմերեալ էր, դիոսկուրիք անուամբ. զի 'ի ծագ նաւուն կայր նշան դիոսկուրացւոց, որ են երկուորեակ եղբարք դասեալք 'ի համաստեղութի, կաստոր և պողլուքս ։ Եւ եկեալ 'ի սիրակուսա քաղաք սիկիլիոյ՝ որ իբր ութսուն մղոնաւ հեռի է 'ի մալդայէ, (մինչև 'ի պարզութե̄ օդոց ընդ աղօտ երևիլ եթնայ ահագին լերին սիկիլիոյ 'ի մալդայէ), զտեղի կալան աւուրս երկուս. ուստի նաւարկեալ ընդ փարոսն՝ ը̄ը մէջ մեսսինայ և կաղաբրիոյ, հասին 'ի հռեգիոն համդէպ մեսսինայի 'ի վիճակին նէապօլսոյ (այ̄ նաբօլիոյ) առ երի հուշակաւոր ժայռիցն կոչեցելոց սկիւլլաքս և քարիբդիս. և յետ աւուր 'ի չուել յաջողակ հողմոյ հարաւայնոյ՝ յերկուս աւուրս հասին 'ի պատիողոս, որ և բուտեօլի (ամկ. բոցցուլօ,) 'ի վիճակին հռոմայ. ուր և գտեալ եղբարս հաւատացեալս՝ ըստ աղաչելոյ նոցա եղեն առ նոսա աւուրս եօթն. որում զիջաւ և հարիւրապետն յուլիոս, (զորմէ կարծեն ոմանք, թէ և նա եկեալ իցէ 'ի հաւատս

քսի.) և ապա յուղի անկան ցամաքաւ մտանել 'ի Հռոմ։

Եւ ահա զճանապարհայն ընդ առաջ ելին նոցա ըստ յառաջագոյն տեղեկութեն հաւատացեալքն 'ի Հռոմայ, ոմանք 'ի տեղին կոչեցեալ որգոստա կամ Հրապարակ Ապպեայ. և այլք 'ի վայրն անուանեալ Երիցն կրպակաց, յայնժամ ուրախ եղև ոք առաքելոյն, զի արժանի արար զնա ած տեսանել և զհօտն քսի՝ որ 'ի Հռոմ ընդ ձեռամբ սբյն պետրոսի առաքելոյն պետի. և գոհացեալ զայ՝ քաջալերեցաւ մտանել 'ի նոր հանդէս առաքինի վաստակոց և նահատակութեան 'ի կայսերական քաղաքի։ Եւ իբրև մտին 'ի Հռոմ, հարիւրապետն յանձնեաց զայլս 'ի կապելոց 'ի ձեռս մեծի բանտապետին՝ պահել զնոսա 'ի բանտի, մինչև ելցէ դատ նոցա յատեան կայսեր. այլ վասն պօղոսի՝ եթէ հարիւրապետն վկայեալ իցէ 'ի բարին, որպէս պարտական էր, և եթէ հաւատացեալքն աղաչեալ իցեն զիշխանսն, եղև այս շնորհ, զի թէպէտև կապեալ, այլ արձակ յառանձին տուն բնակեսցէ իբրև 'ի դիպահոջ հանդերձ զինուորաւ միով, որ կարգեցաւ 'ի պահպանութիւն նորա. մինչ և նա յանդիման լիցի կայսեր։

Յայնմ ժամանակի վերստին ժողովեալ էին 'ի բնակութի իւրեանց բազմութիւք հրէից՝ մեծամեծք և փոքունք, զորս 'ի բաց հանեալ էր 'ի սահմանաց Հռոմայ կղոդիոս կայսր։ Արդ՝ պօղոս յետ երից աւուրց գալստեան իւրոյ ետ կոչել զգլխաւորս 'ի նոցանէ առ ինքն. և յայտնեաց նոցա զպատճառս բողոքելոյ իւրոյ առ կայսր և գալոյ 'ի Հռոմ, ոչ որպէս թէ չարախօսել զազգէն, այլ 'ի ցուցանել զանմեղութի իւր և զիրաւունս ընդդէմ յաչաղկոտաց և չարախօսաց իւրոց, և զուղղութի ընթացից վարդապետութե իւրոյ, որ ոչ է արտաքոյ օրինաց և մարգարէից, այլ ապացոյց ճշմարտութե նոցին գալստեանն քսի. իբր զի առէ, վասն այսպիսի յուսոյ տանն իսրայէլի կամ 'ի շղթայս յայսոսիկ։ Իսկ նոքա ասեն, մեք վասն քո չընկալաք ինչ չարախօսութի բանիւ՝ կամ գրով 'ի հրէաստանէ. բայց ցանկամք

'ի քէն լսել վասն նոր վարդապետու՟թ՟եդ, որ ամենայն ուրեք հակառակու՟թի կրէ։

Ժամ եդեալ նմա օր մի՝ եկին յիջեւան նորա բազումք. և առաքեալն քս՟ի խօսեցաւ ընդ նոսա զօրագո՟յն յայտնել մինչև ցերեկոյ վկայութեամբ հին օրինաց զճշմարտու՟ի աւետարանին. մինչև բանադատել զամենայն աղջամխտ լօղս վ՟ն Յս՟ի՝ թէ նա ինքն է խոստացեալն մեսիա, այսինքն քս՟. Ոմանք ցուցին հաւանիլ, և այլք անհաւան գտան. և անմիաբան գտեալ՝ 'ի բաց երթային. Յայնժամ զվերջին վճիռ տիրական ցասման ծանոյց նոցա առաքեալն, թէ այդ եւս խոստամբու՟թի ձեր կանխաւ գուշակեալ է 'ի հոգւոյն սր՟յ 'ի ձեռն ամովսածնին. թէ լսելով լուիջիք, և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք, և մի տեսջիք. և զի այս այսպէս, եթէ հրէայք կամակուրացեալ օտարանան 'ի փրկու՟է՝ որում սպասէին, գիտասջի՟ն՝ զի և հեթանոսաց առաւելապէս եղև փրկու՟թիս այ՟, (ըստ ասացելումն, և նա է ակնկալու՟թի հեթանոսաց,) նոքին և լուիցեն։

Սովին սկզբնաւորութեամբ յառաջ խաղացոյց առաքեալն հեթանոսաց զքարոզու՟ի աւետարանին և 'ի հռոմ, և դարձոյց զբազում՝ գործակցու՟թ՟ե սր՟յն պետրոսի. զի թէպէտև էր 'ի կապանս, այլ որպէս ինքն իսկ ասէր՝ բանն այ՟ ոչ եթէ կապեալ իցէ. նմին իրի 'ի տան անդ՝ ուր մնաց 'ի գիտահոջ զամս երկուս, իբրև 'ի սեպհական բնակարանի՝ զորոյ զվարձս ինքն վճարէր նպաստիւք հաւատացելոց, ընդունէր զամենայն եկեալս 'ի հեթանոսաց՝ որպէս և 'ի հրէից. քարոզէր նոցա զարքայու՟թի՟ւն այ՟, և ուսուցանէր վասն տն՟ յի՟ քի՟ անխափան ամենայն համարձակութեամբ։

Զայսօրինակ գլխաւորէ նք՟ աւետարանիչն ղուկաս գործակիցն պօղոսի՝ զընթացս գործոց առաքելոց. վասն որոյ և որինչ զկնի գործեցան յառաքելոց առհասարակ, կամ ուր այլ շրջեցան նոքա 'ի կողմանս կողմանս, և ուր կի՟ զմարդ կատարեցան վկայութեամբ վասն անուանն տն՟, յայլոց եկեղեցական մատենագրու՟թ՟նց ուսցին ընթերցասէրք, թէպէտև

ոչ բովանդակապէս. որպէս փոքր 'ի շատէ գտանես հաւաքեալ 'ի վարս ս՟ց: Յայսմ վայրի գլխոյ առցէ և իմ երկասիրութ՟ի 'ի խոր ծերութեան՝ յօգուտ մանկանց եկեղեցւոյ, 'ի պատիւ ս՟ց առաքելոյ, և 'ի փառս կենարար փրկչին մերոյ՝ տ՟ն և վարդապետի նոցա և մեր. որում հանդերձ հաւր և հոգւոյն սրբոյ վայելէ երկրպագութ՟ի հոգւով և ճշմարտութեամբ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՈՐ ԷԻ

ՀԱՄԱԲԱՐԲԱՌՔ ՉՈՐԻՑ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ
ԵՒ ԳՈՐԾՈՑ ԵՒ ԹՂԹՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ

*Պատուաստութք և քանի մի խրատ յարտաքին մատենագրաց
վասն այնր միջոցի ժամանակին. ըստ քաղուածոյ Եւսե-
բիոսի, որ ուրեք միաբանի ընդ կարգի բանից Կաղի-
նոսի, և ուրեք դոյզն ինչ այլազգ շա-
րակարգի։*

## ՀԱՄԱՌԱՐՌԱՕՏՔ

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Ամ Յետ վեց ամսոց յղութեն Եղիսա- Ղկ. Ա.
Տն. բեթի՝ իջուցին բանին այ յարգանդ կու-
0. սին գաբրիէլեան աւետեօք։

Ծնունդ փրկչին տն մերոյ Յսի Մտթ. Ա.
Քսի որդւոյն այ՝ 'ի մարիամայ՝ որ կոյս Ղկ. Բ.
ածածնէ, 'ի բեթղեհէմ հրէաստանի,
այսինքն յերկրին յուդայ։

Տեսիլ հրեշտակին առ հովիւս. և Ղկ. Բ.
գալ տեսանել նց զՔսն յայրին բեթ-
ղեհէմի 'ի մսուրն անբանից խանձար-
րապատ։

1. Ութօրեայ թլփատութն. յորում Ղկ. Բ.
կոչեցաւ անունն Յիսուս, որ թարգ-
մանի փրկիչ։

Գալուստ մոգուց յարևելից՝ առ- Մտթ. Բ.
զագուշակ տեսլեամբ յերկրպագութն
փրկչին աշխարհի. զոր խնդրեալ յե-
րուսաղէմ, և ոչ գտեալ, եկին 'ի բեթ-
ղեհէմ. և մատուցին նորածին ար-
քային տիեզերաց զպատարագս իւ-
րեանց խորհրդաւորս, ոսկի, կնդրուկ,
և զմուռս. և ըստ յայտնութե զոր
ընկալան 'ի ձեռն հրեշտակի, ոչ դար-
ձան յերուսաղէմ առ հերովդէս, այլ
ը այլ ճանապարհ գնացին յաշխարհն
իւրեանց։

Ը. ՙՔառասնօրեայ գալուստ տն 'ի տա- Ղկ. Բ.
տն. ճարն. զոր ըստ օրինաց բերին մա-
1. րիամ և յովսէփ յանդիման առնել
տն: Սիմէոն ծերունին ընկալեալ անդ
զմծորդին 'ի գիրկս իւր՝ քարոզեաց
յայտնապէս զմծութիւն նորա 'ի լոյս
ամենեցուն, յայտնելով զնա տր կե-
նաց և մահու, և ակնկալեալ փրկիչ
աշխարհի, լոյս 'ի յայտնութիւն հեթա-
նոսաց, և փառք ժողովրդեանն իս-
րայէլի: Զնոյն հաստատեաց
անդ և աննա մարգարէ դուստր փա-
նուէլի յազգէ ասերայ: Ապա յովսէփ
և մարիամ դարձան հանդերձ յիւ 'ի
գալիլեա 'ի քաղաքն իւրեանց նազա-
րէթ:

Յովսէփ հրաման առեալ 'ի հրեշ-
տակէ առնու զմանուկն յս հանդերձ
մարեմաւ մարբն նորա, և խոյս տայ
յեգիպտոս. ուր և եկաց մինչև 'ի
մահն հերովդի՝ որ խնդրէր զանձն
մանկանն:

Իսկ հերովդէս՝ որ կարծէր զյս մա- Մտթ. Բ.
նուկ տակաւին 'ի բեթղեհէմ լինել,
առաքեաց զզօրականս իւր անդր, և
ետ անողորմ կոտորել զամենայն ման-
կունս՝ որ էին 'ի բեթղեհէմ և 'ի սահ-
մանս նորա, որպէս զի ընդ նոսին մեռ-
ցի և յս:

Այլ 'ի դերև ել խորհուրդ չարին.
և ինքն հերովդէս 'ի նմին ամի անկեալ
'ի հիւանդութիւն անբժշկելի՝ չարաչար
մահու մեռաւ յերեսաց անհնարին
ցաւոց փտութեան բոլանդակ մարմնոյն.
որպէս յերկար գրէ յովսեպոս եբ-
րայեցի՝ այլովքն հանդերձ: Յաւելու
մակրոբիոս, թէ լուեալ օգոստոսի
կայսեր, զի հերովդէս ընդ այլ ման-

Ր՟ կուսն յերկեմենից և 'ի խաւարն՝ սպան
ՔՆ. 'ի յետին աւուրս և զլուր զաւակն
1. զանտիպատրոս, ասաց. լաւ է խոզ լի-
նել Հերովդի (զոր չսպանանէ), քան
որդի։

Փոխանակ Հերովդի թագաւորէ որ- Մտթ. Բ։
դի նորա արքեղայոս, հաւանութ. կայ-
սեր։ Յայնժամ հրեշտակ տն ազդեաց
յովսեփայ յեգիպտոս, թէ մեռաւ Հե-
րովդէս՝ որ խնդրէր սպանանել զմ.
վասն որոյ դարձարուք աստ յերկիրն
իսրայէլի։ Ուր և եկեալ յովսէփ՝
խորհէր երթալ բնակել 'ի բեթղե-
հէմ. այլ լուաւ՝ թէ յերկրին յու-
դայ (որ և հրէաստան կոչի) թագա-
ւորեալ է արքեղայոս որդի հերովդի,
վասն որոյ երկեաւ մտանել յայն եր-
կիր, ուր էր և բեթղեհէմ. ապա ազդ-
մամբ հրեշտակին եանց 'ի գալիլեա,
որ էր ընդ իշխանութ. այլոյ, և եկեալ
բնակեցաւ 'ի նազարէթ. ուստի և Յս
նազովրեցի կոչեցաւ։

'Ի նմին տարւոջ ասի լինել ապստամբութիւն թեւդասայ, նշանակեալն 'ի գործս առաքելոց. Ե. 36։

5. Արեգական խաւարումն ըստ մասանեայ ասի լինել 'ի 28. մարտի՝ հինգ ժամու զկնի միջօրէի։

6. Արքեղայոս արտաքսմամբ լինի հրամանաւ կայսեր 'ի բենա կամ 'ի վիեննա գաղղիացւոց, ըստ յովսեպոսի. և անդ մեռաւ ըստ ստրաբոնի։

7. Երկրորդ աշխարհագիր լինի ըստ առաջնոյն 'ի դատաւորութե կուիրինեայ 'ի հրամանէ կայսեր. և յայնմ ժամանակի եղև ապստամբութիւն յուդայի գալիլեացւոյ. (գործ. Ե. 37։)

Ռ.Տ Այք որոշեն զհասարակ թուականն
թու. քնի 'ի բուն ամէ ծննդեանն, զերկո-
8. տասանամեայ լինելն փրկչին յիշեն
Հաւ յայսմ միջոցի. յորում ժամանակի
12. ելեալ ընդ տիրամօր և ընդ յովսե-
փայ 'ի տաճարն երուսաղէմի՝ 'ի տօնի
զատկին, յետ անել նց 'ի ճանապարհ
մն դառնալոյ՝ ինքն մնաց անդ մինչև
յետ եւօրեայ 'ի խնդիր լինելոյ՝ ե-
կեալ անդրէն գտին զնա 'ի տաճա-
րին, զի խօսէր ը̅ վարդապետս, տա-
լով զճաշակ ա̅ծային իմաստութե̅ իւ-
րոյ. ապա դարձաւ ընդ նոսա 'ի նա-
զարէթ. և եկաց ընդ աստն կենօք. և
էր նոցա հնազանդ, ասէ գիր. յո-
րում բովանդակի գլխաւոր ընթացք
վարուց փրկչին մերոյ յօրինակ մեզ:

12. Տիբեր գահակից լինի օգոստեայ
Հաւ կայսեր. ուստի հաշուեն ոմանք զհրն-
15. գետասաներորդ ամն տիբերեայ 'ի ժա-
մանակի մկրտութե̅ն քնի:

14. Մահ օգոստոս կայսեր, 'ի 19. օ-
Հաւ գոստոս ամսոյ. որում յաջորդէ յա-
17. ւանձին կայսերութե̅ տիբերիոս:

15. Ռուաքի 'ի տիբերեայ 'ի դատաւո-
րութի հրէաստանի վաղերիոս գրա-
տոս:

19. Ծնունդ միամօր դստեր յայրոսի Ղկ. Ը:
Հաւ ժողովրդապետին, զոր յետ երկոտա-
22. սան ամաց յն յարոյց 'ի կեանս:

Ակիզբն հիւանդութե̅ տեռատես Մրկ. Ե.
կնոջն, զոր զկնի երկոտասան ամաց
բժշկեաց յն՝ 'ի մերձենալ նր 'ի հան-
դերձս իւր:

23. Յաւուրց անտի մակաբայեցւոց,
Հաւ մինչուանդ 'ի թագաւորութե̅ հերովդի՝
26. այլայլեալ էր իշխանութի քահանայ-
ապետաց հրէից. զի ոչ ոք մշտնջե-

Ք.Ա. նաւորէր ’ի կեանս իւր՝ ըստ կարգի
ՃՆ. օրինաց, այլ կաշառօք կամ ըստ հա-
26. ճոյս թագաւորաց և դատաւորաց ամ
ըստ ամէ և սակէպ փոփոխէին. և ան-
կեալքն յիշխանութէ եւս կրէին զա-
նուն պատուոյն. ուստի և բազմնայր
թիւ քահանայապետ անուանելոց. որ
էր նշանակ բարձման հնոյ քահանայ-
ապետութեան ղեւտացւոց ։ Իսկ ըստ
այսմ յայսմ ժամանակի վաղերիս
դատաւոր ընկէց ’ի քահանայապետու-
թէ զանանոս ոմն, որ և աննա կոչի,
և եդ փոխանակ նորա զիսմայէլ փա-
ւեան. յետ սակաւուց և զնա ընկէց՝
առէ յովսեպոս ։
27. ’Ի տեղի իսմայէլի կարգեցաւ քա-
հանայապետ հրէից եղիազարոս՝ ըստ
հրամանի դատաւորին հռովմայեց-
ւոց ։
28. Յետ տարւոյ մերժեցաւ եղիազա-
րոս, և կացուցաւ քահանայապետ սի-
մոն կամիթեան ’ի ձեռն նոյն դատա-
ւորի ։
26. Որպէս և ’ի գալ ամին միւսոյ՝ ըն-
Մտթ կէց վաղերիոս դատաւոր զսիմոն, և
29. կացոյց քահանայապետ զյովսէփ՝ զա-
նուանեալն կայիափա, որ փեսայա-
ցեալ էր աննայի կամ անանոսի եր-
բեմն քահանայապետի ։ ’Ի նմին տար-
ւոջ՝ փոխի ’ի դատաւորութէ և ինքն
վաղերիոս գրատոս, և կարգի ’ի կայ-
սերէ դատաւոր հրէաստանի պիղա-
տոս պոնտացի ։
29. Սկիզբն քարոզութե յովհաննու կա- Մրկ. Ա։
բապետի և մկրտչի, որ և կոչի սկիզբն
Աւետարանի Յնի · Քնի. որ եղև իբր
հազար հինգ հարիւր ամօք զկնի հիմ-
նադրութե մովսիսական օրինաց. քան-

Ի՟ զի յայսմ ամի էր երեսներորդ և վեր-
Թ՟ն. ջին յոբելեան սահմանեալն 'ի մովսի-
29. սէ, այն է ամ թողութեան յիսնամեան.
ուստի երեսներորդ յոբելեանն ան-
կաւ 'ի սկիզբն

30. Երեսներորդ ամի կենաց փրկչին. Ղկ. Գ.
այն է ժամանակ մկրտութեան Քի՟ 'ի
յորդանան, զի էր յայնժամ Յն՟ ա-
մաց երեսնից՝ սկսեալ 'ի ժե՟ ամի տի-
բերեայ կայսեր. յորում դատաւոր
հրէաստանի էր պոնտոս պիղատոս, և
չորրորդապետ գալիլեայ հերովդէս
անթիպաս, և փիլիպպոս եղբայր
նորա չորրորդապետ իտուրեայ և տրա-
քոնիայ. և լիւսանիաս չորրորդապետ
աբիլենեայ. և քահանայապետք հրէից
անուանեալք աննա և կայիափա ։

Յաւուր մկրտութեան փրկչին՝ յայտ- Մտթ. Գ.
նեցաւ աշխարհի խորհուրդ ա՟ծայայտ- Մրկ. Ա.
նութեան առաւել քան յաւուր ծնն- Ղկ. Գ.
դեան իւրոյ, և յաւուր երկրպագու-
թեան 'ի մոգուց. քանզի յայտնի եղև
ոչ միայն խորհուրդ մարդեղութեան
որդւոյն այ՟, այլև խորհուրդ ամենասբ՟
երրորդութե՟ն, այսինքն երեքանձնեայ և
մի ա՟ծութե՟ն, յորժամ հայր 'ի վերուստ
յերկնից յայտնաբարբառ ձայնիւ
վկայեաց վասն Յսի, դա է որդի իմ
սիրելի. և հոգին որպ՟ աղաւնակերպ
էջ 'ի վերայ նորա ։ Եւ ըստ նմին ա-
ռաւել համարձակ սկսաւ քարոզել
մկրտիչն յովհաննէս զառաքումն միած-
նին հօր 'ի փրկութիւն տիեզերաց, և
յորդորել զամենեսին յապաշխարու-
թի և 'ի հաւատս եկելոյ հասելոյ մե-
սիային, որում ակն ունէին 'ի վաղուց
հետէ, վկայելով յայտնապէս՝ թէ սա
ինքն Յս է Քս, այսինքն օծեալն այ՟,

Ը՜ որ ըստ երբայեցւոց՝ մեսիա, խոստա-
փն. ցեալն նահապետաց, և աւետարա-
30. նեալն ՚ի մարգարէից ։

Քառասնօրեայ առանձնութն Ք՛ի յանապատ հոգւոյն խրով ՚րեվ, և անսուաղ պահք. և զկնի՝ յաղթութի նորա երրեակ փորձութեց սատանայի. յետ որոյ մատեան հրեշտակք, և պաշտէին զՏ՛րն իւրեանց ։ Ճռբ. գ: Ճրէ. ա: Ճէ. գ:

Դարձ Յ՛ի զօրութբ հոգւոյն ՚րյ ՚ի գալիլեա ։ Ճէ. գ:

՚Ի հարցանել հրէից զմկրտիչն յովհաննէս՝ թէ ի՞նքն իցէ ակնկալեալ մարգարէն, կամ նա ինքն սպասեալ մեսիայն, վկայեաց, թէ չեմ ես մարգարէն այն, չեմ ես քնն, այլ առաքեալ եմ առաջի նորա. և յայտ արար պէսպէս նշանակօք՝ թէ Յ՛ս է այն՝ զոր խնդրէքն, այսինքն Ք՛ս. և ես սպասաւոր եմ նորա յետին՝ յորդորել և պատրաստել զձեզ յընդունելութի նորա. նա է փեսայն. ես բարեկամ փեսային ։ ջհ. ա. և է:

՚Ի վաղիւ անդր միւսանգամ տեսեալ յովհաննու զՅ՛ս՝ ասաց յայտնապէս առ ժողովուրդն վասն նորա. ահա գառն ա՛յ, որ բառնայ զմեղս աշխարհի. սա է՝ զորմէ եմն ասէի, և այլն ։ ջհ. ա:

՚Ի միւս ևս վաղուի դարձեալ տեսանէ յովհաննէս զյս, և դարձեալ վկայէ, ահա գառն ա՛յ ։ Զոր լուեալ երկուց յաշակերտաց նորա՝ գնացին զկնի Յ՛ի, և ագան առ նմա. և աշակերտեցան նմա ։ Մի ՚ի նոցանէ էր անդրէաս. որ ձգեաց յաշակերտութիւն Յ՛ի և զեղբայրն իւր զսիմոն. զոր ք՛ս անուանեաց կեփաս, ջհ. ա:

Ա՞ որ է եբրայեցերէն կէֆ. և յունարէն
Փն. պետրոս ասի, անուանակիր եղեալ
30. վիմի, և գլուխ առաքելոց։

Ի յաջորդ աւուր աշակերտեաց յս զփիլիպպոս՝ զքաղաքակիցն պետրոսի և անդրէի 'ի բեթսայիդայ գալիլեացւոց։ Իսկ փիլիպպոս եած առ յս նաև զնաթանայէլ. զոր գովեաց յս որպէս արդարև իսրայէլացի աննենգ. և յայտ արար թէ ճանաչէր զնա և զխորհուրդս սրտի նորա՝ մինչև էր կոչեցեալ 'ի փիլիպպոսէ։ Այլ թէ ո՞ իցէ նաթանայէլն, որ և զկնի յարութեն տն յիշի ընդ աշակերտս, մնայ անյայտ. ոմանք նոյն առնեն ընդ սիմոնի կանանացւոյ, այլք ընդ բարթուղիմեայ։ յհ. ա։

Յաւուրն երրորդի 'ի սկսանելոյ տն ժողովել իւր աշակերտս 'ի գալիլեայ, կոչեցաւ յս հանդերձ մարեմաւ մարբն և աշակերտօք իւրովք 'ի հարսանիս՝ որ եղև 'ի կանա քաղաքի գալիլեացւոյ. ուր և 'ի խնդրոյ մօրն սկիզբն արար յայտնի նշանաց, փոխարկելով զջուրն 'ի գինի. և հաստատեաց զաշակերտսն 'ի հաւատս։ յհ. բ։

Յետ այսորիկ էջ և զտեղի կալաւ 'ի կափառնաում քաղաքի հանդերձ մարբն և աշակերտօքն, ոչ բազում ինչ աւուրս։ յհ. բ։

Առաջին զատիկն յաւուրս քարոզութեն փրկչին. յորում ժամանակի էլ յս յերուսաղէմ այլովքն հանդերձ. և մտեալ 'ի տաճարն՝ սրբեաց յանօրէն սովորութենց վաճառաց անդ եղելոց խարազանաւ 'ի բաց վարելով զվաճառօղս և զգնօղս։ Իսկ սկսաւ առնել զքնծագործ հրաշս պէսպէս. ո- յհ. բ։

Ր՜ ըոլք հաւատացին 'ի նա բազումք.
ՓՆ. բայց ինքն սրտագէտն յս ոչ հաւա-
30. տայր զանձն նոցա, զի գիտէր զխոր-
հուրդս միոյ միոյ 'ի նոցանէ:

Նիկոդեմոս իշխան հրէից և վար- յհ. Գ:
դապետ՝ 'ի ծածուկ աշակերտի Յսի. և լուեալ զխորհուրդ վերստին ծննդեան 'ի հգ աւազանէն՝ զարմանայ. զի ցայնժամ հնոյ ևեթ օրինաց էր գիտակ՝ անգէտ նորումն:

Յն գայ յերուսաղէմէ հանդերձ աշակերտօքն 'ի հրէաստան, և անդ իբր զամիսս ութ առեալ զտեղի՝ տայ մկրտել 'ի ձեռն աշակերտաց իւրոց զհաւատացեալս, որք յառաջն զմկրտութիւն ևեթ զյովհաննու գիտէին. որպէս և յովհաննէս անպակաս մկրտէր զբազումս յապաշխարութի 'ի յայենովն, և առաքէր յաշակերտութիւն յսի:

Խնդիր ընդ աշակերտս յովհաննու և ընդ հրէայս վասն սրբուէ, այսինքն վասն խտրական մաքրութեց:

Յովհաննէս խրատէ զաշակերտսն իւր չնախանձել ընդ փառաւորութի անուանն Յսի. և մեկն քարոզէ՝ թէ նա ինքն է որդի այ, և տէր փառաց:

Բանտարկութի յովհաննու 'ի հե- մտթ. ԺԴ:
րովդէ չորրորդապետէ 'ի պատճառս մրկ. Զ:
կնոջ փիլիպպոսի եղբօր նորա՝ եղելոյ հոմանի նորին:

Լուեալ յսի զբանտարկութի յով- մտթ. ԺԴ:
հաննու՝ եթող զհրէաստան, և դար- յհ. Դ:
ձաւ անդրէն 'ի գալիլեա:

Յն աշակերտէ զճանապարհայն յհ. Դ:
զկինն սամարացի, և զսամարացիս զբնակիչս սիւքար աւանի. ուր դադա-

Մնացեալ զաւուրս երկու՝ անցանէ 'ի Գա-
Յհ. լիլեա ։

30. Գալիլեացիք ընդունին սիրով զնա վասն նշանացն, զորս տեսեալ էր և նոցա յԵրուսաղէմ. և 'ի քարոզել նորա 'ի ժողովսրանս նոցա՝ հռչակի համբաւ նորին ։ Մրկ. Ա։ Ղկ. Դ։ Յհ. Դ։

'Ի Կանա գալիլեացւոց առնէ Տէրն զերկրորդ նշան, 'ի հեռուստ բժշկելով զորդի Թագաւորազնին՝ որ կայր հիւանդ 'ի Կափառնաում։ Յհ. Դ։

31. Առնէ և այլ նշանս 'ի Կափառնաում. և ապա գայ 'ի Նազարէթ, ուր սնեալն էր. անդ 'ի ժողովրդանոցն մեկնէ զբանս եսայեայ վասն իւր. ընդ որ զչարեալ նազարէթացւոց՝ հանեն զնա յարտեւան լերինն՝ գահավէժ առնել զնա. այլ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր ։ Ղկ. Դ։

Թողեալ յոհ զնազարէթ եկեալ բնակէ 'ի Կափառնաում. և ուսուցանէ 'ի շաբաթս, մինչև զարմանալ ամենեցուն ։ Մտթ. Դ։ Մրկ. Ա։ Ղկ. Դ։

Կարկեցուցանէ զայսն պիղծ 'ի ժողովրդանոցի Կափառնաումայ ։ Մրկ. Ա։ Ղկ. Դ։

Ելեալ 'ի ժողովրդենէ այսինքն 'ի ժողովրդանոցէ (որ և սինակօկա), մտանէ 'ի տուն պետրոսի և անդրէի. և բժշկէ զտապացեալն ջերմամբ զզոքանչ պետրոսի ։ Ընդ մտանել արեւուն փարատէ և զցաւս բազմաց, և տայ լռել այսոց պղծոց ։ Մտթ. Ը։ Մրկ. Ա։ Ղկ. Դ։

Ընդ առաւօտն ելանէ յանապատ տեղիս, և կայ յաղօթս ։ 'Ի խնդրել պետրոսի և այլոց աշակերտաց և ամբոխին՝ ունել զնա 'ի քաղաքի անդ, ասէր. և այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել ։ Մրկ. Ա։ Ղկ. Դ։

ԻԵ Շրջեալ ընդ ամենայն գալիլեա՝ Մրկ. Ա:
Փն. ուսուցանէ 'ի ժողովուրդս, և հանէ Ղկ. Դ:
31. զդևս:

Իր ծովեզերբն գեննեսարեթայ Ղկ. Ե:
նեղեալ յամբոխէն՝ եմուտ 'ի նաւակ
սիմոնի պետրոսի, և անտի ուսուցա-
նէր զժողովուրդն. և յետ դադարե-
լոյ 'ի խօսիցն՝ արար զքանչելիս մեծի
որսոյ ձկանցն. մինչև յահի լինել
պետրոսի և որոց ընդ նմա:

Յայնմհետէ յայտ արար յս̃ պետ- Մտթ. Դ:
րոսի և անդրէի, և որսակցաց նո- Մրկ. Ա:
ցա յակոբայ և յովհաննու որդւոցն Ղկ. Ե:
զեբեդեայ՝ գալ 'միշտ զկնի իւր, և
որսալ փոխանակ ձկանց զմարդիկ
'ի կեանս. և նոցա թողեալ զուռ-
կանս և զնաւս՝ գնացին զհետ նո-
րա:

Միւսանգամ շրջեալ յս̃ի ընդ ամե- Մտթ. Դ:
նայն գալիլեա՝ ուսուցանէր, և բժշկէր
զամենայն ախտս. և ել լուր նորա ը̃
ամենայն պաղեստին և յերկիրն ասոր-
ւոց, և երթայր բազմութ̃ի զհետ նո-
րա:

'Ի քաղաքի ուրեք բժշկեաց զբո- Մտթ. Ը:
րոտն. (որ ըստ մատթէոսի յիջի յետ Մրկ. Ա:
իջանելոյն 'ի լեռնէ.) և գային առ Ղկ. Ե:
յս̃ յամենայն կողմանց, մինչև չկա-
րել յայտնապէս 'ի քաղաքս մտանել.
այլ արտաքոյ յանապատ տեղիս ագա-
նէր, և կայր յաղօթս:

Դարձեալ եմուտ 'ի կափառնաում Մտթ. Թ:
իբրև 'ի քաղաք ստէպ բնակութե̃ իւ- Մրկ. Բ:
րոյ. և յուսուցանել 'ի տան՝ իջուցին Ղկ. Ե:
զանդամալոյծն մահճօք 'ի ցուոց ա-
ռաջի յս̃ի. և 'ի թողուլ նորա զմեղս
հիւանդին՝ իբրև գայթակղէին փա-
րիսեցիք, բժշկեաց անդէն և զմար-

Մ: մին նորա. ընդ որ զարմացան և ամե-
ռն. բերան եղեն չարախօսք:

31. Ելեալ անտի՝ գնաց 'ի ծովեզրն. Մտթ. Դ:
և 'ի ժողովել բազմաց՝ խօսէր նոցա Մրկ. Ա:
զբանն կենաց: Եւ յանցանել իւրում Ղկ. Ե:
առ մաքսատամբ՝ կոչեաց զՂեւի, որ և
Մատթէոս մաքսաւորն. և նորա վաղ-
վաղակի թողեալ զամենայն ինչ իւր՝
գնաց զհետ նր. և զայն օր արար
նմա Մատթէոս ընդունելութիւն՝ հան-
դերձ ծանօթ մաքսաւորօք. և 'ի տրտն-
ջել փարիսեցւոց՝ թէ ընդէր սեղա-
նակից լինի նր մաքսաւորաց և մեղա-
ւորաց, նա արդարացոյց զամբաստա-
նեալս քան զամբաստանօղս:

Յորժամ անցանէին ընդ արտորայս Մտթ. ԺԲ:
յաւուր շաբաթու, և աշակերտքն կո- Մրկ. Բ:
զեալ զհասկս՝ շփէին ընդ ափ և ու- Ղկ. Զ:
տէին, բամբասեցին զնոսա փարի-
սեցիքն. իսկ նր արդարացոյց զնո-
սա, և մեկնեալ զօրէնս պահպանու-
թեան շաբաթու՝ լռեցոյց զբամբա-
սօղս:

Երկրորդ զատիկ յաւուրս փրկչին.
ուստի սկսանի ըստ ոմանց երկրորդ
ամն եօթանասներորդ եօթներորդին
դանիէլի:

'Ի տօնի անդ Հրէից ել նր յԵրու- Յհ. Ե:
սաղէմ. և բժշկեաց 'ի շաբաթու զե-
րեսուն և ութամեայ հիւանդն զան-
կեալն 'ի Բեթհեզդա. ընդ որ զչա-
րէին Հրէայքն, և կամէին սպանանել
զբարերար փրկիչն իբրև լուծիչ շա-
բաթու, մանաւանդ վասն կոչելոյ Հայր
իւր զԱծ:

Յայլում շաբաթու բժշկեաց 'ի ժո- Մտթ. ԺԲ:
ղովրդանոցի զայրն՝ որոյ ձեռն իւր Մրկ. Գ:
աջ գօսացեալ էր: Վասն որոյ խոր- Ղկ. Զ:

[illegible] հուրդ արարին փարիսեցիքն ընդ Հե-
[illegible] րովդիանոսս՝ սպանանել զՆա:

31. Իսկ Յս գնացեալ 'ի կողմանս ծո- Մտթ. ԺԲ:
վու՝ քարոզէր և բժշկէր. և 'ի բազ- Մրկ. Գ:
մանալ ամբոխին՝ ասաց աշակերտացն,
զի կայցէ նաւակ մի պատրաստական՝
մտանել և մեկնել յամբոխէ:

Ելեալ երբեմն 'ի լեառն՝ անցոյց Մրկ. Գ:
զգիշերն յաղօթս. և 'ի լինել առա- Ղկ. Զ:
ւօտու՝ ընտրեաց 'ի թուոյ աշակերտե-
լոց երկոտասան ոգիս, զորս և առա-
քեալս անուանեաց:

Եւ իջեալ նոքօք 'ի տեղի մի տա- Ղկ. Զ:
փարակ, իբրև հասին անդր բազմու-
թիւք՝ որոց բերեալ էր ընդ իւր զախ-
տաժէտս, բժշկեաց զամենեսին 'ի
պէսպէս ախտից:

Իսկ իբրև եկն 'ի տուն, դարձեալ Մրկ. Գ:
զեղաւ 'ի վերայ ամբոխն. մինչև չգտա- Մտթ. Է:
նել Նմա և առաքելոց ժամանակ հաց Ղկ. Զ:
ուտելոյ: Իսկ ազգականք Յի 'ի վե-
րայ հասեալ՝ կամէին յափշտակել
զՆա, կարծելով զՆա առ բազում աշ-
խատութեան և վարդապետութեան ուշա-
բարձ լինել կամ յայլոց խելս. այս է ա-
սելն, համարէին՝ թէ մոլեգնեալ իցէ:

Տեսեալ Յի զբազմութիւն ժողովր- Մտթ. Է:
դեան՝ ել 'ի լեառն. և իբրև նստաւ Ղ. Է:
անդ, մատեան առ Նա աշակերտքն Նո-
րա. եկին հասին զկնի և խուռն բազ-
մութիւն մարդկան: Յայնժամ բացեալ
Յի զածայլն բերան իւր՝ սկսաւ խօ-
սել նախ առ աշակերտսն. և ապա
առ ամենեսին՝ զութ երանութիւս, և
զայլ ևս երկնաւոր վարդապետութիւս
և օրինադրութիւնս՝ իշխանաբար, որ-
պիսի ինչ չէր լուեալ նոցա 'ի դպրաց
և 'ի րաբունեաց հրէից:

Ն՟Տ Իբրեւ կատարեաց զամենայն բանս Մտթ. Ը:
Փտ. 'ի լսելիս ժողովրդեանն, եկն եմուտ Ղկ. Է:
31. անդրէն 'ի կափառնաում. եւ բժշկեաց
'ի հեռուստ զմերձեալն 'ի մահ զան-
գամալոյծ ծառայ հարիւրապետին
հռովմայեցւոց, գովելով զհաւատ նո-
րա քան զիսրայէլացւոց:

'Ի վաղիւ անդր երթայր 'ի Նային Ղկ. Է:
քաղաք. եւ տեսեալ զորդի այրւոյն՝
զոր տանէին 'ի թաղել, գթացեալ 'ի
մայրն՝ յարոյց զմեռեալն. եւ հռչակե-
ցաւ համբաւս այս ընդ ամենայն տե-
ղիս:

Իբրեւ տարան զլուր սքանչելեաց Մտթ. ԺԱ:
Յին առ յովհաննէս 'ի բանտ նր, կա- Ղկ. Է:
մեցեալ հաւանեցուցանել զաշակերտս
այլովքն հանդերձ՝ թէ նա է Քն, խոր-
հրդով առաքեաց զերկուս յաշա-
կերտաց իւրոց առ նա՝ հարցանել, ե-
թէ դո՞ւ ես մեսիայն՝ որ գալոցն էր,
եթէ այլում ակն կալցուք: Յայնժամ
արար նա առաջի եկելոցն զայլ եւս
բազում նշանս սքանչելեաց 'ի հաստա-
տութիւն ճշմարտութեան, թէ ինքն իսկ
Քն է. եւ յետ մեկնելոյ նոցա անտի՝
ուսոյց տրն մեր ժողովրդեան, թէ ա-
ռաքելն յովհաննու զիւրսն 'ի հարցա-
նել՝ ոչ է նշանակ երկբայութեան, այլ
հաստատութեան ճշմարտութեան. եւ գո-
վեաց զմկրտիչն իւր գերագոյն լինել
քան զամենայն մարգարէս:

Աղաչեաց սիմոն ոմն փարիսեցի Ղկ. Է:
զՅն մտանել 'ի տուն նորա եւ ճա-
շել. եւ 'ի բազմել անդ՝ եկն կին մի
մեղաւոր, որ արտասուօք լուանայր
զոտս Յի, եւ հերովքն սրբէր, եւ
համբուրէր եւ օծանէր իւղով: Իսկ 'ի
կարծել սիմոնի՝ թէ անգիտանայ

Մր. Յս, և այնպէս թող տայ մեղաւոր
ԺՆ. կնոջ մերձենալ առ ինքն, Յս առա-
31. կաւ ծանոյց զխաւարման սիմոնի, և ար-
դարացոյց զկինն։

Յետ այսորիկ Ճանապարհ արա- Ղկ. Ը.
րեալ քարոզեր քաղաքի քաղաքի, և
երկոտասանքն ընդ նմա. որպէս և
ոմանք'ի բարեպաշտ կանանց երթային
զհետ նորա, և պաշտէին զնա յընչից
իւրեանց։

Մատուցաւ առ նա դիւահար մի Մտթ. ԺԲ.
կոյր և համր, և բժշկեաց զնա. և'ի Մրկ. Գ.
հայհոյել զնա դպրաց և փարիսեցւոց
եկելոց յերուսաղեմէ, թէ բեեղզե-
բուղաւ իշխանաւն հանէ դա զդևս,
հերքաբար յանդիմանեաւ նշաւակեաց
զնոսա։

Դպիրք և փարիսեցիք անամօթա- Մտթ. ԺԲ.
բար յաւելլին խնդրել նոր նշանս. և և ԺԶ.
Յս ոչ արար զկամս նոցա. այլ միայն Ղկ. ԺԱ.
նշանակեաց, թէ եկեսցէ ժամանակ՝
յորում տացէ նոցա զնշանն յովնա-
նու յանձն իւր՝ երեքօրեայ թաղ-
մամբ և յարութբ։

'Ի խօսել 'ի տան առ ժողովուրդն, Մտթ. ԺԲ.
պատմեցաւ նմա, թէ ահա մայր քո Մրկ. Գ.
և եղբարք քո կան արտաքոյ, և խնդ- Ղկ. Ը.
րեն զքեզ տեսանել. իսկ Յս ոչ
խտրելով զազգականսն՝ յայտ արար,
թէ ամենայն որ լսէ զբանս իմ, և
առնէ զկամս հօր իմոյ՝ համարեալ է
ինձ եղբայր և քոյր և մայր։

Յայնմ աւուր ելեալ Յս 'ի տա- Մտթ. ԺԳ.
նէն՝ նստաւ առ ծովեզերբն, և ժո- Մրկ. Դ.
ղովեցան առ նա բազումք. մինչև Ղկ. Ը.
հարկ եղև նմա 'ի նաւ մտանել և
նստել. և անտի ուսուցանէր զժողո-
վեալսն յեզր ծովու, 'ի մէջ առեալ

Յ՟ զաւակ սերմանացանին, և զբաղում
Քն. այլ առակս խորհրդաւորս և դիւրի-
31. մացս ռամկին ։

Իբրև ընդ երեկս լինէր, ասէ ցա- Մտթ. Ը ։
շակերտսն, եկայք անցցուք յայնկոյս ։ Մրկ. Դ ։
Եւ յետ տալոյ զարժանաւոր պա- Ղկ. Ը ։
տասխանի ումանց ումանց, որք այլ և այլ միտօք կամէին երթալ զհետ նորա՝ ուր և երթիցէ, թողեալ զժողովուրդն՝ նաւեաց աշակերտօքն հանդերձ ։ Եւ 'ի յառնել ալեկոծութեան յորժամ ննջէր Յս 'ի նաւին, զարթուցին զնա աշակերտքն՝ օգնել նոցա. և նա յարուցեալ սաստեաց հողմոյն և ծովուն. և եղև խաղաղութիւն ։

Նաւեցին անցին յայնկոյս գալի- Մտթ. Ը ։
լեայ յերկիրն գերգեսացւոց (կամ Մրկ. Ե ։
գադարացւոց), և ընդ ելանել նո- Ղկ. Ը ։
րա 'ի նաւէն՝ ընդ առաջ ելին նմա դիւահարք երկու (ըստ մատթ.) յորոց մին առաւել մոլեգին էր (ըստ մրկ. և ղկ.) զի բռնեալ էր 'ի նմա լեգէոն մի դիւաց ։ Նախ քան հարկեալ դևքն ելանել՝ հրաման առին մտանել յերամակ խոզից. զորս առհասարակ 'ի ծով վարեալ հեղձուցին ։

Զոր տեսեալ գերգեսացւոց՝ զա- Մտթ. Ը ։
հի հարան, և աղաչեցին զՅս 'ի բաց Մրկ. Ե ։
գնալ 'ի սահմանաց իւրեանց. իսկ Ղկ. Ը ։
այրն ազատեալ 'ի լեգէոնէ՝ աղաչէր, զի ընդ Յի լիցի. այլ նա ասաց դառնալ 'ի տուն իւր, և երթեալ այրն 'ի դեկապօլիս՝ պատմէր զոր ինչ արար ընդ նա Տր ։ Իսկ Յս մտեալ անդրէն 'ի նաւ՝ դարձաւ 'ի ցամաքն գալիլեայ, և 'ի քաղաք իւր անուանեալ՝ 'ի կափառնաում ։

ԻՏ Երբեւ դարձաւ Յս՟, ընկալաւ զնա Մրկ. Բ.
Ծն. ժողովուրդ գալիլեացւոց, զի մնային Ղկ. Ե.
31. նմա 'ի ծովեզրն ։

Յայնժամ մատեան առ նա աշա- Մտթ. Թ.
կերտք յովհաննու, եւ հարցին. ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահեմք, եւ քո աշակերտքդ ոչ պահեն. եւ լուան պատասխանի, թէ սոքա են որպէս մանկունք առագաստի յաւուրս ուրախութեան. յորժամ բարձցի 'ի նոցանէ փեսայն, յայնժամ ունին պահել նոր պահս սահմանեալս ։

'Ի խօսել Յսի զայսոսիկ՝ եկն յայ- Մտթ. Թ.
րոս մի 'ի ժողովրդապետաց, եւ աղա- Մրկ. Ե.
չէր գալ եւ բժշկել զմիամօր դուստր Ղկ. Ը.
նորա, որ մերձ էր 'ի մահ ։ Ճանապարհային բժշկեցաւ նախ տեռատես կին՝ հաւատով մերձեալ 'ի քղանցս հանդերձից Յսի լռելեայն ։ Իսկ դուստրն յայլոց գտաւ մեռեալ. այլ Յս՟ յարոյց զնա դիւրաւ իբրեւ 'ի քնոյ. եւ պատուիրէր չհռչակել զսքանչելիսն, որպէս միշտ ։

Երբեւ ել անտի, զճանապարհային Մտթ. Թ.
զհետ եկեալ կոյրք երկու, մինչեւ 'ի տունն՝ խնդրէին զի բացցէ զաչս նոցա. եւ Յս՟ արար ըստ հաւատոց նոցա. եւ պատուիրեաց մի ումեք ասել. այլ նոքա առաւել հռչակ հարկանէին ։

Յելանել նոցա արտաքս, մատու- Մտթ. Թ.
ցին առ Յս՟ զայր մի համր դիւահար. եւ յելանել դիւին 'ի նմանէ՝ խօսեցաւ համրն. ընդ որ զարմացաւ ժողովուրդն, իսկ փարիսեցիքն հայհոյէին ։

Դարձեալ շրջէր Յս՟ ընդ քաղաքս Մրկ. Զ.
եւ ընդ գիւղս, աւետարանէր եւ բժշ- Մտթ. Թ.

Յ.Տ. կեր. մինչև եկն ՚ի գաւառ իւր ՚ի Նա- Ն. ԾԴ:
Թւ. զարէթ աշակերտօքն համդերձ. և ՚ի
31. շաբաթու յորժամ ուսուցանէր ՚ի
ժողովարանի նոցա, զարմանային քա-
ղաքակիցքն, այլ անդրէն արհամար-
հէին որպէս որդի հիւսան:

Ի շրջել վերստին ընդ գիւղս, Մտթ. Թ:
գթացեալ Յսի ՚ի վերայ ժողովր- Մրկ. Զ:
դեան՝ ասէր ցաշակերտսն, հունձք
բազումք են, և մշակք սակաւք. և
այլն:

Ապա առաքեաց զերկոտասան ա- Մտթ. Ժ:
ռաքեալսն երկուս երկուս, տալով Մրկ. Զ:
նոցա պատուէրս և կանոնս՝ համդերձ Ղկ. Թ:
իշխանութ̅ քարոզելոյ և բժշկելոյ:

Եւ նոցա շրջեալ ընդ ամենայն Մրկ. Զ:
գիւղս, աւետարանէին և բժշկէին: Ղկ. Թ:

Եւ ինքն Յս ՚ի քաղաքս քաղաքս Մտթ. ԺԱ:
ուսուցանէր և քարոզէր:

32. Գլխատումն յովհաննու մկրտչի. Մտթ. ԺԴ:
զորոյ զմարմինն թաղեալ աշակեր- Մրկ. Զ:
տաց նորա՝ եկին և պատմեցին Յսի: Ղկ. Թ:

Հերովդէս՝ որ սպան զՅոհ մկրտիչն, Մտթ. ԺԴ:
լուեալ մեծամեծս զՅսէ՝ զարմա- Ղկ. Թ:
նայր, և ՚ի կարծիս անկանէր՝ թէ
գուցէ մկրտիչն իցէ յարուցեալ ՚ի
մեռելոց. և ցանկայր և հնարէր տե-
սանել զնա. այլ Յս ոչ եցոյց նմա
զանձն իւր մինչև յաւուրս չարչարա-
նաց իւրոց:

Դարձան առաքեալքն, և պատմե- Մրկ. Զ:
ցին Յսի զամենայն զոր արարին: Ղկ. Թ:

Եւ նա առեալ տարաւ զնոսա ՚ի Մտթ. ԺԴ:
հանդիստ անապատի՝ յերեսաց ամ- Մրկ. Զ:
բոխին, մեկնեալ նաւու առանձինն ՚ի Ղկ. Թ:
մի կողմն բեթսայիդայ քաղաքի. իսկ
ժողովուրդն յամենայն քաղաքաց
հետի գնացեալ ընդ ծովեզրն՝ եկեալ

Մր. հասանէր 'ի տեղի անդր . և Տրն ըն-
Զ. կալեալ զնոսա՝ ուսուցանէր և բժշ-
32. կէր ։

Եւ էր մերձ զատիկն ։ Յհ. Զ.

Երբև օրն սկսաւ տարաժամիլ , Մտթ. ԺԴ.
աշակերտքն արձակել զժողո- Մրկ. Զ.
վուրդն , զի երթեալ շուրջ 'ի շէնսն՝ Ղկ. Թ.
գտցեն կերակուր . իսկ Յս ոչ ետ նո- Յհ. Զ.
ցա թոյլ , այլ հրամայեալ բազմե-
ցուցանել անդ զբազմութիւն հինգ
հազար արանց , թող զկանայս և ըզ-
մանկտի , բաշխեաց ամենեցուն զհինգ
նկանակս գարեղէնս , և զերկուս
ձկունս . յորոց ոչ միայն յագեցան
ամենեքին , այլև յաւելան նշխարք
կոտորոց երկոտասան սակառի ։ Ան
որոյ կամէին թագաւոր կացուցանել
զՅս . այլ նա տրտմեաց զաշակերտսն
մտանել վաղվաղակի 'ի նաւ , և յա-
ռաջել քան զինքն 'ի ցամաքն կա-
փառնաումայ հանդէպ բեթսայիդայ ,
և ինքն ել 'ի լեառն կալ յաղօթս ։
Ապա 'ի չորրորդ պահու գիշերոյն
մտեալ 'ի ծով անթաց ոտիւք գնայր
'ի վերայ ծովուն , և անցանէր մօտ
առ նաւու առաքելոց . և յահի լի-
նել նոցա՝ պետրոս հրաման առեալ
'ի Յսէ գնայր առ նա 'ի վերայ ջրոց .
այլ երբև սկսաւ վտանգիլ , կալաւ
զնա Տրն , և զօրացոյց ։ Յորժամ ե-
կին յերկիրն գեննեսարէթ , լուեալ
ժողովրդեան՝ բերին առ նա զախտա-
ժէտս . և որք միանգամ մերձեցան
գոնէ 'ի քղանցս հանդերձի նորա՝
բժշկեցան ։

'Ի վաղիւ անդր՝ ժողովուրդն մնա- Յհ. Զ.
ցեալ յայնկոյս ծովու , մտեալ 'ի նաւս՝
եկին 'ի կափառնաում , խնդրել

Յհ. զՅս։ Յայնժամ սկսաւ քարոզել
Զ. Նոցա Յս, զի մի՛ լոկ վասն մարմնա-
32. ւոր հացի խնդրեսցեն զնա, այլ ա-
ռաւել խնդրեսցեն 'ի նմանէ զհացն կենաց. և ճոխագոյն և յայտնագոյն ծանոյց ամենեցուն, թէ ինքն իսկ է հաց կենդանի իջեալ յերկնից. և ունի տալ նոցա զմարմին իւր 'ի կերակուր, և զարիւն իւր յըմպելի՝ 'ի խորհուրդ նր հաղորդութե։ Ընդ այս հրաշափառ խորհուրդ չկարացեալ տանել թանձրամտաց՝ ասէին, զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել, և փոխանակ հարցանելոյ և ուսանելոյ խոնարհ հաւատով՝ սկսան քրթմնջել ընդ միմեանս. մինչև ոմանց համարելոց իսկ 'ի թիւս աշակերտաց 'ի բաց կալ 'ի նմանէ։ Իսկ զի պետրոս և ընկերք իւր հաստատուն մնացին, ասելով թէ բանս կենաց յաւիտենականաց ունիս, ազդ արար նոցա Յս, թէ կայ և 'ի մէջ երկոտասանիցդ սատանայ ոք. այլ ոչ ծանոյց յանուանէ, թէ նա ինքն է յուդա իսկարիովտացի, որ լինելոց էր մատնիչ։

Երրորդ զատիկ առ քարոզութեն Յհ. Է։
Յսի. այն է սկիզբն երրորդ ամի եօթանասներորդի եօթներորդին դանիէլի։

Դպիրք և փարիսեցիք եկեալք Մտթ. ԺԵ։
յերուսաղէմէ բամբասէին առ Յսի Մրկ. Է։
զաշակերտս նորա վասն անլուայ ձեռօք հաց ուտելոյ. իսկ նա յանդիմանեաց զբամբասօղս, զի առաւել հոգային զաւանդութիս ծերոց քան զպատուիրանս Այ. և եցոյց թէ անմաքրութիւնն ներքին բերէ զպղծ-

ՐՀ. ծութիւն, և ոչ անլուայ ձեռքն ։
Փն. Յարուցեալ անտի՝ գնաց 'ի սահ- Մտթ. ԺԵ ։
32. մանս տիւրոսի և սիդոնի իբրև յան- Մրկ. Է ։
ծանօթս. այլ ոչ կարաց ծածկել ։
Գովեաց զխոնարհութիւն և զհաւատս
կնոջն քանանացւոյ՝ որ էր փինիկ
ասորի յազգէ, և բժշկեաց 'ի հե-
ռաստ զդուստր նորա զնեղեալն յայ-
սոյն պղծոյ ։

Ելեալ 'ի սահմանաց անտի տիւ- Մրկ. Է ։
րոսի և սիդոնի՝ եկն 'ի ծովեզրն գա-
լիլեացւոց ընդ սահմանս դեկապօլ-
սոյ. և բժշկեաց զայրն խուլ և համր,
թքեալ ընդ ականջս նր՟, և կալեալ
զլեզուէ նորա ։

Եւ իբրև ել 'ի լեառն, և նստաւ, Մտթ. ԺԵ ։
եկին առ նա բազումք, և բժշկեաց
զհիւանդս նոցա ։

'Ի մնալ ամբոխին առ նմա զա- Մտթ. ԺԵ ։
ւուրս երիս՝ իբր նօթի կալով, եօթն Մրկ. Ը ։
նկանակօք հացի և սակաւ ձկամբք
կերակրեաց զարս չորս հազար, թող
զկանայս և զմանկտի, և յաւելաւ
նաև հացն եօթն զամբիւղ լի ։

Եւ մտեալ 'ի նաւ ը՟ Մտթ. ԺԵ ։
աշակերտս իւր՝ եկն 'ի սահմանս դաղ- Մրկ. Ը ։
մանունեայ կամ մագդաղեայ ։

Մատեան փարիսեցիք, և խըն- Մտթ. ԺԶ ։
դրէին նշան յերկնից. այլ Յս՟ միւ- Մրկ. Ը ։
անգամ յուշ արար նոցա զնշանն Ղկ. ԺԲ ։
յովնանու. և թողեալ զնոսա՝ ե-
մուտ 'ի նաւ, գնալ յայնկոյս (կամ
'ի հեռագոյն ծովափն)։ Եւ 'ի վե-
րայ ծովու հոգային աշակերտք, թէ
հաց ոչ բարձաք. իսկ Յս՟ յուշ ա-
րար զքանչելիսն՝ զոր երկիցս արար
բազմացուցանելով զհաց. և խրա-
տեաց չհոգալ վասն հացի, այլ զգոյշ

Մհ լինել ՚ի խմորոյ, այսինքն յաղան-
թն. դոյ փարիսեցւոց և սադուկեցւոց և
32. Հերովդիանոսաց:

Եւ երբ եկն ՚ի բեթսայիդա, մա- Մրկ. Ը:
տուցին առ նա կոյր մի. զոր հանեալ
արտաքոյ շինին, եթուք յաչս նորա,
և կրկին ձեռն դնելով ՚ի վերայ ա-
չաց՝ ետ նմա համարձակ տեսանել
զամենայն. և պատուիրեր մի ումեք
ասել:

Յեղանել Յսի ընդ աշակերտսն ՚ի Մտթ. ԺԶ:
շէնս կեսարիայ փիլիպպեայ (որ և Մրկ. Ը:
կեսարիա պաղեստինոյ), ՚ի ճանա- Ղկ. Թ:
պարհի հարցանէր զաշակերտսն՝ թէ
զո՛ ոք կարծեն զնա մարդիկն. և յա-
ւել՝ թէ դուք զո՞ ասէք զինէն թէ
իցեմ: Եւ ՚ի յայտնի դաւանել
զնա պետրոսի՝ թէ դու ես որդի այ
կենդանւոյ, երանի ետ նմա վասն ՚ի
վերուստ յայտնութեամբ դաւանե-
լոյն. և խոստացաւ տալ նմա զփա-
կանս արքայութեան իւրոյ, և շինել
զեկեղեցի իւր ՚ի վերայ նորա իբրև ՚ի
վերայ հաստատուն վիմի. որպէս և
կանխաւ վէմ անուանեալ էր զնա սո-
վին խորհրդով: Այլ իբրև ասաց
քս առ աշակերտս զհանդերձեալ
չարչարանս իւր և զմահ և զեռօրեայ
յարութիւնն, պետրոս առ ջերմ սի-
րոյն՝ սկսաւ կագել ընդ նմա, թէ
քաւ լիցի, մի լիցի քեզ չարչարիլ և
մեռանիլ. իսկ տէրն սաստեաց նմա
իբրև հակառակ եղելոյ կամացն այ:
Եւ այնուհետև քարոզեաց Յս նաև
՚ի լուր ամենայն ժողովրդեան, թէ
որ կամի աշակերտ իմ լինել, առցէ
զխաչ իւր, և եկեսցէ զկնի իմ: Նա-
խապատմեաց և զմերձակայ փառս

Ապր. իւր՝ զոր ունէր ցուցանել ոմանց անդ-
եղելոց ։

32. Իսկ յետ անցանելոյ ամբողջ վեց աւուրց 'ի վերայ բանիցս այսոցիկ՝ յաւուր ութերորդի տարաւ ընդ իւր 'ի լեառն մի բարձր զպետրոս, զյակոբոս, և զյովհաննէս, և այլակերպեցաւ առաջի նոցա արեգակնափայլ դիմօք և ձիւնատեսիլ հանդերձիւք ․ երևեցան անդ և մովսէս և եղիա ․ և եղև յերկնից հայրական բարբառ 'ի վերայ միածնին ։ Իսկ յետ անցանելոյ տեսլեանն՝ պատուիրեաց Յս չասել ումեք զիրսն նախ քան զյարութիւն իւր ։ Մտթ. ԺԷ։ Մրկ. Թ։ Ղկ. Թ։

'Ի վաղիւ անդր իբրև իջին 'ի լեռնէ անտի, տեսին զամբոխն ժողովեալ 'ի վերայ աշակերտաց՝ 'ի պատճառս լուսնոտ մանկանն այսահարի, յորմէ չկամէր ելանել դևն ․ այլ 'ի սաստել Յսի՝ իսկ և իսկ զարկոյց դևն զմանուկն, և ել 'ի նմանէ ․ ապա 'ի հարցանել աշակերտացն առանձինն՝ թէ ընդէ՞ր մեք ոչ կարացաք հանել զնա, ասաց ․ այս ազգ դիւի ոչ իւիք ելանէ, եթէ ոչ աղօթիւք և պահօք ։ Մտթ. ԺԷ։ Մրկ. Թ։ Ղկ. Թ։

Իբրև երթայր Յս աշակերտօքն 'ի գալիլեա, վերստին նախապատմեաց նոցա զմահ իւր և զյարութի ․ այլ նոքա չիմանային զասացեալսն ․ և տրտմեալք՝ չհամարձակէին մեկն հարցանել ։ Մտթ. ԺԷ։ Մրկ. Թ։ Ղկ. Թ։

'Ի կափառնաում վճարէ տր զերկդրամեանն վասն իւր և վասն պետրոսի, տալով նմա ընկենուլ կարթ 'ի ծով, և գտանել սատեր 'ի բերան ձկան ։ Մտթ. ԺԷ։

Ր՛ Ընդ 'ի կափառնաում հարցանէ Մտթ. ԺԸ:
Գլ. Յս զաշակերտսն, զի՞նչ վիճէիք Մրկ. Թ:
32. զճանապարհայն . և յաւել նոցա Ղկ. Թ:
պատկառանօք, թէ ո՞վ մեծ իցէ 'ի նոցանէ յարքայութեան երկնից, կացոյց մանուկ մի 'ի մէջ նոցա, և ուսոյց՝ թէ որ խոնարհի որպէս զմանուկ, նա եղիցի մեծ ։ Խրատեաց չարհամարհել և չգայթակղեցուցանել զմի 'ի փոքրկանց ։ Ուսոյց ներող լինել առ մեղուցեալ եղբայրն ։

Պատուիրեաց չարգելուլ՝ թէ տե- Մրկ. Թ:
սանէին զոք յանուն Յսի դևս հա- Ղկ. Թ:
նել, թէ ոչ իցէ 'ի թուոյ իւրեանց ։ Դարձեալ խօսեցաւ վ՟ս չտալոյ իւիք գայթակղութիւն ումեք ։

Շրջէր Յս ընդերկար 'ի գալի- Յհ. Է:
լեա, և ոչ կամէր 'ի Հրէաստանի շրջել, ուր էին խնդրողք անձին նորա 'ի մահ ։ Եւ զի մերձ էր տօնն տաղաւարահարաց, յորդորէին զնա ազգականքն՝ որք կոչէին եղբարք նորա, ելանել ընդ իւրեանս յերուսաղէմ . իսկ նա չէառ յանձն երթալ ընդ նոսա յայտնապէս, այլ յետոյ ուրեմն չոգաւ իբրև 'ի ծածուկ ։

Ուղղեցաւ Ճանապարհ առնել յե- Ղկ. Թ:
րուսաղէմ, առաքեաց զոմանս յիւրոցն զճանապարհայն 'ի գիւղ մի սամարացւոց՝ պատրաստել նմա իջևան . և 'ի չընդունել զնա բնակչաց տեղւոյն՝ կամէին աշակերտքն հուր իջուցանել 'ի վերայ նոցա յերկնից . այլ Յս սաստեաց նոցա՝ հեռի կալ . յայնպիսի ոգւոյ՝ և գնացին յայլ գիւղ ։

'Ի Ճանապարհի անդ մատեան ո- Ղկ. Թ:
մանք առ Յս, և խնդրէին զհետ երթալ նորա որպէս աշակերտս . այլ

Մ նա գիտելով զխորհուրդս սրտից նո-
ՃՆ . ցա՝ չէառ յանձն ։

32 . Յետ այսորիկ առաքեաց զեօթա- ղկ . ժ ։
նասուն և երկու աշակերտս, որ և
եօթանասունք կոչին, երկուս երկուս՝
առաջի իւր, 'ի տեղիս՝ յոր ինքն եր-
թալոց էր, տալով նոցա պատուէրս
որպէս կանոնս առաքելութե ։

Իսկ հրեայք՝ որ ժողովեալ էին յե- յհ . է ։
րուսաղէմ 'ի տօնն, ոչ տեսեալ անդ
զՅս, կէսք 'ի կողմն նորա խօսէին,
և կէսք հակառակ նորա . և էր
քրթմնջիւն 'ի նոսա . և ահա իբրև
տօնն ընդմիջեցաւ, եհաս անդր Յս .
և սկսաւ ուսուցանել 'ի տաճարի
անդ . և զարմանային ընդ վարդա-
պետութիւն նորա ։ Այլ որք հակա-
ռակէին ընդ նմա առ նախանձու,
յամօթ եղեալ 'ի բանից նորա, ա-
ռաքեցին սպասաւորս՝ ունել զնա .
բայց նոցա սքանչացեալ ընդ մեծե-
ղէն վարդապետութիւն Յի՝ չիշխե-
ցին ձեռն արկանել 'ի նա ։

Յետ յայտնապէս քարոզելոյ Յի յհ . ը ։
'ի վերջին աւուր տօնին զմեծութիւն
իւր, իբրև ետես զանսաստութիւն
դպրաց և փարիսեցւոց, առանձնա-
ցաւ 'ի լեառն ձիթենեաց . և ընդ ա-
ռաւօտն եկն դարձեալ, և նստեալ
'ի տաճարի՝ ուսուցանէր զժողո-
վուրդն ։ Յայնժամ որք կամէին որ-
սալ զնա բանիւք, ածին առաջի նո-
րա կին մի ըմբռնեալ 'ի շնութեան .
այլ դարձան գլխակորեալ յերեսաց
բանից և գործոց Յի, որ եցոյց զնո-
սա բազմամեղս քան զկինն զայն . և
զկինն խրատեալ՝ եթող երթալ ։

Դարձեալ 'ի տան գանձի տաճա- յհ . ը ։

Ա̃ րին յայտնագոյն քարոզեաց Յս
գն. զանձնէ և զհօրէ. մինչև աւուր քա-
32. րինս, և կամէին քարկոծել զնա որ-
պէս զհայհոյիչ. իսկ Յս անցեալ
զնոցա ընդ մէջ նոցա, և ոչինչ կարա-
ցին առնել:

'Ի գնալ զճանապարհայն՝ բժշ- յհ. Թ:
կեաց զ'ի ծնէ կոյրն, ծեփելով զաչս
նորա կաւով զոր զանգեաց թքովն,
և առաքելով զնա լուանալ յաւա-
զանին սեղովմայ: Տեսեալ զնա հրէից՝
լցան նախանձու. այլ յամօթ եղեն
'ի պատասխանւոյ, զոր առին յանձնէ
անտի. և բարկացեալ հանին զնա 'ի
ժողովրդենէ. իսկ նա չոգաւ եգիտ
զՅս, և հաւատացեալ երկիր եպագ
նմա:

Վերստին քարոզեաց Յս զանձնէ յհ. Ժ.
լինել հովիւ ճշմարիտ, և ոչ որպէս
զայլս՝ որք 'ի վարձկանաց համարի
են, կամ գող և աւազակ. և յայտ
արար՝ թէ ինքն ճանաչէ զոչխարս
իւր, և ոչխարքն զնա ճանաչեն, եթէ
ազգաւ իսրայէլացի իցեն, և եթէ օ-
տարազգի: Եւ ընդ այսպիսի բանս
ևս անկաւ տրտունջ 'ի մէջ հրէից:

Դարձեալ եօթանասունք խնդու- ղկ. Ժ:
թեամբ, և Յս ուսոյց նոցա՝ թէ ընդ
ո՞ր արժան է խնդալ ստուգութեամբ.
և եցոյց ինքն ևս ցնծութիւն յանձն
իւր ընդ փառս հօր իւրոյ երկնա-
ւորի:

Յայնժամ մատեաւ ոմն յօրինա- ղկ. Ժ:
կանաց, և հարցանէր՝ թէ զի՞նչ ա-
րարից, զի զկեանս յաւիտենականս
ժառանգեցից: Եւ Յս առաջի եդ
զպատուիրանաց պահպանութիւն, և
առաւելապէս զողորմութիւն և զըն-

Կ: կերախրութիւն. և առակաւ անկելոյն
ՃՆ. 'ի ձեռս աւազակաց, յոր գթացաւ
32. օտար ոք սամարացի, յայտնի կա-
ցոյց՝ թէ ո՞ է, որ ընկեր կոչի:

'Ի մտանել Յսի 'ի գիւղ մի (այն Ղկ. Ժ:
է բեթանիա), հիւրընկալեաց զնա 'ի
տուն իւր մարթա (քոյրն ղազարու)
և բազում խնամով պատրաստէր
նմա կերակուր. իսկ քոյր նորա մա-
րիամ եկեալ նստէր առ ոտս Յսի՝
լսել զկենսաբեր բանս նորա: Իբրև
զանգատ կալաւ մարթա վասն քեռն,
Յն նախապատիւ արար զգործ մա-
րիամու:

33. Եւ եղև 'ի կալ Յսի 'ի տեղւոջ Ղկ. ԺԱ:
ուրեք յաղօթս, յետ զադարելոյն՝ և Մտթ. Զ:
ուսոյց աշակերտացն ըստ խնդրոյ նո-
ցա զտէրունական աղօթս, Հայր մեր
որ յերկինս ես:

'Ի հանել Յսի զդև մի համր, Ղկ. ԺԱ:
յորժամ սկսաւ համրն խօսել, զար- և Մտթ. Թ:
մանայր ժողովուրդն. իսկ փարիսե-
ցիքն հայհոյէին զնա:

Լուեալ կնոջ միոյ զերկնաւոր Ղկ. ԺԱ:
վարդապետին զբանս, ձայն եբարձ
'ի մէջ բազմութեան. երանի որո-
վայնին՝ որ կրեացն զքեզ. ևն:

Կոչեաց զՅն ումն 'ի փարիսեց- Ղկ. ԺԱ:
ւոց, զի ճաշ կերիցէ ընդ նմա. և 'ի
մտանել Յսի 'ի տուն նորա և 'ի բազ-
մել 'ի սեղան, զարմացաւ փարիսե-
ցին՝ զի ոչ լուաց նախ զձեռս. յայն-
ժամ սկսաւ Յն ուսուցանել զօրի-
նակ ներքին մաքրութեան, և կշտամ-
բեաց զկեղծաւորութիւն, զագահու-
թիւն, և զամբարտաւանութիւն փա-
րիսեցւոց և օրինականաց, վայ ասե-
լով նոցա:

ՄԷ 'Ի կուտիլ ժողովրդեան 'ի լուր ՂԿ. ԺԲ :
ՃՆ . քարոզութեան Յսի, կրկին խրա-
33 . տեաց նա զաշակերտսն զգոյշ լինել
'ի խմորոյ փարիսեցւոց, որ է սուտ
կեղծաւորութիւն. և քաջալերեաց
չերկնչել 'ի հալածչաց և 'ի սպանա-
ղաց զմարմին :

Յասել ուրումն ցՅս ստիպել զեղ- ՂԿ. ԺԲ : բայր իւր վասն բաժանման ժառան-գութեան, հրաժարեաց Յս, և զգու-շացոյց յագահութենէ՝ օրինակաւ մե-ծատանն, որում ասաց Ած. անմիտ յայսմ գիշերի զոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջեսցեն. իսկ զոր պատրաստե-ցերն, ո՞ւմ լինիցի : Եւ խրատեաց յառաջ քան զամենայն խնդրել զար-քայութիւն Այ, և սպասել որպէս ծառայ արթուն և հաւատարիմ գալս-տեան Տն իւրոյ յամենայն ժամ :

'Ի նմին ժամանակի եկին ոմանք ՂԿ. ԺԳ : և պատմեցին վասն գալիլեացւոց, զորոց զարիւնն պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա : Իսկ Յս ասաց, թէ մի 'ի պատճառ ոմանց հայելով՝ զնոսա միայն առաւել մեղաւորս համարիջիք. այլ իւրաքանչիւր զանձն իւր քննես-ցէ, զուցէ առաւել յանցաւոր իցէ առաջի Այ : Յիշեցոյց և զօրինակ թզենւոյն, որ անպտուղ կայր յերից ամաց հետէ :

Բժշկէ Յս 'ի ժողովրդանոցի յա- ՂԿ. ԺԳ : ւուր շաբաթու զկինն կարկամեալ յութուտասան ամաց. ընդ որ զչարի ժողովրդապետն :

Շրջեալ շրջէր Յս ընդ քաղաքս ՂԿ. ԺԳ : և ընդ գիւղս, դէմ եդեալ գնալ յե-րուսաղէմ 'ի նաւակատիս տաճարին : Եւ 'ի Ճանապարհի հարցեալ յու-

Յ. մանէ, եթէ սակաւք իցեն՝ որք ա-
Քն. պրելոց իցեն, ուստի մտանել ընդ-
33. դուռն նեղ. զի ընդարձակն տանի 'ի
կորուստ։

'Ի նմին աւուր մատեան ոմանք 'ի փարիսեցւոց (յընթացս ճանապարհին 'ի սահմանս գալիլեացւոց,) ընդ-տերութք հերովդի և ասեն ցնա. Ել և գնա աստի, զի հերովդէս կամի սպանանել զքեզ. Իսկ Յն աներկիւղ արար նոցա պատասխանի, թէ չէ 'ի կամս այլոց բառնալ զկեանս նորա, եթէ ոչ ինքն կամաւորութք թոյլ տացէ 'ի ժամանակի իւրում։ Գլ. ԾԴ.

Իսկ եղև 'ի մտանել յի 'ի տուն ուրումն յիշխանաց փարիսեցւոց ուտել հաց յաւուր շաբաթու, բժշկեաց անդ զայրն ջրգողեալ, և ըմբերանեաց զչարախօսս։ Յաւել և խրատս առ կոչնատեարս, և առ կոչնականս՝ ըստ քաղաքական և առաքինական կարգի։ Իսկ յասել ուրումն, երանի որ կերիցէ հաց յարքայութեանն այ, 'ի վերայ եած զառակն հրաւիրելոց յընթրիս առն թագաւորի, և զյուլութի նոցա։ Գլ. ԾԵ.

'Ի գնալն յի՝ տեսեալ զբազմութին, որ գայր զկնի նորա, դարձաւ և քարոզեաց նոցա զօրինակ զհետ երթալոյ ինքեան՝ արհամարհելով ըզկեանս աշխարհի. 'ի նոյն յարմարեալ և զօրինակ կամեցողին շինել զաշտարակ, և զթագաւորին որ կամիցի տալ պատերազմ ընդ այլում թագաւորի։ Գլ. ԾԶ.

'Ի տրտնջել փարիսեցւոց և դպրաց՝ վասն մերձ յի լինելոյ մաքսաւորաց և մեղաւորաց, 'ի մէջ եառ զա- Գլ. ԾԷ.

Ը՜ ռակ կորուսեալ ոչխարի, և զկորուս-
ՃԻ. եալ դրամոյ և զանցս անառակ որդւոյ:
33. Եւ առ աշակերտսն ուղղեալ զա- Ղկ. ԺԶ:
ռակ տնտեսին՝ մերձեցոյց զխրատն և առ ժողովուրդն. իսկ փարիսեցիքն քանզի արծաթասէրք էին, չկարէին տանել այնպիսի բանից, և անգոսնէին. վասն որոյ յաւել և ընդդէմ նոցա կշտամբութիւն՝ հանդերձ առակաւ խորտկաճաշ մեծատան, և ղազարու աղքատի. զի նա էջ 'ի դժոխս, և սա հանգեաւ 'ի գոգն աբրահամու:

Խօսեցաւ առ աշակերտս վասն եղելոցն պատճառ գայթակղութե. և ուսոյց ներողամիտ առ եղբարս լինել: Եւ յաւել նոցա, յաւել մեզ հաւատս, եած զօրինակ հատոյ մանանխոյ, ևն: Ղկ. ԺԷ: Յոհ. ԺԷ:

Յերթալ անդ յերուսաղէմ՝ անցանելով ընդ սամարիա և ընդ գալիլեա, իբրև եմուտ 'ի գեօղ ուրեմն, բժշկեաց զտասն բորոտս՝ առաքելով զնոսա առ քահանայս. նոցունքն աղգաւ հրէայք չածին զմտաւ դառնալ շնորհ ունել յի, և տալ փառս այ, այլ միայն տասներորդն՝ որ էր սամարացի այլազգի, դարձաւ անկաւ առ ոտս յի, և գոհանայր զնմանէ: Ղկ. ԺԷ:

Իբրև հարցաւ յս 'ի փարիսեցւոց, թէ երբ գայցէ արքայութիւն այ, ետ պատասխանի. ոչ գայ արքայութիւն այ խտրմնօք, ևն: Եւ առ աշակերտսն ասաց, թէ գալուստն որդւոյ մարդոյ եղիցի յանկարծ՝ ըստ օրինակի աւուրցն նոյի և ղովտայ. այլ պարտ է նմա նախ բազում չարչարիլ, և մեռանիլ: Ղկ. ԺԷ:

ՐԷ Բայց և վասն անձանձրոյթ յա- ղկ. ժը.
թիւ. ղօթս կալոյ՝ զօրինակ այրւոյն, որում
33. հարկեցաւ ակամայ կամօք իրաւունս
առնել դատաւորն անիրաւութեան. քանի՞ առաւել ած լսէ աղօթից ծառայից իւրոց, և առնէ նոցա իրաւունս։

Եւ առ պանծացեալս յանձինս և խոտիցս այլոց՝ 'ի մէջ էառ զառակ փարիսեցւոյն և մաքսաւորին։ ղկ. ժը.

Նոյն յայնժամ նաւակատիք յերուսաղէմ, և ձմեռն էր. և շրջէր յս 'ի տաճարին 'ի սրահին սողոմոնի. ուր 'ի ստիպել զնա հրէից՝ զի համարձակ ասասցէ, եթէ նա ինքն է քս, նա վկայեաց յայտնապէս, և վկայ 'ի մէջ էառ զգործս իւր, որք յայտնի առնէին զնա լինել ճշմարիտ որդի այ, և մի ընդ հօր իւրում։ Յայնժամ վէմս առին հրէայք քարկոծ առնել զնա որպէս զհայհոյիչ. այլ յս կրկին ևս հաւատարմացոյց նոցա զածութի իւր. և 'ի կամիլ նոցա ունել զնա՝ ել 'ի ձեռաց նոցա։ յհ. ժ.

Եւ գնաց միւսանգամ յայնկոյս յորդանանու 'ի տեղին՝ ուր երբեմն մկրտէր յովհաննէս. եկին անդր առ նա բազումք, և նա ուսուցանէր զնոսա և բժշկէր. և բազումք հաւատացին 'ի նա անդ։ յհ. ժ. մտթ. ժթ. մրկ. ժ.

Մատեան փարիսեցիք փորձել զնա եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել զկին իւր ըստ ամենայն պատճառս։ Իսկ յս եցոյց, թէ չէ արժան. և զոր թողացոյց մովսէս, էր վս խստասրտութե նոցա. այլ ըստ կանոնին՝ որ 'ի սկզբանէ, զոր ած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ. զնոյն երկրորդեաց և մտթ. ժթ. մրկ. ժ.

ՐՀ առ աշակերտսն 'ի տան առանձինն ։

Փն. Մատուցանէին առ նա մանկտի՝ զի Մտթ. ԺԹ ։
33. ձեռն դիցէ 'ի վերայ նոցա. իսկ աշա- Մրկ. Ժ ։
կերտքն սաստէին մատուցողաց՝ չնե- Ղկ. ԺԸ ։
ղել զվարդապետն. այլ Յս սաստեաց
աշակերտացն. Թո՛յլ տուք ասէ մանկտ-
ւոյդ գալ առ իս, զի այդպիսեացդ է
է արքայութիւն այ. ձեռն եդ 'ի վե-
րայ, և օրհնեաց զնոսա. և գնաց ան-
տի ։

Ընդ առաջ եկն յսի պատանին մե- Մտթ. ԺԹ ։
ծատուն, և հարցանէր՝ թէ զի՞նչ բա- Մրկ. Ժ ։
րի գործեցից, զի արժանի եղէց կե- Ղկ. ԺԸ ։
նացն յաւիտենից ։ Եւ յասել յսի,
զպատուիրանս գիտես, պահեա՛ զնո-
սին, նա ետ պատասխանի. զայդ ամե-
նայն արարի 'ի մանկութէ իմմէ ։ Յայն-
ժամ Յս ցուցանելով առ նա զսէր իւր
ասէ. եթէ կամիս կատարեալ լինել,
երթ վաճառեա զինչս քո, և տուր
աղքատաց. և ա՛ռ զխաչ քո, և եկ
զհետ իմ ։ Իսկ նորա չկարացեալ հրա-
ժարել յինչից՝ գնաց տրտում. և
Յս սկսաւ խօսել առ աշակերտս, թէ
որչափ դժուարին է ընչաւէտաց մտա-
նել յարքայութիւն երկնից. և թէ որ-
չափ վարձք պահին՝ որոց հրաժարին
յինչից և յընտանեաց վասն սիրոյ
իւրոյ ։

Յաւել և զառակ վասն մշակաց Մտթ. Ի ։
վարձելոց յայգին, 'ի ցուցանել՝ թէ
բազում եղիցին առաջինք յետինք,
և յետինք՝ առաջինք. և թէ բազումք
են կոչեցեալք, և սակաւք են ընտ-
րեալք ։

Յարութիւն ղազարու բարեկամին Յհ. ԺԱ ։
քսի. 'ի չորեքօրեայ թաղմանէ ։

Ընդ որ զայրացեալ հրէից խորհուրդ Յհ. ԺԱ ։

Յհ․ առնէին սպանանել զնա․ և Կայիափա
ԺԱ․ քահանայապետ տարւոյն յանդէտս
33․ մարգարէանայ, թէ լաւ է մեզ մեռա-
նիլ առն միոյ 'ի վերայ ժողովրդեանս:
Յայնմ հետէ կարգեցին արս զհետ լի-
նելոյ ըմբռնել զնա․ և նա խոյս ետ
յեփրայիմ առ ժամանակ մի աշակեր-
տօքն հանդերձ:

Իբրև միւսանգամ ելանէր նա յե- Մտթ․ Ի․
րուսաղէմ՝ յառաջելով յընթացս Մրկ․ Ժ․
քան զաշակերտս, նոքա երկնչելով Ղկ․ ԺԸ․
զհետ երթային: Իսկ նորա առեալ
զերկոտասանսն առանձինն՝ սկսաւ
անդրէն ճառել զանցից, որք անցա-
նելոց էին ընդ նա․ այլ նոքա չիմանային
զիրան յայտնապէս:

Յայնժամ մատեան առ նա յակո- Մտթ․ Ի․
բոս և յովհաննէս որդիքն զեբեդեայ՝ Մրկ․ Ժ․
բան 'ի բերան դնելով մօր իւրեանց
սողոմէի (որ ազգական էր մօր տեառն,)
զի նստցին ընդ աջմէ և ընդ ահեկէ
նորա 'ի փառս նորա: Այլ նա ոչ ետ
նոցա տիրապէս պատասխանի, 'ի կամս
հօր իւրոյ ապաստան արարեալ: Եւ
'ի շշնջել այլոց ընկերաց նոցա՝ խրա-
տեաց զամենեսեան առաւել խոնար-
հիլ, եթէ կամին առաւել բարձրա-
նալ:

Իբրև մերձեցան յերիքով բազմութեամբ Ղկ․ ԺԸ․
ժողովրդեան, բժշկեաց զմուրացիկ
կոյրն:

Եւ մտեալ յերիքով՝ ագաւ 'ի Ղկ․ ԺԹ․
տուն զաքէոսի մաքսաւորի, և շահե-
ցաւ զնա:

Եւ յելանելն յերիքովէ բազում Մտթ․ Ի․
ժողովրդովք՝ բժշկեաց զբարտիմէոս Մրկ․ Ժ․
կոյրն, և զմիւս այլ (եթէ իցէ որիշ
յառաջնոյն):

ՄԶ Երբեւ մերձեցան յԵրուսաղէմ, 'ի Ղկ. ԺԹ.
Գլ. կարծել ոմանց՝ թէ հասեալ իցէ ժա-
33. մանակ յայտնելոյ Յի արքայութ̃ն
իւր, յուշ արար նոցա զառակ առն
ազնուականի, որ 'ի չուելն 'ի տար
աշխարհ՝ ետ ծառայից իւրոց այսչափ
եւ այնչափ մնաս. եւ 'ի դարձին հա-
մար պահանջեալ 'ի նոցանէ՝ վարձա-
տրեաց զհաւատարիմս, եւ զծոյլն եւ
զապերախտն պատժեաց:

Եւ զի մօտ էր զատիկն, բազումք Յհ. ԺԱ.
կանխաւ ժողովեցան անդր՝ սրբել եւ
պատրաստել զանձինս իւրեանց:

Իսկ Յի վեց աւուրբ յառաջ քան Յհ. ԺԲ.
զզատիկն եկն 'ի բեթանիա. ուր ա-
րարին նմա ընթրիս, եւ ղազար մի էր
'ի բազմելոց ընդ նմա. մարթա կայր
'ի սպասու. եւ մարիամ օծ զՅի ազնիւ
իւղով, ընդ որ զչարեցաւ յուդա. եւ
Տրն գովեաց զգործ մարիամու յօրի-
նակ թաղման իւրոյ: Եկեալ էր անդր
եւ բազմութի 'ի տեսանել ոչ միայն
զՅի, այլ եւ զղազար՝ զոր յարոյց 'ի
մեռելոց: Ամին իբր խորհուրդ արա-
րին քահանայապետք, զի եւ զղազար
սպանցեն. զի 'ի պատճառս նորա հա-
ւատացին բազումք 'ի Յի:

Երբեւ հասին մօտ յԵրուսաղէմ 'ի Մտթ. ԺԱ.
լեառն ձիթենեաց՝ ուստի չէր ինչ հե- Մրկ. ԺԱ.
ռի գիւղն բեթփագէ, որպէս եւ բե- Ղկ. ԺԹ.
թանիա, առաքեաց Յի երկուս յաշա-
կերտաց իւրոց, եւ ետ բերել զէշն,
եւ զյաւանակ նորա՝ յորոյ վերայ չեւ
էր նստեալ ուրուք 'ի մարդկանէ:

Յայնժամ արկին ձորձս եւ հեծու- Մտթ. ԻԱ.
ցին զՅի. եւ այլք հատանէին ոստս, եւ Մրկ. ԺԱ.
արկանէին զճանապարհաւն. եւ իբրեւ Ղկ. ԺԹ.
իջանէին ընդ զառ 'ի վայր լերինն ձի- Յհ. ԺԲ.

Ր.ն թենեաց, ամենայն բազմութիւն ժողո-
Թն. վրդեանն՝ որ առաջին և զհետ երթային,
33. որպէս և որք ընդ առաջ ելին յերու-
սաղէմ, բարձեալ ոստս ձիթենւոյ
և արմաւենւոյ՝ աղաղակէին, ովսան-
նայ որդւոյ դաւթի. օրհնեալ թա-
գաւորութիւն հօր մերոյ դաւթի. եւն.
Ընդ որ նախանձեալ հակառակոր-
դաց, ոմանք ասէին, սաստեա՛ դոցա
լռել. և այլք, թէ տեսանէ՞ք՝ զի ոչ
ինչ օգտիք, զի աշխարհ ամենայն զհետ
նորա գնայ:

Իսկ յս̄ իբրև ետես զքաղաքն երու- Ղկ. ԺԹ.
սաղէմ, ելաց 'ի վերայ նորա. զի ոչ
ծանեաւ ասէ զժամանակ այցելութե-
քո. վասն որոյ առաջի կայր նմա յե-
տին կործանումն:

Եւ իբրև եմուտ յերուսաղէմ, Մտթ. ԻԱ.
դղրդեցաւ քաղաքն ամենայն. և ա-
սէին, ո՞վ իցէ սա:

Եւ մտեալ 'ի տաճարն՝ եհան ար- Մտթ. ԻԱ.
տաքս զվաճառօղս և զգնօղս. բժշ- Մրկ. ԺԱ.
կեաց անդ և զկոյրս և զկաղս: Ընդ Ղկ. ԺԹ.
և մանկտին աղաղակէին օրհնութի.
և 'ի զայրանալ չարաց՝ յիշեցոյց նո-
ցա յս̄, թէ այս է՝ որ գրեալն է, 'ի
բերանոյ մանկանց տղայոց և ստնդիե-
ցաց կատարեցեր զօրհնութի:

Եւ հանապազօր ուսուցանէր 'ի տա- Ղկ. ԺԹ.
ճարի անդ. և ժողովուրդն լսէր նմա
սիրով. իսկ գլխաւորք ժողովրդեանն
հնարէին կորուսանել զնա:

Էին անդ և հեթանոսք ոմանք ե- Յհ. ԺԲ.
կեալք երկրպագանել ա̄յ 'ի տօնի. Մտթ. ԻԱ.
և սոքա մատեան առ յս̄ միջնորդու-
թեամբ աշակերտաց. յայնժամ ասէ
Յս̄, եհաս ժամ, զի փառաւորեսցի
որդի մարդոյ: Եւ յաւել ճառել

Յհ. զտարչարանաց իւրոց. և 'ի խօսելն
ԺԲ. առ Հայր՝ եկն բարբառ յերկնից. զոր
33. կէսք 'ի լսողաց որոտումն համարեցան
լինել, և կէսք ասէին՝ թէ հրեշտակ
խօսեցաւ: Հաւատացին 'ի նա և ո-
մանք յիշխանաց, այլ երկնչէին 'ի
փարիսեցւոց՝ յայտնել զհաւատս իւ-
րեանց: Ապա թաքոյց զանձն յս̄ 'ի
բազմութ̄է. և ընդ երեկս գնաց 'ի
բեթանիա երկոտասանիւքն հան-
դերձ:

'Ի վաղիւ անդր ելեալ 'ի բեթա- Մտթ. ԻԱ.
նիայ՝ երթալ յերուսաղէմ, քաղ- Մրկ. ԺԱ.
ցեաւ. և տեսեալ թզենի մի՝ խընդ-
րեաց պտուղ, և ոչ եգիտ. վասն որոյ
անէծ վասն օրինակի մերոյ զտունկն.
և առժամայն չորացաւ թզենին:
Եւ եկեալ 'ի տաճարն՝ վերստին ար-
տաքսեաց զվաճառօղս և զգնօղս. և
ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցու-
ցանիցէ ընդ տաճարն: Եւ յուսու-
ցանել նորա զժողովուրդն խորհէին
քահանայապետքն ունել և սպանա-
նել զնա. այլ երկեան 'ի ժողովըր-
դենէ: Իբրև ընդ երեկս եղև, ել
դարձեալ յս̄ արտաքոյ քան զքա-
ղաքն:

Եւ այգուցն անցեալ վերստին առ Մտթ. ԺԱ.
թզենեաւ՝ տեսին ցամաքեալ յարմա- Մրկ. ԺԱ.
տոց. և յիշեաց պետրոս զբանն յս̄ի.
և նա ուսոյց նոցա զզօրութի հաւա-
տոց, և յորդորեաց հաւատովք կալ
յաղօթս:

Իբրև եկն անդրէն յերուսաղէմ, Ղկ. Ի.
և եմուտ 'ի տաճարն, և ուսուցանէր, Մտթ. ԺԱ.
զան առ նա քահանայապետք և դպիրք Մրկ. ԺԱ.
և ծերք, և ասեն. որո՞վ իշխանութ̄ — ԺԲ.
առնես զայդ: Եւ յս̄ շրջեաց զհար-

Մտ. ցուածն, թէ ուստի՞ էր մկրտութիւն
ԻԲ. յովհաննու. որով ըմբերանեաց զնո-
33. սա, զի ոչ 'ի մարդկանէ առեալ իշխէին,
և ոչ յԱյ առեալ կամէին։ Յաւել և
զառակս վասն երկուց որդւոց առն
միոյ. և զայգւոյն՝ զոր ետ տանուտէրն
'ի ձեռս մշակաց. որք սպանին և զոր-
դի տանուտեառն. և նոքա իմացեալ՝ թէ
զիւրեանց է բանն, կամէին անդէն
և անդ ունել զնա. այլ երկեան 'ի
ժողովրդենէ, որք իբրև զմարգարէ
ունէին զնա։

Խօսեցաւ և զառակ հարսանեաց Մտթ. ԻԲ.
որդւոյ թագաւորի, յայտ արարեալ
զյեթանոսութիւն հրաւիրելոյ, և զարտաք-
սումն առն՝ որոյ ոչ էր զգեցեալ հան-
դերձ հարսանեաց։

Հաւաքեն փարիսեցիք զաշակերտս Մտթ. ԻԲ.
իւրեանց՝ հերովդիանոսօքն հանդերձ, Մրկ. ԺԲ.
զի զնա որսասցեն բանիւ. արժա՞ն է Ղկ. Ի.
տալ հարկս տալ կայսեր, թէ ոչ։ Նա
Յս հարցեալ, թէ ո՞յր իցէ պատկեր 'ի
դրամն, 'ի վերայ եած. տուք զկայ-
սերն կայսեր, և զԱյն Այ. որով զա-
մօթի հարան, և թողին զնա և գնա-
ցին։

Գան առ նա սադուկեցիքն, և ընդ- Մտթ. ԻԲ.
դէմ յարութեան մեռելոց 'ի մէջ ար- Մրկ. ԺԲ.
կին զկին մի մնացածին՝ եօթն արանց Ղկ. Ի.
լեալ, թէ յետ յարութեան ո՞յր 'ի նո-
ցանէ լինիցի նա կին։ Նա Յս յանդի-
մանեաց զանմտութիւն նոցա, զի ըստ
աղցաւոր կենցաղոյս խորհէին զկինձա-
կէ յարութեան. իսկ զյարութիւն մե-
ռելոց հաստատեաց 'ի գրոցն մովսէ-
սի, զոր և սադուկեցիք չկարէին ժխ-
տել։

Եհարց ապա ոմն 'ի դպրաց. ո՞ր Մտթ. ԻԲ.

Ր՟Ձ պատուիրան է մեծ յօրէնս. և լուեալ՝ Մրկ. ԺԲ :
տն. թէ առաջին է սիրել զԱծ յամենայն
33. սրտէ, և երկրորդն նման նմին՝ սիրել
զընկերն իբրև զանձն, ետ հաւանու-
թիւ բանիցն նորա. և նա գովեաց զնա՝
որպէս ոչ հեռի լինել յարքայութենէն
Այ :

Եւ 'ի հարցանել նորա զփարիսեցիս Մտթ. ԻԲ :
թէ ո՞յր որդի է Քս. և 'ի խնդրել Մրկ. ԺԲ :
զլուծումն բանիցն դաւթի. Ասաց Ղկ. Ի :
Տր ցՏր իմ, ափ 'ի բերան եղեն առ-
հասարակ :

Յայնժամ խօսեցաւ նա առ ժողո- Մտթ. ԻԳ :
վուրդն և առ աշակերտս իւր, չլինել Մրկ. ԺԲ :
նմանօղ գործոց դպրաց և փարիսեց- Ղկ. Ի :
ւոց, վայ տալով նոցա ութիցս : Եւ
աւաղեաց զԵրուսաղէմ, նախաձայնե-
լով զաւեր նորա :

Տեսեալ նորա 'ի տաճարի զտուրս Մրկ. ԺԲ :
մեծատանց 'ի գանձանակն, և զայր- Ղկ. ԻԱ :
ւոյ միոյ արկանելն զերկուս լումայս,
վկայեաց զառաւելութիւն նորա քան
զնոցայն :

Ելանելն նորա 'ի տաճարէն, և Մտթ. ԻԴ :
'ի ցուցանել նմա աշակերտացն զհոյ- Մրկ. ԺԳ :
ակապ շինուածն, սկսաւ ճառել ըզ- Ղկ. ԻԱ :
կործանմանէ նորա : Եւ մինչդեռ նըս-
տէին 'ի լերինն ձիթենեաց յանդի-
ման տաճարին, իբրև հարցին ցնա ա-
ռանձինն չորեքին աշակերտքն՝ պետ-
րոս և յովհաննէս և յակոբոս և անդ-
րէաս, թէ ե՞րբ լինիցի աւեր տաճա-
րի, և զի՞նչ նշան իցէ գալստեան նո-
րա և վախճանի աշխարհիս, ընդար-
ձակ ճառեաց վասն նոցին իրաց՝ պա-
տուիրելով ազգի ազգի զգուշութիւնս
վասն ամենայն հաւատացելոց :

Յաւել 'ի խրատ պատրաստ լինե- Մտթ. ԻԵ :

Ր՚Տ լոյ յամենայն ժամու և զառակ տասն
ՔՆ. կուսանաց, և զառակ քանքարաց.
33. Նկարագրեաց և զօր ընդհանուր դատաստանի, զորոշումն արդարոց և մեղաւորաց՝ իբրև զօդեաց յայծեաց. զբանս իւր առ աջակողմեանս և առ ձախակողմեանս. և զերթալն արդարոցն 'ի կեանսն յաւիտենականս, և զմեղաւորաց 'ի տանջանսն յաւիտենականս:

Եւ եղև իբրև կատարեաց Յս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտս իւր. գիտէք, զի յետ երկուց աւուրց զատիկ լինի, և որդի մարդոյ մատնի 'ի խաչ ելանել: Մտթ. ԻԶ:

Յայնժամ ժողովեցան քահանայապետք 'ի սրահ կայիափայ, և խորհուրդ արարին վասն սպանութեն Յսի. բայց ասէին, թէ մի 'ի տօնի աստ, զի մի խռովութիւն լինիցի 'ի ժողովրդեանն: Մտթ. ԻԶ: Մրկ. ԺԴ:

Եւ իբրև բազմեալ էր Յս 'ի բեթանիա 'ի տան սիմոնի բորոտի, եկն կին մի, և բերեալ շիշ իւղոյ նարդեան ազնուի՝ թափեաց 'ի գլուխ Յսի. ընդ որ զայրեցաւ յուդա. (որ երևի նոյն ընդ գրելոյն 'ի յովհաննէ ըստ նախաասացելոյս): Մտթ. ԻԶ: Մրկ. ԺԴ:

Յայնժամ եմուտ սատանայ 'ի յուդա իսկարիովտացի, որ էր մի յերկոտասանից. և երթեալ դաշնաւորեցաւ ընդ թշնամիս Յսի՝ պարապով մատնել զնա 'ի ձեռս նոցա, վաճառելով զՏր իւր ընդ երեսուն արծաթոյ: Մտթ. ԻԶ: Մրկ. ԺԴ: Ղկ. ԻԲ:

Չորրորդ պասեք. յորում զատիկ մեր զենաւ ինքն Քս զառն Այ, 'ի սկզբան չորրորդ աւուր, կամ յընդմիջել Մտթ. ԻԶ: Մրկ. ԺԴ: Ղկ. ԻԲ:

Ա՛ վերջին եօթներորդին զամինելի. (զամ.
Յհ. Թ. 27 :)

33. Յառաջնում աւուր բաղարջա- Մտթ. Մրկ.
կերաց յորժամ զպասեքն զենուին Ղկ :
(որ և պասքա, կամ զատիկ կոչիւր),
առաքեաց Յս զպետրոս և զյովհան-
նէս պատրաստել զզատիկն 'ի նշանա-
կեալ վերնատան ուրումն տանուտեան :

Ընդ երեկս՝ վերջին ընթրիք. և նոր Յհ. ԺԳ.
սեղան խորհրդոյ մարմնոյ և արեանն ԺԴ. ԺԵ.
տեառն : Եւ լուացումն ոտից աշակերտացն՝ ԺԶ. ԺԷ :
և կտակ փրկչին. և երթ յուդայի 'ի
մատնել զվարդապետ իւր :

Յետ ընթրեաց՝ գիշերայն գնաց Մտթ. ԻԶ:
Յս ըստ սովորութե՛ ընդ աշակերտսն Մրկ. ԺԴ:
յաղօթս կալ, յայնկոյս ձորոյն կեդ- Ղկ. ԻԲ:
րոնի 'ի լեառն ձիթենեաց. և եմուտ Յհ. ԺԸ:
'ի պարտէզն գեթսեմանի :

Աղօթակցութիւն Յսի երիցս առ- Մտթ. Մրկ.
հայր վասն անցանելոյ բաժակին, և Ղկ :
ստէպ յորդորելն զաշակերտսն յա-
ղօթս :

Արիւն քրտնիլն Յսի յաղօթս, և Ղկ :
երևումն հրեշտակին :

Գալուստ յուդայի զօրականօք և Մտթ. ԻԶ:
սպասաւորօք 'ի պարտէզ անդր. և Մրկ. ԺԴ:
մատնութի և ըմբռնումն և կապումն Ղկ. ԻԲ:
Յսի. և փախուստ աշակերտացն. այլ Յհ. ԺԸ:
յետոյ պետրոս հեռագոյն զհետ եր-
թայր ընդ յովհաննու մինչև 'ի տուն
քահանայապետին :

Ածեն զՅս կապանօք նախ առ ան- Մտթ. Մրկ.
նա աներն կայիափայի. և նա առաքէ Ղկ. Յհ :
զնա առ կայիափա : Հարցուած քա-
հանայապետին. և պատասխանի Յսի.
և դատապարտելն զնա կայիափայի՝
իբրև մահապարտ՝ վասն վկայելոյ
զճշմարտութե՛ն, թէ ինքն է որդի այ

Մ. կենդանւոյ։ Տանջեն սպասաւորաց
գլ. զՅս՝ մինչև ցառաւօտ, կոփելով, ապ-
33. տակելով, թքանելով, և հայհոյելով։
Երիցս ուրացումն պետրոսի, և դարձ
յերկրորդ հաւախօսին՝ ընդ ակնար-
կել 'ի նա յՅի։

Ի լուսանալ յաջորդ աւուր՝ այս- Ղկ. ԻԲ։
ինքն ուրբաթու, կրկին եւս դատա-
պարտէ զՅս ատեան ծերակուտին
հրէից՝ հանդերձ քահանայիւք և
դպրօք։

Ապա յարուցեալ ամենայն բազ- Մտթ. ԻԷ։
մութեամբ ընդ առաւօտն ուրբաթու Մրկ. ԺԵ։
տարան զՅս կապեալ, և մատնեցին Ղկ. ԻԳ։
'ի ձեռս պիղատոսի պոնտացւոյ դա- Յհ. ԺԸ։
տաւորի հռովմայեցւոց. և ստիպէին
'ի խաչ հանել։

Առաքումն յՅի 'ի պիղատոսէ առ Ղկ։
հերովդէս, որ էր յայնժամ յերու-
սաղէմ վասն զատկին. և արհամար-
հելն հերովդի զՅս, և արկանել
զնովաւ զհանդերձ սպիտակ։

Հնարք պիղատոսի վասն արձակե- Մտթ. Մրկ.
լոյ զՅս՝ 'ի շնորհ տօնի զատկին. և Ղկ. Յհ։
ընդդէմ հրէից, զի արձակեսցի բա-
րաբբայ աւազակն մարդասպան, և
յՅս սպանցի մահուամբ խաչի։

Առաքեաց և կինն պիղատոսի առ Մտթ։
նա՝ թէ չկայ ինչ քո և արդարոյն այ-
նորիկ, և այլն. այլ ոչ զիջան թըշ-
նամիք։

Յայնժամ էառ պիղատոս զՅս և Յհ. Մտթ.
գան եհար. և զինուորացն արա- Մրկ։
րեալ պսակ 'ի փշոց՝ եդին 'ի գլուխ
նորա. և զգեցուցին նմա հանդերձ
ծիրանի. և ծաղր արարին որպէս
սուտ թագաւոր, և ապտակեցին. և
ծեծէին զգլուխն եղեգամբ, զոր տու-

Մ։ եալ էին 'ի ձեռս նորա իբրև զա-
Յհ. ւազան արքունի ։

33. Ած պիղատոս զՅս առ հրեայս նոյնին ձեւով. և հնարէր արձակել զնա, ասելով, ահա այրդ ցձեզ. այլ նոքա պնդէին 'ի խաչ հանել։ յհ. ժթ.

Մտեալ անդրէն դատաւորն յա-պարանս՝ եհարց զՅս. և լուեալ՝ զի թագաւորութիւն նորա չէ յայսմ աշխարհէ, ոչինչ գտանէր հակառակ տէրութեան կայսեր, որպէս հրեայքն չարախօսէին ։ յհ.

Յայսմ վայրի իմացեալ յուդայի, թէ Յս ոչ ազատեաց զանձն իւր 'ի ձեռաց թշնամեաց, որպէս կարծէր, այլ 'ի մահ ունի մատնիլ ըստ նախասացութեան իւրոյ, ակամայ ստրջա-նօք դարձոյց զարծաթն 'ի տաճարն. և ինքն յուսահատ մտօք չոգաւ խեղդեցաւ ։ Մտ. իէ.

Յետ երկար բանից ատենի, և աղաղակի բազմութեան, լուեալ պիղատոսի՝ զի ասէին հրեայքն, արիւն դորա 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց, լուաց զձեռս առաջի նոցա՝ իբրև անպարտ ցուցանելով զինքն յարենէ արդարոյ, և հաճելով զթշնամիսն՝ մատնեաց զՅս 'ի ձեռս նոցա, զի 'ի խաչ հանիցեն՝ որպէս կամէին, 'ի լերինն գողգոթայ՝ որ էր տեղի կառափելոյ ։ Մտ. Մրկ. ժե. Ղկ. իգ. յհ.

Եւ բարձեալ էր ինքնին զխաչափայտն ։ յհ.

Պահակ կալան և զսիմոն կիւրենացի, զի բերցէ զխաչն զկնի Յսի ։ Մտ. Մրկ. Ղկ.
Երթային ընդ բազմութեան և կանայք արտասուելով. դարձաւ Յս, և ասէ ցնոսա. դստերք երուսաղէմի

Մ՟ մի լայք 'ի վերայ իմ. այլ 'ի վերայ
Ք՟Ն. անձանց ձերոց, և 'ի վերայ որդւոց
33. ձերոց. ևն։

Իբրև հասին 'ի գողգոթա, ետուն նմա գինի ընդ լեղի խառնեալ։ Էր ժամ երրորդ, և հանին զնա 'ի խաչ։ Եւ ասէ Յս. Հայր թող սոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն։ Մտթ. ԻԷ։ Մրկ. ԺԵ։ Ղկ. ԻԳ։ Յհ. ԺԹ։

Եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա 'ի չորս մասունս՝ իւրաքանչիւր զինուորի մասն։ Իսկ 'ի վերայ անկար պատմուճանին արկին վիճակ, ում և ելցէ, և նստեալ պահէին զնա։ Մտթ. Մրկ. Ղկ. Յհ։ Յհ։

Հանին ընդ նմա 'ի խաչ և երկուս աւազակս, մի յաջմէ և մի յահեկէ նորա։ Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա։ Մտթ. Մրկ. Ղկ։

Հայհոյէր զնա և մի ոմն 'ի չարագործաց կախելոց. այլ ընկերն նորա սաստեաց նմա, և արդարացոյց զՅս, դաւանելով զնա երկնաւոր Թագաւոր, և աղաչելով յիշել զինքն յարքայուԹեն իւրում. և լուաւ 'ի Յսէ, այսօր ընդ իս իցես 'ի դրախտին։

Կային առ խաչին Յսի մայր նորա, և Յովհաննէս սիրելի աշակերտ. և ասէ Յս ցմայրն վասն Յովհաննու, կին դու, ահա որդի քո. և ցՅովհաննէս, ահա մայր քո. և յայնմ ժամանակէ էառ աշակերտն այն զնա առ իւր։ Ղկ։

Եւ էր գրեալ 'ի պիղատոսէ տախտակ. և եդեալ 'ի վերայ խաչին՝ եբրայեցերէն, դաղմատերէն (այսինքն լատիներէն 'ի բարբառ հռովմայեցւոց,) և յունարէն. Յս նազովրեցի՝ Թագաւոր հրէից։ Յհ. ԺԹ։

Այն ընԹերցեալ հրէից՝ զայրա- Մտթ. Մրկ.

Մս. ցան, զի ոչ երեւէր այնու յանցաւոր Ղկ. ԻԳ.
Գլ. գոլ խաչեալն, այլ առաւել անպար- Յհ. ԺԹ.
33. տական և փառաւոր. վասն որոյ ա-
սէն ցպիղատոս, մի՛ գրեր թագաւոր
հրէից, այլ թէ նա ասաց, թագաւոր
եմ հրէից. իսկ պիղատոս արար պա-
տասխանի, զոր ինչ գրեցի՝ գրեցի։
Խաւարումն արեգական 'ի վեց ժա- Յհ.
մէ աւուրն մինչև ցիններորդ ժամ։
Եւ զինն ժամուն գոչեաց յս, էլի
էլի՝ լամա սաբաքթանի. այսինքն է,
Աստուած իմ այ իմ, ընդէ՞ր թողեր զիս.
զոր լուեալ զինուորաց՝ կարծեցին,
թէ էլիա գոչէ, կոչելով զեղիա յօգ-
նութիւն, ըստ սովորութեան հրէից։
Յաւել ասել յս, ծարաւի եմ, զի Յհ.
ամենայն մասամբ կատարեսցի գիրն։
Յայնժամ մատոյց նմա մի ոմն 'ի զի- Մտթ. ԻԷ.
նուորաց սպունգ լի քացախով խառն Մրկ. ԺԵ.
ընդ լեղւոյ, շուրջ եդեալ զմշտկաւ Ղկ. Յհ.
զոպայի։ Զոր առեալ յսի՝ աղաղա-
կեաց 'ի ձայն մեծ, հայր 'ի ձեռս քո
աւանդեմ զհոգի իմ. և խոնարհե-
ցուցեալ զգլուխն աւանդեաց զհոգին։
Տեսեալ հարիւրապետին՝ եթէ ա- Մրկ. ԺԵ.
ղաղակեաց, և եհան զհոգին, փառա-
ւոր արար զած և ասէ. արդարև այրս
այս որդի այ էր։
Յեղաւ և վարագոյր տաճարին վե- Մտթ. Մրկ.
րուստ 'ի վայր. երկիր շարժեցաւ. վէմք Ղկ.
պատառեցան. գերեզմանք բացան. և
բազում մարմինք ննջեցելոց սրբոց յա-
րեան։ Իսկ հարիւրապետն և որք ընդ
նմա տեսեալ զայս ամենայն, երկրպա-
գեցին. արդարև այ որդի էր սա։
Եւ բազումք յամբոխէն բախէին Ղկ.
զկուրծս, և դառնային։
Մինչև երեկոյացեալ ուրբաթու՝ ։

Յհ. որ 'ի շաբաթն մեծ մտանէր, հրամա-
ԺԹ. նաւ պիղատոսի ետուն հրէայք խոր-
33. տակել զնուորաց զբարձս կախելոց,
զի մեռցին և բարձցին. զի չէր օրէն
'ի խաչին ագանիլ 'ի շաբաթու։ Իսկ
յս̅ քանզի կանխաւ աւանդեալ էր
զհոգին, չեղև հարկ խորտակել բզ-
բարձս նորա. զի լցցի գիրն, թէ ոսկր
նորա մի փշրեսցի (յօրինակ զատկա-
կան գառին)։ Այլ մի ոմն 'ի զինուո-
րաց տիգաւ խոցեաց զկողս նորա, և
ել վաղվաղակի արիւն և ջուր. զի
լցցի և միւս գիրն, թէ հայեսցին 'ի
նա՝ յոր խոցեցինն. (այն է բանն,
զաքար. ԺԲ. 10. հայեսցին առ իս
փոխանակ կաքաւելոյն, այսինքն խա-
ղալոյ զինև խոցոտմամբ։)

Թաղումն Տն յերեկոյի ուրբաթու Մտթ. ԻԷ.
մօտ 'ի տեղի խաչելութեան 'ի նորա Մրկ. ԺԵ.
փոր վիմի, յորում ոչ ոք երբէք էր Ղկ. ԻԳ.
եդեալ, 'ի հրամանէ պիղատոսի 'ի Յհ. Ի.
ձեռն յովսեփայ արեմաթացւոյ՝ պա-
տեալ նոր և մաքուր կտաւօք, հան-
դերձ առատ զմռոմ և հալուէի-
զոր եբեր նիկոդեմոս։ Իսկ մարիամ
մագդաղենացի և այլ կանայք տե-
սին զտեղին՝ ուր եդաւ, և թէ զիարդ-
եդաւ վէմ մի մեծ 'ի կափարիչ գե-
րեզմանին. և դարձան պատրաստել
զայլ ևս խունկս և իւղս անոյշս, զի
յետ անցանելոյ շաբաթուն եկեսցեն
օծցեն զնա և ինքեանք։

'Ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբա- Մտթ. ԻԷ.
թու, այսինքն յաւուր մեծի շաբա-
թուն, հրէայք հրաման առեալ 'ի
պիղատոսէ և գունդ զօրականի՝ եկլին
կնքեցին զգերեզման Տն. որպէս թէ
մի լիցի գողացեալ մարմին նորա, և

Մ՟ համբաւեսցի յարուցեալ, ըստ ա-
ԻԷ. րում յայտնի ասացեալ էր քո, թէ
33. յերիր աւուր յառնեմ 'ի մեռելոց,
և թողլն անդ զօրականս՝ պահել
զգերեզմանն յերիս աւուրս ։

Ա՟ծապէս յարութիւն քոյ ինքնիշ- Մտթ. ԻԸ ։
խան զօրութեամբ՝ 'ի գերեզմանէն Մրկ. ԺԶ ։
կնքելոյ, ընդ լուսանալ միաշաբա- Ղկ. ԻԴ ։
թու վաղ քաջ ընդ առաւօտն ։ Առ- Յհ. Ի ։
նմին գալուստ մարիամու մագդաղե-
նացւոյ, և այլոց իւղաբեր կանանց՝
ընդ արեգական հետ զհետ, միա-
բան և ուրոյն · իջումն փայլակնա-
ցայտ հրեշտակին, որ թաւալեցոյց
զվէմն 'ի գերեզմանէն, և տապալեաց
զպահապանս · և քաջալերեաց զիւ-
ղաբերս՝ աւետարանելով զքո յա-
րուցեալ · գիտեմ ասէ, զի զխաչե-
լեալն խնդրէք · չէ աստ, այլ՝ յա-
րեաւ · եկայք տեսէք զտեղին՝ ուր
կայր · և երթայք պատմեցէք պե-
տրոսի և այլոցն ամենեցուն ։

Կրկին երևումն երկուց հրեշտա- Մտթ. Մրկ.
կաց · և շփոթ բանք իւղաբերից առ Ղկ ։
առաքեալս ։

Ընթանան պետրոս և յովհաննէս Յհ. Ղկ ։
'ի գերեզմանն, և տեսանեն զկտաւն
լոկ՝ զի կային · և զվարշամակն ու-
րոյն ծալեալ ։

Երևի քո մագդաղենացւոյն 'ի Յհ ։
կերպարանս պարտիզպանի, և ապա
տայ ծանօթս · և պատուիրէ երթալ
պատմել առաքելոցն ։

'Ի դառնալ իւղաբերից առ առա- Մտթ ։
քեալս, պատահեաց նոցա քո, և ող-
ջոյն ետ նոցա, և նոյնպէս պատուի-
րեաց երթալ պատմել աշակեր-
տաց, զի միաբան ժողովեսցին 'ի

Ղկ. գալիլեա՝ տեսանել զնա ։
իդ. Յայնժամ երթեալ և զօրակա- Մտթ ։
33. նաց ՚ի քաղաքն՝ պատմեցին քա-
հանայապետից զամենայն որ ինչ
եղեն . և նոցա խորհուրդ առեալ
հանդերձ ծերովքն՝ ետուն կաշառս
պահապանաց , ասել առաջի ամբո-
խին , եթէ եկեալ գիշերի աշակեր-
տաց՝ գողացան զնա , մինչ մեք ՚ի քուն
էաք ։

Երեւումն քրի կղէօփեանց , որ Ղկ. Մրկ։
գնային յանդաստան , այսինքն ՚ի
գիւղն Եմմաւուս ։ Եւ ՚ի դառնալ
նոցա փութով ՚ի նմին երեկոյի՝ տալ
աւետիս առաքելոց , լուան ՚ի նոցա-
նէ զնոյն աւետիս , եթէ յարեաւ
տր , և երեւեցաւ սիմոնի պետրոսի ։

՚Ի նմին երեկոյի միաշաբաթուն Մրկ. Յհ.
երեւի տր աշակերտաց ժողովելոց ՚ի Ղկ։
վերնատունն՝ դրօքն փակելովք . և
տուեալ նոցա ողջոյն խաղաղութեան՝
ետ շօշափել զինքն , և ստուգել
զյարութիւնն նորին մարմնոյն , եկեր
և զմասն ձկան խորովելոյ , և խո-
րիսխ մեղու . զի անկասկած լինիցին
՚ի կարծեաց ոգի ինչ տեսանելոյ . և
եբաց զմիտս նոցա՝ իմանալ զգիրս ։

Միայն Թովմաս ոչ գտաւ անդ . Յհ. Ի ։
և իբրև պատմեցին նմա այլքն , չկա-
մէր հաւատալ , մինչ և ինքն ակա-
նատես լիցի , և ձեռօք շօշափեսցէ ։

Յետ ութ աւուրց՝ ՚ի միւս միաշա- Յհ. Ի ։
բաթու՝ եկն երեւեցաւ յս աշակեր-
տաց ՚ի նոյն վերնատան , և եցոյց
Թովմայի զձեռս և զկողս իւր . և յա-
սել նորա հաւատով , տր իմ և ած
իմ, լուաւ ՚ի նմնէ . այդ զի տեսեր
զիս , և հաւատացեր . երանի որոց

Ր՟ ոչ իցէ տեսեալ, և հաւատասցեն։
ՃԽ. Յետ այսորիկ դարձեալ յայտ- յհ. իա։
33. նեաց զանձն իւր յէ աշակերտաց իւ-
րոց առ ծովեզերբն տիբերեայ՝ հան-
դերձ սքանչելեօք բազմութեան ձկանց
ըմբռնելոյ։ Եւ յետ ճաշելոյն ընդ
նոսա՝ երիցս հարցեալ զպետրոս, սի-
մո՞ն յովնանու սիրե՞ս զիս առաւել
քան զսոսա, երիցս կրկնեաց՝ արա-
ծել նմա զգառինս իւր և զոչխարս,
այսինքն զնորս եկեղեցի քսի։ Եւ
գուշակեաց զօրինակ կատարման նո-
րա. իսկ վասն յովհաննու սիրելի ա-
շակերտին ծածկեաց զխորհուրդ բա-
նին, որ մնաց անթարգմանելի նշանակ
սիրոյ։

Բաց յայլոց երևմանց յոր՝ որ (մտ. իը. ժզ։)
ոչն գրեցան, ըստ առելոյն պօղոսի՝ Ա կր. ժե։
երևեցաւ միանգամ աւելի քան զհինգ
հարիւր եղբարց միանգամայն, և ա-
պա երևեցաւ յակովբայ. ապա առա-
քելոցն ամենեցուն։ Եւ վերջինս այս
այն երևի, յորժամ 'ի գալիլեա երևե-
ցաւ մետասանից, և որոց ընդ նոսա.
և կարգեաց զառաքեալս 'ի քարո-
զութիւն աւետարանին ընդ ամենայն
աշխարհ, մկրտելով զեկեալսն 'ի հա-
ւատս Ա՟ծոյ՝ յանուն հօր և որդւոյ
և հոգւոյն ս՟րբ, և ուսուցանելով նո-
ցա պահել զամենայն պատուիրեալսն
յիւրմէ։

Վերացումն քսի յերկինս մար- ղկ. իդ։
մնով, որ և համբարձումն, յետ քա- Մրկ. ժզ։
ռասուն աւուրց յարութեան իւրոյ, Գործ. ա։
և զկնի ուսուցանելոյ իւրոյն զամե-
նայն խորհուրդս և զկարգաւորութիւն
վասն հոգևոր թագաւորութեան իւրոյ
'ի նորս եկեղեցի, և պատուիրելոյ

Ա.Տ սպասել յերուսաղէմ մինչև յընդու-
ՔՆ. նելութիւն հոգւոյն սբյ ։
33. Աստանօր լրումն առնու պատմութին
չորից աւետարանչաց և սկիզբն լինի
գործոց առաքելոց. որ է երկրորդ
մատեան նոյն ղուկասու աւետարան-
չի՝ զկնի առաջին բանին, այսինքն ա-
ւետարանին իւրոյ ։

Յետ համբարձմանն տն 'ի լեռնէն ձի- Ղկ. ԻԴ ։
թենեաց՝ մետասան առաքեալքն և գործ. Ա ։
դարձան յերուսաղէմ, 'ի վերնա-
տունն սիոնի, ուր էին վանք նոցա.
և կային միաբան յաղօթս համդերձ
մարեմաւ մարբն յի և եղբարբք
նորա ։

Ընտրութիւն սբյն մատաթիայ 'ի գործ. Ա ։
թիւ մետասանից՝ 'ի լրումն երկոտա-
սան թուոյ առաքելոց փոխանակ յու-
դայի անկելոյ 'ի թուոյ նոցա. և այն
ըստ առաջարկելոյ պետրոսի, համ-
դերձ աղօթիւք հասարակաց իբրև
հարիւր և քսան անձանց, և վիճա-
կաւ 'ի նշանակ ընտրութեան յայ ։

Յաւուր պենտեկոստէի, այսինքն Բ ։
յիններորդի՝ յետ զատկի յարութեն
քսի, և 'ի տասներորդ աւուր հա-
մարձմանն նորա, մինչդեռ կային միա-
բան յաղօթս 'ի վերնատան, եկն գա-
լուստ հոգւոյն սբյ յանկարծահաս հող-
մաձայն հնչմամբ. և երևեցան հրե-
ղէն լեզուք 'ի վերայ իւրաքանչիւր նո-
ցա. և լցեալ հոգւով սբվ՝ սկսան խօ-
սել յայլևայլ լեզուս. յորմէ գղրդե-
ցաւ քաղաքն երուսաղեմի. և եկեալ
ժողովեցան բազմութի հրէայք 'ի թուոյ
ցրուելոցն 'ի սփիւռս հեթանոսաց. և
լուեալ՝ զի առաքեալք խօսէին յամե-
նայն լեզուս ազգաց, սքանչացան ։ Իս

Ա՟Տ յասել ոմանց՝ թէ քաղցուալիցք իցեն, Գործ.
ԼԳ. յարուցեալ պետրոս հանդերձ մետա-
33. ամփիւքն քարոզեաց զխորհուրդ գալս-
տեան հոգւոյն սրբոյ, և յայտ արար
զտնտեսութիւն այ՝ զոր կատարեաց քս
մարդեղութեամբ իւրով, և կենարար մա-
հուամբ և յարութեամբ։ Ոմանց յօժա-
րութեամբ ընկալեալ զբան նորա՝ մկրտե-
ցան. և յաւելան յաւուր յայնմիկ
ոգիք իբրև երեք հազարք։

Բժշկութիւն առն՝ որ էր կաղ յորո- Գ.
վայնէ մօր իւրոյ՝ առ դրան տաճարին,
'ի ձեռն պետրոսի և յովհաննու. և
քարոզումն պետրոսի առ ժողովուրդն
զարմացեալ 'ի վերայ նշանին, որ
եղև։

Բանտարկութիւն պետրոսի և յով- Դ.
հաննու զայն գիշեր. և առ վաղիւն
դատելն նոցա յատենի ծերակուտին.
և համարձակախօսութիւն նոցա 'ի վկայու-
թեան ճշմարտութեան. և արձակումն 'ի
տանէ։ Միաբան աղօթք առաքելոց,
և շարժումն տեղւոյն։ Մի սիրտ և մի
ոգի հաւատացելոց՝ որք բազմանային
օր քան զօր։ Յովսէփ կոչեցեալն բառ-
նաբաս՝ վաճառէ զգիւղ իւր, և դնէ
զգինսն առ ոտս առաքելոց։

Անանիա և սափիրա ստողք հոգ- Ե.
ւոյն սրբոյ՝ պատժին. նշանք և արուեստք
բազում լինին 'ի ձեռն առաքելոց,
մինչև հովանւոյն պետրոսի բժշկել
զհիւանդս. յաւելան հաւատացեալքն
'ի տր՝ բազմութիւն արանց և կանանց։
Ատեանն հրեից 'ի բանտ արկանէ զա-
ռաքեալս. և հրեշտակ այ արձակէ
զնոսա՝ դրօքն փակելովք։ Եւ յոր-
ժամ ուսուցանէին նոքա զժողովուրդն
'ի տաճարի, դարձեալ ածեն յա-

ԱՏ տեան. և ըստ խորհրդոյ գամաղիէլի գործ։
ՓՆ. Թողացուցանեն զնոսա, բայց նախ
33. գան հարկանելով. և նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան ՏՆ՟ արժանի եղեն անարգելոյ. և ոչ դադարէին աւետարանել զՅս՟ Քս՟։

Ընտրութի՟ եօթանց սարկաւագաց. և հրապարակաւ քարոզութի՟ սբյն՟ ստեփաննոսի՝ հանդերձ մեծամեծ նշանօք։ Ըմբռնումն նորա և ածումն յատեան, ուր տեսանէին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի։ Զ։

Ատենախօսութի՟ սբյն՟ ստեփաննոսի. և նահատակութի՟ նորա քարկոծմամբ, տեսանելով զերկինս բացեալ, և զորդի մարդոյ ընդ աջմէ այ՟. և աղօթելով 'ի վերայ քարածգողաց։ Սու-սաւուղ կամ սօղոս էր կամակից սպանման նորա։ Է։

Հալածումն 'ի վր՟ քրիստոնէից յերուսաղէմ. և ցրուիլ հաւատացելոց 'ի գեօղս մինչև 'ի սամարիա։ Սնոտակարութիք սօղոսի։ Քարոզութի՟ փիլիպպոսի միոյն յեօթանց սարկաւագաց 'ի սամարիա. և աւժամեայ դարձ սիմոնի կախարդի։ Պետրոս ընդ յովհաննու երթայ 'ի սամարիա, և մկրտելոցն տայ զհոգի սբ՟. և յանդիմանէ զսիմոն մոգն՝ որ արծաթոյ խորհէր գնել զշնորհս հոգւոյն։ Մկրտիլն եթովպացի ներքինւոյն 'ի փիլիպպոսէ։ Ը։

35. Դարձ սօղոսի, որ և պօղոս առա- Թ։
քեալ կոչեցաւ՝ երկնաւոր ընտրութե՟ և մկրտիլն յանանիայ առաքելոյ 'ի դամասկոս. և սկսանիլն յայտնապէս քարոզել զՔս՟. և յետ իբր երկուց

Ը՟ ամաց փախստեամբ գալուստն յերու- Գործ :
Գն. սաղէմ. և 'ի հալածիլն անդ 'ի հրէից՝
37. առաքումն 'ի տարսոն քաղաք իւր :
38. Բժշկելն պետրոսի զենեա ութամեան
անդամալուծ 'ի լիւդդիա . և յարու-
ցանելն 'ի մեռելոց զտաբիթա 'ի յոպ-
պէ :

41. Մկրտելն կուռնելիոսի հարիւրա- Ժ :
պետի ամենայն տամբ իւրով 'ի պետ-
րոսէ՝ 'ի կեսարիա պաղեստինոյ . որով
բացաւ հեթանոսաց դուռն հաւա-
տոյ :

Խողձելն հրէից հաւատացելոց վասն ԺԱ :
հաղորդելոյ պետրոսի ընդ հեթանոսս
անթլփատս . և շինելն մտաց նոցա 'ի
լսելն 'ի պետրոսէ զտեսիլն ցուցեալ
նմա 'ի տնէ վասն ճաշակելոյ յամնր
կարծեցեալ իրաց , և զամենայն հան-
(43.) գամանս դարձի կուռնելեանց : Բազ-
մանալ աշակերտաց և 'ի մեծն ան-
տիոք ասորւոց . ուր չոգան և բառ-
նաբաս և պօղոս , և անդ անուանեցին
նախ զաշակերտսն քրիստոնեայս :

42. Ագաբոս մարգարէ գուշակէ զսով ,
հաս որ եղև առ կղօդեաւ , այսինքն յերկ-
44. րորդ ամի կղօդիոսի կայսեր , ես առա-
և 51. ւել ընդ ամենայն երկիր՝ 'ի մետասան
կամ 53. ամի նորա :

44. Գլխատումն յակոբայ զեբեդեան ԺԲ :
'ի հերովդէ . և բանտարկութիւն պետ-
րոսի , և ազատութիւն 'ի ձեռն հրեշ-
տակի . և սատակումն հերովդի 'ի
հրեշտակէ :

45. Ողջելն պօղոսի և բառնաբայ 'ի ԺԳ :
քարոզութիւն մինչև 'ի սաղամինա կիպ-
րոսի . դարձ սերգեայ պօղոսի փոխա-
նակի բդեշխին 'ի հաւատս : Խորթ
պօղոսեանց յանտիոք . և մերժումն

Ր՛ նոցա 'ի հրէից, և քարոզէն առ հե- Գործ:
փն. թանոսս. և հալածին 'ի սահմանաց
45. անտի:

46. Յարուցումն պօղոսեանց յիկոնիոն. ԺԴ:
բժշկութիւն կաղին լիւստրացւոյ, որ
վասն նշնն անուանէին լիւստրացիք
զպօղոս և զբառնաբաս. քարկոծումն
պօղոսի 'ի հրէից. և երթն ընդ բառ-
նաբայ 'ի դերբէ. և շրջելն զաշակեր-
տելովք մինչև յանտիոք:

51. Գալուստ պօղոսի և բառնաբայ ԺԵ:
52. յերուսաղէմ վասն խնդրոյ խտրա-
53. նաց. և ժողով առաքելոց յերուսա-
ղէմ. և առաքումն պօղոսեանց անդ-
րէն յանտիոք ընդ յուդայի և շի-
ղայի: Մեկնելն պօղոսի ընդ շիղայի
'ի կողմանս ասորւոց և կիլիկեցւոց, և
բառնաբայ ընդ յովհաննու նաւելն 'ի
կիպրոս:

Տիմոթէոս յարի 'ի պօղոս. երթ ԺԶ:
պօղոսեանց 'ի մակեդոնիա. յայնմ
հետէ և ղուկաս գրէ զանձնէ լինել
գործակից պօղոսի. բանտարկութիւն
պօղոսի և շիղայի. դարձ բանտապե-
տին:

54. Գործք պօղոսեանց 'ի թեսաղոնիկէ ԺԷ:
և յաթէնս: Նաև դարձ դիոնեսիոսի
արիոպագացւոյ:

Ա. և Բ. թուղթք պօղոսի առ թե-
սաղոնիկեցիս. ըստ այլոց՝ առաջինն
յամի 52. կամ 53. և երկրորդն՝
53. և 54:

54. Գալուստ պօղոսի 'ի կորնթոս. ուր ԺԸ:
55. գտանէ զակիւղաս և զպրիսկիղա.
56. դարձ կրիսպոսի ժողովրդապետի. 'ի
յառնել հալածանաց՝ երթ պօղոս-
եանց յեփեսոս. և շրջելն պօղոսի 'ի
կեսարիա, ընդ անտիոք, ընդ գաղա-

Մ. տխա, և ընդ փախչիս ։ Գործք ա- Գործ ։
Ծն. պօղոսի, որ և ապեղէս աղէքսան-
57. դրայի ։

Պօղոս յեփեսոս մկրտէ յանուն ԾԷ ։
յի զմկրտեալսն 'ի յովհաննու մկր-
տութեան . և ձեռն եդեալ տայ նոցա
հոգի սբ . զերկեամ մի ուսուցանէ 'ի
դիւանին տիւրաննեայ . բաղում զօրու-
թիւք լինին նովաւ , մինչև 'ի տանել զ'ի
քրտանէ թաշկինակս նր՝ կամ զվար-
շամակս , բժշկին հիւանդք , դևք հա-
58. լածին ։ Որդիք որդւոյն սկևեայ հրէի
59. քահանայապետի։ Խռովութիւն յարու-
ցեալ ընդդէմ պօղոսի յարծաթագոր-
ծաց բագնին արտեմեայ եփեսացւոց ։

Ը. և Ի. Թուղթք պօղոսի առ կորն-
թացիս . ըստ այլոց՝ յամի . 56. կամ
57 . կամ 58 ։ 'Ի նոյն ամս և առ գա-
ղատացիս , և առ հռովմայեցիս , և
առ տիմոթէոս և առ տիտոս ։

60. Երթ պօղոսեանց 'ի մակեդոնիա, Կ ։
և նաւելն 'ի տրովադա . անդ եւտի-
քոսի երիտասարդի , զոր 'ի մեռե-
լոց կենդանացոյց պօղոս ։ 'Ի մի-
լետայ յղեալ յեփեսոս՝ կոչէ պօղոս
զերիցունս . և աւանդեալ նոցա զվեր-
ջին խրատս՝ հրաժարէ 'ի նոցանէ ,
յայտ առնելով թէ ոչ ևս տեսանելոց
են զերեսս նորա ։

Թուղթք պօղոսի առ եփեսացիս ,
կողոսացիս, փիլիպեցիս , առ փիլիմոն ,
և առ եբրայեցիս , ըստ ոմանց յայսմ
ամի 60 . և ըստ այլոց 61 . կամ 62 .
կամ 63 ։

Գալուստ պօղոսեանց նաւարկութ ԿԱ ։
մինչև 'ի կեսարիա պաղեստինոյ . ուր
յապարանս փիլիպպոսի աւետարանչի
ագաբոս մարգարէացաւ վասն կապա-

Ա՟ նաց պօղոսի յերուսաղէմ. այլ նա ան֊ գործ։
ծթ. երկիւղ եանց անտի յերուսաղէմ.
60. ուր ըմբռնեալ 'ի հրէից 'ի տաճարի՝
մատնեցաւ 'ի ձեռս հազարապետի, և
կապեցաւ շղթայիւք։

Ատենախօսութիւն պօղոսի առ ժողո֊ ԻԲ։
վուրդն։

Հերձուածն հրէից, որով փարիսեցիք ԻԳ։
եղեն 'ի կողմն պօղոսի, և սադուկե֊
ցիք հակառակ նորա. որք խորհ կա֊
մէին դաւել զնա, զերծոյց զնա հա֊
զարապետն, և առաքեաց զօրականօք
'ի կեսարիա առ փելիքս դատաւոր։

Ատենախօսութիւն պօղոսի յատենին ԻԴ։
փելիքսի՝ ընդդէմ բանից տերտիւղո֊
61. սի. և մնալն կապանօք 'ի կեսարիա։
62. Գտանելն պօղոսի յատենին փես֊ ԻԵ։
տոսի դատաւորի 'ի կեսարիա. և բո֊
ղոքելն առ կայսր։

Ատենախօսութիւն պօղոսի առաջի ԻԶ։
փեստոսի, և ագրիպպայ արքայի։

Առաքումն պօղոսի կապանօք յի֊ ԻԷ։
տալիա. վտանգ նաւելոյն, և զեր֊
ծումն 'ի մելիտէ կղզի (որ է մալթա։)
63. Նաւարկութիւն պօղոսի ընդ սիրա֊ ԻԸ։
կուսա սիկիլիոյ, և ընդ հռեգիոն կա֊
ղաքիոյ, և ընդ պատիողոս. և հա֊
սանելն 'ի հռոմ. և կալն 'ի դիպա֊
հոջ բանտի զամս երկու, ուր անխա֊
փան քարոզէր զբանն ա՟յ ամենայն
համարձակութեամբ։ Յայսմ վայրի
կատարումն պատմութեան գործոց
առաքելոց։

(66.) Անցուածք պատմութեան ո՟րց
առաքելոց և այլոց աշակերտաց քա֊
ղին 'ի թղթոց առաքելոց, և առա֊
ւել յեկեղեցական պատմութեանց.
որք համառակօրէն դնեն զկատարումն

Ըն պետրոսի և պօղոսի 'ի Հռովմ. յամի
Քն. ամն 66. և զայլոցն յառաջ և զկնի։
(70) Օայնու ժամանակաւ եղև և աւ-
ռումն երուսաղէմի 'ի Հռովմայեց-
ւոց, և քանդումն տաճարին, յամի
(100) ամն իբր 70։ Իսկ աւետարանիչն յով-
հաննէս եհաս մինչև 'ի լրումն նոյն
դարու. և փոխեցաւ յերկինս՝ յա-
մի ամն իբր 99. կամ 100։

# ՎԱԽՃԱՆ ՏԵՍՈՒԹԵԱՆ

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ·

Որ է դրուագ երկնաւորութեան վերայ և տաւղինէ վերծանողաց :

Յամենայնի՝ վախճան խնդրի՝ նախ առաջին,
յորմէ շարժի և յոր դիմէ՝ բանեղ ոգին.
իսկ որ չեղի՝ յայս օրինաց բանականին,
թէ չէ անբան, անմիտ անշուշտ՝ է նա յետին:
Ըստ անհրաժեշտ բանիս զննեա զընթացս քոյին,
առ ի՞նչ եղեր, առ ի՞նչ դու կեաս ցշունչ վերջին.
ուստի՞ բերիս և ո՞ւր ուղղիս յաստեացս ուղին,
մտօք կամօք՝ բանիւ՝ գործով բոլորովին:
Արթուն ոգւով յանկեղծ սրտէ պատասխանին,
կայ առընթեր, թէև ժխտես, անժխտելին.
դէտակն ունիմ ժաման լինել իմ վախճանին.
յոր հաստեցայ յանեղական աջոյն վերին:
Ընդ անցաւորս կենցաղ անցեալ ըստ կամրջին,
յանանց բերիմ 'ի կեանս անմահ յաւիտենին,
պանդուխտ եմ ես՝ ըստ առածի հոգերգողին,
փութամ ձեպիմ 'ի հայրենիսն իմ առաջին:
Ճշմարտութեն դու աշակերտ յայսմ մասին,
զարդ խնամ ինձ ցոյց, գործ միաբան ընդ քում բանին.
աչք քո լիցին 'ի նպատակ ճանապարհին,
հարևանցի տես զառօրեայս, անց ընդ նոսին:
Առ առաջնորդ քեզ անմոլար ընդ լոյս բանին,
զեռալուսեան պայծառ պատգամ քո արարչին.
զա͞ծաշունչ մատեանն առեալ՝ ըզնոր և զհին,
լոյս անաղօտ՝ ցայգ և ցերեկ՝ անմեկնելին:
Սա ուղեցոյց հաւատարիմ ա͞ծային,
և ձեռնտու և զօրավիգ 'ի քում շաւղին.

բաղմամամանեայ՝ խորհրդաւոր՝ բանիւք վեհին ,
ուղղէ 'ի կէտ վերին կոչման ըղձելին :
Որենք կենաց են պատուիրանք խրատք նորին ,
զոր օրինօք մեզ աւանդէ եկեղեցին .
Եւ ծաղկաքաղ ընծայեցի աստ առանձին ,
ըզպատմական անցս դիւրիմաց և հեշտալին :
Այս ասպարեզ՝ դաշտ ընդարձակ է զուարճալի ,
զարնանազեղ՝ մարգագետին՝ վայր դալարի .
ականակիտ և անդ աղբիւրս մերձ արօտի ,
ուր Տ̄ր հովուէ անդ ոչ մի ինչ մեզ պակասի :
Իմա զիմաստ Ճառից գործոց՝ որ աստ պատմի ,
ընթերցողաց ոգեպարար նիւթ Ճարակի .
ընդ որոճել ըզպատմութ̄ի՝ որ կայ 'ի գրի ,
սնունդ անուշ հոգի մաքուր , հոգւով վառի :
Ո ի սեպհական է մեր բնութե տատանելի ,
'ի լուր անցից սփոփիլ սրտիւ՝ ըզբօսալի .
և ուր կարծէր ինչ դժուարին զգործ բարի ,
յօրինակաց առաքինեաց քաջալերի :
Թող զխորշումն առ 'ի չարէն՝ յորժամ լսի ,
զգոյշ ընդ պատժոյն՝ ամօթ յետին նշաւակի .
ուստի ուսեալ զաջ և զահեակ օտարոտի ,
ընդ պողոտայն միջին ուղիղ ուղևորի :
Թէ զայս գործէ վէպ արտաքին յիւրում կարգի ,
անհամեմատ 'ի ս̄ր տառից նոյն ներգործի .
զի Ա̄յ բանք են ազդոյ 'ի խորս սրտի ,
և օրինակք իւր ընտրելոց տիպ կենդանի :
Ուր զԱբելին հեզիկ գառին զըղջանչելի ,
անմեղութ̄ի և պատարագ վերբերելի .
զանպարտական մահ յեղբօրէն՝ մեզ ցաւալի ,
այլ Ա̄յ հաճոյական՝ ձօն միածնի :
Ենովք հրեշտակ զոգցես մարմնով է պանծալի ,
Ա̄ծապաշտ կարգօք փայլեալ աստէն յերկրի .
արժանաւոր վերին կոչման դեռ կենդանի ,
խորհուրդ բազում յանձին ս̄ր գանձեալ զաղտնի :
Նոյ այր արդար՝ և կատարեալ , տես , վկայի ,
յազգի իւրում , խմն 'ի չար՝ ժամանակի .
արժանացաւ՝ երկրորդ լինել՝ հայր աշխարհի ,
հանդիստ նորա յարարատեան մեր գաւառի :

Աբրահամու հօր հաւատոց՝ կեանք գովելի,
հանդիսարան առաքինեաց է սխրալի.
սիրտ անյողդողդ՝ հոգի յստակ՝ տ՟ն ընտանի,
ա՟ծամերձ անձն անմահն՝ զուարթուն յերկրի:
Հնազանդութե՟ն համբերութե՟ն ջինջ հայելի,
ա՟ծասէր, եղբայրասէր յամենայնի.
ա՟ծընկալ հիւրընկալուն է հրեշտակի,
ա՟ծահայր յուխտ ա՟յ արձանագրի:
Իսահակայ հանդէս նոյնպէս զարմանալի,
հեզ և հլու՝ ա՟ծորդւոյ պատկեր գրի.
զանձն ողջակէզ նուիրելով անքոյթ պահի,
երկայնամիտ՝ գեր 'ի վերոյ ազգաց լինի:
Յակոբ ընտրեալ՝ աւագ եղբօրն վեհ գտանի,
անդրանկանայ՝ լինել ծնող տ՟ն 'ի մարմնի.
վաստակասէր՝ անխոնջ հովիւ, թէև զրկի,
արդարութե՟ հարստանայ՝ անկապտելի:
Ա՟ծատես անուամբ պատուեալ իսրայելի,
երկոտասան ազանց արմատ խորհրդով լի.
անցեալ ընդ փորձ բիւր փորձանաց՝ տ՟ր ապրի,
հաւատք, յոյս, սէր՝ 'ի վարս ն՟ր քաջ նշմարի:
Յովսէփ սիրուն՝ որդեակ, անուն՝ նախանձելի,
հարանց պսակ՝ 'ի լաւութե՟ն ողջոյն կարգի.
'ի մախացող հարազատաց լռիկ մատնի,
տիպ Յ՟սի՝ 'ի յուդայէ նախ վաճառի:
Փսոմփթոմփանէ՝ փրկիչ, իմն, անդ, աշխարհի,
որ 'ի Յ՟ս միայն արդեամբք աստ ճշմարտի.
համբերատար յովսէփ ճգնեալ փառաւորի,
և տ՟ր փառաց՝ խաչելութե՟ երկրպագի:
Մովսէսին ո՞ բաւեսցէ ճառել զկրաց,
այն որ եղև նախապատում զանճառելեաց.
նովաւ գիտեմք զանցս անցնիւրոց 'ի նախահարց,
ընդ արարչագործ հիմնարկութե՟ն տիեզերաց:
Այր հեզութե՟ երկայնամիտ՝ լցեալ զընթացս,
անփառացն՝ փառաւորեալն ըստ երեսաց.
օրենսդիր՝ ա՟ծախօս՝ տեսող փառաց,
նման նմա չիք տեսանող 'ի կարգ նախնեաց:
Յեսու, փրկչին՝ անուանակիր, 'ի կուսանաց,
պատկեր գործոյ՝ տեառըն իւրոյ՝ յառաջընթաց.

'ի յորդաման և յերկրաւ խորհուրդ յայտնեաց ,
ընդ բաժանման և որ երկրին այն աւետեաց ։
Քաղեմ քեզէն զայլ ես դասս առաքինեաց ,
քահանայից , դատաւորաց , թագաւորաց .
յիշեմ զդաւիթ ա՟ծահայր՝ սաղմոսաց ,
ընդ մարգարէս՝ քարոզ վերին որ պատգամաց ։
Որոց վերջին՝ և առաջին յարդեանց իրաց ,
որ կարապետ՝ միջնորդ շնորհաց և օրինաց .
նորատեսիլ հոգի զուարթուն յերկրի փայլեաց ,
զի արուսեակ՝ արեգական էր նախընթաց ։
Օ ի՞նչ ասացից , զի՞նչ 'ի ծագման լուսոյ փառաց ,
նմանութի կայցէ ընդ հին անցս ստուերաց .
զի կուսամայր ա՟ծածին ծնօղ կենաց ,
մեզ արևելք իմանալի՝ ահա ծագեաց ։
Եւ 'ի կուսէ՝ հօր միածինն՝ մեզ մարմնացեալ ,
մարդ ճշմարիտ՝ ճշմարտու՟ք նա ինքն աստուած .
լոյս անաղօտ՝ յերկնից յերկիր ճառագայթեաց ,
զխաւար մեղաց լուծեալ՝ արար ինքնահալած ։
Յս՟ փրկիչ Քս՟ օծեալ՝ տ՟ր է տ՟րանց ,
միահեծան որ թագաւոր թագաւորաց .
խոնարհութ՟ , աղքատութ՟ , յերկրի եկեաց ,
չարչարանօք՝ մահու խաչի զկեանս վճարեաց ։
Օ նոյն եցոյց շաւիղ իւրոց հետևողաց ,
զիւր միշտ կոխել հետս ընթացից ցելս կենաց .
քեզ տեսարան լիցի հանդէս աշակերտաց ,
և վկայից , և ընտրելոց յամէն ազգաց ։
Արդ վերծանող իմ բարեսէր , կշռեա՛ արդար ,
ընդ ո՞ր արժան քեզ ընթանալ ուղի յարմար .
գիտես՝ ոչ գոյ երկնից երբէք այլ ճանապարհ ,
զի՞ դանդաղիս յօտար խորհուրդս դու վայրապար ։
Հապա փութա՛ ձեպեա՛ սիրով սիրուն եղբայր ,
զհետ երթալ փրկչին հետոց արիաբար .
բարձեալ զխաչ քո կամաւոր համբերատար ,
ուր ակամայն անբերելի բեռն է խապար ։
Եթէ 'ի մեզ ինչ ապաստան այս հոգ՟ մնայր ,
էր լքանիլ անյոյս մօք որպէս անկար .
այլ ձեռնտու և օգնական՝ կայ բարերար ,
մեզ առընթեր ինքնին Յս՝ մեր մխիթար ։

Նորին շնորհօք, ո՜ն ընթացուք հսկայաբար,
յերկրէ յերկինս ուղևորեալ լուսակամար.
զի յաւիտեան վայելեսցուք 'ի փառս անճառ,
հօր և որդւոյ, և ս՟ր հոգւոյն՝ փառք անդադար։

'Ի սոյն սակի յիշել ժտեմ առ հաւասար,
զերկնից գործոյս՝ և զմիաբան անձինս սատար.
Եւ առաւել զբարեացապարտ՝ զոգի խոնարհ,
որ եմ տպել՝ լուեալ զանուն՝ խորհրդաբար։
Օր 'ի վերին գրեսցի մատեան գեր զօսկետառ,
արդիւնք տացեն ձայն գովութե՟ ոգեբարբառ.
զանձ անկապուտ է յիշատակ մշտապայծառ,
վերաբերիչ յերկին 'ի վեր ջահ լուսավառ։

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Գլխաւորեալ բարեյիշատակ Թարգմանապետին մերոյ՝ Տն Ստեփաննոսի Ագոնց, Արքեպիսկոպոսի և Ընդհանրական Աբբայի Մխիթարեան Միաբանութեան՝ 'ի խոր ծերութեան զվերջին զայս իւր աշխատասիրութն 'ի Տեառն՝ Լոր Կատարմանց՝ մեզ զայն թողեալ խորհել 'ի տիպ արձանացուցանել յօգուտ հոգւոց. զի նիւթն ոչինչ այլ հոգայր այնուհետև, բայց միայն պատրաստել զանձն 'ի կոչումն վերին, զի էր ծանրացեալ ցաւովք յետին ծերութեան. և այնպէս յետ սկսանելոյ մեր զտիպն՝ ոչ բաւեաց տեսանել զլրումն գործոյ իւրոյ. այլ փութացաւ ճեպեաց երթալ առ Ած իւր, առ որ անձկացեալն էր 'ի մանկութէ. փոխեալ բարի անուամբ անուշահոտ որբուն յամի Տն 1824. և 'ի թուիս մերում ՌՄՀԳ. 'ի յունվարի 29. յաւուր հինգշաբաթու զհասարակ աւուրբ, 'ի հասակի ՁԳ. ամաց, և երկուց ամսոց, և աւուրց տասանց։

Յիշատակ արդարոց օրհնութբ եղիցի։

Եղիցի եղիցի։

# ՑՈՒՑԱԿ ԳԼԽՈՑ

## ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ


Գլ. Ա. Պատրաստութիւն առաքելոց առ գալուստ Հոգւոյն սրբոյ. և ընտրութիւն Մատաթեայ յառաքելութիւն։ երես 5

Գլ. Բ. Գալուստ Հոգւոյն սրբոյ։ Պարգև լեզուաց տուեալ առաքելոց։ Քարոզութիւն սրբոյն Պետրոսի։ 14

Գլ. Գ. Պտուղ առաջնոյ քարոզութեան սրբոյն Պետրոսի ՚ի դարձման մեծի բազմութեան յանհաւատից Հրէից։ Աներկիւղութիւն նոցա և եռանդն։ 28

Գլ. Դ. Նորանորն նորոգ դարձելոց, և նոր դարձմանց։ 38

Գլ. Ե. Պետրոս և յովհաննէս բժշկեն զոմն կաղ ՚ի ծնէ։ Քարոզութիւն Պետրոսի ՚ի տաճարին։ 46

Գլ. Զ. Դարձ յօգնութիւն բազմութեան։ Ընդդախութիւն երկուց մեծ առաքելոց որք դատեցան, և պատուիրեցան նոցա լռութիւն. պատասխանի նոցա և աղաչութիւն։ Աւել եղեն աղօթք նոցա ցուցեալ շնորհաւն նշանաւ Հոգւոյն սրբոյ։ 59

Գլ. Է. Նորանորն նորածաղկեալ քրիստոնէութեան, առատեղապէս ՚ի թողատուրս եւր ժամուց, և ՚ի հրաժարումն յընչից։ Յանանիա սէն բառնաբառ գողաբանէ։ 66

Գլ. Ը. Անանիա և Սափիրա։ Խաբէութիւն նոցա և պատիժ։ 71

Գլ. Թ. Առաքեալք գործեն բազում և մեծամեծ սքանչելիս։ Արկանեն ՚ի բանտ ՚ի քահանայապե-

դէն. և ազատին 'ի հրեշտակէն ։ Գանակոծ լի-
նին 'ի չարաժողովոյն հրէից. և ընթանան ուրախու-
թբ տարեալ գանիցն, ջերմագոյն ևս քարոզեն զա-
ւետարանն ։ 77

Գլ. Ժ. Տրտունջ յունաց ։ Ընտրութիւն եօթն սար-
կաւագաց ։ 83

Գլ. ԺԱ. Ճառաբանութիւն և մահ սբյն Ստեփան-
նոսի նախավկային ։ 88

Գլ. ԺԲ. Հալածանք եկեղեցւոյ յերուսաղէմ ։ Յու-
ղարկաւորութիւն սբյն Ստեփաննոսի ։ Քարոզու-
թիւն սբյն Փիլիպպոսի աշակերտի 'ի Սամարիա ։
Գալուստ սբց առաքելոց Պետրոսի և Յովհաննու
'ի Սամարիա. և ամպարշտութիւն Սիմոնի մոգի ։ 97

Գլ. ԺԳ. Դարձ եթեովպացի ներքինւոյն տիկնոջն Կան-
դակայ ։ 105

Գլ. ԺԴ. Դարձ սբյն Պօղոսի ։ 108

Գլ. ԺԵ. Սբն Պօղոս անցանէ յարաբիա ։ Դառնայ
'ի Դամասկոս. հալածեալ անտ 'ի հրէից, զերծա-
նի իջուցեալ կողովաւ ընդ պարիսպ քաղաքին ։
Գայ յերուսաղէմ, ուր կայ աւուրս հնգետասան
ընդ սբյն Պետրոսի ։ Հալածեալ յերուսաղէմէ, ան-
ցանէ 'ի Կեսարիա. ապա 'ի Տարսոն ։ 118

Գլ. ԺԶ. Սբն Պետրոս բժշկէ զանդամալոյծ մի 'ի
Լիւդիա. և յարուցանէ 'ի Յոպպէ զկին մի մե-
ռեալ ։ 130

Գլ. ԺԷ. Տեսիլ սբյն Պետրոսի ։ Մկրտութիւն Կոռ-
նելեայ ։ 133

Գլ. ԺԸ. Պետրոս արդարացուցանէ յերուսաղէմ
զմնալն իւր ընդ հեթանոսս ։ Դարձ բազմութե
յանտիոք քաղաքի ։ Առաքէ սբն Բառնա-
բաս. անդր ածէ և սբն Պօղոս, որք տանին ան-
տի առատ ողորմութիւն հաւատացելոց երուսա-
ղէմի ։ 140

Գլ. ԺԹ. Սբն Յակոբոս մեծ կոչեցեալ որդի Զեբե-
դեայ եղբայր Յովհաննու գլխատի 'ի Հերովդէէ յե-
րուսաղէմ ։ Սբն Պետրոս արկանի 'ի բանտ 'ի նոյն
Հերովդէէ, ազատի 'ի ձեռն հրեշտակի ։ Մահ Հե-
րովդէի ։ 143

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Գլ. Ա. Առաքելութիւն պօղոսի և բառնաբայ անդր ևս քան զանդիւք. հակառակութիւն եղիմայ մոգի, և դարձ անթիպատոսին սերգեայ պօղոսի 'ի հաւատս 'ի պափոս կիպրոսի, որպէս և դարձ այլոց 'ի հեթանոսաց յանտիոք պիսիդեայ. 148
Գլ. Բ. Առաքելութիւն պօղոսի և բառնաբայ յիկոնիոն, 'ի դերբէ, 'ի լիւստրա, մինչև 'ի դառնալ անդրէն յանտիոք. 155
Գլ. Գ. Վէճ պօղոսի և բառնաբայ յանտիոքայ յերուսաղէմ վասն օրինական խնդրոց. ժողով և սահմանադրութիւն առաքելոց վասն նոյին իրաց. և յառաջադիմութիւն աւետարանական քարոզութեան 'ի հեթանոսս. 158
Գլ. Դ. Պօղոս առնու պաշտօնակից և զտիմոթէոս և զղուկաս, և քարոզէ 'ի մակեդոնիա՝ նշանօք և հալածանօք հանդերձ։ 164
Գլ. Ե. Առաքելութիւն պօղոսի 'ի թեսաղոնիկէ, 'ի բերիա, և յաթէնս. 168
Գլ. Զ. Գործք պօղոսի 'ի կորնթոս. և վերադարձն այցելութիւն նորա 'ի կողմանս ասիացւոց. ուր և յաջողս ապեղեսի համ ապօղոսի։ 172
Գլ. Է. Սքանչելի արարք պօղոսի յեփեսոս. 176
Գլ. Ը. Երթն պօղոսի վերադարձն 'ի մակեդոնիա, յելլադա, 'ի տրովադա, 'ի միտիլենէ, և 'ի միլետոն. և յայտնելն նորա երիցանց եփեսոսի զվերջին հրաժարումն իւր 'ի նոցանէ. 180

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ


Գլ. ա. Գալուստ առաքելոյն պօղոսի յերուսաղէմ. և սկիզբն կապանաց և նեղութեանց նորա. 184

Գլ. բ. Ատեան հրէից վասն պօղոսի, և դաւ նոցա առ 'ի սպանանել զնա. և առաքումն 'ի հազարապետէ 'ի կեսարիա առ ֆելիքս դատաւոր հռովմայեցի. 189

Գլ. գ. Միւս ևս ատեան վասն պօղոսի 'ի կեսարիա յանդիման ֆելիքսի դատաւորի. 193

Գլ. դ. Երրորդ և չորրորդ ատեան վասն պօղոսի առաջի փեստոսի հռովմայեցւոց դատաւորի, և ագրիպպայ հերովդի հրէից արքայի. և բողոք պօղոսի առ կայսր. 196

Գլ. ե. Դժուարին նաւարկութիւն սբյն պօղոսի դէպ յիտալիա, և աշխատութիւն նորա և ուղեկցացն 'ի նաւաբեկութեան 'ի կղզին մելիտենոյ, (որ այժմ. ասի մալթա). 200

Գլ. զ. Գործք սբյն պօղոսի 'ի մալթա. և անտի ընդ սիկիլիա և ընդ կաղաբրիա. և մուտն 'ի հռովմ, ուր եկաց 'ի կապանս բանտի ամս երկուս. 205

Բովանդակութիւն տեսութեան նոր կտակարանաց, որ և Համաբարբառք. 213

Սահման տեսութեան հին և նոր կտակարանաց, որ և պտուղ երկնաւորութեան մերոյ և առաջինի վերծանողաց. 269

Յիշատակարան. 274

*Tip. ed Edit. li Monaci Armeni di S. Lazzaro in Venezia.*

[illegible] [illegible] է [illegible]

————[illegible]